Տարվա գիրք
Amazon

#1 բեսթսելլեր
The New York Times

Տարվա թրիլլեր
Gooodreads

ԼՌԱԿՅԱՑ ՀԻՎԱՆԴԸ

ԱԼԵՔՍ ՍԱՅՔԼԻԴԻՍ

1915:06

newmag

ԼՈՍԿՅԱՅ ՀԻՎԱՆԴԸ

ALEX MICHAELIDES

THE SILENT PATIENT

ԱԼԵՔՍ ՍԱՅՔԼԻԴԻՍ

ԼՌԱԿՅԱՑ ՀԻՎԱՆԴԸ

ՎԵՊ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

թվագրել է 1915.ին-ից կայֆը

new mag

ԵՐԵՎԱՆ
2021

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Հեշտ չէ հյուսել մի վեպ, որի գլխավոր հերոսը չի խոսում: Բայց այս տպավորիչ, կլանող դեբյուտով, որի սյուժեի հիման վրա ֆիլմ նկարահանելու իրավունքը գնել է Բրեդ Փիթի ընկերությունը, Մայքլիդիսը ներկայանում է որպես գրող, որն արժանի է ուշադրության:

People

«Լռակյաց հիվանդը» հեղինակի առաջին վեպն է, սակայն այստեղ արդեն նկատելի են վարպետ գրողի ռիթմն ու նրբանկատությունը:

BBC

Կատարյալ թրիլլեր է: Այս արտասովոր վեպից արյունս եռաց. ուղղակի չէի կարողանում գիրքը ձեռքիցս ցած դնել: Որոշել էի թեթև աչքի անցկացնել. անցել է 11 ժամ, հիմա առավոտյան 5:47 է, ու ես ավարտել եմ գիրքը. ապշած եմ:

Ա. Ջ. Ֆինն, New York Times բեսթսելլեր հեղինակ

«Լռակյաց հիվանդը» գաղտագողի սողում է դեպի քեզ, ինչպես վախեցնող ստվերը՝ թույլ լուսավորված փողոցում: Մայքլիդիսը ստեղծել է օրիգինալ, գայթակղիչ հոգեբանական առեղծված, այնքան ոլորապտույտ, այնքան յուրօրինակ, որ այն դարձել է մի առանձին ժանր: Կարդացել եմ երկու գիշերում, վայելել յուրաքանչյուր հյութալի բառ, յուրաքանչյուր մռայլ հանդիպում, յուրաքանչյուր վախեցնող շրջադարձ:

Դեյվիդ Բալդաչի

Ամենահիասքանչ հոգեբանական թրիլլերներից է, որ երբևէ կարդացել ենք: Գեղեցիկ լեզու, նրբորեն մտածված սյուժե, պատմություն, որ անգթորեն կլանում է ու բաց չի թողնում այնքան, մինչև հասնում ես վերջին՝ ցնցող (ու միևնույն ժամանակ խիստ տրամաբանական) շրջադարձին: Ֆանտաստիկ ու արտասովոր գիրք է:

Դուգլաս Փրեսթոն և Լինքոլն Չայլդ

Ալեքս Մայքլիդիսի վեպն իմ կարդացած լավագույն հոգեբանական թրիլլերներից է: «Լռակյաց հիվանդը» խիտ, խելացնոր մղձավանջ է հիշեցնում, իսկ հանգուցալուծումն ամենացնցող, ամենատպավորիչ շրջադարձն էր, որ դաջվել է հիշողությանս մեջ:

Բլեյք Քրոուչ

Հրաշալի նոր խոսք է այս ժանրում: Լսե՛ք, պատմությունը, որ այն պատմում է, գրավիչ է ու վախեցնող: «Լռակյաց հիվանդը» ստեղծում է մի պատկեր, որը սողոսկում է հոգուդ մեջ: Փորձե՛ք:

Բրեդ Մելցեր

Առեղծվածային, կտրուկ ու մի շնչով կարդացվող վեպ է:

Library Journal

«Լռակյաց հիվանդը» բոլորովին չի լռում, այլ բարձրաձայն ազդարարում է Ալեքս Մայքլիդիսի՝ նոր, տաղանդավոր գրողի մուտքը հոգեբանական թրիլլերի ժանր:

Shelf Awareness

Անհնար է կիսատ թողնել. այնքան սարսռեցնող, զգացմունքային ու լարված, անսպասելի շրջադարձերով գործ է, որ նույնիսկ փորձառու ընթերցողի մարմնով է սարսուռ անցնում:

Booklist

Լարված, մանրամասն մտածված ու գրավիչ վեպ էր:

The Observer

Խելացի, նրբահյուս ինտրիգ. հրաշալի վեպ՝ բոլոր չափանիշերով:

Լի Չայլդ

ՀՏԴ 821.111-312.4Մայքլիդիս
ԳՄԴ 84(4Մբ)-44
Մ 230

Մայքլիդիս Ալեքս
Մ 230 Լռակյաց հիվանդը/ Ա. Մայքլիդիս; Թարգմանությունն անգլերենից՝ Ա. Աթաբեկյանի.- Եր.: Newmag, 2021.- 444 էջ:

Ալիսիա Բերենսոնի կյանքը, թվում է, կատարյալ է: Հայտնի նկարչուհին ամուսնացած է նորաձևության ոլորտում հանրահայտ լուսանկարչի հետ, ապրում է Լոնդոնի հեղինակավոր թաղամասում: Մի օր, ուշ երեկոյան, ամուսինը՝ Գաբրիելը, վերադառնում է նկարահանումից, և Ալիսիան 5 անգամ կրակում է նրա դեմքին, ինչից հետո այլևս ոչ մի բառ չի արտասանում:

Ալիսիան հրաժարվում է խոսել կամ որևէ կերպ բացատրել եղելությունը, ինչի պատճառով ընտանեկան ողբերգությունը վերածվում է մեծ առեղծվածի, որը բորբոքում է հանրության երևակայությունը: Ալիսիան անմիջապես հայտնի է դառնում, իսկ նա՝ լռակյաց հիվանդը, գովազդային վահանակներից ու հանրության ուշադրությունից թաքնվում է հոգեբուժարանում:

Թեո Ֆաբերը քրեական հոգեթերապևտ է. նա երկար է սպասել Ալիսիայի հետ աշխատելու հնարավորությանը: Որոշել է ստիպել, որ Ալիսիան խոսի և բացահայտի, թե ինչու է սպանել ամուսնուն:

ՀՏԴ 821.111-312.4Մայքլիդիս
ԳՄԴ 84(4Մբ)-44

ISBN 978-9939-884-11-0
Ալեքս Մայքլիդիս «Լռակյաց հիվանդը» © Newmag, 2021
"The Silent Patient", Copyright © Alex Michaelides 2019

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Գրքի թարգմանությունն իրականացվել է Astramare (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) գրական գործակալության հետ կնքված պայմանագրով: Հայերեն հրատարակության իրավունքը ձեռք է բերվել ԱՐԻ գրական գործակալության միջոցով:

Բովանդակություն

Նախաբան.....15

Մաս **առաջին**.....19

Մաս **երկրորդ**.....91

Մաս **երրորդ**.....291

Մաս **չորրորդ**.....319

Մաս **հինգերորդ**.....415

ՆԱԽԱԲԱՆ

Ալիսիա Բերենսոնի օրագրից

Հուլիսի 14

Չգիտեմ՝ ինչու եմ սա գրում:
Այսինքն՝ չէ՛: Գուցե գիտեմ, պարզապես ինքս ինձ չեմ ուզում խոստովանել:

Չգիտեմ էլ՝ ինչ անվանեմ այն, ինչ գրում եմ: Օրագի՞ր. հավակնոտ է հնչում: Չէի ասի, թե կարևոր բան ունեմ պատմելու: Աննա Ֆրանկի[1] օրագիրն այլ է, Սեմյուել Փիփսինը[2]՝ նույնպես: Ես նրանց չեմ հասնի: Մատյանն էլ շատ է գիտական հնչում: Այդ դեպքում ստիպված կլինեմ ամեն օր գրել, իսկ ես չեմ ուզում. եթե առօրյա պարտականության վերածվի, գրելը կթողնեմ:

Իսկ գուցե անուն չտամ: Թող լինի անանուն մի բան, որտեղ երբեմն-երբեմն գրառումներ եմ անում: Ավելի լավ է հնչում:

Հերիք է՝ ինչ-որ բանի անուն տաս ու պատկերն այլևս ամբողջությամբ չես տեսնի, դրա կարևորությունը չես հասկանա:

---

[1] Anne Frank - Աննա Ֆրանկ (1929-1945), ծագումով հրեա աղջիկ, զոհվել է համակենտրոնացման ճամբարում: Հայտնի է նացիստների՝ Հոլանդիայի օկուպացիայի շրջանը նկարագրող օրագրով, որը գրել է հոլանդերեն:

[2] Samuel Pepys - Սեմյուել Փիփս (1633-1703), անգլիական նավատորմի պաշտոնյա, Ստյուարտների վերականգնման ժամանակաշրջանում լոնդոնյան կյանքը նկարագրող հանրահայտ օրագրի հեղինակ:

Կենտրոնանում ես բառի վրա, որն իրականում փոքրագույն մասն է, այսբերգի գագաթը: Բառերն ինձ միշտ խանգարում են. սովորաբար նկարներով եմ մտածում, պատկերի միջոցով՝ արտահայտվում. գրել սկսեցի միայն հանուն Գաբրիելի:

Վերջերս ընկճված եմ: Պատճառները մի քանիսն են: Ինձ թվում էր՝ կարողանում եմ վիճակս թաքուն պահել, բայց նա, իհարկե, նկատեց. նրանից ոչինչ չես թաքցնի: Հարցրեց, թե նկարը որ փուլում է, ասացի, որ գործն առաջ չի գնում: Մի գավաթ գինի տվեց, մինչ պատրաստում էր, խոհանոցի սեղանի մոտ նստեցի:

Սիրում եմ Գաբրիելին խոհանոցում հետևել: Նուրբ խոհարար է, էլեգանտ ու կազմակերպված՝ բալետ պարողի նման: Ինձ պես չէ: Ես շուրջս խառնաշփոթ եմ ստեղծում:

- Խոսի՛ր ինձ հետ,- ասաց:

- Ի՞նչ խոսեմ: Երբեմն մտքերիս մեջ այնպես եմ մոլորվում: Տպավորություն է՝ կարծես ցեխի միջով եմ առաջ գնում:

- Մտքերդ փորձիր թղթին հանձնել: Օրագիր պահիր: Գուցե օգնի:

- Երևի ճիշտ ես: Կփորձեմ:

- Մի՛ ասա, սիրելի՛ս: Արա՛:

- Կանեմ:

Նա շարունակ փնթփնթում էր, բայց օրագիրն այդպես էլ չսկսեցի: Մի քանի օր անց ինձ գրքույկ նվիրեց: Սև, կաշվե կազմով, սպիտակ, մաքուր էջերով: Մատներս սահեցրի առաջին էջի վրայով: Թուղթը հարթ էր, հետո մատիտս սրեցի ու սկսեցի գրել:

Իհարկե, Գաբրիելն իրավացի էր: Արդեն ավելի լավ եմ զգում. մտքերս թղթին հանձնելն ասես ազատում լինի,

թեթևացում, ինքնարտահայտման տարածք: Թերապիայի պես մի բան է:

Թեև Գաբրիելը ոչինչ չասաց, բայց ենթադրում եմ, որ ինձ համար անհանգստանում է: Ու, անկեղծ ասած, (իսկ ես կարող եմ ինձ անկեղծություն թույլ տալ) իրականում համաձայնեցի օրագիր վարել միայն նրա համար, որ նրան վստահեցնեմ, ապացուցեմ, որ ամեն ինչ կարգին է: Չեմ կարող թույլ տալ, որ ինձ համար մտահոգվի: Չեմ ուզում անհանգստացնել, տխրեցնել կամ ցավ պատճառել: Գաբրիելին շատ եմ սիրում: Նա, անկասկած, իմ սիրած տղամարդն է: Սիրում եմ ամբողջ հոգով, ամեն բջիջով, այնքան, որ երբեմն վախենում եմ: Երբեմն ինձ թվում է...

Չէ, այդ մասին չեմ գրի:

Այստեղ միայն ուրախ գաղափարներ ու պատկերներ կլինեն, որոնք ոգեշնչում են ինձ և ստեղծագործելուս վրա դրական ազդում: Այստեղ միայն դրական, ուրախ, նորմալ մտքեր կգրեմ:

Ոչ մի խելահեղ միտք:

ՄԱՍ
առաջին

Ով աչք ունի տեսնելու և ականջ՝ լսելու, գիտի՝ ոչ մի մահկանացու ի զորու չէ գաղտնիք պահել: Եթե անգամ շուրթերը լռեն, դողդոջուն մատները կշատախոսեն. մարմինը գաղտնիքը կմատնի:

Զիգմունդ Ֆրոյդ, «Հոգեվերլուծության ներածություն: Դասախոսություններ»

1

Ալիսիա Բերենսոնը 33 տարեկան էր, երբ սպանեց ամուսնուն: Յոթ տարի ամուսնացած էին: Երկուսն էլ նկարիչ էին: Ալիսիան կտավներ էր նկարում, Գաբրիելը նորաձևության ոլորտի հայտնի լուսանկարիչ էր: Հստակ ոճ ուներ, լուսանկարում էր լղարիկ, կիսամերկ կանանց՝ տարօրինակ, անհրապույր կողմերից: Մահից հետո Գաբրիելի լուսանկարների գինն աստղաբաշխական թվերի հասավ: Անկեղծ ասած, նրա նկարներն անբովանդակ են. ես այդպես եմ կարծում: Ալիսիայի լավագույն գործերի հետ, որոնցում զգալի է բնատուր շնորհը, չէի համեմատի: Արվեստի մասին գիտելիքս բավարար չէ, որ կասկած հայտնեմ՝ նրա նկարները կհանձնեն արդյոք ժամանակի քննությունը: Վատ համբավն ընդմիշտ մռայլ ստվեր կգցի տաղանդի վրա, ուստի անաչառ լինելը բարդ է: Գուցե ինձ կողմնակալության մեջ մեղադրեք: Սա իմ կարծիքն է, ոչ ավելին: Իմ կարծիքով՝ Ալիսիան հանճարեղ նկարիչ է: Նրա նկարները ոչ միայն տեխնիկապես են փայլուն, այլև օժտված են դիտողի ուշադրությունն անմիջապես գրավելու գերբնական ուժով, ասես կոկորդից բռնում ու բաց չեն թողնում:

Գաբրիել Բերենսոնին վեց տարի առաջ սպանեցին: 44 տարեկան էր: Դեպքը տեղի ունեցավ օգոստոսի 25-ին. անսովոր շոգ ամառ էր, երևի կհիշեք, ջերմաստիճանը երբեմն ռեկորդ էր սահմանում: Գաբրիելի սպանությունը տարվա ամենաշոգ օրն էր:

Կյանքի վերջին օրը Գաբրիելը վաղ արթնացավ: Առավոտյան 05:15 Լոնդոնի հյուսիս-արևմտյան Հեմփսթեդ Հիթ թաղամասի նրանց տանը, որտեղ Ալիսիայի հետ էր ապրում, մեքենան մոտեցավ ու նկարահանման՝ Շորդիչ[1] տարավ: Ամբողջ օրը Գաբրիելն անցկացրեց շենքի տանիքին՝ մոդելներին լուսանկարելով Vogue ամսագրի համար:

Թե այդ ընթացքում Ալիսիան ինչով էր զբաղված, քիչ բան է հայտնի: Նա պատրաստվում էր ցուցահանդեսի և շտապում էր աշխատանքն ավարտին հասցնել: Ամենայն հավանականությամբ, ամբողջ օրն աշխատել էր այգու խորքում՝ ամառային տնակում, որը նոր էր արվեստանոցի վերածել: Գաբրիելի նկարահանումը երկար տևեց, և վարորդը նրան տուն հասցրեց մոտավորապես գիշերվա 11-ին:

Մոտ կես ժամ անց հարևանուհին՝ Բարբի Հելմանը, մի քանի կրակոց լսեց: Նա ոստիկանություն զանգեց, և 23:35 ոստիկանության Հարսթոք Հիլի բաժանմունքից նրա հայտնած հասցեով հերթապահ խումբ մեկնեց: Երեք րոպե անց ոստիկաններն արդեն Բերենսոնների տան բակում էին:

Մուտքի դուռը բաց էր: Տունը թաղված էր խավարի մեջ. լույսի անջատիչները չէին աշխատում: Ոստիկանները նախասրահ մտան, ապա դեպի հյուրասենյակ շարժվեցին: Միաց-

---

[1] Լոնդոնի ստեղծագործական կյանքի կենտրոնը, արվեստի ու արվեստագետների թաղամաս:

ին գրպանի լապտերները՝ թռչկոտող ճառագայթներով սենյակը լուսավորելով: Ալիսիան բուխարու մոտ էր կանգնած: Լապտերի լույսի տակ սպիտակ զգեստը շողք էր արձակում: Ալիսիան ասես ուրվական լիներ: Թվում էր՝ ոստիկանների ներկայությունն Ալիսիային բնավ չի հուզում: Անշարժ էր, սառած՝ սառցե արձանի պես, դեմքի տարօրինակ, վախեցած արտահայտությամբ, ասես աներևույթ սարսափի էր բախվել:

Հրացանը հատակին էր ընկած: Կողքին՝ ստվերում, Գաբրիելն էր՝ անշարժ նստած, կոճերն ու դաստակներն աթոռին պարանով ամուր կապված: Սկզբում ոստիկանները մտածեցին, թե ողջ է: Գլուխը թեքված էր, կարծես ուշագնաց էր: Լապտերը բարձրացնելով ոստիկանները տեսան, որ նրան սպանել են դիմահար մի քանի կրակոցով: Դրանք ընդմիշտ ոչնչացրել էին նրա բարետես դիմագծերը՝ թողնելով ածխացած, սև, արյունոտ զանգված: Թիկունքում պատը ծածկված էր գանգոսկրի, ուղեղի կտորներով, մազերի փնջերով ու արյունով:

Ամենուր արյուն էր. շաղված էր պատերին, մուգ առվակներով հոսում էր փայտամած հատակին: Ոստիկանները եզրակացրին, որ արյունը Գաբրիելինն է: Բայց արյունը չափազանց շատ էր: Հանկարծ լապտերի լույսի տակ ինչ-որ բան փայլատակեց. դանակը հատակին էր, Ալիսիայի ոտքերի տակ: Լույսի երկրորդ շողն արյան հետքեր բացահայտեց նաև Ալիսիայի սպիտակ զգեստի վրա: Մի ոստիկան բռնեց նրա ձեռքից ու լույսի տակ տարավ: Դաստակների երակներին խորը կտրվածքներ կային, վերքերը թարմ էին և ուժեղ արնահոսում էին:

Ալիսիան կյանքը փրկելուն ուղղված ջանքին դիմադրում էր. երեք ոստիկան նրան ուժով հանդարտեցրին: Բոպեներ անց տեղափոխեցին Թագավորական պետական հիվանդանոց:

Ճանապարհին գիտակցությունը կորցրեց: Շատ արյուն էր կորցրել, բայց ողջ մնաց:

Հաջորդ օրը պառկած էր առանձին հիվանդասենյակում: Ոստիկանությունը փորձեց փաստաբանի ներկայությամբ նրան հարցաքննել: Ամբողջ ընթացքում Ալիսիան լուռ էր: Շուրթերը գունատ էին, անարյուն, երբեմն-երբեմն թրթռում էին, բայց ոչ մի բառ, ոչ մի հնչյուն չէին արտաբերում: Ալիսիան հարցերին չպատասխանեց: Չէր կարող ու երևի չէր ուզում խոսել: Չխոսեց նաև, երբ իրեն Գաբրիելի սպանության համար մեղադրեցին: Ձերբակալության պահին էլ լուռ էր, ո՛չ հերքեց, ո՛չ խոստովանեց մեղքը:

Ալիսիան այլևս երբեք չխոսեց:

Այդ տևական լռությունը պատճառ դարձավ, որ այս պատմությունն ընտանեկան սովորական ողբերգությունից ավելի մեծ իրադարձության վերածվի, դառնա առեղծված, գաղտնիք, որն անմիջապես լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնվեց ու մի քանի ամիս գրգռեց հանրության երևակայությունը:

Ալիսիան լուռ էր, բայց մի հայտարարություն, այնուամենայնիվ, արեց: Նկարի միջոցով: Կտավի վրա աշխատանքը սկսել էր, երբ հիվանդանոցից դուրս էին գրել ու դատավարությունից առաջ տնային կալանք նշանակել: Դատարանի որոշմամբ նրան բուժքույր էին տրամադրել, որը մասնագիտացած էր հոգեկան հիվանդների խնամքի ոլորտում: Ալիսիան գրեթե չէր ուտում ու չէր քնում, անդադար նկարում էր:

Սովորաբար մի քանի շաբաթ կամ նույնիսկ ամիս էր անցնում, մինչև որ Ալիսիան սկսում էր նոր նկարի վրա աշխատել. նախ անթիվ էսքիզներ էր անում, դասավորում ու վերադա-

սավորում կոմպոզիցիան, գույնի ու ձևի տարբեր փորձարկումներ անում. այս հասունացմանը հաջորդում էր երկարատև երկունքը, մինչև վերջին վրձնահարվածը ծանր իջնում էր կտավին: Բայց հիմա արմատապես փոխել էր ստեղծագործելու ոճը և ամուսնու մահից հետո, ընդամենը մի քանի օրում, կտավն ավարտին հասցրեց:

Իսկ մարդկանց մեծ մասի համար սա նրան դատապարտելու պատճառ դարձավ. միայն անսիրտ կինը կարող էր ամուսնու մահից անմիջապես հետո արվեստանոց վերադառնալ: Սառնասիրտ ու հրեշավոր մարդասպան՝ առանց որևէ զղջման:

Հնարավոր է: Բայց չմոռանանք, որ եթե նույնիսկ Ալիսիա Բերենսոնը մարդասպան է, այնուամենայնիվ, նաև նկարիչ է: Այդ դեպքում գոնե ինձ համար միանգամայն պարզ է, որ նա վերցնում է վրձինները, ներկերը և կտավին հանձնում հոգին ծվատող խառնիխուռն զգացմունքները: Զարմանալի չէ, որ այս անգամ նկարն այդքան հեշտ ստացվեց: Եթե, իհարկե, տառապանքը կարելի է հեշտ անվանել:

Ինքնանկար էր: Կտավի ներքևի ձախ անկյունում Ալիսիան բաց կապույտով, հունարեն տառերով գրեց:

Մեկ բառ.

ԱԼԿԵՍՏԻՍ:

2

Ալկեստիսը հունական դիցաբանության հերոսուհի է: Սիրո ամենատխուր պատմություններից մեկը նրա հետ է կապված: Ալկեստիսը կամավոր զոհում է կյանքը հանուն ամուսնու՝ Ադմետոսի՝ համաձայնելով նրա փոխարեն մեռնել այն պարագայում, երբ մյուսները հրաժարվել էին: Թվում է՝ ինքնազոհաբերման հուզիչ առասպելն Ալիսիայի հետ կապ չունի: Ես էլ երկար ժամանակ ակնարկի իսկական նշանակությունը չէի հասկանում: Բայց ճշմարտությունը մի օրում ի հայտ եկավ...

Չնայած շատ եմ շտապում: Առաջ եմ ընկնում: Սկսեմ սկզբից, ու թող դեպքերն իրենց անունից խոսեն: Չի կարելի գունավորել, փոխել կամ ստեր պատմել: Թող դեպքերն աստիճանաբար բացվեն, քայլ առ քայլ ու զգուշորեն: Բայց ինչ՞ից սկսեմ: Երևի հարկ է, որ ներկայանամ... բայց դեռ ոչ, թերևս առայժմ ստվերում մնամ: Չէ՞ որ պատմությունն իմ մասին չէ: Գլխավոր հերոսուհին Ալիսիա Բերենսոնն է: Ուրեմն նրանից և «Ալկեստիսից» էլ սկսենք:

Սպանությունից հետո Ալիսիայի նկարած կտավն ինքնանկար է: Նա իրեն պատկերել է տանը, իր արվեստանոցում, վրձինը ձեռքին, նկարակալի ու կտավի առաջ կանգնած:

Ալիսիան մերկ է: Մարմինը պատկերված է ամենայն մանրամասնությամբ. երկար, կարմրաշեկ մազափնջերը թափվել են նիհար ուսերին, գունատ մաշկի տակ երևում են կապտավուն երակները, երկու դաստակին էլ թարմ սպիներ են: Մատներով ամուր սեղմել է վրձինը: Վրձնի ծայրից կաթում է վառ կարմիր ներկ (թե՞ արյուն): Ալիսիան իրեն պատկերել է նկարելիս, բայց և այնպես կտավը մաս-մաքուր է, դատարկ, ինչպես նրա դեմքի արտահայտությունը: Նայում է ուսի վրայից՝ գլուխը հետ դարձրած, հայացքը մեզ ուղղած: Շուրթերը կիսաբաց են: Անձայն է:

Դատավարության ընթացքում Ժան-Ֆելիքս Մարթինը՝ Սոհոյի փոքր պատկերասրահի կառավարիչը, որտեղ Ալիսիայի գործերն էին ներկայացվում, «Ալկեստիսը» ցուցադրելու ոչ միանշանակ որոշում կայացրեց, ինչը կշտամբանքների առիթ տվեց. ոմանք այդ քայլը սենսացիոն համարեցին, մյուսները՝ հրեշավոր: Այն փաստը, սակայն, որ նկարի հեղինակն այդ պահին ամուսնու սպանության համար է մեղադրվում, Մարթինի պատկերասրահին իր երկարատև պատմության մեջ առաջին անգամ հսկայական հերթեր ապահովեց:

Ինձ նման այլ ցանկասեր արվեստասերների հետ կանգնած՝ իմ հերթին էի սպասում. մեր գլխավերևում վառվում էին հարևանությամբ գտնվող ինտիմ ապրանքների խանութի կարմիր, նեոնային լամպերը: Մեկ առ մեկ, զգույշ, ներս էինք մտնում: Պատկերասրահում դեպի նկարն էինք շարժվում, ինչպես տոնավաճառի հրապարակում ուրվականների տնով անցնող գրգռված ամբոխը: Վերջապես հերթն ինձ հասավ, և «Ալկեստիսն» իմ առաջ հառնեց:

Հայացքս կտավին սևեռվեց. Ալիսիայի աչքերին էի նայում՝ փորձելով մեկնաբանել աչքերի արտահայտությունը, ջանալով ինչ-որ բան հասկանալ, բայց դիմանկարը չէր ենթարկվում: Ալիսիան սևեռուն ինձ էր նայում. անկիրք դիմակ, անընթեռնելի, անթափանց: Դեմքի արտահայտությամբ չկարողացա որոշել՝ մեղավո՞ր է, թե՞ ոչ:

Մյուսներն ասացին, որ դեմքի արտահայտությունը հեշտությամբ են կարդում:

- Իսկական չարագործ է,- շշնջաց թիկունքիս կանգնած կինը:

- Ճիշտ որ,- համաձայնեց նրա ուղեկիցը: - Սառնարյուն տականք:

«Մի քիչ անարդար է»,- մտածեցի: Չէ՞ որ Ալիսիայի մեղքը դեռ ապացուցված չէ: Բայց դեղին մամուլի դիրքորոշումը, իրականում նաև հասարակական կարծիքը, արդեն կանխորոշված էին: Թերթերը հենց սկզբից Ալիսիային չարագործի պիտակ էին կպցրել, ճակատագրական կին, սև այրի: Հրեշ:

Փաստերն ինքնին ակնհայտ էին. ոստիկաններն Ալիսիային տանը մենակ էին գտել, Գաբրիելի դիակի մոտ: Հրացանի վրա հայտնաբերվել էին միայն նրա մատնահետքերը: Ոչ ոք անգամ չնչին կասկած չուներ, որ ամուսնուն հենց Ալիսիան է սպանել: Մյուս կողմից, առեղծված էր, թե ինչու էր սպանել:

Լրատվամիջոցներն ակտիվ քննարկում էին Գաբրիելի սպանությունը. թերթերում, ռադիոյով ու հեռուստատեսության առավոտյան հաղորդումներում, առաջադրում էին ամենատարբեր տեսություններ: Հրավիրված մասնագետները բացատրում, դատապարտում, արդարացնում էին Ալիսիայի գործողությունները: Անշուշտ, կինը պետք է որ ամուսնու կենցաղային բռնության զոհ դարձած լիներ, որ վիճակն այդքան

հեռու գնար և վերջնականապես պայթեր: Մեկ այլ տեսության համաձայն՝ սպանությունն ամուսինների սեքսուալ խաղերի հետևանք էր. չէ՞ որ Գաբրիելին գտել էին ձեռքերն ու ոտքերը կապած: Ոմանք կասկածում էին, թե շատ սովորական սպանություն է խանդի հողի վրա. գուցե Ալիսիային սպանության դրդել էր ուրիշ կին: Սակայն դատարանում եղբայրը սպանվածին բնութագրեց որպես հավատարիմ, կնոջն իսկապես սիրող ամուսին: Գուցե դրդապատճառը փողն էր: Ալիսիան, սակայն, ամուսնու մահից քիչ էր շահում. նա ապահովված կին էր՝ ժառանգել էր հոր կարողությունը:

Այդպես էլ շարունակվում էին անվերջանալի ասեկոսեներն Ալիսիայի՝ հանցագործություն կատարելու դրդապատճառների և նրա հետագա լռության շուրջ. պատասխաններ չկային, իսկ հարցերն ավելանում էին: Ինչո՞ւ էր նա հրաժարվում խոսել: Դա ի՞նչ էր նշանակում: Գուցե ինչ-որ բա՞ն էր փորձում թաքցնել: Կամ որևէ մեկին պաշտպանել: Եթե այո, ապա ո՞ւմ: Եվ ինչի՞ համար:

Հիշում եմ՝ այն ժամանակ ինձ մի մտքի վրա բռնեցի, որ մինչ բոլորը խոսում, գրում ու վիճում էին Ալիսիայի մասին, այդ աղմկոտ ու խելահեղ մրրիկի կենտրոնում դատարկություն էր, լռություն: Առեղծված:

Դատավարության ընթացքում դատավորն Ալիսիայի համառ լռության մասին բավական կտրուկ արտահայտվեց:

- Անմեղ մարդիկ,- նշեց դատավոր Ալվերսթոունը,- իրենց անմեղության մասին բարձրաձայն հայտարարելուց չեն խուսափում:

Բայց Ալիսիա Բերենսոնը ոչ միայն շարունակեց լռել, այլև զղջման ոչ մի նշան չարտահայտեց: Դատավարության

ընթացքում մի կաթիլ արցունք աչքերից չընկավ. լրագրողներն այդ փաստին առանձնահատուկ նշանակություն տվեցին: Կնոջ դեմքն անշարժ էր, սառը: Քարացած:

Պաշտպանական կողմին այլ բան չէր մնում, քան հայտարարել մեղադրյալի սահմանափակ մեղսունակության մասին: Ասացին, որ Ալիսիան վաղուց, դեռ մանկուց, ունի հոգեկան առողջության խնդիրներ: Այդ տեղեկությունների հիմնական մասը դատավոր Ալվերսթոունը մերժեց, բայց, ի վերջո, պրոֆեսոր Լազարուս Դիոմիդիսին հաջողվեց ազդել նրա վրա: Լազարուս Դիոմիդիսը Թագավորական քոլեջում դատական հոգեբուժության պրոֆեսոր էր և Գրոուվում, Լոնդոնի հյուսիսում, հատուկ պահպանվող հոգեբուժական հիվանդանոցի կլինիկական հետազոտությունների ղեկավարը: Պրոֆեսոր Դիոմիդիսը պնդում էր, որ Ալիսիայի լռությունը խորը հոգեբանական սթրեսի խոսուն վկայություն է, և դատավճիռ կայացնելիս պետք է այդ փաստը նկատի ունենալ:

Եթե ոլորապտույտ ու անուղղակի արտահայտությունները մի կողմ թողնենք, ապա Դիոմիդիսը փաստորեն բարձրաձայնեց այն, ինչի մասին հոգեբույժները չեն սիրում բաց ու շիտակ արտահայտվել. Ալիսիան հոգեկան հիվանդ է:

Դա տեղի ունեցածի միակ տրամաբանական բացատրությունն էր. հակառակ դեպքում ինչո՞ւ կապկպել սիրելի ամուսնուն և մոտ տարածությունից ուղիղ դեմքին կրակել: Հետո էլ ո՛չ զղջալ, ո՛չ բացատրություն տալ և նույնիսկ չխոսել: Պետք է, որ խելագար լիներ:

Անկասկած, խելագար էր:

Ի վերջո, դատավոր Ալվերսթոունը հայտարարեց, որ սահմանափակ մեղսունակության մասին պաշտպանության

հայտարարությունն ընդունում է ու դիմեց երդվյալ ատենակալներին, որ այդ հայցը հաշվի առնեն: Ավելի ուշ Ալիսիա Բերենսոնին Գրոուվ տեղափոխեցին, այն նույն պրոֆեսոր Դիոմիդիսի հսկողության տակ, որի հայտարարությունը դատարանի վճռի համար առանցքային դեր էր ունեցել:

Մյուս կողմից, եթե Ալիսիան խելագար չէր, ու նրա լռությունն ընդամենը խաղ էր, ներկայացում՝ հանուն երդվյալ ատենակալների, ապա հնարքը հաջողվել էր: Ալիսիային դատապարտեցին երկարատև բանտարկության, սակայն հոգեկան առողջության լիարժեք վերականգնման դեպքում, մի քանի տարի անց, նրան կարող էին ազատել: Եվ հիմա ճիշտ ժամանակն էր, որ Ալիսիան սկսեր առողջանալ, ճիշտ է: Մի քանի խոսք մրմնջար, հետո էլի մի քանիսը, դանդաղ փորձեր զղջման խոսքեր արտաբերել: Բայց ոչ: Շաբաթներն անցնում էին, ամիսները փոխարինում էին իրար, հետո մի քանի տարի անցավ, իսկ Ալիսիան առաջվա պես լուռ էր:

Լռություն, ուրիշ ոչինչ:

Ու քանի որ նոր բացահայտումներ չեղան, հիասթափված լրատվամիջոցների հետաքրքրությունն Ալիսիա Բերենսոնի հանդեպ, ի վերջո, մարեց: Ալիսիան ուղղակի համալրեց ժամանակի այլ հայտնի մարդասպանների շարքը, դարձավ մեկը նրանցից, որոնց դեմքերը հիշում ենք, իսկ անունները մոռացել ենք:

Պետք է ասել, որ նրան ոչ բոլորը մոռացան: Ոմանց, այդ թվում՝ և ինձ, Ալիսիա Բերենսոնի և նրա տևական լռության հանելուկը շարունակում էր հուզել: Որպես հոգեթերապևտ, կասկած չունեի, որ Գաբրիելի սպանության ժամանակ ուժգին հոգեկան ցնցում էր տարել, և այս լռությունն այդ ցնցման

դրսևորումն էր: Չկարողանալով հաշտվել իր արարքի հետ՝ Ալիսիան խափանվել ու անսարք մեքենայի պես կանգ էր առել: Ես ուզում էի օգնել այդ մեքենան կրկին «գործի գցել», օգնել, որ Ալիսիան պատմի իր պատմությունը, բուժում ստանա ու ապաքինվի: Ցանկանում էի նրան «նորոգել»:

Գուցե պարծենկոտ թվամ, բայց ինձ համարում էի բացառիկ որակավորված մասնագետ՝ Ալիսիա Բերենսոնին օգնելու ընդունակ: Ես դատական հոգեթերապևտ եմ ու հաճախ էի աշխատում հասարակության ամենակոտրված, խոցելի անդամների հետ: Նաև Ալիսիայի պատմության մեջ ինչ-որ բան իսկապես հուզել էր ինձ. հենց սկզբից անկեղծորեն նրան կարեկցում էի:

Դժբախտաբար, այդ օրերին դեռ Բրոդմուրում[1] էի աշխատում, ուստի Ալիսիայի հետ աշխատելու միտքն այդպես էլ երազանք կմնար, եթե ճակատագիրն անսպասելիորեն չմիջամտեր:

Ալիսիային Գրոուվ ընդունելուց 6 տարի անց այնտեղ դատական հոգեթերապևտի հաստիք ազատվեց: Հայտարարությունը տեսնելով անմիջապես հասկացա, որ ընտրություն չունեմ: Ներքին ձայնիս ենթարկվելով՝ դիմեցի աշխատանքի համար:

[1] Մոլագարների հանրահայտ հիվանդանոց:

3

Անունս Թեո Ֆաբեր է: 42 տարեկան եմ: Լավ կյանքից չէ, որ դարձել եմ հոգեթերապևտ: Դա բացարձակ ճշմարտություն է, չնայած, իհարկե, դրա մասին հարցազրույցի ժամանակ չխոսեցի:

- Ձեզ հոգեբուժության մեջ ինչն է գրավել,- հարցրեց Ինդիրա Շարման՝ ծանր ակնոցի վրայից սևեռուն ինձ նայելով:

Ինդիրան Գրոուվում խորհրդատու հոգեթերապևտ էր: Չնայած 50-ից բավական անց էր, կլոր դեմքը դեռ պահպանել էր գրավչությունը, իսկ ածխասև երկար մազերում միայն երբեմն էր կայծկլտում արծաթը: Ինդիրան թույլ ժպտաց՝ ասես հասկացնելով, որ այդ հարցը բարդ չէր, ընդամենը պարզ նախավարժանք՝ ծանր զրույցից առաջ:

Ես հապաղում էի: Զգում էի հանձնաժողովի մյուս անդամների սևեռուն հայացքները: Հետո, նրանց աչքերի մեջ անթարթ նայելով, արագ-արագ պատմեցի նախապես պատրաստած պատասխանս՝ մի սիրուն հեքիաթ, թե պատանեկության տարիներին ինչպես էի խնամքի կենտրոնում փող վաստակում, և ինչպես դա իմ մեջ արթնացրեց հետաքրքրություն հոգեբանության հանդեպ: Հետո՝ ասպիրանտուրա՝ հոգեբուժություն մասնագիտացմամբ, և այդպես շարունակ:

– Կարծում եմ՝ պարզապես ուզում էի օգնել մարդկանց,– ասացի ուսերս թոթվելով: – Այդպես էլ կա:

Ինչը բացարձակ անհեթեթություն էր:

Չէ՛, իհարկե, մարդկանց ուզում էի օգնել: Բայց դա երկրորդական նպատակ էր, մանավանդ, երբ սկսեցի գործնական պարապմունքների հաճախել: Իրական պատճառը զուտ եսասիրական էր: Ուզում էի ինքս ինձ օգնել: Համոզված եմ, որ հոգեկան հիվանդների բուժմամբ զբաղվողներից շատերը մասնագիտությունը հենց այդպես են ընտրել: Այն ձգում է մեզ, որովհետև ինքներս կոտրված ենք. մենք հոգեբանություն ենք ուսումնասիրում, որ մեզ բուժենք: Պատրաստ ենք դա խոստովանել, թե ոչ՝ այլ հարց է:

Մարդկության զարգացման ամենավաղ շրջանը թաղված է մոռացության խավարում: Մեզ դուր է գալիս մտածել, թե մարդիկ, որպես լիարժեք ձևավորված անհատականություններ, ինչ-որ նախագո մշուշից են առաջացել, ինչպես ծովի փրփուրներից իր ամբողջ գեղեցկությամբ դուրս եկած Աֆրոդիտեն: Բայց ուղեղի զարգացման լայնածավալ հետազոտության շնորհիվ գիտենք, որ այդպես չէ: Մենք ծնվում ենք կիսով չափ ձևավորված ուղեղով և ավելի շուտ կավի գնդիկ ենք հիշեցնում, քան օլիմպիական աստված: Ինչպես նկատել է հոգեվերլուծաբան Դոնալդ Ուինիքոթը, «մանկիկ» հասկացություն գոյություն չունի: Մեր անհատականությունը զարգանում է ոչ թե մեկուսացման մեջ, այլ փոխազդեցության գործընթացում. մեզ ձևավորում ու գործընթացն ավարտին են հասցնում անտեսանելի ուժերը, որոնց մենք չենք հիշում, մեր ծնողները:

Պատճառն ակնհայտ է, սարսափելի. ով գիտի՝ ինչ նվաստացումների, կտտանքների ու պատիժների ենք ենթարկվել

այն ժամանակ, երբ մեր հիշողությունը դեռ չէր ձևավորվել: Մեր անհատականությունն արդեն կար, իսկ մենք տեղյակ չէինք: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես եղել եմ նյարդային, երկչոտ, անհանգիստ երեխա: Այս անհանգստությունը կարծես ի հայտ էր եկել դեռևս իմ գոյությունից առաջ և ինձնից բացարձակ կախված չէր: Ենթադրում եմ, սակայն, որ դրա աղբյուրը թաքնված էր հորս հետ հարաբերություններում, ում կողքին երբեք անվտանգ չէի զգում:

Հորս՝ կրկնվող, անկանխատեսելի ու անզուսպ մոլեգնության նոպաները ցանկացած, նույնիսկ ամենաբարենպաստ վիճակն ականապատ դաշտի էին վերածում: Ցանկացած անմեղ խոսք կամ անհամաձայնության չնչին արտահայտություն նրա զայրույթն էր շարժում ու պայթյունների հանգեցնում, որոնցից փրկություն չկար: Տունը ցնցվում էր նրա բղավոցներից, երբ նա ինձ հետապնդում էր մինչև երկրորդ հարկի իմ սենյակ: Ես մտնում էի մահճակալի տակ և սահելով հասնում մինչև պատը: Շնչում էի փոշոտ օդն ու աղոթում, որ աղյուսե շարվածքն ինձ կուլ տա, ու կարողանամ չքանալ: Բայց հորս ձեռքն ինձ պինդ բռնում էր, դուրս քաշում մահճակալի տակից վերադարձնելով իրականություն: Գոտին սուլոցով ճեղքում էր օդը, ապա մարմնիս իջնում. իրար հետևից ինձ վրա տեղում էին շեղակի հարվածներ մարմինս այրելով: Ծեծն ավարտվում էր նույնքան անսպասելի, որքան սկսվել էր: Հայրս ինձ շպրտում էր, ու ես ճմռթված կույտի պես ընկնում էի հատակին: Այդպես չար երեխան դեն է նետում լաթե տիկնիկը:

Ես երբեք հաստատ չգիտեի՝ արե՞լ եմ մի բան, որը կարող էր հարուցել այդ զայրույթը, վաստակե՞լ եմ այդ պատիժը:

Մի անգամ մայրիկիս հարցրի՝ հայրս ինչո՞ւ է միշտ զայրանում վրաս. ի պատասխան՝ միայն ուսերը թոթվեց ու տխուր ասաց.

– Ի՞նչ իմանամ: Հայրդ լրիվ խելագար է:

Մայրս չէր կատակում: Եթե հոգեթերապևտը հորս հետազոտեր, անպայման կախտորոշեր անձի խանգարում. հայրս տառապում էր այդ հիվանդությամբ, ինչի հետևանքով իմ մանկությունն ու պատանեկությունն անցան հիստերիայի ու ֆիզիկական բռնության մեջ՝ սպառնալիքներ, արցունքներ և փշրվող ապակիներ:

Իհարկե, լինում էին նաև երջանիկ պահեր, առավել հաճախ այն ժամանակ, երբ հայրս տանը չէր: Հիշում եմ՝ մի ձմեռ մեկ ամսով գործուղման էր մեկնել Ամերիկա: 30 օր տունն ու այգին իմ և մայրիկիս լիակատար տնօրինության տակ էին՝ առանց հորս քննախույզ հայացքի: Այդ տարի, դեկտեմբերին, Լոնդոնում ձնառատ էր, և մեր ամբողջ այգին ծածկվել էր ճեպ-ճերմակ, փխրուն ձյան հաստ սավանով: Ես ու մայրիկը ձնեմարդ էինք ծեփում: Չեմ հիշում՝ գիտակցված, թե ոչ, բայց նրան մեր բացակա տանտիրոջն էինք նմանեցրել: Ես նրան «հայրիկ» կոչեցի. հսկա փորով, աչքերին փոխարինող երկու սև, փոքրիկ քարերով, սպառնալի խոժոռած հոնքեր հիշեցնող երկու թեք ճյուղերով այն իսկապես հորս շատ էր նման: Նմանությունն ամբողջացնելու համար ես ու մայրիկը ձնեմարդուն հորս ձեռնոցները հագցրինք, գլխարկը դրեցինք ու անձրևանոցը ձեռքը տվեցինք: Հետո ձնագնդիներով կատաղի ռմբակոծեցինք՝ քրքջալով չարաճճի երեխաների պես: Այդ գիշեր ուժգին ձնամրրիկ սկսվեց: Մայրիկը գնաց քնելու, իսկ ես քնած ձևացա, հետո աննկատ դուրս եկա այգի ու երկար կանգնած մնացի թափվող ձյան տակ: Ձեռքերս պար-

զած որսում էի թափվող փաթիլներն ու նայում, թե ինչպես են անհետանում մատներիս ծայրերին: Միաժամանակ ուրախ ու տխուր էի և, անկեղծ ասած, բառերով չէի կարող արտահայտել. բառապաշարս չափազանց սահմանափակ էր, բառերս շատ թույլ ուռկան էին դրանք որսալու համար: Երևի անհետացող փաթիլներ որսալը նույնն է, թե երջանկություն որսաս, երբ տիրելը, ի վերջո, քեզ ոչինչ չի տալիս: Դա ինձ հիշեցրեց, որ հայրական տնից այն կողմ աշխարհ կա՝ ընդարձակ, անպատմելի գեղեցիկ աշխարհ: Աշխարհ, որն առայժմ ինձ համար անմատչելի էր: Այդ գիշերը դեռ երկար տարիներ հառնում էր իմ հիշողության մեջ: Կյանքիս բոլոր դժբախտություններն ասես ստիպում էին, որ ազատության այդ ակնթարթն ավելի պայծառ վառվեր, ինչպես փոքրիկ լույսը՝ խավարում:

Ես հասկացա, որ գոյատևման միակ հույսը փախուստն է՝ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր: Պետք էր կորչել այստեղից, որքան հեռու, այնքան լավ: Միայն այդպես կարող եմ ապահով լինել: Եվ ահա, վերջապես, երբ 18 տարեկան դարձա, բավարար գնահատականներ ստացա ու համալսարանի ուսանող դարձա, Սյուրեյի հայրական տնից հեռացա ու կարծում էի, թե ազատվեցի:

Ինչպե՜ս էի սխալվում:

Այն ժամանակ դեռ չգիտեի, բայց արդեն ուշ էր. ես հորս կերպարն ամուր տեղավորել էի իմ ներսում, պահել, խորը թաղել անգիտակցական ոլորտում: Որքան էլ հեռու փախչեի, նրան ինձ հետ էի տանում: Ինձ հետապնդում էր նրա ձայնի դժոխային, անգութ, մոլեգին երգչախումբը՝ աղաղակելով, որ անարժան եմ, խայտառակ, ոչնչություն:

Համալսարանի առաջին կուրսի քննաշրջանին, առաջին ցուրտ ձմեռը, ձայներն այնքան բարձր էին, այնքան կաթվածահար անող, որ ինձ վերահսկում էին: Վախից կարկամած անկարող էի տնից դուրս գալ, մարդկանց հետ շփվել, ծանոթություններ հաստատել: Կարող էի և հայրական տնից առհասարակ չհեռանալ: Պարտվել էի, ծուղակն ընկել: Անկյուն էի քշվել: Ելք չկար:

Բայց անսպասելիորեն հայտնվեց մի լուծում:

Դեղատնից դեղատուն էի գնում գնելով պարացետամոլ: Մեկ անգամից ընդամենը մի քանի տուփ էի առնում, որ կասկած չհարուցեմ, թեև իզուր էի անհանգստանում: Ոչ ոք ինձ վրա ուշադրություն չէր դարձնում. երևի դարձել էի անտեսանելի: Անկեղծ ասած, հենց այդպես էլ զգում էի:

Սենյակումս ցուրտ էր, մատներս թմրել էին ու չէին ենթարկվում, երբ բացում էի պարացետամոլի տուփերը: Աներևակայելի ջանք էր պետք, որ ամբողջը կուլ տամ: Նպատակիս հասա. հաբերը մեկը մյուսի հետևից իմ ստամոքսում հայտնվեցին: Հետո սողացի դեպի նեղլիկ, անհարմարավետ մահճակալս: Փակեցի աչքերս ու սկսեցի մահվան սպասել...

Բայց մահը չեկավ:

Փոխարենը ներսս շամփրեց այրող, ոլորող ցավը: Երկտակ ծալված՝ մաղձի հետ փսխեցի նաև կիսամարս հաբերը: Պառկել էի մթան մեջ, ստամոքսս այրվում էր. թվում էր՝ մի ամբողջ հավերժություն է անցել: Իսկ հետո խավարում կամաց-կամաց հասկացա. մեռնել չէի ուզում: Դեռ չէի ուզում. ախր չէի հասցրել կարգին ապրել:

Այդ միտքն անորոշ, աղոտ հույս ներշնչեց, ստիպեց գիտակցել, որ մենակ չեմ հաղթահարի. ինձ օգնություն էր պետք:

Օգնությունը ստացա հանձին Ռութի՝ հոգեթերապևտի, որին ինձ մոտ էր ուղարկել համալսարանի խորհրդատվական ծառայությունը: Ճերմակահեր ու թմբլիկ Ռութն արտաքուստ նման էր բարեհամբույր տատիկի: Հաճելի ժպիտ ուներ, որին ուզում էի հավատալ: Սկզբում հիմնականում լռում էր: Ինքը լսում էր, ես՝ խոսում: Պատմում էի իմ մանկության, մեր տան, ծնողներիս մասին: Խոսելիս նկատեցի, որ ինչքան էլ տհաճ մանրամասներ հիշեի, միևնույն է, ոչինչ չէի զգում: Կտրված էի իմ հույզերից, ինչպես ձեռքից հատված դաստակը: Խոսում էի ցավոտ հիշողությունների և ինքնակործանման նոպաների մասին, բայց ոչինչ չէի զգում:

Երբեմն, սակայն, Ռութին էի նայում: Ու զարմանքով նկատեցի, որ լսելիս աչքերն արցունքոտվում են: Գուցե այն, ինչ կասեմ, դժվար է հասկանալ, բայց արցունքները նրանը չէին:

Իմն էին:

Այն ժամանակ, իհարկե, չհասկացա: Բայց թերապիան հենց այդպես է աշխատում: Հիվանդն իր անցանկալի ապրումները փոխանցում է հոգեբույժին, իսկ բժիշկն իր ուսերին է առնում բեռը, որը հիվանդը վախենում է զգալ, և այդ պահերը նրա փոխարեն է ապրում: Իսկ հետո հիվանդին դանդաղ վերադարձնում է իր զգացմունքները: Ճիշտ այդպես Ռութն էր դրանք կամաց-կամաց ինձ վերադարձնում:

Իմ և Ռութի հանդիպումները շարունակվեցին մի քանի տարի: Նա իմ կյանքում մնում էր կայուն մեծություն: Ռութի օգնությամբ ես յուրացրի ուրիշ մարդու հետ հարաբերությունների մի նոր տեսակ՝ հիմնված փոխադարձ հարգանքի, ազնվության ու բարության, այլ ոչ կշտամբանքի, չարության ու բռնության վրա: Ես դանդաղ, բայց վստահորեն սկսեցի ինձ ընկալել այլ

կերպ: Արդեն առաջվա պես պարպված չէի, հույզերս սկսել էին շատանալ. համարյա չէի վախենում: Ատելի ներքին երգ-չախումբն ամբողջ ընթացքում չլքեց ինձ, բայց հիմա նրան կարող էի հակադրել Ռութի ձայնը և սկսեցի ավելի քիչ ու-շադրություն դարձնել: Արդյունքում գլխիս ձայները սկսեցին մարել, իսկ երբեմն ժամանակավորապես անհետանում էին: Այդպիսի պահերին աներևակայելի անդորրի, երբեմն եր-ջանկության զգացում էի ունենում:

Հոգեթերապիայի սեանսները տառացիորեն փրկեցին կյանքս: Եվ, որն ավելի կարևոր է, փոխեցին կյանքիս որակը: Զրույցների միջոցով բուժումն ինձ վրա ամենախորը ազդե-ցությունը թողեց. այն կանխորոշեց իմ կյանքը բառիս ամե-նախորը իմաստով: Փաստորեն հոգեբուժության սեանսները կանխորոշեցին իմ հետագա ուղին:

Հիմա գիտեի, որ հենց դա է իմ կոչումը:

Համալսարանն ավարտելով Լոնդոնում սկսեցի հոգեթերա-պիայի դասընթացի մասնակցել: Ուսմանը զուգահեռ շարու-նակում էի Ռութին այցելել: Նա աջակցում ու քաջալերում էր ինձ, չնայած զգուշացնում էր, որ իմ ընտրած ճանապարհի հարցում մոլորություններ չունենամ:

- Դա այգում զբոսանք չէ,- ասաց: Եվ իրավացի էր: Հիվանդ-ների հետ աշխատելը, «կեղտոտ սպիտակեղեն» քրքրելն ինչ-պե՞ս հաճելի կոչես:

Հիշում եմ առաջին այցս հանցագործների համար նա-խատեսված հոգեբուժական բաժանմունք: Դեռ նոր էի տեղ հասել, երբ հիվանդն իջեցրեց շալվարը, պպզեց ու աղիները ուղիղ իմ դիմաց դատարկեց: Գարշահոտ կույտ արտաթո-րեց: Հետո էլի շատ դեպքեր եղան՝ ոչ այդքան նողկալի, բայց

նույնքան դրամատիկ. անհաջող ու փնթի ինքնասպանություններ, ինքնավնասման փորձեր, անվերահսկելի հիստերիա ու վիշտ. թվում էր՝ այլևս անհնար է դիմանալ: Բայց ամեն անգամ ինչ-որ կախարդանքով դիմում էի դեռևս չսպառված ներքին ռեսուրսներիս: Ու վիճակս թեթևանում էր:

Զարմանալի է, թե մարդն ինչ արագ է վարժվում հոգեբուժարանի տարօրինակ, նոր աշխարհին: Ժամանակի հետ դադարում ես խելագարությունից վախենալ, ընդ որում, ոչ միայն ուրիշների, այլև սեփական: Ես համոզված եմ, որ բոլորս էլ խելագար ենք, պարզապես յուրաքանչյուրս յուրովի:

Ահա թե ինչու և ինչպես կապ հաստատեցի Ալիսիա Բերենսոնի հետ: Բախտս բերել էր: Երիտասարդ տարիքում հոգեթերապևտի գրագետ միջամտության շնորհիվ կարողացա խուսափել անդունդից, որից անդին խելագարության խավարն է սկսվում: Մտքումս, սակայն, մշտապես մեկ այլ հնարավոր սցենար էր պտտվում. ես կարող էի խելագարվել և մինչև կյանքիս վերջն ապրել փակ, հատուկ հաստատությունում, ինչպես Ալիսիան: Եվ միայն Աստծո ողորմությամբ այդպես չեղավ...

Բնականաբար, այս ամենն Ինդիրա Շարմային չէի կարող պատմել՝ ի պատասխան նրա այն հարցին, թե ինչու եմ ընտրել հոգեթերապևտի մասնագիտությունը: Ի վերջո, դա աշխատանքի ընդունվելու հարցազրույց էր, իսկ ես հրաշալի գիտեի խաղի կանոնները:

- Եվ ընդհանրապես,- ասացի բարձրաձայն,- իսկական հոգեբույժ կարելի է դառնալ միայն փորձ ձեռք բերելով՝ անկախ նախնական նպատակներից:

Ինդիրան գլխով հավանության նշան արեց:

– Միանգամայն իրավացի եք: Ճիշտ նկատեցիք,– ասաց:

Հարցազրույցը հաջող անցավ: Ինդիրայի խոսքով՝ Բրոդ-մուրում աշխատելու փորձն ինձ մասնագիտորեն կոփել էր, ինչը վկայում էր, որ ընդունակ եմ հաղթահարելու ծայրահեղ բարդ հոգեբանական վիճակները: Հարցազրույցի ավարտին ինձ այս պաշտոնն առաջարկեցին, ու ես համաձայնեցի:

Մեկ ամսից ուղևորվեցի Գրոուվ:

4

Գրոուվ ժամանեցի հունվարյան մի ցուրտ առավոտ: Ճանապարհի երկայնքով շարված մերկ ծառերը կմախքներ էին հիշեցնում: Երկինքը սպիտակ էր, ձյունելու պատրաստ ամպերից ծանրացած:

Մուտքի մոտ սպասելիս գրպանիցս սիգարետ հանեցի: Մի շաբաթից ավել չէի ծխել: Ինքս ինձ խոստացել էի, որ այս անգամ ծխելն ընդմիշտ կթողնեմ: Բայց հիմա արդեն հանձնվում էի: Ինձ վրա զայրանալով սիգարետը կպցրի: Հոգեթերապևտները հակված են համարել, որ ծխելը կախվածություն է, և ցանկացած պարկեշտ մասնագետ, պետք է կարողանա այն հաղթահարել: Որպեսզի ծխախոտի հոտը չգա, անանուխի մի քանի բարձիկ գցեցի բերանս ու ծխելիս շարունակեցի ծամել՝ միաժամանակ ցատկոտելով մի ոտքից մյուսին:

Դողում էի, բայց, անկեղծ ասած, ավելի շատ հուզմունքից, քան ցրտից: Հանկարծ սկսեցի կասկածել: Բրոդմուրի գործընկերս առանց դեսուդեն ընկնելու հայտարարել էր, որ սխալ եմ անում: Ակնարկեց, որ Գրոուվ մեկնելու որոշումս խափանում է գլխապտույտ կարիերա անելու հեռա-

նկարը: Ասաց, որ այդ հաստատության և մասնավորապես պրոֆեսոր Դիոմիդիսի մասին լավ կարծիք չունի:

- Ոչ մի օրենքի չի ենթարկվում: Խմբային բուժման ոլորտում մեծ գործ է անում. մի ժամանակ Ֆուքսի[1] հետ է աշխատել: 1980-ականներին Հարթֆորդշիրում ղեկավարել է այլընտրանքային հոգեբույժների համայնքը: Թերապիայի այդ ձևը ֆինանսական առումով կենսունակ չէ հատկապես այսօր...

Նա մի պահ դադար տվեց, հապաղեց, հետո ցածր ձայնով ավելացրեց.

- Թեո, չեմ վախեցնում: Բայց ասում են՝ Գրոուվում լուրջ կրճատումներ են սպասվում: Վեց ամսից կարող ես առանց աշխատանքի մնալ: Լավ մտածիր՝ արժի՞ ռիսկի դիմել:

Զուտ քաղաքավարությունից դրդված ձևացրի, թե մտածում եմ:

- Իհարկե, արժի,- ասացի:

Օրորեց գլուխը:

- Կարիերադ կկործանես... բայց եթե արդեն որոշել ես...

Ալիսիա Բերենսոնին բուժելու նվիրական երազանքիս մասին նրան ոչինչ չպատմեցի: Իհարկե, կարող էի հասկանալի եզրույթներով ասելիքս ձևակերպել, օրինակ, որ Ալիսիայի հետ աշխատանքն ապագայում գիրք կամ գիտական աշխատանք կդառնա: Թեև գիտեի, որ իմաստ չունի. նա կրկնելու էր, որ սխալ եմ գործում: Իսկ գուցե գործընկերս իրավացի՞ էր: Շուտով ամեն ինչ կպարզվի:

Հանգցրի սիգարետը, հանդարտվեցի ու ներս մտա:

Գրոուվն էջուեր հիվանդանոցի ամենահին մասնաշենքում

---

[1] Siegmund Heinrich Fuchs - Զիգմունդ Ֆուքս (1898-1976), ազգությամբ գերմանացի անգլիացի հոգեվերլուծաբան, խմբային վերլուծության հիմնադիրներից:

էր: Սկզբում եղել է կարմիր աղյուսով շարված վիկտորիանական ոճի շինություն, հետո աստիճանաբար շրջապատվել է ավելի մեծ ու այլանդակ կցակառույցներով: Գրոուվը հենց այս համալիրի խորքում էր: Միակը, որ հուշում էր շենքի վտանգավոր բնակիչների մասին, անվտանգության տեսախցիկներն էին, որ աչք ածող գիշատիչ թռչունների պես թառել էին ցանկապատին: Ամեն կերպ փորձել էին հարմարավետ դարձնել նախասրահը: Ընդունարանում ամեն ինչ արված էր բարենպաստ մթնոլորտ ստեղծելու համար. սրահում մեծ, կապույտ բազմոցներ էին, պատերից կախված էին հիվանդների անհմուտ, մանկական նկարները: Գրոուվն ավելի շատ հիշեցնում էր մանկապարտեզ, քան հատուկ պահպանվող հոգեբուժական բաժանմունք:

Շուտով ինձ մի բարձրահասակ մարդ մոտեցավ: Թեթև ժպտաց ու ձեռքը պարզեց: Ասաց, որ անունը Յուրի է, ավագ բուժեղբայրն է:

- Բարի գալուստ Գրոուվ,- ասաց Յուրին: - Ցավոք, դիմավորող պատվիրակության կազմում միայն ես եմ:

Յուրին հաճելի արտաքին ուներ, ամրակազմ էր, արտաքինից մոտ 40 տարեկան: Մուգ մազեր ուներ, օձիքի տակից երևում էր դաջվածքի մի մասը՝ պարանոցով վերև ոլորվող տոհմական զարդանախշ: Նրանից փչում էր ծխախոտի ու սափրվելու լոսյոնի քաղցր հոտ: Չնայած երբեմն զգացվող թեթև առոգանությանը՝ անգլերենն անթերի էր:

- Յոթ տարի առաջ եմ Լատվիայից այստեղ տեղափոխվել,- պատմեց: - Անգլերեն ոչ մի բառ չգիտեի: Մեկ տարի հետո արդեն սահուն խոսում էի:

- Վատ չէ:

- Անգլերեն սովորելը հեշտ է: Այ, եթե փորձեք լատիշերե՛ն սովորել,- Յուրին ծիծաղեց ու գոտուց արձակեց զնգոցով իրար խփվող բանալիների շղթան: Մի օղակապ հանեց ու ինձ տվեց: -Մեկտեղանոց հիվանդասենյակների բանալիներն են: Ահա և բաժանմունքների մուտքի ծածկագրերը, պետք կգան:

- Ինչ շատ են: Բրոդմուրում բանալիներն ավելի քիչ էին:

- Դե հա: Վերջերս ստիպված եղանք անվտանգությունը մի քիչ խստացնել, Ստեֆանիի այստեղ տեղափոխվելուց հետո...

- Ո՞վ է Ստեֆանին:

Պատասխանի փոխարեն Յուրին գլխով ցույց տվեց ընդունարանի սեղանիկի հետևի դռնից հայտնված կնոջը: Երևում էր, որ կարիբական ծագում ունի, մոտ 45 տարեկան էր, սուր, կարճ սանրվածքով:

- Ստեֆանի Քլարկ, Գրոուվի կառավարիչ,- ներկայացավ կինը:

Ստեֆանիի ժպիտը համոզիչ չէր: Նկատեցի, որ նրա ձեռքսեղմումն ավելի ամուր ու վճռական էր, քան Յուրիինը, ու նաև պակաս սիրալիր:

- Որպես այս բաժանմունքի կառավարիչ,- ասաց,- առաջնահերթ ուշադրություն եմ դարձնում անվտանգությանը՝ թե՛ հիվանդների, թե՛ անձնակազմի: Եթե Ձեր անվտանգությունն ապահովված չէ, ուրեմն հիվանդներն էլ ապահով չեն,- նա ինձ մի փոքր սարք տվեց՝ հարձակման դեպքում ահազանգելու համար,- միշտ ձեռքի տակ պահեք: Աշխատասենյակում հենց այնպես չթողնեք:

Դժվարությամբ հաղթահարեցի «Լսում եմ, տիկի՛ն» գոչելու ցանկությունը: Այս Ստեֆանիին ավելի լավ է չբարկացնել,

հակառակ դեպքում խնդիրներից չես խուսափի: Խիստ կին ղեկավարների հետ միշտ այդպիսի մարտավարություն էի վարում. խուսափում էի բախումից, մեջ չէի ընկնում:

- Հաճելի է ծանոթանալը,- ասացի ժպտալով:

Ստեֆանին գլխով արեց, բայց ի պատասխան չժպտաց:

- Ցուրին Ձեզ կուղեկցի աշխատասենյակ:

Հետո շրջվեց ու, այլևս ինձ չնայելով, հեռացավ:

- Գնացինք,- ասաց Ցուրին:

Նրա հետևից քայլեցի դեպի բաժանմունք տանող ծանր դուռը: Դռան մոտ, մետաղորսիչի կողքին, հերթապահում էր անվտանգության աշխատակիցը:

- Կարծում եմ, որ հիշեցնելու կարիք չունեք,- ասաց Ցուրին: - Ոչ մի սուր առարկա, ոչինչ, որ կարելի է որպես զենք օգտագործել:

- Կրակայրիչ նույնպես չի կարելի,- ավելացրեց աշխատակիցը: Երբ ինձ խուզարկեց, կրակայրիչը գրպանիցս հանեց և հանդիմանությամբ ինձ նայեց:

- Կներեք,- ասացի,- լրիվ մոռացել էի:

Ցուրին ձեռքի շարժումով առաջարկեց հետևել իրեն:

- Ձեզ աշխատասենյակ կուղեկցեմ,- ասաց: - Հիմա բոլորն ընդհանուր ժողովի են, դրա համար էլ այսպես լուռ է:

- Կարող եմ միանալ նրանց,- հարցրի:

- Ժողովի՞ն,- զարմացավ Ցուրին: - Չե՞ք ուզում նախ աշխատասենյակ մտնել:

- Հետո էլ կմտնեմ, եթե Ձեզ համար դժվար չէ:

Թոթվեց ուսերը:

- Ինչպես կուզեք: Ուրեմն այս կողմ:

Քայլեցինք միմյանց հետ կապակցված միջանցքներով,

որոնք իրարից բաժանվում էին փակ դռներով. դրանք ռիթմիկ բացվում ու շրխկոցով փակվում էին, սողնակները ելնում էին, բանալիները՝ կողպեքների մեջ պտտվում: Դանդաղ առաջ էինք շարժվում:

Միջանցքի տեսքից դատելով՝ շենքն արդեն մի քանի տարի չէին նորոգել. պատերի ներկը թափվել էր, միջանցքները ներծծվել էին բորբոսի ու նեխման թույլ գարշահոտով:

Յուրին փակ դռներից մեկի առաջ կանգ առավ ու գլխով արեց:

- Հասանք,- ասաց: - Մտեք:

- Շնորհակալ եմ:

Մի պահ հապաղեցի, հավաքեցի մտքերս: Հետո բացեցի դուռն ու ներս մտա:

5

Ժողովը կարմիր աղյուսե պատին նայող բարձր, վանդակապատ լուսամուտներով, երկարուկ սենյակում էր: Սենյակից սուրճի և Յուրիի լոսյոնի հոտն էր գալիս: Մոտ 30 մարդ շրջանաձև նստած էր: Համարյա բոլորի ձեռքին թեյի կամ սուրճի թղթից բաժակներ էին. նրանք հորանջում էին ու ամեն կերպ ջանում արթնանալ: Ովքեր սուրճն արդեն խմել-վերջացրել էին, խաղում էին դատարկ բաժակներով՝ ճմռթում, հարթեցնում կամ կտոր-կտոր անում:

Ժողովն անցկացնում էին օրական մեկ-երկու անգամ. վարչական խորհրդակցության ու խմբային հոգեբուժության սեանսի պես մի բան էր: Օրակարգում ընդհանրապես հիվանդանոցին ու մասնավորապես հիվանդների բուժմանը վերաբերող հրատապ հարցեր էին: Պրոֆեսոր Դիոմիդիսի խոսքով՝ հիվանդներին իրենց բուժման գործընթացում ներգրավելու, քաջալերելու փորձ էր, որպեսզի նրանք իրենց վիճակի համար պատասխանատվություն կրեն. կարիք չկա նշել, որ այդ մեթոդը միշտ չէր աշխատում: Դիոմիդիսի անցյալը՝ խմբային թերապիայի սեանսների հետ կապված, հուշում էր, որ նա սիրում էր տարատեսակ հավաքներ

կազմակերպել ու հատկապես խրախուսում էր համատեղ աշխատանքը: Ըստ երևույթին, Դիոմիդիսին դուր էր գալիս լսարանի առաջ ելույթ ունենալը: «Թատերական իմպրեսարիոյի է հիշեցնում»,- մտածեցի, երբ պրոֆեսորը վեր կացավ ու գրկաբաց ընդառաջ եկավ:

- Թեո: Ահա և Դուք: Բարի գալուստ, համեցեք:

Դիոմիդիսը խոսում էր գրեթե աննկատ հունարեն առոգանությամբ, որը համարյա անհետացել էր Անգլիայում ապրած 30 տարիների ընթացքում: Բարետես տղամարդ էր ու չնայած 60-ն անց էր՝ եռանդուն, չարաճճի պահվածքով, ավելի երիտասարդ էր երևում և ավելի շատ նման էր թեթևամիտ հորեղբոր, քան հոգեբույժի: Բայց դա չէր նշանակում, որ Դիոմիդիսն իր հիվանդներին բավարար ուշադրություն չէր դարձնում. առավոտյան առաջինն էր գալիս՝ դեռ մինչև հավաքարարների գալը, և երկար մնում էր հիվանդանոցում, մինչև երեկոյան հերթափոխն էր հերթապահության անցնում, իսկ երբեմն ընդհանրապես իր առանձնասենյակի թախտին էր գիշերում: Երկու անգամ ամուսնալուծված Դիոմիդիսը կատակում էր, որ ամենահաջողվածն իր երրորդ ամուսնությունն էր, երբ կյանքը կապեց Գրոուվի հետ:

- Նստեք այստեղ,- ինձ նայելով Դիոմիդիսը ձեռքով իր կողքի դատարկ աթոռը ցույց տվեց: - Նստե՛ք, նստե՛ք: Նստե՛ք:

Նստեցի: Դիոմիդիսը պաթոսով ասաց.

- Թույլ տվեք ներկայացնել մեր նոր հոգեթերապևտին: Թեո Ֆաբեր: Եկեք ողջունենք Թեոյին՝ մեր փոքր, համերաշխ ընտանիքի նոր անդամին:

Մինչ Դիոմիդիսը խոսում էր, հայացք գցեցի շուրջս նստած մարդկանց Ալիսիային փնտրելով: Ավա՜ղ, նա չկար:

Ի տարբերություն պրոֆեսոր Դիոմիդիսի, որն անթերի էր հագնված՝ կոստյումով ու փողկապով էր, մյուսները հիմնականում կարճաթև վերնաշապիկներով կամ մարզաշապիկներով էին: Դժվար էր տարբերել՝ որն է հիվանդ, որը՝ բժիշկ: Մի քանի ծանոթ դեմք նկատեցի, օրինակ՝ Քրիստիանը: Նրան դեռ Բրոդմուրից էի ճանաչում: Ռեգբիի սիրահար հոգեբույժն էր՝ ջարդված քթով ու թուխ մորուքով: Բարետես էր, բայց փոքր-ինչ սարսափազդու: Բրոդմուրից հեռացել էր իմ՝ աշխատանքի անցնելուց կարճ ժամանակ անց: Հիշում եմ՝ Քրիստիանն ինձ այնքան էլ դուր չեկավ, բայց, անկեղծ ասած, նրա մասին քիչ բան գիտեի, որովհետև միասին երկար չէինք աշխատել:

Իհարկե, Ինդիրային հիշեցի, որը հարցազրույցն էր վարել: Նա ինձ ժպտաց: Ես երախտագիտությամբ լցվեցի. դա միակ բարյացակամ դեմքն էր: Հիվանդներն ինձ նայում էին բացահայտ կասկածանքով: Նրանց չէի մեղադրում: Նրանք բռնության են ենթարկվել՝ ֆիզիկական, բարոյական, սեռական, և շատ ժամանակ պիտի անցներ, մինչև սկսեին ինձ վստահել. եթե, իհարկե, վստահեն: Հիվանդները միայն կանայք էին՝ կոպտավուն, կնճռոտ, սպիապատ դեմքերով: Բոլորն էլ ծանր կյանք էին ապրել. սարսափն ու տառապանքը խեղել էին նրանց հոգեկան առողջությունը՝ մղելով հոգեկան հիվանդության հրեշավոր աշխարհը. անցած ճանապարհը դրոշմված էր նրանց դեմքերին, ինչն անհնար էր չնկատել:

Իսկ Ալիսիան: Որտեղ էր նա: Դարձյալ հայացքս սահեցրի դեմքերի վրայով, բայց այդպես էլ նրան չգտա: Ու հանկարծ հասկացա, որ ուղիղ նրան եմ նայում: Ալիսիան նստել էր իմ դիմաց՝ շրջանի հակառակ կողմում:

Չէի նկատել, որովհետև անտեսանելի էր:

Ալիսիան ծանր փլվել էր աթոռին: Հաստատ հանգստացնող դեղամիջոցներ էին ներարկել: Ձեռքով բռնել էր թղթե բաժակը: Դողացող ձեռքից թեյը բարակ շիթով հատակին էր ծորում: Ինձ մի կերպ զսպեցի, որ չմոտենամ ու բաժակը չուղղեմ: Ալիսիայի հայացքն այնքան բացակա էր, որ, վստահ եմ, չէր էլ նկատի:

Չէի սպասում, որ Ալիսիան այդպիսի ողբալի վիճակում կլինի: Երբեմնի գեղեցիկ կնոջից՝ խորունկ, կապույտ աչքերով, դիմագծերի կատարյալ համաչափությամբ, գրեթե ոչինչ չէր մնացել: Ալիսիան ահավոր նիհարել էր, անխնամ տեսք ուներ: Երկար, կարմրաշեկ վարսերը վերածվել էին ուսերին կախված կեղտոտ ու խճճված զանգվածի: Եղունգները կրծոտած էին, տեղ-տեղ պոկած: Դաստակների վրա կտրվածքների հին սպիներն էին ճերմակին տալիս. այդ նշանները տեսել էի Ալիսիայի դիմանկարում՝ «Ալկեստիսում»: Մատներն անընդհատ դողում էին. ռիսպերիդոնի կամ այլ ծանր հոգեմետ դեղերի կարգի թմրամիջոցների ակնհայտ, կողմնակի ազդեցությունից էր: Կիսաբաց բերանի անկյուններում հավաքվող թուքը փայլում էր. անվերահսկելի թքարտադրությունը, դժբախտաբար, այդպիսի բուժման ևս մեկ կողմնակի հետևանքներից է:

Հանկարծ պրոֆեսոր Դիոմիդիսի՝ ինձ ուղղված հայացքը որսացի: Ալիսիայից կտրվեցի ու նրան շրջվեցի:

- Կարծում եմ՝ ինձնից լավ կկարողանաք Ձեր մասին պատմել, Թեո,- ասաց: - Թեկուզ մի քանի բառով:

- Շնորհակալ եմ,- գլխով արեցի: - Դժվար թե կարողանամ ասվածին որևէ բան ավելացնել: Թերևս միայն, որ շատ ուրախ եմ, որ այստեղ եմ: Հուզված եմ, մի քիչ լարված, բայց հույսերով

լի: Շատ եմ ուզում բոլորի հետ ծանոթանալ, մանավանդ հիվանդների: Ես...

Հանկարծ բացվող դռան շրխկոցը խոսքս կտրեց: Սկզբում մտածեցի, թե աչքիս է երևում: Սենյակ ներխուժեց մի աժդահա կին՝ ձեռքին երկու ատամնավոր, փայտե, սրածայր առարկա, և, նիզակների պես գլխից վեր բարձրացնելով, մեզ վրա նետեց: Հիվանդներից մեկը ձեռքերով փակեց դեմքն ու ճչաց:

Համարյա վստահ էի, որ սուր ծայրակալներն ուր որ է կխոցեն մեզ, բայց մեր շրջանի ուղիղ կենտրոնում դղրդոցով, հատակին ընկան: Ու նոր միայն տեսա, որ նիզակներ չեն: Բիլիարդի երկու կես եղած ձողեր էին: Ծանրամարմին, մոտ 40 տարեկան, թխահեր հիվանդը, ըստ ամենայնի՝ թրքուհի, գոռաց.

– Ո՞նց եմ կատաղում: Արդեն մի շաբաթ է՝ ձողը ջարդվել է, իսկ սրանցից ոչ մեկի պետքն էլ չէ:

– Կարգին խոսեք, Էլիֆ,– ասաց Դիոմիդիսը: – Ես պատրաստ չեմ քննարկել Ձեր բողոքը, քանի դեռ չենք որոշել՝ արժի՞ թույլ տալ, որ մասնակցեք ժողովին՝ նկատի ունենալով, որ այսքան ուշ եք հայտնվել: – Պրոֆեսորը հանդիսավոր թեքեց գլուխն ու դարձավ ինձ: – Ի՞նչ կարծիքի եք, Թեո:

Թարթեցի ու միանգամից չկարողացա պատասխանել:

– Կարծում եմ՝ կարևոր է հարգել իրար ու ժողովին ժամանակին գալ ...

– Ոնց որ դու, հա՛,– տղամարդու ձայն լսվեց:

Շրջվեցի ձայնի կողմն ու տեսա՝ Քրիստիանն էր: Նա գոհ իր կատակից ծիծաղեց: Ձևացրի, թե ժպտում եմ ու նորից Էլիֆին դարձա:

– Նա միանգամայն իրավացի է: Ես էլ եմ այսօր ուշացել: Սա լավ դաս կլինի երկուսիս համար:

- Ինչ ես դուրս տալիս,- ասաց Էլիֆը: - Դու ընդհանրապես ո՞վ ես:

- Էլի՛ֆ, բառերը չափավորե՛ք,- հանդիմանեց Դիոմիդիսը: - Մի՛ ստիպեք, որ Ձեզ սև ցուցակ գցեմ: Նստեք, խնդրում եմ:

Էլիֆը ոտքի վրա մնաց:

- Բա ձո՞ղը:

Հարցը պրոֆեսոր Դիոմիդիսին էր ուղղված, բայց նա ինձ նայեց՝ իմ պատասխանին սպասելով:

- Էլի՛ֆ, տեսնում եմ՝ շատ եք վրդովվել ձողը ջարդվելու պատճառով,- ասացի: - Երևի ջարդողն էլ է զայրացած եղել: Դրանից հետևյալ հարցն է բխում՝ այսպիսի հաստատությունում մենք բոլորս մեր զայրույթն ինչպե՞ս ենք կառավարում: Գուցե կանգ առնենք այս հարցի վրա ու միասին քննարկենք: Նստե՛ք:

Էլիֆը զայրացած չռեց աչքերը, բայց և այնպես նստեց:

Ինդիրան գոհ ինձ գլխով արեց: Նա ու ես սկսեցինք զայրույթի մասին խոսել՝ փորձելով հիվանդներին բանավեճի հրավիրել, որպեսզի պատմեն իրենց զայրույթի բռնկումների մասին: Կարծում եմ՝ մեզ հաջողվեց: Զգում էի պրոֆեսոր Դիոմիդիսի գնահատող հայացքը: Երևում էր, որ գոհ է:

Պատահմամբ Ալիսիային նայեցի: Զարմանքով նկատեցի, որ ինձ կամ առնվազն իմ կողմն է նայում: Հայացքը պղտոր էր ու մշուշոտ, ասես ամբողջ ուժով ջանում էր կենտրոնացնել աչքերն ու տեսնել:

Եթե ինձ ասեին, որ այդ պարպված պատիճը նախկին շքեղ, ինչպես ճանաչողներն էին ասում, շլացուցիչ, վառ ու կենսախինդ Ալիսիա Բերենսոնն է, պարզապես չէի հավատա: Այդ պահին վերջնականապես հասկացա, որ Գրոուվ տեղափոխվելը ճիշտ որոշում էր: Վերջին կասկածներս չքացան: Վճռեցի

ամեն գնով հասնել նրան, որ Ալիսիա Բերենսոնն իմ հիվանդը դառնա:

Ժամանակ չկար. Ալիսիան կորած էր: Նա անդառնալի մարել էր ու կորել:

Եվ ես որոշեցի հետ բերել նրան:

թվագրել է 1915-ին կայծ

6

Պրոֆեսոր Դիոմիդիսի աշխատասենյակը հիվանդանոցի ամենաքայքայված մասնաշենքում էր: Միջանցքի անկյուններում սարդոստայն էր, միայն մի քանի լամպ էր վառվում: Թակեցի դուռն ու ներսից անմիջապես լսեցի.

– Մտեք:

Պտտեցի բռնակն ու բացեցի ճռնչացող դուռը: Սենյակի օդից անմիջապես ցնցվեցի: Հիվանդանոցին հատուկ հոտ չկար: Հականեխիչ ու ախտահանիչ նյութերի հոտ չէր, այլ, որքան էլ տարօրինակ է, փայտի, լարերի ու աղեղների, կահույքի փայլեցման նյութի ու մոմի հոտ էր գալիս, ինչպես նվագախմբի փոսում: Մի քանի վայրկյան աչքերս վարժվում էին կիսախավարին, հետո նկատեցի պատի տակ դրած դաշնամուրը՝ հոգեբուժական հիվանդանոցի հետ անհամատեղելի առարկա: Ստվերների միջից շողում էին մոտ երկու տասնյակ մետաղական նոտակալներ, սեղանին կիտված էր նոտաների տրցակը, և այդ փխրուն թղթե աշտարակը համարյա հասնում էր առաստաղին: Մյուս սեղանի վրա ջութակ էր, կողքին՝ հոբոյ ու ֆլեյտա: Քիչ հեռվում տավիղն էր՝ գեղեցիկ փայտե շրջանակով ու լարերի փնջով հսկա գործիք:

Զարմանքից քարացել էի: Դիոմիդիսը ծիծաղեց:

- Երաժշտական գործիքնե՞րը Ձեզ այդպես զարմացրին,- ասաց նա՝ աշխատասեղանի առաջ նստած, քթի տակ ծիծաղելով:

- Ձե՞ր են:

- Այո: Երաժշտությունն իմ հոբբին է: Չնայած ստում եմ, կիրքն է,- ու նա ցուցամատը հանդիսավոր վեր պարզեց: Պրոֆեսորը խոսելու աշխույժ ոճ ուներ. եռանդուն խոսքը ձեռքի ամենատարբեր շարժումներով էր ուղեկցում ու դարձվածքներն ընդգծում, ասես անտեսանելի նվագախումբ ղեկավարեր:

- Ես սիրողական երաժշտական խումբ եմ ղեկավարում,- ասաց: - Մեր կոլեկտիվի անդամ կարող են դառնալ բոլոր ցանկացողները թե՛ անձնակազմից, թե՛ հիվանդներից: Կարծում եմ՝ երաժշտությունն ամենաուժեղ բուժամիջոցներից է,- այստեղ պրոֆեսորը դադար տվեց ու փոքր-ինչ երգեցիկ արտասանեց: - «Միայն երաժշտությունը կարող է հանգըստություն բերել վրդովված հոգուն...»[1]: Համաձա՞յն եք:

- Իհարկե:

- Հըմ,- աչքերը կկոցելով հարցրեց Դիոմիդիսը: - Նվագու՞մ եք:

- Կոնկրետ ի՞նչ:

- Որևէ երաժշտական գործիք: Թեկուզ եռանկյունի...

- Վախենամ, որ ընդունակություններ չունեմ,- օրորեցի գլուխս: - Երաժշտության հետ առնչություն չունեմ: Միակ երաժշտական գործիքը, որ յուրացրել եմ դեռևս դպրոցում, մագնիտոֆոնն է:

---

[1] Հատված կլասիցիզմի դարաշրջանի անգլիացի դրամատուրգ Ուիլյամ Քոնգրիվի (1670-1729) «Սգավոր հարսնացուն» պիեսից:

– Ուրեմն կկարողանամք նոտաներ կարդալ: Դա մեծ առավելություն է: Ընտրեք ցանկացած գործիք: Ես կսովորեցնեմ:

– Ավաղ, համբերությունս չի հերիքի,– ժպտացի գլուխս օրորելով:

– Հրաժարվո՞ւմ եք: Ի դեպ, համբերությունը լավ հոգեթերապևտի գլխավոր արժանիքն է: Գիտե՞ք, պատանեկան տարիներին ոչ մի կերպ չէի կարողանում որոշել ինչ դառնալ՝ երաժի՞շտ, քահանա՞, թե՞ բժի՞շկ,– ծիծաղեց Դիոմիդիսը: – Հիմա երեքն էլ համատեղում եմ:

– Այո, ճի՞շտ եք:

– Ի դեպ,– ասաց՝ առանց դադար առնելու, միանգամից այլ թեմայի անցնելով,– Ձեզ աշխատանքի ընդունելիս՝ իմ ձայնը վճռորոշ է եղել: Այսպես ասած, քվեարկության պես մի բան եղավ: Ես միանշանակ Ձեր օգտին արտահայտվեցի: Գիտե՞ք ինչու: Ձեր մեջ ինչ-որ բան էի տեսել, Թեո... Դուք իմ երիտասարդությունն եք հիշեցնում... Ո՞վ գիտի: Գուցե մի քանի տարի հետո Գրոուվի ղեկավարի պաշտոնը զբաղեցնեք,– հանդիսավոր դադար տվեց, ապա հոգոց հանելով ավելացրեց,– իհարկե, եթե այդ ժամանակ հիվանդանոցը փակած չլինեն:

– Կարծում եք՝ կփակե՞ն:

– Ո՞վ գիտի: Հիվանդները քիչ են, անձնակազմը՝ շատ մեծ: Հիմա սերտ գործակցում ենք կառավարող ընկերության հետ. փորձում ենք «տնտեսապես ավելի կենսունակ» մոդել գտնել: Մեզ անընդհատ հետևում են, ուսումնասիրում, մի խոսքով, լրտեսում են: Կհարցնեք՝ ինչպե՞ս կարելի է բուժում իրականացնել նման պայմաններում: Ուինիքոթի խոսքով՝ չի կարելի բուժել այրվող շենքում,– Դիոմիդիսն օրորեց գլուխն ու հանկարծ իր տարիքից մեծ թվաց, ուժասպառ ու տանջված:

Հետո ձայնն իջեցրեց ու խորհրդավոր շշնջաց,- իմ կարծիքով՝ կառավարիչ Ստեֆանի Քլարկը նրանց հետ դավ է նյութում: Ի վերջո, կառավարող ընկերությունն է նրան վճարում: Ուշադիր հետևեք նրան ու ինքներդ կհամոզվեք:

Ինձ թվաց՝ Դիոմիդիսի խոսքում խելագարության նշույլներ հայտնվեցին, թեև դա գուցե հասկանալի էր: Վախենալով, որ ինչ-որ բան այն չեմ ասի, մի պահ նրբանկատորեն լռեցի: Իսկ հետո...

- Կուզեի մի հիվանդի մասին հարցնել,- ասացի: - Անունը Ալիսիա է:

- Ալիսիա Բերենսո՞ն,- Դիոմիդիսը տարօրինակ նայեց ինձ: - Ինչն է հետաքրքրում:

- Բուժական ինչ գործողություններ են անցկացվում նրա հետ: Անհատակա՞ն բուժում է ստանում:

- Ոչ:

- Հատուկ պատճա՞ռ կա:

- Փորձել են, հետո չեղարկեցին:

- Ինչո՞ւ: Ո՞վ էր աշխատում նրա հետ: Ինդիրա՞ն:

- Ոչ,- Դիոմիդիսն օրորեց գլուխը: - Իրականում Ալիսիայով անձամբ ես էի զբաղվում:

- Եվ ի՞նչ պատահեց:

Նա թոթվեց ուսերը:

- Նա հրաժարվեց իմ աշխատասենյակ գալ, ուստի ես գնացի նրա սենյակ: Սեանսների ընթացքում Ալիսիան ուղղակի նստում էր մահճակալին ու պատուհանից լուռ դուրս նայում: Հրաժարվում էր խոսել: Ինձ նույնիսկ չէր նայում,- նա բորբոքված թափահարեց ձեռքերը: - Ի վերջո, հասկացա, որ իզուր ժամանակ եմ վատնում:

– Երևի ճիշտ եք,– գլխով արեցի: – Մտածում եմ... գուցե այստեղ տեղափոխվելս...

– Այո,– Դիոմիդիսը հետաքրքրությամբ, ուշադիր ինձ էր նայում: – Շարունակեք:

– Հնարավոր է, չէ՞, որ Ալիսիան Ձեզ որպես իշխանության ներկայացուցիչ է ընկալել, որը... գուցե պատժիչ գործառույթով է օժտված: Չգիտեմ՝ ինչպիսին են եղել նրա հարաբերությունները հոր հետ, բայց...

Պրոֆեսորը ներողամիտ ժպիտով լսում էր, ասես անեկդոտ էի պատմում և ուր որ է ամենածիծաղելի տեղին էի հասնելու:

– Կարծում եք, որ Ալիսիան ավելի հեշտորեն շփման կգար երիտասարդ մարդու հետ,– ասաց: – Փորձեմ գուշակել... Օրինակ՝ Ձեզ հետ: Կարծում եք՝ կկարողանաք օգնել Ալիսիային, Թեո: Կկարողանաք Ալիսիային փրկել: Հասնել նրան, որ խոսի:

– Փրկելու հարցում համոզված չեմ, բայց կուզեի օգնել: Կուզեի փորձել:

Դիոմիդիսը ժպտաց. իրավիճակն ակնհայտորեն զվարճացնում էր նրան:

– Դուք առաջինը չեք: Ես էլ համոզված էի, որ կհաջողեմ: Տղա՛ս, Ալիսիան մունջ ծովահարս է, որը մեզ դեպի ժայռերն է կանչում, որոնց բախվելով փշուր-փշուր են լինում բժշկության ոլորտում մեր բարձր հավակնությունները: Ալիսիան ինձ արժեքավոր դաս տվեց՝ ստիպելով ընդունել պարտությունս,– ժպտաց նա: – Ըստ երևույթին, արժի, որ Դուք էլ ճաշակեք այդ դառը պտուղը:

– Եթե, իհարկե, պարտվեմ,– հանդուգն պատասխանեցի ես:

Դիոմիդիսի ժպիտն անհետացավ, ու դեմքին անվերծանելի արտահայտություն հայտնվեց: Կարճ լռությունից հետո վճռական ասաց.

– Դե, տեսնենք: Սկզբի համար պետք է Ալիսիայի հետ ծանոթանաք: Ձեզ դեռ չեն ծանոթացրել:

– Դեռ ոչ:

– Յուրիին խնդրեք, թող հանդիպումը կազմակերպի: Հետո անպայման զեկուցեք արդյունքի մասին:

– Լավ,– ասացի՝ ջանալով չմատնել ինձ պատած հուզմունքը: – Այդպես էլ կանեմ:

7

Բուժական սեանսներն անցնում էին մի փոքրիկ, նեղ բանտախուց կամ աղքատի կացարան հիշեցնող ուղղանկյուն սենյակում: Պատուհանը փակ ու վանդակապատ էր: Միակ կետը, որն ուշադրություն էր գրավում, սեղանին դրված անձեռոցիկների վառ վարդագույն տուփն էր. ամենայն հավանականությամբ, Ինդիրան էր դրել: Ոչ մի կերպ չեմ պատկերացնում հիվանդին անձեռոցիկ տվող Քրիստիանին:

Ես նստեցի մաշված, խունացած պաստառով երկու բազկաթոռներից մեկին: Ժամանակն անցնում էր: Ալիսիան չկար: Գուցե ընդհանրապես չի՞ պատրաստվում գալ: Գուցե չի՞ ուզում ինձ տեսնել: Ունի դրա իրավունքը:

Անհամբեր, տագնապած, նյարդայնացած վեր թռա բազկաթոռից ու մոտեցա պատուհանին: Ճաղերի արանքից դուրս նայեցի:

Երեք հարկ ներքև թենիսի դաշտի չափ բակ էր՝ կարմիր աղյուսից պատերով շրջապատված. պատերը շատ բարձր էին բարձրանալու համար, չնայած համոզված եմ, որ փախուստի փորձեր, համենայն դեպս, եղել էին: Ամեն օր, ճաշից հետո, հիվանդները կես ժամ խմբվում էին նեղլիկ բակում

մաքուր օդին, ընդ որում, նրանց ցանկությունը ոչ ոք հաշվի չէր առնում, ու ես հասկանում էի, թե այս ցուրտ եղանակին շատերն ինչու էին զբոսանքից հրաժարվում: Ոմանք մեկուսի կանգնած քթի տակ ինչ-որ բան էին մրմնջում, մյուսները զոմբիների պես աննպատակ հետուառաջ էին քայլում: Երրորդներն էլ, փոքրիկ խմբերով հավաքված, զրուցում էին, վիճում, ծխում: Ինձ չէին հասնում հիվանդների ձայները, բղավոցներն ու նյարդային ծիծաղը:

Ալիսիային միանգամից չնկատեցի: Հետո տեսա: Մենակ կանգնել էր բակի հեռավոր պատի տակ: Արձանի պես քարացած էր: Տեսա, որ Յուրին նրա կողմն է գնում: Նա դիմեց ոչ հեռվում հերթապահող բուժքրոջը: Բուժքույրը գլխով արեց: Յուրին մոտեցավ Ալիսիային՝ զգույշ, դանդաղ, ասես ինչ-որ վայրի կենդանու մոտենալիս լիներ: Նրան պարզապես խնդրել էի Ալիսիային ասել, որ նոր հոգեթերապևտն ուզում է իրեն տեսնել: Հատուկ շեշտել էի, որ հրավերը որպես խնդրանք ինչի, ոչ թե հրաման: Յուրին խոսում էր, իսկ Ալիսիան անշարժ կանգնած էր: Ո՛չ գլխով էր անում, ո՛չ տարուբերում գլուխը. ոչ մի շարժում, որը կվկայեր, թե նրա ասածը լսել է: Յուրին որոշ ժամանակ Ալիսիայի մոտ մնաց, հետո շրջվեց ու հետ դարձավ:

«Ահա և վերջ,- մտածեցի,- չի գա»: Սատանան տանի, իսկ ինչ էի սպասում: Այս ամենը ժամանակի զուր վատնում էր:

Եվ այդ պահին, ի զարմանս ինձ, Ալիսիան Յուրիի կողմը քայլեց, օրորվելով ու ոտքերը քարշ տալով հետևեց նրան, բակը կտրելով անհետացավ հիվանդանոցի ներսում:

Ուրեմն Ալիսիան կգա: Փորձեցի ինձ հավաքել ու պատրաստվել: Փորձեցի մտքումս խլացնել հորս ձայնի բացասական

արձագանքները, որը բղավում էր, թե արժանի չեմ այդ աշխատանքին, անպիտան ու խղճուկ խաբեբա եմ: «Սկսվե՛ք,- մտովի հրամայեցի ես: - Սկսվե՛ք, ո՞ւմ եմ ասում»:

Մի քանի րոպեից դուռը զգույշ ծեծեցին:

- Մտե՛ք,- ասացի:

Դուռը բացվեց: Միջանցքում Ալիսիան ու Յուրին էին: Նայեցի Ալիսիային, բայց ինձ չնայեց. գլուխը կախել էր:

- Եկավ,- հպարտ հայտարարեց Յուրին:

- Այո՛, տեսնում եմ: Բարև Ձեզ, Ալիսիա՛:

Չարձագանքեց:

- Ներս կգա՞ք:

Յուրին Ալիսիայի կողմը կռացավ, ասես ուզում էր առաջ հրել, բայց չդիպավ նրան, այլ փոխարենը շշնջաց.

- Մի՛ վախեցիր, սիրելի՛ս: Ներս գնա ու նստիր:

Ալիսիան մի քանի վայրկյան տատանվում էր, հետո Յուրիին նայելով դանդաղ ու անվստահ սենյակ մտավ: Անձայն՝ կատվի պես, աթոռին նստեց ու դողացող ձեռքերը ծնկներին դրեց:

Ուզում էի դուռը փակել, բայց Յուրին տեղից չշարժվեց:

- Մնացածը՝ ինքս: Շնորհակալ եմ,- ցածրաձայն ասացի նրան:

- Բայց ախր իրավունք չունեմ: Բացի այդ՝ պրոֆեսորն ասաց...,- Յուրին տագնապած էր:

- Պատասխանատվությունն ինձ վրա եմ վերցնում: Ամեն ինչ կարգին է,- գրպանիցս հանեցի ազդանշանի սարքը, որը պիտի օգտագործվեր ինձ վրա հարձակման դեպքում: - Տեսեք, թե ինչ ունեմ: Բայց վստահ եմ, որ դրա կարիքը չի լինի:

Նայեցի Ալիսիային: Ոչ մի նշան, որ լսել էր ինձ: Յուրին ակնհայտ դժգոհությամբ թոթվեց ուսերը:

- Եթե մի բան պատահի, դռան հետևում եմ:

- Դրա կարիքը չկա, բայց ամեն դեպքում շնորհակալ եմ:

Յուրին գնաց: Փակեցի դուռը: Սարքը սեղանին դրեցի: Ալիսիայի դիմաց նստեցի: Գետնին էր նայում: Մի պահ նրան ուսումնասիրեցի: Դեմքն անկիրք էր, քարացած, ասես բուժական դիմակ լիներ: Շատ էի ուզում իմանալ, թե դրա տակ ինչ է թաքնված:

- Շնորհակալ եմ, որ համաձայնեցիք գալ հանդիպման,- ասացի:

Սպասեցի պատասխանի, թեև առանձնապես հույս չունեի: Ուստի շարունակեցի.

- Այնպես է ստացվել, որ ես Ձեր մասին ավելի շատ բան գիտեմ, քան Դուք՝ իմ: Դուք մեծ համբավ ունեք: Բնականաբար, որպես նկարիչ: Ես Ձեր տաղանդի երկրպագուն եմ:

Ոչ մի արձագանք: Նստած տեղումս մի փոքր շարժվեցի:

- Ես պրոֆեսոր Դիոմիդիսից Ձեզ հետ հանդիպելու թույլտվություն խնդրեցի, ու նա կազմակերպեց,- ասացի: - Շնորհակալ եմ, որ եկաք:

Լռեցի՝ Ալիսիայից որևէ ակնարկի սպասելով. գուցե աչքերը կկոցի, գլխով անի կամ հոնքերը խոժոռի: Ոչինչ: Փորձեցի պատկերացնել՝ ինչի մասին է մտածում: Գուցե Ալիսիային այնքան դեղ են տվել, որ ընդհանրապես ի վիճակի չէ մտածելու:

Ռութին հիշեցի՝ թերապևտիս: Հետաքրքիր է՝ ինչ կաներ իմ փոխարեն: Ռութն ասում էր, որ յուրաքանչյուր մարդու մեջ երկու սկիզբ կա՝ լավ ու վատ, և որ առողջ բանականությունն ունակ է դիմանալու այդ երկվությանը՝ միաժամանակ լավ ու վատով խաղալով: Հոգեկան հիվանդությունը հենց այդ հավասարակշռության խախտումն է. մենք կորցնում ենք կա-

պը ես-ի անցանկալի մասերի հետ: Ալիսիային օգնելու համար պետք է գտնել այն հատվածները, որոնք նա թաքցրել է իր ամենաներսում, գիտակցության սահմանից անդին, հետո կետ առ կետ միացնել նրա հոգեկան լանդշաֆտի առանձին կետերը: Ու միայն դրանից հետո պարզ կդառնա այն գիշերվա զարհուրելի դեպքի համատեքստը, երբ Ալիսիան սպանեց ամուսնուն: Վերականգնման ընթացքը դանդաղ ու աշխատատար է լինելու:

Նոր հիվանդի հետ աշխատանքը սկսելուց առաջ սովորաբար չեմ շտապում. բուժական մեթոդների ընտրության հարցում նախասահմանված օրակարգ չկա: Որպես կանոն, զրույցներից ենք սկսում, որոնք տևում են մի քանի ամիս: Կատարյալ տարբերակ կլիներ, եթե Ալիսիան պատմեր իր, իր կյանքի, մանկության մասին: Իսկ ես կլսեի՝ կտորներից կամաց-կամաց հավաքելով ամբողջական պատկերը, բավականաչափ երկար, որ հստակ ու օգտակար նշումներ անեմ: Բայց այս դեպքում զրույց չի ստացվի: Լռություն է: Եվ ինձ անհրաժեշտ տեղեկությունները ստիպված եմ լինելու հատ-հատ հավաքել ոչ վերբալ հուշումներից, այդ թվում՝ և իմ հակափոխանցումներից[1]՝ զգացմունքներով, որոնք Ալիսիան սեանսների ժամանակ կարթնացներ իմ մեջ, ինչպես և այլ աղբյուրներից քաղած ցանկացած տեղեկատվությունից:

Այլ խոսքով, պատրաստվում էի օգնել Ալիսիային՝ չունենալով գործողությունների հստակ ծրագիր: Ես պետք է հաջողեի

[1] Փոխանցումը զգացմունքների փոխադրումն է հիվանդից հոգեվերլուծաբանին, ընդ որում, այն զգացմունքների, որոնք հիվանդը մի ժամանակ տածել է իր համար կարևոր որոշ մարդկանց հանդեպ և, որ ավելի կարևոր է, այդ մասին ինքն իրեն չի խոստովանել: Հակափոխանցումն իր հերթին անգիտակցական զգացմունքային պատասխան է, վերլուծաբանի արձագանքը հիվանդին:

ոչ միայն պրոֆեսոր Դիոմիդիսին ինչ-որ բան ապացուցելու համար, այլ, որ ավելի կարևոր էր, Ալիսիայի հանդեպ բժշկական պարտքս կատարելու, այն է՝ նրան օգնելու համար:

Նայում էի նրան. նստած էր իմ առաջ, խորը թմրաթմբիրի մեջ, թուքը՝ շրթունքների շուրջը կուտակված, թիթեռնիկի թևերի պես դողացող մատներով: Հանկարծ անսպասելի ու ծակող տխրությունից սիրտս սեղմվեց: Ալիսիային ու նրա նմաններին, բոլորիս՝ խոցվածներիս ու կորուսյալներիս, անասելի խղճացի:

Բնականաբար, այդ մասին նրան ոչինչ չասացի: Փոխարենն արեցի այն, ինչ կաներ Ռութը:

Ես ու Ալիսիան պարզապես նստել էինք լռության մեջ:

8

Բացեցի Ալիսիայի հիվանդության պատմության թղթապանակը, որն աշխատասեղանիս էր: Դիոմիդիսը հանձնելիս ասել էր.

- Գրառումներս անպայման կարդացեք: Կօգնեն:

Պրոֆեսորի նշումները քրքրելու ցանկություն չունեի. Դիոմիդիսի տեսակետն առանց այդ էլ հասկանալի էր, իսկ ես ուզում էի սեփական կարծիքս կազմել: Բայց և այնպես քաղաքավարի ընդունեցի:

- Շնորհակալ եմ արժեքավոր օգնության համար,- ասացի:

Աղքատիկ կահավորված փոքրիկ աշխատասենյակս շենքի հեռավոր ծայրին էր, հրշեջ ելքի մոտ: Նայեցի պատուհանից: Փոքրիկ կեռնեխը կտցում էր անտարբեր ու անհույս սառած խոտի փունջը:

Մարմնովս դող անցավ: Սենյակում սառնամանիք էր: Պատուհանի տակի փոքրիկ տաքացուցիչը չէր աշխատում: Յուրին խոստացավ նորոգել, բայց ավելի ճիշտ կլինի Ստեֆանիին դիմել, ու եթե դա էլ չստացվի, հարցը ժողովում քննարկել: Կարեկցանքով հիշեցի Էլիֆին ու ջարդված ձողը փոխելու նրա պայքարը:

Առանց առանձնակի ակնկալիքի՝ Ալիսիայի թղթապանակն աչքի անցկացրի: Ինձ անհրաժեշտ գրեթե բոլոր տեղեկություններն առկա էին տվյալների էլեկտրոնային շտեմարանում: Բայց և այնպես Դիոմիդիսն ավագ սերնդի աշխատակիցներից շատերի պես նախընտրում էր իր զեկույցները ձեռքով գրել և (անտեսելով Ստեֆանիի՝ էլեկտրոնային շտեմարանում աշխատելու անդադար ցուցումները) շարունակում էր իր ձևով աշխատել. ահա թե ինչպես էր համալրվել իմ առաջ դրված, ծալած անկյուններով թղթապանակը:

Թերթում էի Դիոմիդիսի գրառումները՝ անտեսելով նրա հնաոճ հոգեվերլուծական մեկնաբանությունները և կենտրոնանալով բուժքույրերի ամենօրյա հաշվետվությունների վրա, որոնցից կարելի էր հասկանալ, թե ինչպես է օրեցօր փոխվել Ալիսիայի վարքը: Հաշվետվություններն ուսումնասիրում էի ամենայն մանրամասնությամբ: Առանձնացնում էի փաստերը, կոնկրետ անձանց հիշատակումներն ու մանրամասները. ուզում էի ստույգ իմանալ, թե ինչի մեջ եմ մտնում, ինչի հետ եմ աշխատելու և ինչ անակնկալներ կարող եմ ունենալ:

Ի վերջո, թղթապանակից առանձնապես շատ տեղեկություններ չքաղեցի: Պարզեցի, որ Գրոուվ տեղափոխվելուց հետո Ալիսիան երկու անգամ փորձել էր կտրել դաստակների երակներն ու իրեն վնասել ձեռքն ընկածով: Առաջին վեց ամիսներին շուրջօրյա հերթապահության համար նրան երկու բուժքույր էին կցել, հետո հսկողությունը թուլացրել էին՝ միայն մեկին թողնելով: Ալիսիան այլ հիվանդների կամ անձնակազմի հետ շփման եզրեր գտնելու համար ջանք չէր թափում. իրեն փակ ու մեկուսի էր պահում, և մյուս հիվանդներն աստիճանաբար սկսեցին նրան չանհանգստացնել:

Չէ՞ որ եթե մարդը լռում է, նույնիսկ երբ դիմում ես իրեն, ու երբեք զրույցն առաջինը չի սկսում, շրջապատողները, ի վերջո, մոռանում են նրա գոյության մասին: Ալիսիան արագ կահավորանքի իրի վերածվեց. նա գրեթե անտեսանելի էր:

Իրադարձությունների այդ շարքից միայն մեկ միջադեպ էր առանձնանում: Այն տեղի էր ունեցել ճաշարանում, Ալիսիայի՝ հիվանդանոցում հայտնվելուց մի քանի շաբաթ անց: Էլիֆն Ալիսիային մեղադրել էր իր տեղը զբաղեցնելու մեջ: Հաշվետվություններից պարզ չէր՝ հատկապես ինչ էր պատահել, բայց հակամարտությունն արագ էր բորբոքվել: Հավանաբար Ալիսիան մոլեգնել էր ու ափսեն ջարդելով փորձել սուր բեկորով Էլիֆի կոկորդը կտրել: Նրան արագ կապկպել էին, հանգստացնող դեղեր ներարկել ու մեկուսացրել:

Ինքս էլ չէի հասկանում՝ այս դեպքն ինչու էր ուշադրությունս գրավել, բայց ինչ-որ տարօրինակ բան էի զգում: Որոշեցի մոտենալ Էլիֆին ու հարցնել, թե ինչ է պատահել:

Նոթատետրից մի թերթիկ պոկեցի ու վերցրի գրիչը: Հին սովորություն է, դեռևս համալսարանից մնացած. թղթի վրա գրիչով գրառումներ անելն ինձ օգնում է կարգի բերել մտքերս: Մտքերս միշտ դժվարությամբ եմ ձևակերպում, մինչև գրի չեմ առնում:

Սկսեցի գրառել գաղափարներ, նշումներ, նպատակներ՝ գործողությունների ծրագիր պատրաստելով: Ալիսիային օգնելու նպատակով նախ պետք է հասկանայի՝ ինչ մարդ է նա և ինչպես էր վերաբերվում Գաբրիելին: Սիրո՞ւմ էր նրան: Ատո՞ւմ էր: Ինչո՞ւ էր հրաժարվում խոսել թե՛ սպանության, թե՛ ընդհանրապես ամեն ինչի մասին: Պատասխաններ դեռ չկային, միայն հարցեր էին:

Տողամիջում գրեցի ու ընդգծեցի ԱԼԿԵՍՏԻՍ:

Չգիտես ինչու, զգում էի, որ ինքնանկարը կարևոր դեր ունի այս պատմության մեջ, պետք էր հասկանալ, թե ինչու. հանելուկի բանալին այդտեղ էր պահված: Այս նկարն Ալիսիայի հոգու ճիչն էր, նրա միակ վկայությունը: Նկարն ինչ-որ բան էր նշանակում, և ինձ մնում էր միայն վերծանել այն: Նոթատետրում նշեցի, որ պետք է նորից պատկերասրահ այցելել:

Նաև ուրիշ բառ գրեցի՝ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ: Սպանության դրդապատճառները հասկանալու համար պետք է հասկանայի ոչ միայն այն գիշերվա դեպքերը, երբ Ալիսիան սպանեց նրան, այլև հեռավոր անցյալում պատահած իրադարձությունները: Գուցե ամուսնու վրա արձակված կրակոցների սերմերը խորը անցյալում էին ցանվել: Հանցագործության հասցրած կատաղի, մահացու մոլեգնումը պատահական երևույթ չէ: Այն հայտնվում է դեռ հիշողությունից առաջ, մանկության հեռավոր աշխարհում, որտեղ մեծահասակների բռնությունն ու դաժան վերաբերմունքը երեխայի նկատմամբ տարիների ընթացքում այնքան են կուտակվում, մինչև տեղի է ունենում պայթյունը՝ հաճախ ոչ ճիշտ թիրախի ուղղված: Ես պետք է պարզեի՝ մանկությունն ինչպիսի կերպար է կերտել, և եթե Ալիսիան չի կարող կամ չի ցանկանում ինձ այդ մասին պատմել, կգտնեմ նրան, ով կպատմի: Մեկին, ով Ալիսիային մինչև սպանությունն է ճանաչել, ով կօգնի հասկանալ նրա պատմությունը, ինչպիսին է եղել, և ինչն է նրան այս հանգրվանին հասցրել:

«Մերձավոր ազգականներ» բաժնում նշված էր ոմն Լիդիա Ռոուզ՝ նրա բարեկամուհին, որն ավտովթարի հետևանքով մահացած մորից հետո մեծացրել էր Ալիսիային: Ալիսիան էլ էր այդ մեքենայում եղել, բայց ողջ էր մնացել: Անկասկած,

վթարն ուժգին ազդեցություն էր ունեցել փոքրիկ աղջկա հոգեկան աշխարհի վրա: Մնում էր հուսալ, որ Լիդիան կկարողանա այդ մասին որևէ բան պատմել:

Հաջորդ և վերջին անձնավորությունը, որ շփում էր ունեցել Ալիսիայի հետ, նրա փաստաբան Մաքս Բերենսոնն էր: Մաքսը Գաբրիել Բերենսոնի եղբայրն էր: Ուրեմն կարող էր անձնական մակարդակում ականատես լինել ամուսինների ընտանեկան հարաբերություններին: Դժվար էր ասել՝ Բերենսոնը կցանկանա՞ անկեղծանալ ինձ հետ, բայց դա այլ հարց էր: Հոգեթերապևտի չմիջնորդավորված շփումն Ալիսիայի ընտանիքի հետ, մեղմ ասած, ոչ ավանդական մոտեցում էր: Կանխազգում էի, որ Դիոմիդիսն այդ գաղափարին հավանություն չի տա: Ուստի նրա հնարավոր մերժումից խուսափելով՝ որոշեցի ինքնուրույն գործել:

Հետ նայելով հասկանում եմ, որ դա Ալիսիայի հետ իմ աշխատանքում առաջին մասնագիտական սխալն էր, անհաջող նախադեպ, որին ցավալի դեպքեր հաջորդեցին: Այդտեղ պիտի կանգ առնեի, թեև հետքայլի համար արդեն ուշ էր: Ինչ-որ առումով ճակատագիրս արդեն վճռված էր հունական ողբերգության հերոսի պես[1]:

Մոտեցա հեռախոսին: Ալիսիայի թղթապանակում նշված հեռախոսահամարով Մաքս Բերենսոնի գրասենյակ զանգեցի: Միանգամից չպատասխանեցին:

- Էլիոթ, Բարրոու և Բերենսոն գրասենյակ,- լսվեց մրսած քարտուղարուհու խռպոտ ձայնը:

- Կարո՞ղ եմ պարոն Բերենսոնի հետ խոսել:

- Ձեզ ինչպե՞ս ներկայացնեմ:

---

[1] Խոսքն «Ակեստիսի» հերոսի՝ Ադմետոսի մասին է:

– Անունս Թեո Ֆաբեր է: Գրոուվի հիվանդանոցում հոգեթերապևտ եմ: Եթե հնարավոր է, կուզեմ զրուցել պարոն Բերենսոնի հետ և մի քանի բառ փոխանակել նրա հարսի մասին:

Կարճատև դադարից հետո աղջիկը պատասխանեց.

– Հասկացա: Խնդիրն այն է, որ պարոն Բերենսոնը մինչև շաբաթվա վերջը գրասենյակում չի լինելու: Հաճախորդներից մեկը նրան Էդինբուրգ է կանչել: Գուցե Ձեր հեռախոսահամարը թողնեք, վերադառնալուց հետո պարոն Բերենսոնին կխնդրեմ կապվել Ձեզ հետ:

Աղջկան թելադրեցի համարս ու անջատեցի:

Հավաքեցի թղթապանակի հաջորդ հեռախոսահամարը՝ Լիդիա Ռոուզի՝ Ալիսիայի ազգականուհու: Այս անգամ խոսափողն ակնթարթորեն վերցրին: Տարեց կինը ծանր էր շնչում ու բավական նյարդային էր:

– Լսում եմ: Ինչ եք ուզում:

– Տիկին Ռոուզն է:

– Դուք ո՞վ եք:

– Ձեր զարմուհու՝ Ալիսիա Բերենսոնի կապակցությամբ եմ զանգում: Հոգեթերապևտ եմ, աշխատում եմ...

– Գրողի ծոցը գնա,– ասաց ու անջատեց:

Ես խոժոռվեցի:

Ինչ խոսք, սկիզբն անհաջող էր:

9

Ահավոր ծխել էի ուզում: Գրոուվից դուրս գալով սկսեցի տենդագին քրքրել վերարկուիս գրպանները, բայց սիգարետ չկար:

- Ինչ-որ բան եք փնտրում:

Շրջվեցի: Յուրին կանգնած էր թիկունքիս: Չէի լսել՝ ինչպես է մոտեցել, և ապշած էի՝ տեսնելով նրան այդքան մոտիկ:

- Ահա, բուժքրոջ պահակետում եմ գտել,- ասաց քմծիծաղով՝ սիգարետի տուփն ինձ մեկնելով: - Երևի Ձեր գրպանից է ընկել:

- Շնորհակալ եմ:

Վերցրի ու մի ծխախոտ վառեցի: Տուփը նրան առաջարկեցի: Յուրին տարուբերեց գլուխը:

- Չեմ ծխում: Համենայն դեպս՝ ոչ սիգարետ...,- Յուրին ծիծաղեց: - Կարծում եմ՝ վատ չէր լինի՝ մի բաժակ խմեիք: Գնանք, գարեջուր հյուրասիրեմ:

Ես հապաղում էի: Բնազդը հուշում էր հրաժարվել. աշխատանքային ընկերների հետ երբեք չէի մտերմանում: Բացի այդ՝ ես ու Յուրին քիչ ընդհանուր բան ունեինք: Հիվանդանոցում նա թերևս բոլորից լավ գիտեր Ալիսիային ու կարող էր նրա մասին որևէ օգտակար բան պատմել:

– Գնանք,– ասացի: – Ինչու ոչ:

Գնացինք «Սլոթրդ Լեմ» անվանումով մոտակա պանդոկը: Ներսում մութ ու կեղտոտ էր. թե՛ բուն հաստատությունը, թե՛ գարեջրի կիսատած գավաթների վրա ննջող այցելուներն ակնհայտորեն ավելի լավ ժամանակներ էին տեսել: Յուրին մեզ համար կես պինտ[1] գարեջուր վերցրեց, ու սրահի հեռավոր սեղանի առաջ նստեցինք:

Յուրին մի մեծ կում արեց ու ձեռքով սրբեց բերանը:

– Դե,– ասաց,– պատմեք Ալիսիայի մասին:

– Ալիսիայի մասի՞ն:

– Ի՞նչ կարծիքի եք:

– Ցավոք, առայժմ ոչ մի:

Յուրին հանելուկային ժպիտով նայեց ինձ:

– Ալիսիան բացվել չի՞ շտապում: Ճիշտ եք: Նա թաքնվում է:

– Տեսնում եմ՝ նրա հանդեպ անտարբեր չեք:

– Այո, առանձնահատուկ վերաբերմունք ունեմ: Ոչ ոք նրան ինձնից լավ չի ճանաչում, նույնիսկ պրոֆեսոր Դիոմիդիսը:

Նրա ձայնի մեջ սնափառության նշույլներ լսվեցին: Չգիտեմ ինչու, դա ինձ դուր չեկավ. իրո՞ք այդքան լավ գիտեր Ալիսիային, թե պարզապես որոշել էր գլուխ գովել:

– Ձեր կարծիքով՝ Ալիսիան ինչո՞ւ է լռում: Դա ի՞նչ է նշանակում:

Նա թոթվեց ուսերը:

– Նշանակում է՝ Ալիսիան դեռ պատրաստ չէ խոսել: Կխոսի, երբ պատրաստ լինի:

– Պատրաստ ինչի՞ն:

– Ճշմարտությանը, բարեկա՛մս:

– Ի՞նչ ճշմարտություն:

---

[1] Պինտ – չափի ավանդական անգլիական միավոր, որը հավասար է 0,57 լիտրի:

Յուրին, գլուխը մի քիչ հակած, ուշադիր նայեց ինձ: Եվ նրա շուրթերից հնչած հարցն անակնկալի բերեց ինձ:

- Թեռ, ամուսնացած եք:

- Այո,- գլխով արեցի ես:

- Այդպես էլ գիտեի: Ես էլ եմ ամուսնացած եղել: Միասին Լատվիայից տեղափոխվեցինք: Բայց կինս այստեղի կյանքին չհարմարվեց: Ձանք չէր անում, գիտեք, նույնիսկ լեզուն չսովորեց: Ամեն դեպքում այդ ամուսնությունը... Ես նրա հետ երջանիկ չէի, բայց չէի ուզում խոստովանել, խաբում էի ինձ...,- Յուրին խմեց-վերջացրեց գարեջուրն ու եզրափակեց,- ...իսկ հետո սիրահարվեցի:

- Ենթադրում եմ՝ ուրիշ կնոջ:

- Իհարկե,- Յուրին ծիծաղեց ու տարուբերեց գլուխը: - Կինը մոտակայքում էր ապրում: Իսկական գեղեցկուհի: Սեր առաջին հայացքից... Ես նրան փողոցում տեսա, երկար ժամանակ չէի համարձակվում մոտենալ ու խոսել: Հաճախ հետևից էի գնում... Երբեմն հետևում էի, թեև նրան չէի ճանաչում: Կանգնում էի նրա տան մոտ ու սպասում՝ հուսալով, որ պատուհանի մեջ ծանոթ ուրվապատկերը կտեսնեմ:

Նա ծիծաղեց:

Այդ խոստովանությունից անհարմար էի զգում: Վերջացրի գարեջուրս ու նայեցի ժամացույցին՝ հուսալով, որ Յուրին ակնարկը կհասկանա, բայց նա չնայեց:

- Մի անգամ փորձեցի նրա հետ խոսել,- ասաց: - Ու պարզվեց, որ ես նրան չեմ հետաքրքրում: Մի քանի անգամ փորձեցի... Ի վերջո, խնդրեց, որ այլևս իրեն չհետապնդեմ:

Սկսում էի հասկանալ կնոջը և արդեն ուզում էի քաղաքավարի հրաժեշտ տալ ու հեռանալ, բայց Յուրին դեռ խոսում էր:

- Մերժումը ծանր տարա,- ասաց: - Ախր անկեղծորեն հավատում էի, որ իրար համար ենք ստեղծված: Նա կոտրեց սիրտս: Ու ես չարացա: Ուղղակի գազազեցի:

- Եվ ինչ եղավ,- չդիմացա ու հարցրի ես:

- Ոչինչ:

- Ոչինչ: Այսինքն՝ մնացիք Ձեր կնոջ հետ:

- Ոչ,- Յուրին օրորեց գլուխը: - Մեր ընտանիքն արդեն քայքայվել էր: Բայց միայն այս կնոջը սիրահարվելուց հետո ընդունեցի դա... հասկացա ճշմարտությունն իմ ու կնոջս մասին: Գիտեք, ազնիվ լինելու համար երբեմն խիզախություն ու երկար ժամանակ է պետք:

- Ահա՛ թե ինչ... Դուք կարծում եք, որ Ալիսիան պատրաստ չէ ընդունելու ճշմարտությունն իր ամուսնության մասին: Ճիշտ եմ հասկանում: Գուցե այդպես էլ կա:

Յուրին թոթվեց ուսերը:

- Հարսնացու ունեմ: Գեղեցկուհի է, Հունգարիայից է: Մերսման սրահում է աշխատում: Հրաշալի անգլերեն գիտի: Մենք հիանալի զույգ ենք: Միասին չենք ձանձրանում:

Ես գլխով արեցի ու, նորից նայելով ժամացույցիս, վերցրի վերարկուս:

- Գնալու ժամանակն է: Կինս երևի հոգնեց սպասելով:

- Խնդիր չկա: Ի դեպ, ինչ է Ձեր կնոջ անունը:

Չգիտես ինչու, չէի ուզում կնոջս անունը տալ: Չէի ուզում, որ Յուրին որևէ բան իմանա նրա մասին: Բայց դա էլ իր հերթին հիմարություն էր:

- Քեթրին,- ասացի,- անունը Քեթրին է: Ես Քեթի եմ ասում:

Յուրին խորհրդավոր ժպտաց:

- Ահա թե ինչ կասեմ, Թեո,- ասաց: - Գնացեք տուն, Ձեր

10

Ես ու Քեթին հանդիպում էինք Թեմզայի հարավային ափին գտնվող Ազգային թատրոնի սրճարանում. դերասանները խաղափորձերից հետո հաճախ էին այնտեղ հավաքվում: Քեթին մի քանի խաղընկերուհիների հետ նստած էր սրահի խորքում. ինչ-որ բան էր պատմում: Երբ մոտեցա սեղանին, նրանք նայեցին ինձ:

- Երևի ականջներդ վառվում են, հա՛, սիրելի՛ս,- ինձ համբուրելով ծիծաղեց Քեթին:

- Պիտի վառվե՞ն:

- Աղջիկներին քո մասին էի պատմում:

- Լո՞ւրջ: Ես գնա՞մ:

- Հերիք է՝ կատակես: Նստիր, ճիշտ ժամանակին ես եկել: Հենց նոր մեր ծանոթանալու պահին էի հասել:

Ես նստեցի, իսկ Քեթին շարունակեց պատմությունը: Նա պաշտում էր այդ պատմությունը: Ժամանակ առ ժամանակ ժպտալով ու կարծես մասնակցության հրավիրելով ինձ էր նայում, բայց դա ձևականություն էր: Պատմությունը նրանն էր, ոչ թե իմը:

- Ուրեմն բարում նստած եմ, երբ հանկարծ հայտնվում է նա:

Արդեն վերջնականապես խաչ էի քաշել անձնական կյանքի վրա, ու հանկարծ ներս է գալիս նա՝ իմ երազանքի տղամարդը: Լավ է ուշ, քան երբեք: Ախր հասկացեք, մտածում էի, որ կամուսնանամ 25-ին մոտ, իսկ 30-ում կունենամ երկու երեխա, փոքրիկ շնիկ ու հիպոթեքային վարկ: Բայց ահա 33 եմ, ու ամբողջ ծրագիրս գրողի ծոցն է գնացել,- չարաճճի ժպիտով ասաց Քեթին ու աչքով արեց ընկերուհիներին: - Ես այն ժամանակ հանդիպում էի Դենիել անունով մի ավստրալացու հետ: Բայց նա չէր ուզում ամուսնանալ կամ երեխաներ ունենալ, ուստի հասկանում էի, որ ժամանակ եմ վատնում: Ես ու Դենիելը որոշել էինք երեկոյան բար գնալ, երբ հանկարծ ներս մտավ նա՝ Պարոն Կատարելությունը...,- Քեթին նայեց ինձ, ժպտաց ու աչքերը ոլորեց,- ընկերուհու հետ...

Պատմության այս հատվածը պետք էր զգուշորեն ներկայացնել՝ լսարանի համակրանքը չկորցնելու համար: Մեր հանդիպման պահին ես ու Քեթին ազատ չէինք: Կրկնակի անհավատարմությունը հարաբերությունների ամենագեղեցիկ ու պատեհ սկիզբը չէ, հատկապես երբ մեզ մեր նախկին զուգընկերներն էին ծանոթացրել: Նրանք ճանաչում էին իրար, բայց հիմա արդեն մանրամասները չեմ հիշում. կարծեմ Մարիաննան մի քանի անգամ Դենիելի սենյակակցի հետ էր հանդիպել: Չեմ հիշում, թե մեզ ինչպես իրար ներկայացրին, փոխարենը Քեթիին առաջին անգամ տեսնելու պահը հիշողությանս մեջ է մեխվել: Ասես հոսանքը խփեր: Հիշում եմ նրա երկար, մուգ մազերը, կանաչ աչքերի թափանցող հայացքը և շուրթերը. աներևակայելի գեղեցիկ, նրբիկ աղջիկ: Հրեշտակ:

Քեթին դադար պահելով ժպտաց ու ձեռքս բռնեց:

- Հիշո՞ւմ ես, Թեո, ինչպես զրույցի բռնվեցինք: Դու ասացիր,

որ սովորում ես, հոգեբույժ ես դառնալու: Իսկ ես պատասխանեցի, որ ցնդած եմ, ու մենք ուղղակի ստեղծված ենք իրար համար:

Ընկերուհիները բարձր քրքիջով արձագանքեցին: Քեթին էլ ծիծաղեց, հետո անկեղծորեն ու հուզախառով նայեց աչքերիս մեջ:

- Ոչ, բայց... թանկագի՛նս, իսկապես դա սեր էր առաջին հայացքից, չէ՞:

Հիմա իմ հերթն էր: Գլխով արեցի ու համբուրեցի Քեթիի այտը:

- Իհարկե, սիրելի՛ս: Իսկական սեր:

Ընկերուհիները խանդաղատանքով էին մեզ նայում: Ընդորում, ես չէի կեղծում: Քեթին ճիշտ էր ասել, ես իսկապես առաջին հայացքից սիրահարվել էի, դե, կրքի զոհ էի դարձել: Ու թեև այդ երեկո Մարիաննայի հետ էի, աչքս չէի կարողանում կտրել Քեթիից: Հեռվից անդադար հետևում էի, թե ինչպես է նա ինչ-որ բանի շուրջ տաքացած վիճում Դենիելի հետ: Հետո հանկարծ շրթունքների շարժումով կարդացի՝ գրողի ծո՛ցը գնա: Հասկացա, որ կռվում են: Լարված վիճակ էր: Դենիելը վեր կացավ ու բարից դուրս եկավ:

- Այսօր ամբողջ երեկո լուռ ես,- նկատեց Մարիաննան:

- Բա՞ն է պատահել:

- Ամեն ինչ կարգին է:

- Գնանք տուն: Հոգնել եմ:

- Սպասիր,- ասացի. ուշքս ուրիշ տեղ էր: - Արի էլի խմենք:

- Բայց ես տուն եմ ուզում:

- Ուզում ես՝ գնա՛:

Մարիաննան նեղացած ինձ նայեց, վերցրեց բաճկոնն ու

դուրս եկավ: Գիտեի, որ հաջորդ օրն անպայման վեճ է լինելու, բայց այդ պահին ինձ համար միևնույն էր: Մոտեցա Քեթիին:

- Դենիելը վերադառնալու է,- հարցրի:

- Չէ,- ասաց Քեթին: - Իսկ Մարիաննան:

- Նույնպես,- օրորեցի գլուխս: - Խմենք:

- Այո: Շնորհակալություն:

Եվս երկու բաժակ պատվիրեցինք: Վաճառասեղանի մոտ կանգնած զրուցում էինք: Հիշում եմ՝ քննարկում էինք հոգեբուժության պարապմունքներս: Քեթին ինձ թատերական քոլեջի մասին էր պատմում. երկար չէր սովորել, քանի որ առաջին կուրսի ավարտին նրան նկատել էր թատերական մի գործակալ ու աշխատանք առաջարկել: Այդ օրվանից էլ բեմում էր խաղում: Ես չգիտես ինչու մտածեցի, որ Քեթին պետք է որ տաղանդավոր դերասանուհի լինի:

- Ուսումն ինձ համար չէ,- ասաց: - Գիտես, անընդհատ ուզում էի դուրս գալ ու զբաղվել նրանով, ինչով ուզում էի:

- Այսինքն՝ բեմ բարձրանալ:

- Ոչ: Ապրել,- Քեթին հակեց գլուխն ու մուգ թարթիչների տակից զմրուխտե աչքերով չարաճճի նայեց ինձ: - Լսիր, Թեո, համբերությունդ ինչ է հերիքում սովորելուն:

- Գուցե պարզապես չեմ ուզում դուրս գալ ու «ապրել»: Գուցե վախկոտ եմ:

- Չէ: Վախկոտն ընկերուհու հետևից տուն կգնար:

Քեթին ծիծաղեց: Ծիծաղեց անսպասելի ու չարագուշակ: Անասելի ուզում էի գրկել ու համբուրել: Առաջ երբեք այդքան ամենակուլ մարմնական ցանկություն չէի ունեցել: Ուզում էի Քեթիին ինձ ձգել, սեղմվել շուրթերին, զգալ մարմնի ջերմությունը:

– Կներես,– հանկարծ ասաց Քեթին: – Լեզվիցս թռավ: Միշտ մտքիս եկածն առաջինն եմ ասում: Ասացի, չէ՞, որ մի քիչ ցնդած եմ:

Քեթին մի քանի անգամ իր մասին ասաց, որ «խելառ» է, «խելքը տեղը չէ», «խփնված» է, բայց չէի հավատում: Նա չափազանց ազատ էր ու հաճախ էր ծիծաղում, ուստի չէի հավատում, որ երբևէ տառապած լինի զարհուրելի խավարից, որ ժամանակին ինձ էր պատել: Քեթիի մեջ անմիջականություն էի զգում, թեթևություն. նա սիրում էր կյանքը և անվերջ ուրախանում ամեն օրվա համար: Ինչ էլ ասեր Քեթին, հաստատ գիտեի՝ նա իմ ճանաչած հոգեպես ամենաառողջ մարդն է: Ավելին, Քեթիի կողքին ավելի լիարժեք էի զգում:

Քեթին ամերիկուհի էր: Ծնվել ու մեծացել էր Մանհեթենի Ափեր Ուեսթ Սայդում[1]: Անգլուհի մայրը դստեր համար երկքաղաքացիություն էր ձևակերպել, բայց Քեթին բոլորովին նման չէր անգլիացիներին: Աներկբա էր՝ նա անգլիացի չէր, և հարցը միայն խոսվածքը չէր, այլ աշխարհայացքի ու դիրքորոշումների համակարգը: Ինչպիսի՜ ինքնավստահություն, ինչպիսի՜ եռուն էներգիա: Առաջին անգամ էի նման մարդու տեսնում:

Բարից դուրս եկանք, տաքսի կանգնեցրի ու վարորդին բնակարանիս հասցեն ասացի: Կարճ ուղևորությունն անցավ լռության մեջ: Երբ հասանք, Քեթին շուրթերը մեղմ հպեց շրթունքներիս: Ես այլևս չդիմացա ու նրան կտրուկ իմ կողմ քաշեցի: Չդադարելով Քեթիի հետ համբուրվել, մի կերպ շոշափելով բանալիով բացեցի դուռը: Նախասենյակ մտնելուն

[1] Էլիտար բնակելի թաղամաս Նյու Յորքում, Կենտրոնական զբոսայգու հարևանությամբ:

պես սկսեցինք պոկել միմյանց հագուստները, գլորվելով հասանք ննջարան և ընկանք մահճակալին:

Այդ գիշերն ամենաէրոտիկը, ամենաերանելին էր իմ կյանքում: Ժամերով Քեթիի մարմինն էի ուսումնասիրում: Ամբողջ գիշեր, մինչև լույս, սեքսով զբաղվեցինք: Ամեն ինչ ճերմակի մեջ եմ հիշում. վարագույրների արանքից թափանցող վաղորդյան արևի ճերմակ շողերը, ճերմակ պատերը, ճերմակ սավանները, Քեթիի աչքերի սպիտակուցները, ատամները, մաշկը: Երբեք չէի մտածել, որ մաշկը կարող է այդքան լուսաշող լինել, համարյա թափանցիկ, փղոսկրագույն, երակների կապտավուն նրբին գծերով, որոնք ճերմակ մարմարի գույնզգույն բծերի պես երևում էին մաշկի տակից: Ասես հունական աստվածուհու հիասքանչ արձանը շունչ առած լիներ ձեռքերիս մեջ: Իրար գրկած պառկել էինք: Քեթին նայում էր ինձ. աչքերն այնքան մոտ էին, ասես շաղված լինեին: Ես նայում էի կանաչ աղոտ ծովին:

- Ե՞վ...,- հարցրեց:

- Եվ ի՞նչ:

- Իսկ Մարիաննա՞ն:

- Մարիաննա՞ն:

Քեթիի շուրթերին ժպիտ առկայծեց:

- Ընկերուհիդ:

- Հա՛,- անվստահ ասացի: - Չգիտեմ էլ՝ ինչպես վարվեմ նրա հետ... Իսկ Դենիե՞լը:

- Մոռացիր նրա մասին: Ես արդեն մոռացել եմ,- աչքերը ոլորեց Քեթին:

- Լո՞ւրջ ես ասում:

Պատասխանի փոխարեն համբույր ստացա:

Գնալուց առաջ Քեթին ցնցուղ ընդունեց: Այդ ընթացքում զանգեցի Մարիաննային: Ուզում էի հանդիպել նրան, բաժանման մասին անձամբ ասել: Բայց նա նյարդայնացած էր ու պնդեց, որ անմիջապես ասեմ հեռախոսով: Մարիաննայի մտքով չէր անցնում, որ ուզում եմ խզել մեր հարաբերությունները: Բայց հենց դա արեցի՝ հնարավորինս նրբանկատ ձևով: Մարիաննան սկսեց լացել, վիրավորվեց ու չարացավ: Ի վերջո, ստիպված էի անջատել: Կոպիտ ու անքաղաքավարի է, այո: Այդ հեռախոսազանգով չեմ հպարտանում: Բայց այն ժամանակ միայն այդ քայլն էր ինձ ազնիվ թվում: Ու մինչև օրս չգիտեմ՝ ուրիշ ինչ կարող էի անել:

* * *

Մեր առաջին պաշտոնական ժամադրությանը ես ու Քեթին գնացինք բուսաբանական այգի: Գնալու միտքը նրանն էր: Զարմացավ՝ իմանալով, որ այնտեղ երբեք չեմ եղել:

- Կատա՞կ ես անում,- հարցրեց: - Ջերմոցնե՞րն էլ չես մտել: Ամենամեծում տարբեր արևադարձային խոլորձներ են աճեցնում: Այնտեղ անտանելի շոգ է, ինչպես վառարանում: Երբ սովորում էի թատերական դպրոցում, հաճախ էի այնտեղ գնում, շրջում, պարզապես տաքանում էի: Արի այնտեղ հանդիպենք, երբ աշխատանքդ ավարտես, ի՞նչ կասես,- նա հանկարծ անվճռական լռեց: - Թե՞ քեզ համար շատ հեռու է:

- Աշխարհի ծայրն էլ կգնամ հանուն քեզ, թանկագի՛նս,- ասացի:

- Հիմարի՛կ,- շշնջաց Քեթին ու համբուրեց:

Երեկոյան, երբ հասա, ինձ այգու մուտքի մոտ սպասում էր՝ հսկա վերարկուն հագին ու շարֆը կապած: Ոգևորված երեխայի պես թափահարում էր ձեռքը:

- Շո՛ւտ, այս կողմ,- ասաց,- իմ հետևից:

Սառած ցեխի վրայով քայլեցինք դեպի մեծ ապակե ջերմոցը, որտեղ արևադարձային բույսեր էին աճում: Քեթին հրեց դուռն ու ներս մտավ: Հետևեցի նրան ու անմիջապես անակնկալի եկա. ջերմոցում ջերմաստիճանը շատ բարձր էր, անասելի շոգ էր: Շտապ հանեցի շարֆս ու վերարկուս: Քեթին ժպտաց:

- Ասում էի, չէ՞, ասես շոգեբաղնիք լինի: Լավ է, չէ՞:

Վերարկուները թևերիս գցած՝ ձեռք ձեռքի շրջում էինք շարքերի միջով ու տարաշխարհիկ ծաղիկներով հիանում:

Ես զարմանքով հասկացա, որ երջանիկ եմ՝ պարզապես Քեթիի կողքին լինելով, կարծես մի գաղտնի դուռ էր բացվել, ու Քեթին ինձ ներս էր թողել ջերմության, լույսի ու գույների աշխարհ, որտեղ հարյուրավոր խոլորձներ են ծաղկում կապույտ, կարմիր, դեղին կոնֆետների պես:

Զգում էի, թե ինչպես եմ հալչում շոգից, մարմինս փափկել էր, ասես կրիա լինեի, որ ձմեռվա երկարատև քնից հետո հանել էր գլուխն ու հիմա աչքերը թարթելով արթնանում էր: Այդ ամենը Քեթին էր ինձ համար արել. նա կյանքի իմ հրավերն էր, ու ես երկու ձեռքով կառչել էի դրանից:

Հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ հասկացա, որ սիրահարվել եմ:

Ոչ մի վայրկյան չկասկածեցի, որ սեր է. հստակ հասկանում էի, որ կյանքում երբեք այդպիսի զգացում չեմ ունեցել: Իմ նախորդ սիրավեպերը կարճատև էին ու չէին գոհացրել

կողմերից և ոչ մեկին: Կուսությունս համալսարանում էի կորցրել. ի պետս քաջության հարբելով՝ սոցիոլոգիայի ֆակուլտետի մի ուսանողուհու՝ Մերիդիթ անունով կանադուհու հետ: Նա ատամներին սուր մետաղական սեղմակներ էր կրում, ու համբուրվելիս մետաղը շրթունքներիս մեջ էր խրվում: Հետո եղան մի քանի չնչին սիրավեպեր: Ոչ մի կերպ չէի գտնում այն աղջկան, որին տենչում էի հանդիպել: Մի տեսակ կիսատ էի զգում ինձ, մտերմիկ հարաբերությունների անընդունակ: Փոխարենը հիմա, երբ ամեն անգամ ականջիս էր հասնում Քեթիի վարակիչ ծիծաղը, հուզմունքից փշաքաղվում էի: Սպունգի պես ներծծում էի նրա պատանեկան կենսուրախությունը, ազատությունն ու խնդությունը: Համաձայնում էի Քեթիի բոլոր առաջարկներին, ընդունում բոլոր քմահաճույքները: Ինձ չէի ճանաչում: Ինձ դուր էր գալիս այս նոր, անվեհեր Թեոն, որին Քեթին էր ստեղծել: Մենք անկողնուց դուրս չէինք գալիս: Ես վառվում էի մշտական, այրող ցանկությունից: Չէի հագենում նրանից: Անընդհատ ուզում էի դիպչել նրան, կարծես ուզում էի ու ոչ մի կերպ չէի կարողանում ավելի մոտ լինել:

Նույն դեկտեմբերին Քեթին տեղափոխվեց իմ մեկսենյականոց բնակարանը՝ Քենթիշ Թաունի[1] շրջանում: Իմ խոնավ, համեստ կացարանը նկուղային հարկում էր: Հատակին գորգեր էին, պատուհաններից բացվող հաճելի տեսարան չկար: Մեր առաջին համատեղ Ծննդյան տոները երազում էինք անցկացնել ինչպես հարկն է: Մետրոյի կայարանի մոտ, տոնական շուկայից, գնեցինք եղևնի ու զարդարեցինք խաղալիքներով և էլեկտրական լույսերով:

[1] Ոչ շատ թանկ, բայց բավական վայելուչ թաղամաս Լոնդոնի հյուսիս-արևմուտքում:

Վառ հիշում եմ եղևնու փշատերևի, փայտի ու վառվող մոմերի հոտը և զմրուխտականաչ աչքերով ինձ նայող Քեթիին. աչքերում մոմերի լույսն ու դրասանգների շողքն էին արտացոլվել: Առանց մտածելու պոռթկացի: Բառերն իրենք իրենց լեզվիցս թռան:

- Ամուսնացիր ինձ հետ:

- Ի՞նչ,- ապշեց Քեթին:

- Սիրում եմ քեզ, Քեթի՛: Ամուսնացիր ինձ հետ:

Քեթին ծիծաղեց և, հուրախություն ինձ, միանգամից պատասխանեց.

- Համաձայն եմ:

Հաջորդ օրը ոսկերչական խանութ գնացինք, և նա մատանի ընտրեց: Եվ այստեղ վերջապես գիտակցեցի իրականությունը. մենք հարսնացու և փեսացու ենք:

Որքան էլ տարօրինակ է, առաջինը, ում մասին մտածեցի, ծնողներս էին: Ուզում էի Քեթիին նրանց ներկայացնել: Թող տեսնեն, թե որքան երջանիկ եմ: Վերջապես հաջողվել էր դուրս պրծնել վերահսկողությունից ու ազատ լինել: Սյուրեյ մեկնող գնացքը նստեցինք: Հիմա հասկանում եմ, որ վատ միտք էր: Հենց սկզբից ձախողման էր դատապարտված: Հայրս իրեն հատուկ թշնամանքով դիմավորեց ինձ:

- Այս ի՞նչ տեսք է, Թեո... ոսկոր ու կաշի: Բա սանրվածքդ: Մազերդ շատ կարճ ես կտրել: Ոնց որ հանցագործ լինես:

- Շնորհակալ եմ, հայրի՛կ: Ես էլ եմ ուրախ քեզ տեսնելու համար:

Մայրս սովորականից ճնշված տեսք ուներ: Ավելի լռակյաց էր դարձել, մի տեսակ կծկվել էր, կարծես իրականում չկար: Հորս ներկայությունն ավելի ճնշող էր, անբարյացակամ, ակն-

հայտորեն մռայլ: Անընդհատ Քեթիին շաղափում էր իր սառը, ծանր հայացքով: Ճաշի ընթացքում անհարմար էի զգում: Քեթին առանձնապես դուր չէր եկել ծնողներիս, և նրանք ուրախ չէին ինձ համար: Չգիտեմ՝ ինչու էի զարմացել:

Ճաշից հետո հայրս իր աշխատասենյակ անցավ: Այլևս դուրս չեկավ: Հրաժեշտ տալիս մայրս ինձ գրկից երկար բաց չէր թողնում ու դժվարությամբ էր ոտքի վրա մնում: Հանկարծ ինձ խուլ տխրություն պատեց: Երբ ես ու Քեթին մեկնում էինք, զգում էի, որ իմ մի մասն այդպես էլ մնաց այնտեղ՝ հավերժ երեխա, ասես թակարդում: Զգում էի, որ կորած եմ, անօգնական, անհույս, արցունքներից վառվող աչքերով: Եվ այստեղ Քեթին հերթական անգամ զարմացրեց:

– Հիմա հասկացա,– գրկեց ինձ ու շշնջաց ականջիս: – Ամեն ինչ հասկացա: Հիմա ավելի շատ եմ սիրում քեզ:

Այլևս ոչինչ չբացատրեց: Չնայած դրա կարիքը չկար էլ:

* * *

Ապրիլին ես ու Քեթին գրանցվեցինք՝ Յուսթոն Սքուերից ոչ հեռու ակտերի գրանցման մի փոքրիկ գործակալությունում: Ծնողներին չհրավիրեցինք: Ու ոչ մի Աստված: Քեթին չէր ուզում պսակադրվել: Դրա համար արարողության ընթացքում մտքում թաքուն աղոթեցի: Լուռ շնորհակալություն հայտնեցի Նրան անսպասելի երջանկության համար, որին արժանի չէի: Հիմա աչքերս բացվել էին, ու տեսնում էի Նրա մեծ նպատակը: Աստված չէր լքել ինձ մանկությանս օրերին, երբ այնքան միայնակ էի ու վախեցած: Հմուտ հրաշագործի

պես թաքցրել էր Քեթիին, որ երբ պահը գա, թևքից հանի: Այնքա՛ն խոնարհում ու երախտագիտություն էի զգում մեր՝ միասին անցկացրած յուրաքանչյուր վայրկյանի համար: Հասկանում էի, թե ինչ բախտավոր եմ, ինչ երջանիկ եմ ինձ տրված սիրո աներևակայելի, եզակի հնարավորության համար: Գիտակցում էի, թե որքան հազվադեպ է այդպիսի բան լինում: Իմ հիվանդների մեծ մասին ոչ ոք չէր սիրել: Ալիսիա Բերենսոնին՝ նույնպես:

Դժվար է պատկերացնել իրարից ավելի տարբեր երկու կանանց, քան Քեթին ու Ալիսիան: Քեթին իմ մեջ մտքեր էր արթնացնում՝ լույսի, ջերմության, գույների ու ծիծաղի մասին: Ալիսիան՝ միայն անդունդի, խավարի ու տխրության:

Եվ լռության:

ՄԱՍ
երկրորդ

Ճնշված հույզերը երբեք չեն մեռնում: Ողջ-ողջ թաղվում են, բայց ժամանակի ընթացքում անպայման շատ ավելի նողկալի տեսքով դուրս են ժայթքում:

Զիգմունդ Ֆրոյդ

1

Ալիսիա Բերենսոնի օրագրից

Հուլիսի 16

Երբեք չէի մտածի, որ կերազեմ անձրևի մասին: Չորրորդ շաբաթն է՝ շոգը չի նվազում, եղանակը կարծես դիմացկունության թեստ է կազմակերպել: Ամեն օրը նախորդից շոգ է թվում, ասես Անգլիան չլինի: Ավելի շատ նման է օտար երկրի՝ Հունաստանին կամ որևէ այլ երկրի:

Գրում եմ Հեմփսթեդ Հիթ այգում: Ամբողջ զբոսայգում կարմրելու աստիճան վառված դեմքերով կիսամերկ մարմիններ են ցրված սրբիչների վրա, նստարաններին կամ խոտերի մեջ, ասես լողափ կամ մարտադաշտ լինի: Նստած եմ ստվերում, ծառի տակ: Երեկոյան ժամը 6-ն է, կամաց-կամաց սկսում է զովանալ: Ոսկեգույն երկնքից կախվել է կարմրավուն արևը. այդ լույսի տակ զբոսայգին ուրիշ տեսք ունի՝ ստվերներն ավելի մուգ են, գույները՝ վառ: Խոտն ասես այրվում է, ոտքերիս տակ կարծես կրակներ են:

Այստեղ գալիս կոշիկներս հանել ու բոբիկ էի քայլում: Ճիշտ ինչպես մանուկ օրերին, երբ բակում էի խաղում: Հետո այսպիսի մի շոգ ամառ հիշեցի, երբ մայրիկը մահացավ. ես ու Փոլը հեծանվով սլանում էինք վայրի մարգարտածաղիկների ոսկի դաշտերով, ուսումնասիրում լքված տներն ու

ուրվականներով բնակեցված այգիները: Հիշողությանս մեջ այդ ամառը հավերժ է ձգվում: Հիշում եմ մայրիկին ու գույնզգույն շապիկները, որ հագնում էր՝ դեղին, ձգվող ուսակապերով, փխրուն ու նուրբ, ինչպես ինքը: Մայրիկն այնքան նիհար էր, ասես փոքրիկ թռչնակ լիներ: Հաճախ միացնում էր ռադիոն, ինձ գիրկն առնում, ու միասին պարում էինք փոփ երգերի տակ: Մինչև օրս հստակ հիշում եմ մայրիկի շամպունի, ծխախոտի, ձեռքերի Nivea քսուքի հոտը և օղու մշտական, թեթև երանգը: Քանի՞ տարեկան էր այն ժամանակ: Քսանո՞ւթ: Քսանի՞նը: Ավելի երիտասարդ, քան ես՝ հիմա:

Ա՜յ քեզ տարօրինակ միտք:

Այստեղ գալիս արահետի եզրին, ծառի արմատների մոտ, պստլիկ թռչնակ նկատեցի: Մտածեցի՝ հաստատ բնից է ընկել: Թռչնակը չէր շարժվում. խեղճը, ըստ երևույթին, թևերն էր ջարդել: Մատով զգույշ շոյեցի գլուխը: Թռչնակը չէր շարժվում: Զգուշորեն ձեռքս առա ու շրջեցի. մարմնի ներքևի մասը չկար. որդերը կերել էին, իսկ դատարկ խոռոչը լի էր որդերով: Չաղ, սպիտակ, լպրծուն որդերը... գալարվում էին, պտույտ գալիս ու կծկվում... Ստամոքսս ցավից ոլորվեց. ինձ թվաց՝ հիմա կփսխեմ: Պատկերն այնքան կեղտոտ էր, այնքան զզվելի. մահվան մասին էր հիշեցնում: Մինչև օրս աչքիցս չի հեռանում:

Հուլիսի 17

Շոգից ինձ փրկում եմ գլխավոր փողոցի Caffe dell'Artista[1] սրճարանում, որտեղ օդորակիչներ կան: Ներսում սառնամանիք է, ինչպես սառցարանում: Նստած եմ իմ սիրած

[1] Իսպաներենից թարգմ.՝ նկարչուհի:

սեղանի մոտ, պատուհանի տակ, ու սառույցով սուրճ եմ խմում: Երբեմն կարդում եմ, ճեպանկարներ կամ նշումներ անում: Բայց հիմնականում ինձ թույլ եմ տալիս չմտածել ոչնչի մասին, ուղղակի վայելել զովությունը: Վաճառասեղանի հետևում մի գեղեցիկ աղջիկ է ձանձրանում. ստուգում է հեռախոսը, նայում ժամացույցին ու պարբերաբար հոգոց հանում: Երեկ երեկոյան նրա հառաչանքներն ինձ առանձնակի երկարուձիգ թվացին. ըստ ամենայնի, սպասում էր, թե երբ կհեռանամ, որ փակի սրճարանն ու տուն գնա: Զուզելով դուրս եկա:

Այրող արևի տակ քայլելը նույնն է, թե թանձր ցեխի միջով դժվարությամբ առաջ գնաս: Ամբողջ մարմինս ուժասպառ է, ասես շոգից ծեծված, ջարդված լինի: Մենք պատրաստ չէինք դրան, համենայն դեպս, ոչ այս երկրում. Գաբրիելն ու ես տանը օդորակիչ չունենք, հետաքրքիր է, իսկ ո՞վ ունի: Բայց առանց դրա քնելն անհնար է: Գիշերը դեն ենք նետում ծածկոցներն ու քրտինքի մեջ կորած մերկ պառկում խավարի մեջ: Պատուհանները բաց ենք թողնում, բայց քամու նշույլ անգամ չկա: Միայն մեռյալ, շիկացած օդ:

Երեկ էլեկտրական օդափոխիչ գնեցի: Դրեցի մահճակալի մոտ, սնդուկի վրա, և Գաբրիելն անմիջապես սկսեց բողոքել:

- Շատ աղմկոտ է: Մենք այսպես երբեք չենք քնի:

- Միևնույն է, չենք կարողանում քնել,- ասացի: - Այսպես գոնե չենք քրտնի, ինչպես շոգեբաղնիքում:

Գաբրիելն ինչ-որ անհասկանալի բան քրթմնջաց, բայց, ի վերջո, ինձնից շուտ քնեց: Իսկ ես պառկել էի՝ ականջս օդափոխիչի գվվոցին. ինձ դուր է գալիս ձայնը, թևիկների մեղմ բզզոցը: Կարելի է փակել աչքերը, տրվել մեղեդուն ու անէանալ:

Հիմա օդափոխիչը հետս սենյակից սենյակ եմ տանում, տեղաշարժվելիս մեկ միացնում եմ, մեկ նորից անջատում: Կեսօրին որոշեցի այգու խորքի արվեստանոցը տանել: Այդպես փոքր-ինչ տանելի կլիներ: Բայց և այնպես շոգ է. գործն առաջ չի գնում: Գիտեմ՝ գրաֆիկից հետ եմ ընկնում, բայց սաստիկ շոգի պատճառով նույնիսկ ուժ չունեմ անհանգստանալ այդ առիթով:

Մի փոքրիկ առաջընթաց եղավ. վերջապես հասկացա, թե Հիսուսի պատկերում ինչն այն չէ: Ինչու չի ստացվում: Խնդիրը կոմպոզիցիան չէ. Հիսուսը խաչին է գամված: Խնդիրն այն է, որ սա բոլորովին էլ Հիսուսի նկարը չէ: Նման չէ Նրան, թեպետ չգիտենք, թե ինչ տեսք է ունեցել: Դա Հիսուսը չէ:

Գաբրիելն է:

Հավատս չի գալիս, որ առաջ չեմ նկատել: Ինչ-որ կերպ, ոչ միտումնավոր, խաչի վրա Գաբրիելին եմ նկարել: Նրա դեմքն եմ նկարել, նրա մարմինը: Խելագարվո՞ւմ եմ: Ուրեմն ստիպված եմ հանձնվել և անել այն, ինչ ինձնից նկարն է պահանջում:

Հիմա գիտեմ. երբ իմ մեջ նկարի գաղափարն է ծնվում ու կանխորոշված մտահղացումը, թե այն ինչպիսին պիտի լինի, երբեք չեմ կարողանում կյանքի կոչել: Ու ինչ-որ մեռած, անհոգի բան է ստացվում: Բայց եթե իսկապես ուշադիր եմ լինում, խորանում եմ, երբեմն շշունջ եմ լսում, որը ճիշտ ուղղությունն է հուշում: Ու եթե անշեղորեն ու հավատարմորեն հետևում եմ նրան, ինձ որևէ անսպասելի հանգրվանի է բերում, ոչ թե մտահղացման իրագործմանը, այլ զարմանալիորեն կենդանի, փառահեղ արդյունքի, որը բացարձակ կախված չէ ինձնից. կտավն իր կենսական ուժն ունի:

Ենթադրում եմ՝ ինձ անհայտությանը տրվելը վախեցնում է: Նախընտրում եմ իմանալ, թե ուր եմ գնում: Հենց դրա համար էլ աշխատանքը միշտ մեծ թվով ճեպանկարներից եմ սկսում՝ փորձելով կտավի վրա վերահսկել վերջնական արդյունքը: Զարմանալի չէ, որ դրանք կյանքի չեն կոչվում. չէ՞ որ ես իրականում չեմ արձագանքում նրան, ինչ իմ առաջ է կատարվում: Պետք է բացեմ աչքերս ու վերջապես նայեմ. տեսնեմ կյանքը, ինչպես կա, այլ ոչ թե այնպես, ինչպես կուզեի տեսնել: Հիմա գիտեմ, որ սա Գաբրիելի դիմանկարն է, ուրեմն կարող եմ վերադառնալ: Կարող եմ նոր էջից սկսել:

Կխնդրեմ, որ բնորդ լինի: Վաղուց այդ հարցում ինձ չի օգնել: Հուսամ՝ գաղափարը Գաբրիելին դուր կգա, ու նա չի մտածի, թե սրբապղծություն է կամ նման մի բան:

Երբեմն նա այնքան ծիծաղելի է:

Հուլիսի 18

Այսօր առավոտյան ոտքով Քեմդենի շուկա[1] իջա: Հարյուր տարի այնտեղ չէի եղել. վերջին անգամ Գաբրիելի հետ էի գնացել, մի օր, երբ որոշել էր իր կորած պատանեկությունը գտնել: Դեռահաս Գաբրիելն ընկերների հետ հաճախ էր այնտեղ լինում. անքուն գիշերները պարում էին, հարբում, զրուցում: Տղաները շուկա էին գալիս վաղ առավոտյան՝ նայելու, թե վաճառողներն ինչպես են բացում իրենց տաղավարներն ու ապրանքը դա-

[1] Քեմդենի շուկան Լոնդոնում հայտնի վայր է, որտեղ վաճառում են արվեստի դիզայներական, այլընտրանքային և հնաոճ նմուշներ, հագուստ, կահույք, երաժշտական վինիլային ձայնապնակներ և այլն:

սավորում, երբեմն Քեմդենի ջրարգելակի կամրջի մոտ թրև եկող թմրավաճառներից հաջողվում էր «խոտ» ճարել: Երբ ես ու Գաբրիելն այնտեղ գնացինք, թմրավաճառներ այլևս չկային. Գաբրիելն անհանգստացավ:

- Այստեղ ամեն ինչ գրեթե անճանաչելիորեն փոխվել է: Զբոսաշրջիկների համար ախտահանված ծուղակ է:

Այսօր շուկայում շրջելիս մտածեցի՝ չէ՞ որ խնդիրն այն չէ, որ շուկան փոխվել է, այլ այն, որ Գաբրիելն է փոխվել: Այստեղ հիմա էլ բազմաթիվ անչափահասներ կան՝ արևի տակ մեկնված: Ջրանցքի երկու ափին խռնված մարմիններ են՝ մինչև գոտկատեղը մերկ, շորտերի փողքերը քշտած տղաներ, կրծկալներով կամ լողազգեստներով աղջնակներ: Ամենուր՝ մերկ մարմիններ, այրվող, կարմրատակած մաշկ: Շատրվանող սեքսուալ էներգիա, անհագ, անհամբեր կյանքի ծարավ: Գաբրիելին սիրելու ուժգին ցանկություն զգացի. ահավոր շատ էի ուզում նրա մկանուտ մարմինը, ուժեղ ոտքերը, ազդրերը վերևից վրաս զգալ: Գաբրիելի հետ սեքս անելիս՝ միշտ զգում եմ այդ անհագ քաղցը. մեր միության ծարավն ավելի մեծ է, քան ես, ավելի մեծ, քան մենք, մի բան, որ բառերով չես նկարագրի, նվիրական մի բան:

Հանկարծ մի անօթևանի տեսա. նստել էր ոչ հեռու՝ մայթին, ինձ էր նայում: Շալվարը գոտու փոխարեն ձգված էր թոկով, կոշիկները կցված էին կպչուն ժապավենով: Մաշկին վերքեր կային, դեմքին՝ պայթած բշտիկներ: Հանկարծ տխրության ու զզվանքի զգացում ունեցա: Նրանից քրտինքի ու մեզի նեխահոտ էր փչում: Մի պահ թվաց՝ անօթևանն ինձ է դիմում: Բայց նա քթի տակ հայհոյում էր՝ սատանան տանի սա, սատանան տանի նա: Շոշափելով պայուսակիս մեջ մանրադրամ գտա ու տվեցի:

Հետո տուն քայլեցի՝ դանդաղ, քայլ առ քայլ հաղթահարելով բլուրը: Հիմա ճանապարհն ավելի դարիվեր էր թվում: Ասես մի ամբողջ հավերժություն հյուծիչ արևի տակ էի: Չգիտես ինչու անօթևանի մասին մտքերն ինձ չէին լքում: Խղճահարության զգացումից բացի մի բան էլ կար՝ անբացատրելի, վախի նման: Նրան մանկիկ պատկերացրի՝ մոր գրկում: Մոր մտքով երբևէ կանցնե՞ր, որ որդին վերածվելու է խելագար, կեղտոտ ու գարշահոտ քրջոտի՝ մայթին կծկված, հայհոյանքներ մռթմռթացող:

Մորս մասին մտածեցի: Խելագա՞ր էր: Գուցե դրա պատճառո՞վ այդպես վարվեց: Ինչո՞ւ ինձ կապեց իր դեղին Մինիի ուղևորատեղին ու ամբողջ թափով մխրճվեց կարմիր աղյուսից պատի մեջ: Ես սիրում էի մայրիկի ուրախ, դեղձանիկադեղնագույն մեքենան: Իմ ներկատուփում դեղինի նույն երանգը կա: Հիմա ատում եմ այդ գույնը. ամեն անգամ, երբ օգտագործում եմ, մահվան մասին եմ մտածում:

Ինչո՞ւ մայրիկն այդպես վարվեց: Երևի էլ երբեք չեմ իմանա: Առաջ մտածում էի, որ դա ինքնասպանություն էր: Իսկ հիմա մտածում եմ, որ սպանության փորձ էր: Չէ՞ որ մայրիկից բացի ես էլ էի մեքենայի մեջ: Երբեմն մտածում եմ՝ գուցե ես էի նախատեսված զոհը, հենց ի՛նձ էր փորձում սպանել, ոչ թե իրեն: Դա արդեն խենթություն է: Ինչո՞ւ պիտի ցանկանար ինձ սպանել:

Բլուրը բարձրանալիս աչքերս արցունքոտվեցին: Մորս համար չէի լալիս, ոչ էլ իմ ու ոչ էլ այն խեղճ անօթևանի: Բոլորիս համար էի լալիս: Շուրջբոլորն այնքան ցավ կա, իսկ մենք ուղղակի աչք ենք փակում դրա վրա: Իրականում բոլորս վախենում ենք: Սարսափում ենք իրարից: Ես վախենում եմ ինձնից

ու նրանից, ինչ մորիցս է մնացել իմ մեջ: Ժառանգե՞լ եմ նրա խելագարությունը: Իսկապե՞ս: Մի՞թե ես էլ...

Չէ՛: Բավական է: Հերիք է:

Չեմ գրի այդ մասին: Ոչ մի դեպքում:

Հուլիսի 20

Երեկ երեկոյան ես ու Գաբրիելը դրսում ընթրեցինք: Սովորաբար ուրբաթ օրերին ենք որևէ տեղ գնում: Ռոմանտիկ երեկո, ինչպես ասում է Գաբրիելն իր հիմար ամերիկյան շեշտադրությամբ:

Գաբրիելը երբեք չի ցուցադրում իր զգացմունքներն ու ծաղրում է այն ամենը, ինչը սենտիմենտալ է համարում: Նախընտրում է իրեն ցինիկ ու սենտիմենտալությունից զուրկ մարդ համարել: Իրականում շատ ռոմանտիկ է՝ հոգու խորքում, ոչ խոսքերով: Արարքները բառերից շատ ավելի պերճախոս են, չէ՞: Իսկ Գաբրիելի արարքներն ինձ ստիպում են մինչև ականջներիս ծայրը սիրահարվել նրան:

- Ո՞ւր ես ուզում՝ գնանք,- հարցրի:
- Գուշակիր երեք անգամից:
- «Օգուստոյի մո՞տ»:
- Ճիշտ թիրախին:

«Օգուստոյի մոտ»-ը տեղական իտալական ռեստորան է մոտակայքում: Առանձնապես ոչնչով աչքի չի ընկնում, բայց մեր սիրած տեղն էր, որտեղ բազում երջանիկ երեկոներ էինք անցկացրել: Տնից դուրս եկանք մոտ ժամը 8-ին: Օդորակիչը չէր աշխատում, դրա համար էլ նստեցինք բաց պատուհանի

մոտ: Օդը տաք էր, թանձր ու խոնավ: Սառեցրած չոր սպիտակ գինի էինք խմում: Լավ գինովցել էի. անընդհատ ծիծաղում էինք, հաճախ առանց որևէ պատճառի: Ռեստորանից դուրս գալիս համբուրվում էինք, իսկ տուն հասնելուն պես սիրեցինք իրար:

Փառք Աստծո, Գաբրիելը չառարկեց շարժական օդափոխիչի դեմ, թեկուզ այն ընթացքում, երբ անկողնում էինք: Օդափոխիչը դրեցի մեր դիմաց, և իրար գրկած պառկել էինք զով քամու տակ: Գաբրիելը մատները սահեցրեց մազերիս վրայով ու համբուրեց ինձ:

- Սիրում եմ քեզ,- շշնջաց:

Չպատասխանեցի: Խոսելու կարիք չկար: Գաբրիելը գիտեր, թե ինչ եմ զգում: Բայց մի տխմար, անշնորհք արտահայտությամբ փչացրի տրամադրությունը. հարցրի՝ կհամաձայնի՞ իմ նկարի համար բնորդ լինել:

- Ուզում եմ նկարել քեզ,- ասացի:

- Էլի՞: Արդեն նկարել ես:

- Չորս տարի է անցել: Ուզում եմ մի անգամ էլ նկարել:

- Հա,- բացարձակ ոգևորված չէր: - Ի՞նչ ես մտածել:

Ես հապաղեցի, հետո խոստովանեցի, որ ուզում եմ Հիսուսին նկարել: Գաբրիելը նստեց անկողնում ու խեղդված ծիծաղեց:

- Վերջ տուր, Ալիսիա՛:

- Ի՞նչը:

- Չգիտեմ, վստահ չեմ, սեր իմ,- ասաց: - Չեմ կարծում:

- Իսկ ինչո՞ւ ոչ:

- Ի՞նչ ես մտածել: Նկարել ինձ խաչին գամված: Իսկ մարդիկ ի՞նչ կասեն:

- Քեզ երբվանից է սկսել մարդկանց կարծիքը հետաքրքրել:

- Չի հետաքրքրում բազմաթիվ առումներով, բայց գոնե հասկանում ես՝ ինչ կմտածեն: Կկարծեն, թե այդպես ես տեսնում ինձ:

- Ես քեզ Աստծո որդի չեմ համարում,- ծիծաղեցի: - Ընդամենը պատկեր է. ինքն իրեն ստացվեց, երբ նկարում էի: Նույնիսկ չեմ մտածել այդ մասին:

- Բայց գուցե պետք էր մտածել:

- Ինչու: Դա կապ չունի քո կամ մեր ամուսնության հետ:

- Այդ դեպքում ինչի՞ հետ կապ ունի:

- Ինչ իմանամ:

Գաբրիելը ծիծաղեց ու ոլորեց աչքերը:

- Լավ,- ասաց: - Գրողը տանի: Համոզեցիր: Արի փորձենք: Երևի գիտես՝ ինչ ես անում:

Նրա խոսքում առանձնակի աջակցություն չկար, բայց գիտեմ, որ Գաբրիելը հավատում է ինձ ու իմ տաղանդին. եթե ամուսինս չլիներ, երբեք նկարիչ չէի լինի: Չլինեին նրա սուր խայթոցները, խրախուսանքն ու կռվարարությունը, այդպես էլ երբեք չէի հաղթահարի ուսումնարանին հաջորդած առաջին անպտուղ տարիները, երբ Ժան-Ֆելիքսի հետ պատեր նախշելով էի զբաղված: Մինչև Գաբրիելին հանդիպելս ինձ լրիվ կորցրել էի, չգիտեի՝ դեպի ուր շարժվեմ: Բացարձակ չեմ կարոտում թմրամոլ քեֆչիներին, որոնց կյանքիս երկրորդ տասնամյակում ընկեր էի համարում: Միայն երեկոներն էինք հանդիպում. լուսաբացին նրանք անհետանում էին, ինչպես վամպիրները, որոնք փախչում են արևի լույսից: Երբ հանդիպեցի Գաբրիելին, նրանք մի ակնթարթում չքվեցին. նույնիսկ չնկատեցի, թե ինչպես: Ես այլևս նրանց կարիքը չունեի. այ-

սուիեետև ինձ ոչ ոք պետք չէր Գաբրիելից բացի: Նա փրկեց ինձ, ինչպես Հիսուսը: Գուցե նկարի ստեղծման պատճառը հենց դա է: Գաբրիելն իմ աշխարհն է. մեր հանդիպման առաջին պահից մինչև այսօր: Սիրելու եմ նրան, ինչ էլ որ անի, ինչ էլ որ պատահի. ինչքան էլ վշտացնի, ինչքան էլ կեղտոտ կամ անխնամ տեսք ունենա, ինչքան էլ եսասեր կամ անմիտ վարվի: Նրան ընդունում եմ այնպիսին, ինչպիսին կա:

Մինչև մահը բաժանի մեզ:

Հուլիսի 21

Գաբրիելն այսօր արվեստանոց եկավ ու նկարի համար բնորդեց:

– Արի պայմանավորվենք, որ օրերով չեմ կարող այստեղ նստել,– ասաց: – Քանի՞ սեանս պետք կլինի:

– Հաստատ մեկից ավելի, որ ամեն ինչ, ինչպես հարկն է, հասցնեմ:

– Միասին ժամանակ անցկացնելու պատրվա՞կ ես փնտրում: Եթե այո, առաջարկում եմ շրջանցել նախաբանն ու անմիջապես գործի անցնել, այսինքն՝ ննջարան:

– Գուցե, բայց հետո,– ծիծաղեցի: – Եթե քեզ լավ պահես ու դադարես շուռումուռ գալ:

Նրան տեղավորեցի օդափոխիչի դիմաց: Ճակատի մազափունջը թեթև տարուբերվում էր:

– Ո՞նց կանգնեմ, որ ճիշտ լինի,– հարցրեց՝ հերոսական կեցվածք ընդունելով:

– Հատուկ ոչինչ պետք չէ: Եղիր այնպիսին, ինչպիսին կաս:

- Գուցե դեմքիս տառապանք հաղորդեմ, չեմ ուզում:

- Չեմ կարծում, թե Քրիստոսի դեմքին տառապանք է եղել: Ես նրան այդպես չեմ տեսնում: Ծամածռություն պետք չէ. ուղղակի այդտեղ կանգնիր: Ու մի՛ շարժվիր:

- Ոնց կասես, ղեկավա՛ր:

Գաբրիելը մոտ 20 րոպե դիմացավ: Հետո դերից դուրս եկավ՝ տրտնջալով, որ հոգնել է:

- Ուրեմն նստիր,- ասացի: - Բայց չխոսես: Դեմքի վրա եմ աշխատում:

Գաբրիելը նստեց աթոռին և այլևս չխոսեց, մինչ ես աշխատում էի: Ինչ հաճույքով էի դեմքը նկարում: Գեղեցիկ դիմագծեր ունի: Ուժեղ ծնոտ, բարձր այտոսկրեր, ազնվազարմ քիթ: Արվեստանոցում լուսավորության տակ աթոռին նստած հունական արձան էր հիշեցնում: Հերոսի քանդակ:

Բայց և այնպես ինչ-որ բան այն չէր: Չէի հասկանում ինչու. գուցե պեմք չէր այդքան շտապել: Ոչ մի կերպ չէր հաջողվում ճիշտ արտահայտել ո՛չ աչքերի ձևը, ո՛չ երանգը: Առաջինը, որ նկատեցի Գաբրիելի աչքերի մեջ, փայլն էր, ասես ծիածանաթաղանթի մեջ փոքրիկ ադամանդ էր պահված: Բայց չգիտես ինչու չէի կարողանում այն որսալ: Երևի վարպետությունս չի բավականացնում, կամ գուցե Գաբրիելի հայացքում ինչ-որ առանձնահատուկ բան կա, որը ներկերով անհնար է հաղորդել: Աչքերն առաջվա պես դատարկ, անկենդան էին մնում: Զգում էի, որ սկսում եմ բարկանալ:

- Գրողը տանի: Չի ստացվում,- ասացի:

- Ընդմիջո՞ւմ անենք:

- Երևի այո: Ժամանակն է:

- Սեքս: Ինչ կասես:

– Լավ,– ծիծաղս եկավ:

Գաբրիելը թռավ դեպի ինձ, գրկեց ու համբուրեց: Սիրեցինք իրար հենց այդտեղ՝ արվեստանոցի հատակին:

Ամբողջ ընթացքում չէի կարողանում հայացքս Գաբրիելի դիմանկարի անկենդան աչքերից կտրել: Այդ աչքերը հետապնդում, մոխրացնում էին ինձ: Ստիպված շրջվեցի:

Բայց, մեկ է, հայացքով ինձ էր հետևում:

2

Գնացի Դիոմիդիսին փնտրելու՝ Ալիսիայի հետ հանդիպման մասին զեկուցելու համար: Նա իր աշխատասենյակում էր, նոտագրքերի տրցակն էր դասավորում:

- Դե,- ասաց գլուխը չբարձրացնելով,- ինչ էր զրույցը:

- Ճիշտն ասած, զրույց չեղավ:

Դիոմիդիսը հարցական ինձ նայեց:

- Ալիսիայի հետ աշխատանքը սկսելուց առաջ նախ պետք է, որ նա կարողանա մտածել ու զգալ,- մի քիչ հապաղելով ասացի ես:

- Համաձայն եմ: Իսկ ինչն է անհանգստացնում:

- Անհնար է կապ հաստատել մարդու հետ, որը ծանր դեղամիջոցների ազդեցության տակ է: Նա ասես ջրի տակ լինի, վեց ոտնաչափ խորության վրա:

Դիոմիդիսը խոժոռվեց:

- Ես այդքան չէի չափազանցնի,- ասաց: - Ստույգ չեմ կարող ասել՝ ինչ չափաբաժին է ընդունում...

- Յուրիից ճշտել եմ: 16 միլիգրամ ռիսպերիդոն: Մահացու չափաբաժին:

Դիոմիդիսը բարձրացրեց հոնքը:

- Այո, իսկապես շատ է: Կարծում եմ՝ կարելի է նվազեցնել: Գիտեք, Ալիսիայով զբաղվող թիմը Քրիստիանն է ղեկավարում: Այդ մասին նրա հետ խոսեք:

- Կարծում եմ՝ ավելի լավ կլինի, եթե Դուք խոսեք:

- Հը՛մ,- Դիոմիդիսը կասկածանքով ինձ նայեց: - Դուք Քրիստիանի հետ վաղուց եք ծանոթ, ճի՞շտ է: Դեռ Բրոդմուրից:

- Խիստ հպանցիկ:

Դիոմիդիսն անմիջապես չպատասխանեց: Հետո վերցրեց գրասեղանին դրված շաքարապատ նուշով ափսեն ու հյուրասիրեց ինձ: Գլուխս տարուբերեցի: Սևեռուն ինձ նայելով՝ նուշը գցեց բերանն ու սկսեց խրթոցով ծամել:

- Ասացե՛ք, Ձեր ու Քրիստիանի միջև ամեն ինչ կարգի՞ն է,- հարցրեց:

- Տարօրինակ հարց է: Ինչո՞ւ եք հարցնում:

- Ձեր միջև ինչ-որ թշնամանք եմ զգում:

- Ոչ իմ կողմից:

- Իսկ նրա՞:

- Լավ կլինի՝ Քրիստիանին հարցնեք: Ես նրա հետ խնդիր չունեմ:

- Հը՛մ... Գուցե և ինձ թվում է, բայց որոշակի լարվածություն եմ զգում... Զգույշ եղեք: Ցանկացած ագրեսիա կամ մրցակցություն աշխատանքին խանգարում է: Դուք իրար հետ պիտի աշխատեք, ոչ թե իրար դեմ:

- Գիտեմ:

- Ուրեմն Ալիսիայի դեղամիջոցների հարցը պետք է Քրիստիանի հետ քննարկել: Ուզում եք, որ Ալիսիան զգայունակությունը վերագտնի: Համաձայն եմ: Բայց հիշեք. զգայունակությունը մեծացնելով մեծացնում ենք վտանգը:

- Վտանգն ռիմ համար:

- Բնականաբար, Ալիսիայի,- Դիոմիդիսը ցուցամատը պարզեց: - Մի՛ մոռացեք, որ այստեղ տեղափոխվելուց հետո, սկզբնական շրջանում, ինքնասպանության էր հակված: Բազմիցս փորձել է: Դեղորայքը կայունացնում է նրա վիճակը: Դրա շնորհիվ է, որ Ալիսիան ողջ է: Եթե դեղաչափը պակասեցնենք, մեծ է հավանականությունը, որ զգացմունքներն այնպես գլուխ բարձրացնեն, որ նա չկարողանա հաղթահարել: Պատրաստ եք այդպիսի ռիսկի դիմել:

Պրոֆեսորի խոսքը լուրջ ընդունեցի, բայց գլխով արեցի:

- Կարծում եմ՝ ստիպված ենք դիմել այդ ռիսկին, պրոֆեսո՛ր,- ասացի: - Այլապես երբեք Ալիսիայի հետ կապ չենք հաստատի:

- Այդ դեպքում կխոսեմ Քրիստիանի հետ,- Դիոմիդիսը թոթվեց ուսերը:

- Շնորհակալություն:

- Տեսնենք՝ ինչ կասի: Հոգեբույժներին դուր չի գալիս, երբ նրանց թելադրում են, թե ինչպես պիտի բուժեն իրենց հիվանդներին: Անշուշտ, կարող եմ Քրիստիանին ստիպել, որ ենթարկվի, բայց այդպիսի միջոցների կողմնակից չեմ. զգուշորեն կպարզեմ, հետո նրա կարծիքը Ձեզ կհայտնեմ:

- Եթե կարելի է, նրա հետ խոսելիս ինձ չհիշատակեք:

- Պարզ է,- ասաց նա հանելուկային ժպիտով: - Դե ինչ, պայմանավորվեցինք:

Դիոմիդիսը գրասեղանի դարակից մի ոչ մեծ տուփ հանեց, զգույշ բացեց կափարիչը. տուփի մեջ սիգարներ էին: Մեկն ինձ առաջարկեց: Հրաժարվեցի:

- Ձե՞ք ծխում,- ձայնի մեջ զարմանք լսվեց: - Ձեզ նայելով մտածեցի՝ ծխող եք:

- Ոչ-ոչ: Չեմ ծխում: Այնպես, մեկ-մեկ մի հատիկ ծխում եմ... Փորձում եմ թողնել:

- Կեցցեք: Ճիշտ է,- Դիոմիդիսը բացեց պատուհանը: - Գիտեք, ասում են՝ հոգեբույժը չպիտի ծխի. այլապես դա կնշանակի, որ, որպես մասնագետ, ոչ մի բանի պետք չէ,- պրոֆեսորը քմծիծաղ տվեց ու սիգարը բերանը դրեց: - Մենք այստեղ բոլորս մի քիչ խախտված ենք: Գիտեք, մի ժամանակ մեր աշխատասենյակներում զվարճալի մակագրությամբ ցուցանակներ կային. «Այստեղ աշխատելու համար պարտադիր չէ գիժ լինել, բայց դա օգնում է»:

Դիոմիդիսը նորից ծիծաղեց: Վառեց սիգարը, ծխեց ծուխը փչելով: Նախանձով նրան էի հետևում:

3

Ճաշից հետո ելքը փնտրելով միջանցքներում էի դեգերում: Ուզում էի դուրս թռչել ու ծխել, բայց հրշեջ ելքի մոտ ինձ նկատեց Ինդիրան: Որոշեց, որ մոլորվել եմ:

- Մի՛ անհանգստացիր, Թեո,- ինձ թևանցուկ անելով ասաց նա,- ամիսներով կորել եմ այս միջանցքներում: Կարծես լաբիրինթոս լինի, ու թվում է՝ ընդհանրապես ելք չկա: Մինչև հիմա էլ խառնում եմ՝ ուր գնամ, չնայած արդեն տասը տարի աշխատում եմ:

Նա ծիծաղեց: Ու մինչ կկարողանայի առարկել, ինձ քարշ տվեց վերև՝ ակվարիումում մի բաժակ թեյ խմելու:

- Հիմա թեյնիկը դնեմ: Ինչ զզվելի եղանակ է, չէ՞: Երանի վերջապես ձյուն գար, ամեն ինչ վերջանար: Ի դեպ, ձյունը շատ հզոր երևակայական խորհրդանիշ է, չէ՞: Ամեն ինչ մաքրում է: Նկատե՞լ եք՝ հիվանդներն ինչ հաճախ են խոսում ձյան մասին: Ուշադրություն դարձրեք: Հետաքրքիր է:

Հետո, ի զարմանս ինձ, վերցրեց պայուսակը, հանեց սննդային թաղանթով փաթաթած մի մեծ կտոր տորթ ու ինձ տվեց.

- Վերցրեք: Ընկույզով տորթ է: Երեկ եմ թխել: Հատուկ Ձեզ համար:

- Ա՜խ, շատ շնորհակալ եմ: Ես...

- Գիտեմ, կանոններին դեմ է, բայց ես միշտ ավելի լավ արդյունքներ եմ ունենում բարդ հիվանդների հետ, եթե սեանսի ընթացքում մի կտոր տորթ եմ հյուրասիրում:

- Չեմ էլ կասկածում,- ծիծաղեցի: - Ես դժվա՞ր հիվանդ եմ:

- Չէ՛,- Ինդիրան ծիծաղեց,- թեև այս հնարքը հրաշալի աշխատում է նաև դժվար աշխատակիցների դեպքում. ի դեպ, Դուք դրանցից չեք: Մի քիչ քաղցրը բարձրացնում է տրամադրությունը: Առաջ ճաշարանի համար տորթեր էի թխում, բայց հետո Ստեֆանին այնպիսի աղմուկ բարձրացրեց, անհեթեթություններ դուրս տվեց, թե իբր սննդի անվտանգության կանոններն արգելում են դրսից ուտելիք բերել: Կարելի է մտածել՝ խարտոց եմ բերել: Ես, մեկ է, էլի թաքուն թխում եմ: Ապստամբում եմ նրա բռնակալության դեմ: Մի կտոր փորձեք:

Դա հարց չէր, այլ՝ հրաման: Մի կտոր կծեցի: Իսկապես համով էր: Հյութեղ, ընկույզի համով, քաղցր: Բերանս լիքն էր, ափով փակեցի, որ խոսեմ:

- Կարծում եմ՝ այս համն իսկապես կբարձրացնի Ձեր հիվանդների տրամադրությունը:

Ինդիրան ծիծաղեց. երևում է՝ գոհ էր: Եվ այստեղ հասկացա, թե նա ինչու էր ինձ դուր գալիս. նրանից մայրական խաղաղություն էր ճառագում: Հիշեցնում էր Ռութին՝ իմ վաղեմի հոգեթերապևտին: Դժվար էր նրան չար կամ զայրացած պատկերացնել:

Մինչ նա թեյ էր պատրաստում, շուրջս նայեցի: Բուժքույրերի հերթապահ կետը հոգեբուժական բաժանմունքի կենտրոնն է՝ սիրտը. այստեղից և դեպի այստեղ է անձնակազմը տեղաշարժվում. բաժանմունքի ամենօրյա կառավարումն

այստեղից է կատարվում, այստեղ են կայացվում նաև բոլոր գործնական որոշումները: Կետը բուժքույրերն էին ակվարիում կոչել, որովհետև պատերն ամուր ապակուց էին. նշանակում է՝ անձնակազմը կարող էր հետևել հանգստի սենյակի հիվանդներին, համենայն դեպս, տեսականորեն: Իրականում, հիվանդներն անհանգիստ հետուառաջ էին անում թափանցիկ պատից այն կողմ, աչքերը մեզ վրա չռում ու հետևում, ուստի մենք էինք մշտական, սևեռուն դիտարկման ենթարկվում: Տեղը նեղվածք էր՝ մեկ-երկու աթոռ, դրանք էլ հիմնականում զբաղեցնում էին գրանցում անող բուժքույրերը: Մյուսները ստիպված սենյակի կենտրոնում էին կանգնում կամ սեղանին հենվում. այնպիսի տպավորություն էր, որ սենյակը լեփ-լեցուն էր՝ անկախ նրանից, թե որքան մարդ էր հավաքված:

- Վերցրեք, սիրելիս,- ասաց Ինդիրան՝ թեյի գավաթն ինձ տալով:

- Շնորհակալություն:

Ներս մտավ Քրիստիանն ու գլխի շարժումով ողջունեց ինձ: Նրանից իր սիրած անանուխի մաստակի ուժեղ հոտն էր փչում: Հիշում եմ՝ Բրոդմուրում, որտեղ միասին էինք աշխատում, շատ էր ծխում. դա մեզ միավորող եզակի հանգամանքներից էր: Դրանից հետո Քրիստիանն ազատվել էր աշխատանքից, ամուսնացել, իսկ վերջերս ծնվել էր աղջիկը: Հետաքրքիր է՝ նրանից ինչ հայր է ստացվել: Քրիստիանն առանձնապես սիրալիր մարդու տպավորություն չէր թողնում: Սառը ժպտաց ինձ:

- Զվարճալի է, որ Ձեզ նորից այստեղ եմ տեսնում:

- Աշխարհը նեղ է:

- Եթե հոգեբուժության մասին եք խոսում, իսկապես, այո:

Քրիստիանը հավանաբար ակնարկում էր, որ աշխատանքից բացի ուրիշ, ավելի լայն հետաքրքրություններ ունի: Փորձեցի պատկերացնել ինչպիսի: Եթե անկեղծ, ես նրան միայն մարզասրահում կամ ռեգբիի դաշտում՝ դաժան գոտեմարտում[1] էի պատկերացնում:

Քրիստիանը մի քանի վայրկյան լուռ ու սևեռուն ինձ էր նայում: Մոռացել էի, որ սովորություն ուներ դադար տալ, հաճախ տևական՝ զրուցակցին ստիպելով սպասել, մինչև ինքը կբարեհաճի պատասխանել: Դա ինձ նյարդայնացնում էր այստեղ, ճիշտ ինչպես Բրոդմուրում:

- Անհարմար պահի ես միանում թիմին,- վերջապես ասաց նա: - Գրոուվի գլխին դամոկլյան սուր է կախված:

- Կարծում ես՝ ամեն ինչ այդքան վա՞տ է:

- Ընդամենը ժամանակի հարց է: Կառավարող ընկերությունը վաղ թե ուշ կփակի մեզ: Իսկ հիմա հարց՝ դու այստեղ ի՞նչ ես անում:

- Այսի՞նքն:

- Դե, սովորաբար առնետները խորտակվող նավից են փախչում: Նավ չեն մագլցում:

Քրիստիանի անթաքույց ագրեսիան ինձ ապշեցրեց: Որոշեցի խայծը կուլ չտալ: Միայն ուսերս թոթվեցի:

- Գուցե,- ասացի,- բայց ես առնետ չեմ:

Քրիստիանը չհասցրեց պատասխանել. խլացնող դղրդոցը մեզ ստիպեց տեղից վեր թռչել: Էլիֆը կանգնել էր ապակու

---

[1] Տվյալ դեպքում հեղինակը նկատի ունի ռեգբի խաղի այն տարրը, երբ յուրաքանչյուր թիմից ութ խաղացող սեղմվում են իրար և, երեք շարքով դասավորված, սերտ մոտենում մրցակիցներին:

մյուս կողմում ու բռունցքներով պատին էր հարվածում: Դեմքը սեղմել էր ապակուն, այնպես, որ քիթը ճմլվել էր, դիմագծերը՝ աղավաղվել, դեմքը համարյա հրեշային էր դարձել:

- Այդ աղբն էլ չեմ հանդուրժի: Ատում եմ... Ատում եմ քո գրողի տարած հաբերը, հասկացա՞ր:

Քրիստիանը բացեց ապակյա պատի պատուհանիկն ու դրա միջով խոսեց նրա հետ.

- Հիմա քննարկելու ժամանակը չէ, Էլի՛ֆ:

- Ես քեզ զգուշացնում եմ, էլ չեմ խմելու էս հաբերը, վատ եմ զգում դրանցից, գրողը քեզ տանի...

- Ես հիմա չեմ խոսի քեզ հետ: Գրանցվիր ընդունելության համար: Իսկ հիմա հեռացիր ապակուց, խնդրում եմ:

Էլիֆը մռայլվեց՝ մի պահ մտածելով: Հետո շրջվեց ու դանդաղ հետ գնաց՝ ապակու վրա սեղմված քթի տեղում պղտոր, կլորավուն հետք թողնելով:

- Ա՛յ քեզ խառնվածք,- ասացի:

- Դժվար է,- փնչաց Քրիստիանը:

- Խե՜ղճ Էլիֆ,- գլխով արեց Ինդիրան:

- Ինչի՞ համար է այստեղ:

- Կրկնակի սպանության,- ասաց Քրիստիանը: - Մորն ու քրոջն է սպանել: Քնի մեջ խեղդամահ է արել:

Ապակու միջով նորից Էլիֆին նայեցի: Միացավ մյուս հիվանդներին: Աշտարակի պես կանգնեց նրանց գլխավերևում: Մեկը թղթադրամ խցկեց ձեռքը, ինչը նա արագ գրպանը դրեց:

Հետո Ալիսիային նկատեցի. մենակ նստած էր միջանցքի հեռավոր ծայրում, պատուհանից դուրս էր նայում: Հայացքով մի պահ հետևեցի նրան: Քրիստիանը նկատեց:

- Ի դեպ,- ասաց,- պրոֆեսոր Դիոմիդիսի հետ Ալիսիայի

մասին էի խոսում: Ուզում եմ տեսնել՝ ինչպես կդրսևորի իրեն ռիսպերիդոնի ավելի փոքր դեղաչափի դեպքում: Իջեցրել եմ մինչև 5 միլիգրամ:

- Պարզ է:

- Մտածեցի՝ կուզես իմանալ: Լսել եմ՝ փորձել ես նրա հետ սեանս անցկացնել:

- Ճիշտ է:

- Հիմա պետք է նրան մշտապես աչքի տակ պահել, որ տեսնենք, թե փոփոխությանն ինչպես կարձագանքի: Ի դեպ, երբ հաջորդ անգամ որոշես իմ հիվանդների բուժումը կարգավորել, ուղիղ ինձ մոտ արի: Պետք չէ իմ թիկունքում Դիոմիդիսի հետ բամբասել,- հայացքն ինձնից չկտրելով՝ ասաց Քրիստիանը:

- Չեմ բամբասել,- ժպտացի: - Խնդիր չկա, կարող եմ անմիջապես քեզ հետ խոսել, Քրիստիան:

Անհարմար լռություն տիրեց: Քրիստիանը, ըստ երևույթին, ինչ-որ որոշում կայացնելով, գլխով արեց:

- Հուսով եմ՝ հասկանում ես, որ Ալիսիան անձի սահմանային խանգարում ունի[1]: Դրան բուժում չկա: Իզուր ժամանակ մի՛ կորցրու:

- Որտեղի՞ց գիտես, որ սահմանային խանգարում ունի,- հարցրի,- եթե խոսել չի կարողանում:

- Չի խոսում:

- Կարծում ես՝ ձևացնո՞ւմ է:

- Այո, հենց այդպես էլ կարծում եմ:

---

[1] Անձի սահմանային խանգարումը զգացմունքային տեսանկյունից անկայուն վիճակ է, որը բնութագրվում է իմպուլսիվությամբ, ինքնավերահսկողության ցածր մակարդակով, բարձր տագնապայնությամբ և իրականության հետ անկայուն կապով: Հաճախ ուղեկցվում է վտանգավոր վարքագծով և ինքնավնասումներով:

– Եթե ձևացնում է, ի՞նչ կապ ունի անձի սահմանային խանգարումը:

Քրիստիանը բորբոքված ինձ նայեց: Մինչ կպատասխաներ, խոսակցությանը միջամտեց Ինդիրան.

– Ամենայն հարգանքով, չեմ կարծում, թե «անձի սահմանային խանգարում» և նմանատիպ այլ ընդհանուր հասկացություններից որևէ օգուտ կա: Դրանք մեզ բոլորովին էլ օգտակար տեղեկություններ չեն հաղորդում,– նա նայեց Քրիստիանին: – Ես ու Քրիստիանն այդ խնդրի շուրջ հաճախ ենք վիճում:

– Իսկ ի՞նչ կարծիքի եք Ալիսիայի վիճակի մասին,– հարցրի նրան:

Ինդիրան փոքր-ինչ մտածեց, ապա ասաց.

– Ես նրա հանդեպ ավելի շուտ մայրական զգացումներ ունեմ: Դա իմ հակափոխանցումն է. ահա թե ինչ է արթնացնում նա իմ մեջ: Ալիսիային պարզապես պետք է մեկը, որ հոգ կտանի իր մասին,– այստեղ Ինդիրան ժպտաց ինձ: – Ու հիմա վերջապես կա այդ մեկը: Նրա կյանքում Դուք եք հայտնվել:

Քրիստիանը սուր ծիծաղեց:

– Կներեք անհասկացողիս, բայց ինչպե՞ս եք պատկերացնում Ալիսիայի բուժումը, եթե նա չի խոսում,– թունոտ հարցրեց նա Ինդիրային:

– Բուժումը զրույցով չի սահմանափակվում,– ասաց Ինդիրան: – Նախ պետք է անվտանգ տարածք ստեղծել, ներառական միջավայր: Ինչ վերաբերում է հաղորդակցությանը, ապա այն գերազանցապես ոչ վերբալ է. կարծեմ առանց իմ ասելու էլ գիտեք:

Քրիստիանը հայացքն ինձ հառեց:

- Հաջողություն, բարեկամս,- ասաց: - Հաջողությունը քեզ պետք կգա:

4

- Ողջույն, Ալիսիա՛,- ասացի:

Դեղաչափն իջեցնելուց հետո մի քանի օր էր անցել, բայց Ալիսիայի վարքում փոփոխությունն արդեն ակնհայտ էր: Շարժումներն ավելի արագասահ էին: Աչքերը՝ ավելի պարզ: Մշուշոտ հայացքն անհետացել էր: Լրիվ ուրիշ մարդ էր դարձել:

Յուրիի հետ կանգնել էր աշխատասենյակի շեմին և տատանվում էր: Ուշադիր նայում էր ինձ, ասես առաջին անգամ էր տեսնում, մանրամասն ուսումնասիրում էր, փորձում հասկանալ, թե ինչ մարդ եմ: Հետաքրքիր է՝ ինչ եզրահանգումներ էր անում: Ամենայն հավանականությամբ, դրական վճիռ կայացրեց ու ներս մտավ: Առանց հրավերի նստեց:

Ես գլխով արեցի Յուրիին՝ հասկացնելով, որ կարող է գնալ: Նա մի քիչ էլ մնաց, հետո դուրս եկավ դուռը փակելով:

Նստեցի Ալիսիայի դիմաց: Որոշ ժամանակ լուռ էինք: Պատուհանից այն կողմ միայն անձրևի ձայնն էր, կաթիլները թմբկահարում էին ապակին:

- Ինչպե՞ս եք,- հարցրի:

Ոչ մի պատասխան: Ալիսիան ակնդետ ինձ էր նայում: Աչքերն ասես լապտերներ լինեին՝ անթարթ ինձ էին նայում:

Բացեցի բերանս ու նորից փակեցի: Որոշեցի դիմադրել դատարկությունը բառերով լցնելու գայթակղությանը: Փոխարենը, լռելով ու հենց այնպես նստելով, հույս ունեի հաղորդակցումը վարել այլ կերպ, ոչ վերբալ եղանակով. պետք է հասկացնել նրան, որ կարող ենք ահա այսպես հանգիստ միասին նստել, որ իրեն չեմ նեղացնի, որ կարող է վստահել ինձ: Միայն Ալիսիայի վստահությունը նվաճելու դեպքում ինձ կհաջողվի ստիպել, որ խոսի: Դա ժամանակ կպահանջի. մի երեկոյի ընթացքում ոչինչ չի ստացվի: Գործը դանդաղ առաջ կշարժվի՝ սառցակտորի պես, բայց կշարժվի:

Ես ու Ալիսիան լուռ նստել էինք. քունքերս տրոփում էին: Սկսվող գլխացավի առաջին նշանը: Պերճախոս ախտանիշ է: Հիշեցի Ռութի ասածը. «Լավ հոգեբույժ լինելու համար պետք է հիվանդի հույզերի հանդեպ ընկալունակ լինես, բայց չպետք է կառչես: Չէ՞ որ դրանք քոնը չեն, քեզ չեն պատկանում»: Այլ կերպ ասած, գլխիս մեջ այս թրըմփ-թրըմփ-թրըմփոցն իմ ցավը չէ. այն Ալիսիայինն է: Եվ տխրության այս հանկարծահաս ալիքը, այս ցանկությունը՝ մեռնե՛լ, մեռնե՛լ, մեռնե՛լ, նույնպես իմը չէ: Նրանն է, ամենը նրանն է: Նստած զգում էի, թե ինչ է կատարվում նրա հետ, ու գլուխս պայթում էր ցավից, ստամոքսս գալարվում էր. թվում էր՝ արդեն մի քանի ժամ է: Վերջապես 50 րոպեն լրացավ: Նայեցի ժամացույցիս:

– Այժմ այսքանով սահմանափակվենք,– ասացի:

Ալիսիան կախեց գլուխն ու հայացքը ծնկներին հառեց: Սկզբում վարանեցի: Հետո չկարողացա զսպել ինձ: Ձայնս իջեցրի ու անկեղծորեն խոսեցի նրա հետ:

– Ուզում եմ օգնել Ձեզ, Ալիսիա՛: Խնդրում եմ, վստահեք ինձ: Իրականում ուզում եմ Ձեր աչքերը բացել:

Ալիսիան բարձրացրեց հայացքը: Նայեց ինձ. կարծես իմ միջով հեռու էր նայում:

«Դու ինձ չես կարող օգնել,- ճչում էին նրա աչքերը: - Քեզ նայիր. հազիվ ես քեզ տիրապետում: Զևացնում ես, թե շատ բան գիտես, իմաստուն ես, բայց իրականում իմ փոխարեն քեզ է պետք բուժել: Ստոր: Խաբեբա՛: Ստախո՛ս: Ստախո՛ս...»:

Երբ Ալիսիան նայեց ինձ, հասկացա, թե սեանսի ամբողջ ընթացքում ինչն ինձ հանգիստ չէր տալիս: Դժվար է բառերով ձևակերպել, բայց հոգեթերապևտները շատ արագ են սովորում հոգեկան խանգարման նշանները ճանաչել՝ ֆիզիկական վարքի առանձնահատկություններից մինչև խոսք ու աչքերի փայլ. նկատում ենք տագնապած հայացքը, վախը, խելագարությունը: Հենց դա էր անհանգստացնում ինձ՝ չնայած տարիներով բուժվելուն, չնայած այն ամենին, ինչ արել ու վերապրել էր, Ալիսիայի կապույտ աչքերը մաքուր ու պարզ էին ամառային ջինջ երկնքի պես: Ալիսիան խելագար չէր: Ուրեմն ի՞նչ էր պատահել նրան: Ի՞նչ էր նշանակում նրա աչքերի արտահայտությունը: Ո՞րն էր ճիշտ բնութագրումը: Իսկ գուցե...

Մինչ կկարողանայի միտքս ավարտին հասցնել, Ալիսիան աթոռից վեր թռավ: Ձեռքերը ճանկերի պես պարզած՝ իմ կողմ նետվեց: Չհասցրի խույս տալ: Ծանր փլվեց ինձ վրա: Կորցրեցի հավասարակշռությունս: Հատակին ընկանք:

Ծոծրակս շխկոցով խփեցի գետնին: Ալիսիան գլուխս խփեց պատին, էլի ու էլի, հետո սկսեց ճանկռել դեմքս, ապտակել, քերծել: Ստիպված էի լարել բոլոր ուժերս, որ նրան վրայիցս գցեմ:

Սողացի հատակի վրայով ու սեղանին հասա: Շոշափելով գտա ազդանշանային սարքը: Մատներով հազիվ էի բռնել այն, երբ Ալիսիան ցատկեց վրաս ու ձեռքիցս խփեց-գցեց սարքը:

- Ալիսիա՛...

Մատներով ամուր սեղմել էր կոկորդս, խեղդում էր: Նորից շոշափելով գտա ազդանշանային սարքը, բայց կոճակին հասնել չկարողացա: Նրա ձեռքերն ամբողջ ուժով խրվեցին վզիս մեջ. շնչելն անհնար էր: Մի անգամ էլ ձգվեցի դեպի սարքն ու այս անգամ ինձ հաջողվեց ճանկել այն. սեղմեցի կոճակը: թվագրերը 5 1315.ուոժo կայմը

Խլացուցիչ ազդանշանն անմիջապես լցվեց ականջներս, խլացրեց ինձ: Ասես հեռվից լսեցի, թե դուռն ինչպես բացվեց, ու Յուրին գոռաց օգնություն կանչելով: Ալիսիային հետ քաշեցին, բացեցին ձեռքերը, ու ես ագահորեն սկսեցի օդ կուլ տալ:

Ալիսիային զսպելու համար չորս բուժքույր պետք եղավ: Նա գալարվում էր, քացի տալիս, կռվում մոլագարի պես: Ալիսիան մարդու նման չէր, ավելի շուտ՝ վայրի գազանի, հրեշի: Քրիստիանն աշխատասենյակ եկավ ու ներարկում արեց: Ալիսիան գիտակցությունը կորցրեց:

Վերջապես լռություն տիրեց...

5

- Հիմա մի քիչ կմրմռա:

Յուրին ակվարիումում արնահոսող քերծվածքներս էր մշակում: Բացեց հականեխիչի սրվակն ու անձեռոցիկը հեղուկի մեջ թաթախեց: Դեղի սուր հոտն ինձ դպրոցական բուժկետ վերադարձրեց, խաղահրապարակի ճակատամարտերից հետո սպիների, պլոկված ծնկների ու քերծված արմունկների հիշողություններն արթնացրեց: Հիշեցի ջերմության ու հարմարավետության զգացումը, երբ բուժքույրը վիրակապում էր վերքերս ու խիզախության համար սառնաշաքարով պարգևատրում: Մաշկիս քսվող հականեխիչի այրող ցավն ինձ իրականություն վերադարձրեց, որտեղ ներկայիս վերքերն այդքան հեշտ չէին բուժվելու: Ցավից կծկվեցի:

- Այնպիսի զգացողություն ունեմ, ասես մուրճով գլխիս են հասցրել:

- Մեծ արնազեղում կա: Վաղը կայտուցվի: Պետք է հետևել,- Յուրին տարուբերեց գլուխը: - Չպիտի Ձեզ նրա հետ մենակ թողնեի:

- Ես խնդրեցի դուրս գալ:

- Դե, ճիշտ է,- քրթմնջաց նա:

- Հատուկ շնորհակալություն, որ չեք ասում. «Ախր զգուշացնում էի»: Բարձր եմ գնահատում դա:

Յուրին թոթվեց ուսերը:

- Դրա կարիքը չկա: Իմ փոխարեն պրոֆեսորը կասի: Ի դեպ, խնդրում էր, որ իր աշխատասենյակ մտնեք:

- Պա՛րզ է:

- Դատելով նրա հայացքից՝ չէի ուզի Ձեր փոխարեն լինել:

Սկսեցի տեղից վեր կենալ:

- Մի՛ շտապեք: Մի րոպե սպասե՛ք,- ասաց Յուրին՝ ուշադիր ինձ նայելով: - Համոզվա՞ծ եք, որ պատրաստ եք: Եթե գլխապտույտ կամ գլխացավ զգաք, անմիջապես ասեք:

- Լավ եմ, ազնիվ խոսք:

Իհարկե, մի քիչ խաբում էի, բայց, անկեղծ ասած, տեսքս ինքնազգացողությունից վատ էր: Խոր քերծվածքներ, արնազեղումներ կոկորդիս այն հատվածում, որտեղ փորձել էր խեղդել ինձ. մատներն այնքան խորն էր սեղմել, որ եղունգներից մնացած տեղերն արյունոտ էին:

Պրոֆեսորի աշխատասենյակի դուռը թակեցի: Ինձ տեսնելով քիչ էր մնում՝ Դիոմիդիսի աչքերը խոռոչներից դուրս թռչեին:

- Ա՛խ, ա՛խ , ա՛խ,- մրմնջաց նա: - Պետք է կարեր դնել:

- Ո՛չ, ո՛չ, իհարկե, ո՛չ: Ամեն ինչ կարգին է:

Պրոֆեսորը կասկածանքով ինձ նայեց ու ներս հրավիրեց:

- Մտեք, Թեո: Նստեք:

Մյուսներն արդեն այնտեղ էին: Քրիստիանն ու Ստեֆանին ոտքի վրա էին: Պատուհանի մոտ Ինդիրան էր նստած: Այդ ամենը պաշտոնական ընդունելության նման էր և կարելի էր կարծել, թե ինձ ուզում են աշխատանքից հեռացնել:

Դիոմիդիսը նստեց իր սեղանի առաջ: Ժեստով ցույց տվեց միակ ազատ աթոռը: Նստեցի: Պրոֆեսորը որոշ ժամանակ լուռ ինձ էր նայում՝ մատներով թմբկահարելով, մտմտալով, թե ինչ ասի կամ ինչպես ասի: Բայց մինչ կհասցներ ի մի բերել մտքերը, Ստեֆանին կանխեց նրան:

- Տխուր միջադեպ է,- ասաց: նա: - Շատ տխուր,- հետո նայեց իմ կողմ: - Իհարկե, բոլորս թեթևացած շունչ քաշեցինք՝ տեսնելով, որ Դուք ողջ եք: Բայց և այնպես տեղի ունեցածը մի շարք հարցեր է առաջացնում: Առաջին՝ ինչպե՞ս պատահեց, որ Ալիսիայի հետ մենակ մնացիք:

- Դա իմ սխալն էր,- ասացի: - Յուրիին խնդրեցի դուրս գալ: Տեղի ունեցածի ամբողջ պատասխանատվությունն ինձ վրա եմ վերցնում:

- Ո՞ւմ լիազորությամբ այդպիսի որոշում կայացրեցիք: Եթե ձեզնից որևէ մեկը լրջորեն վնասվեր...

Դիոմիդիսն ընդհատեց նրան.

- Խնդրում եմ, ավելորդ մի՛ բարդացրեք: Բարեբախտաբար ոչ ոք չի տուժել,- նա ձեռքը թափ տվեց իմ կողմը: - Մի քանի քերծվածքը դատական քննության առիթ չէ:

Ստեֆանին ծամածռեց դեմքը:

- Չեմ կարծում, թե կատակներն ընդունելի են, պրոֆեսո՛ր,- ասաց: - Ազնիվ խոսք:

- Իսկ ո՞վ է կատակում,- ասաց Դիոմիդիսը՝ իմ կողմ շրջվելով: - Ես լրիվ լուրջ եմ ասում: Թեո, պատմեք մեզ: Ի՞նչ է տեղի ունեցել:

Սենյակում բոլորը վրաս սևեռվեցին: Որոշեցի պրոֆեսորին դիմել: Բառերը խնամքով ընտրելով՝ ասացի.

- Դե, Ալիսիան հարձակվեց վրաս,- ասացի: - Ահա և վերջ:

- Դա պարզ է: Բայց ինչո՞ւ: Ենթադրում եմ, որ չէիք դրդել, չէ՞:

- Ոչ: Համենայնդեպս, ոչ գիտակցաբար:

- Իսկ ենթագիտակցորե՞ն:

- Անկասկած, Ալիսիան ինչ-որ չափով արձագանքում էր ինձ: Համոզված եմ՝ այսօրվա միջադեպը ցույց է տալիս, թե շփման կարիք որքան ունի:

- Քո կարծիքով՝ դա շփման փո՞րձ էր,- Քրիստիանը ծիծաղեց:

- Այո, համոզված եմ,- ասացի: - Մոլեգնությունը հաղորդակցության հզոր միջոց է: Մյուս հիվանդները զոմբիներ են՝ նստած են անտարբեր, դատարկված. նրանք վաղուց են հանձնվել: Ալիսիան՝ ոչ: Այսօրվա հարձակումն ակնհայտորեն պատմում է մեզ այն, ինչի մասին նա չի կարող բարձրաձայնել՝ ցավ, հուսահատություն, հոգեկան տառապանք: Ալիսիան ասում էր ինձ, որ չհրաժարվեմ իրենից: Իրեն ժամանակ տամ:

Քրիստիանն աչքերը ոլորեց:

- Իսկ եթե առանց պոետիկ մեկնաբանության, ապա հիվանդի դեղաչափը նվազեցրել են, ու նա նորից խելքը թռցրել է,- Քրիստիանը դարձավ Դիոմիդիսին: - Ձեզ ասում էի, չէ՞, պրոֆեսո՛ր: Զգուշացնում էի դեղաչափն իջեցնելու վտանգի մասին:

- Իսկապե՞ս, Քրիստիա՛ն,- ասացի: - Ինձ թվաց՝ դա քո գաղափարն էր:

Քրիստիանը կատաղի հայացք գցեց վրաս: Ես կարծում էի, թե նա իսկական հոգեբույժ էր՝ ոտքից գլուխ: Նկատի ունեմ՝ հոգեբույժները հակված են խուսափել հոգեդինամիկ մտածողությունից: Նրանք ավելի կողմ են կենսաբանական,

քիմիական և, ամենակարևորը, գործնական մոտեցմանը, ինչպես, օրինակ, հաբերով լի բաժակին, որ ամեն օր ճաշելիս Ալիսիային էին տալիս: Քրիստիանի թշնամական, սառցե հայացքն անընկբա ասում էր, որ ինձ չի հաջողվի այս գործում ներդրում ունենալ:

Դիոմիդիսը, սակայն, մտածկոտ հայացքով ինձ նայեց:

- Ալիսիայի հարձակումը Ձեզ չի կոտրել, Թեո,- հարցրեց նա:

- Հակառակը,- գլուխս օրորեցի,- ես լի եմ վճռականությամբ:

- Շատ լավ,- գոհունակ գլխով արեց Դիոմիդիսը: - Լավ է: Համաձայն եմ, արժի մանրամասն հետազոտել նրա՝ այդ ընդգծված արձագանքը Ձեր հանդեպ: Կարծում եմ՝ պետք է շարունակեք:

Ստեֆանին այլևս չկարողացավ իրեն զսպել:

- Ոչ մի դեպքում,- ասաց:

Դիոմիդիսը շարունակեց խոսքը՝ ասես նա ոչինչ չէր ասել:

- Կարծում եք՝ կկարողանամք Ալիսիային խոսեցնել,- հայացքն ինձնից չկտրելով՝ հարցրեց նա:

Ուզում էի պատասխանել, բայց թիկունքիցս անսպասելի ձայն լսվեց:

- Հավատացած եմ, որ կկարողանա, այո:

Ինդիրան էր: Համարյա մոռացել էի, որ նա էլ է սենյակում: Շրջվեցի:

- Իրականում,- ասաց Ինդիրան,- Ալիսիան սկսել է խոսել: Թեոյի միջոցով ուղերձ է փոխանցել՝ նրան իր պաշտպանը դարձնելով: Ամեն ինչ արդեն ընթացքի մեջ է:

Դիոմիդիսը գլխով արեց: Նա որոշ ժամանակ մտքերի մեջ էր: Կռահում էի, թե ինչ է մտածում. Ալիսիա Բերենսոնը

հայտնի հիվանդ էր, ու նրա հաջող բուժումը կարող էր հզոր հաղթաթուղթ դառնալ կառավարող ընկերության հետ բանակցություններում: Եթե մեզ հաջողվեր Ալիսիայի վիճակի ակնհայտ առաջընթաց գրանցել, Գրոուվը փրկելու հրաշալի հնարավորություն կունենայինք:

- Ինչքա՞ն ժամանակ պետք կլինի արդյունքը տեսնելու համար,- հարցրեց Դիոմիդիսը:

- Դժվարանում եմ ասել,- պատասխանեցի: - Դուք էլ լավ գիտեք: Ընթացքն անհատական է: Վեց ամիս: Տարի: Գուցե ավելի, օրինակ՝ մի քանի տարի:

- Վեց շաբաթ ունեք:

Ստեֆանին վեր կացավ ու ձեռքերը կրծքին խաչեց:

- Ես եմ այս բաժանմունքի ղեկավարը և ուղղակի չեմ կարող թույլ տալ...

- Ես էլ Գրոուվի կլինիկական հետազոտությունների ղեկավարն եմ,- ընդհատեց Դիոմիդիսը: - Սա իմ որոշումն է, ոչ թե Ձերը: Բոլոր հնարավոր վնասվածքների համար, որ կարող է ստանալ մեր համբերատար հոգեբույժը, պատասխանատվությունն ինձ վրա եմ վերցնում,- այս բառերն ասելիս՝ Դիոմիդիսն ինձ աչքով արեց:

Ստեֆանին այլևս ոչինչ չասաց: Հայացքով շանթահարեց պրոֆեսորին, հետո ինձ: Շրջվեց ու դուրս եկավ:

- Ա՜խ, սիրելի՛ս,- ասաց Դիոմիդիսը: - Ամենայն հավանականությամբ, Դուք՝ հանձին Ստեֆանիի, թշնամի վաստակեցիք: Անհարմար բան ստացվեց,- նա ժպտաց Ինդիրային, հետո լրջանալով դարձավ ինձ: - Վեց շաբաթ: Իմ անձնական հսկողության տակ: Պա՞րզ է:

Համաձայնեցի, իհարկե: Այլընտրանք չունեի:

- Վեց շաբաթ,- ասացի:

- Հրաշալի է:

Քրիստիանն ակնհայտորեն դժգոհ վեր կացավ:

- Ալիսիան ո՛չ վեց շաբաթից կխոսի, ո՛չ վաթսուն տարուց,- ասաց: - Իզուր ժամանակ եք կորցնում:

Նա դուրս եկավ աշխատասենյակից: Հետաքրքիր է՝ Քրիստիանն ինչու է համոզված, որ չեմ հաջողելու:

Ու դա ինձ ավելի վճռական տրամադրեց հաղթանակի:

6

Ուժասպառ տուն հասա: Նախասենյակում, սովորության համաձայն, սեղմեցի լույսի կոճակը, բայց լամպը վառվել էր. վաղուց էինք ուզում փոխել, բայց մոռանում էինք:

Անմիջապես հասկացա, որ Քեթին տանը չէ: Լռություն էր, իսկ լռությունը նրա հետ անհամատեղելի էր: Չեմ ասի, թե աղմկոտ էր, բայց նրա աշխարհը լի էր ձայներով. հեռախոսով էր խոսում, բարձրաձայն սովորում էր դերերը, հեռուստացույց էր նայում, երգում, բզզում, ինձ անծանոթ ինչ-որ խմբերի լսում: Բայց հիմա բնակարանում մեռյալ լռություն էր: Ձայն տվեցի Քեթիին: Նորից սովորության համաձայն, մեղքի զգացումով կամ գուցե մեղանչելուց առաջ ցանկանալով համոզվել, որ մենակ եմ:

- Քեթի՛:

Ոչ ոք չպատասխանեց:

Մթան մեջ շոշափելով հյուրասենյակ հասա: Լույսը վառեցի:

Սենյակը նորից ապշեցրեց ինձ, ինչպես միշտ լինում է, մինչև վարժվում ես նոր կահույքին. նոր աթոռներ, նոր բարձեր, նոր գույներ՝ կարմիր ու դեղին, երբեմնի սև ու սպիտակի փոխարեն: Սեղանին ծաղկաման էր վարդագույն

շուշաններով: Քեթիի սիրած ծաղիկներն էին. շուշանների ուժգին մշկահոտը թանձրացնում էր օդը, ու շնչելը դժվարանում էր:

Ժամը քանիսն էր: Ութն անց կես: Որտեղ է նա: Փորձի: «Շեքսպիրի թագավորական ընկերությունում» «Օթելլոյի» նոր բեմադրությանն էր մասնակցում, բայց գործերն այնքան էլ լավ չէին: Անվերջանալի փորձերը հյուծում էին դերասաններին: Քեթին նկատելիորեն հոգնած էր, գունատ, սովորականից նիհար, անընդհատ մրսում էր: «Գրողը տանի, ինձ թվում է՝ անընդհատ հիվանդ եմ,- ասում էր: - Ուժերս սպառվել են»:

Նա ճիշտ էր. փորձերն ավելի ու ավելի ուշ էին վերջանում: Երբ վերադառնում էր, տեսքը սարսափելի էր. հորանջում էր ու միանգամից ընկնում մահճակալին: Երևի մի քանի ժամից կվերադառնա, ոչ շուտ: Որոշեցի ռիսկի դիմել:

Թաքստոցից հանեցի «խոտի» փոքրիկ սափորն ու սկսեցի գլանակ փաթաթել[1]:

Մարիխուանա դեռ համալսարանից էի ծխում: Առաջին կուրսում մենակ կանգնած էի նորեկների երեկույթում, ընկերներ չունեի ու ամաչկոտությանս պատճառով կաթվածահար չէի համարձակվում ինձ շրջապատող հաճելի ու ինքնավստահ երիտասարդներից որևէ մեկի հետ խոսքի բռնվել: Եվ արդեն պատրաստվում էի փախուստի դիմել, երբ կողքիս կանգնած աղջիկն ինչ-որ բան առաջարկեց: Սկզբում մտածեցի՝ սովորական սիգարետ է, բայց հետո քթիս խփեց սուր, բարկ, ալիքվող ծխի հոտը: Համեստությունս թույլ չտվեց հրա-

[1] **new**mag-ը հնարավոր է համարում տեքստում կերպարների՝ թմրամիջոցների օգտագործման մասին հիշատակումները պահպանելը, քանի որ վեպի համատեքստում այդ հանգամանքը չունի դրական բնութագրում:

ժարվել, վերցրի գլանակն ու մոտեցրի շրթունքներիս: Վատ էին փաթաթել, ու ծայրը համարյա բացվել էր: Գլանակի մյուս ծայրը թաց էր, վրան կարմիր շրթներկի հետք կար: Համը սովորական սիգարետից տարբերվում էր՝ ավելի հարուստ էր, անմշակ, ավելի էկզոտիկ: Ներս քաշեցի թանձր ծուխն ու փորձեցի չհազալ: Սկզբում միայն ոտքերումս փոքր-ինչ թեթևություն էի զգում: Մարիխուանայի դեպքում էլ, ինչպես սեքսի, զգացողությունը խիստ չափազանցված է: Հետո, երևի մի որպե անց, ինչ-որ բան կատարվեց: Անհավանական մի բան: Երջանկության հսկայական ալիքը ոտքից գլուխ պատեց ինձ: Ապահովության, հանդարտության, լիակատար թեթևության, հիմարության զգացողություն ունեցա, ամաչկոտությունս անհետացավ:

Այդպես էլ սկսվեց: Շուտով սկսեցի ամեն օր խոտ ծխել: Այն դարձավ իմ լավագույն ընկերը, ոգեշնչման աղբյուրը, իմ սփոփանքը: Փաթաթել, կպցնել, լպստել, վառել. մի անվերջանալի արարողություն: Փաթաթվող թղթի շրշյունից ու հաճույքի ջերմ, արբեցնող ալիքի կանխավայելումից արդեն սկսում էի հարբել:

Կախվածության ծագման մասին ամենատարբեր տեսություններ կան: Այն կարող է ժառանգական, քիմիական, հոգեբանական լինել: Բայց մարիխուանան ինձ ոչ միայն խաղաղություն էր բերում, այլև արմատապես փոխում էր զգացմունքային ապրումներիս կերպը: Այն օրորում էր ու ապահով պահում իր գրկում. ինձ զգում էի սիրված երեխա:

Այլ խոսքով, այն զսպում էր ինձ:

Հոգեվերլուծաբան Ու. Ռ. Բիոնն առաջ է քաշել «կոնտեյնա-

վորում»[1] եզրույթը՝ նկարագրելով փոքրիկի ցավը մեղմելու մոր ունակությունը: Հիշեք, մանկությունը բոլորովին էլ երանության շրջան չէ, վախի շրջան է: Նորածինները փակված են մնում տարօրինակ, օտար աշխարհում, կարգին չեն տեսնում: Մեր մարմինները մշտապես զարմացնում են նրանց, քաղցը, քամին ու աղիների շարժումներն ահավոր վախեցնում են, մեր զգացմունքները հեղեղի պես թափվում են նրանց վրա: Մենք տառացիորեն հարձակման ենք ենթարկվում: Մենք մոր կարիք ենք զգում, որը կհանգստացնի, կօգնի հասկանալ, թե ինչ է կատարվում: Մորից օգնություն ստանալով՝ աստիճանաբար սովորում ենք ինքնուրույն կառավարել հուզական ու ֆիզիկական վիճակները: Սակայն հույզերն ինքնուրույն զսպելու ունակությունն ուղղակիորեն կախված է նրանից, թե մայրիկը կարողացել է կատարել այդ նույն գործառույթը. եթե նրա մայրն իր համար չի կատարել այդ գործառույթը, ապա ինչպե՞ս կարող է մեզ սովորեցնել այն, ինչ ինքն էլ չգիտի: Նրանք, որոնց չեն սովորեցրել զսպել ու վերապրել հույզերը, մինչև կյանքի վերջը դատապարտված են տանջվել ծանր զգացմունքներից: Բիոնն այդ զգացմունքներն «անանուն սարսափ» է անվանել: Այդպիսի մարդիկ արտաքին աղբյուրներից հուզական աջակցություն են փնտրում. նրանք սիրում

[1] «Կոնտեյնավորում» եզրույթը ներմուծել է բրիտանացի հոգեվերլուծաբան Ուիլֆրեդ Ռուպրեխտ Բիոնը (1897-1979), որն առաջարկում էր «կոնտեյներ-կոնտեյնավորելիք» մոդելը: Մոդելի հիմքում այն պատկերացումն է, որ մանուկն իր չվերահսկվող զգացմունքները (այն, ինչ պետք է կոնտեյնավորել) ուղղում է մորը (կոնտեյներին), որպեսզի պրոյեկտիվ ինքնության մեխանիզմի շնորհիվ հետ ստանա դրանք իր համար ավելի ընդունելի և տանելի տեսքով: Մանուկը ճչում է, մայրը հանգստացնում է արտասվող երեխային: Այդպիսի սխեման կիրառելի է նաև հոգեվերլուծաբան-պացիենտ փոխհարաբերությունների նկարագրության դեպքում:

են խմել կամ գլանակ քաշել՝ լարվածությունը թուլացնելու, այդ անվերջ տագնապը ցրելու համար. ահա մարիխուանայից իմ կախվածության պատճառը:

Բուժման ընթացքում հաճախ էի Ռութի հետ մարիխուանայի մասին խոսում: Չէի ուզում ծխելը թողնել ու չէի հասկանում՝ խոտից բաժանվելու միտքն ինչու է այդքան վախեցնում ինձ: Ռութն ասում էր, որ պարտադրանքով և ուժով երբեք լավ բանի չես հասնի ու, փոխանակ քեզ ստիպես ծխելուց հրաժարվել, ավելի լավ է՝ սկսես այլ բանից, օրինակ՝ ընդունես, որ կախվածություն ունես դրանից ու գիտակցես, որ չես ուզում կամ չես կարող թողնել: Ռութի կարծիքով, քանի դեռ մարիխուանան ինձ օգնում է, չեմ կարողանա դրանից հրաժարվել, իսկ հետո, մի օր, երբ օգտակարությունը վերանա, հեշտությամբ կազատվեմ դրանից:

Ռութն իրավացի էր: Քեթիին հանդիպելուց ու սիրահարվելուց հետո մարիխուանայի կարիքը վերացավ: Վայելում էի իսկական սերն ու կարիք չունեի լավ տրամադրության արհեստական խթանիչների: Բախտս բերել էր, որ Քեթին չէր ծխում: Նրա կարծիքով՝ մարիխուանայի սիրահարները թուլակամ անբաններ են, որոնք դանդաղ շարժման մեջ են ապրում. բշտում ես, իսկ նա միայն վեց օրից է «ա՛խ» ասում: Այն օրվանից, երբ Քեթին իմ բնակարան տեղափոխվեց, դադարեցի խոտ ծխել: Եվ, ինչպես Ռութը կանխատեսել էր, հենց որ ինձ ապահով ու երջանիկ զգացի, սովորությունը բնական ճանապարհով հեռացավ ինձնից, ինչպես չորացած ցեխն է կոշիկից պոկվում:

Երևի այդպես էլ երբեք նորից չծխեի, եթե Քեթիի հետ չգնայի նրա ընկերուհի Նիկոլի հրաժեշտի երեկոյին: Նիկոլը Նյու

Յորք էր մեկնում: Դերասան ընկերներն անմիջապես Քեթիին խլեցին, ու ես մենակ մնացի: Այդ ժամանակ ոչ բարձրահասակ, կոճղանման մի տղամարդ՝ նեոնային-վարդագույն ակնոցով, մոտեցավ ու ասաց.

- Կուզե՞ս:

Գլանակ էր առաջարկում: Արդեն ուզում էի մերժել, բայց ինչ-որ բան խանգարեց: Նույնիսկ չգիտեմ, թե ինչ: Վայրկենական քմահաճո՞ւյք: Թե՞ Քեթիից ենթագիտակցական վրեժ՝ ինձ այս ահավոր երեկույթին քարշ տալու, իսկ հետո մենակ թողնելու համար: Նայեցի շուրջս: Քեթին ասես գետնի տակ էր անցել: «Գրողի ծոցը»,- մտածեցի, գլանակը տարա շրթունքներիս ու ներս քաշեցի:

Ահա այդպես էլ վերադարձա այնտեղ, որտեղից սկսել էի, ասես դադար չէր էլ եղել: Այդ ամբողջ ընթացքում կախվածությունը հավատարիմ շան պես համբերատար սպասել էր ինձ: Դրա մասին Քեթիին չպատմեցի ու հիշողությունիցս դեն նետեցի: Իրականում հարմար պահի էի սպասում ու ահա, վեց շաբաթ անց, պահը եկավ: Քեթին մի շաբաթով թռավ Նյու Յորք Նիկոլի մոտ: Առանց նրա ազդեցության՝ տխուր ու ձանձրացած, տրվեցի գայթակղությանը: Նախկին թմրավաճառը չկար, ուստի վարվեցի այնպես, ինչպես ուսանողական տարիներին. ուղղվեցի դեպի Քեմդենի շուկա:

Հենց դուրս եկա կայարանից, օդում մարիխուանայի հոտը զգացի՝ խառնված խնկի ու սննդի վաճառաշարքերից փչող տապակած սոխի հոտին: Քայլեցի դեպի Քեմդենի ջրարգելակի կամուրջը: Մնացի կանգնած՝ չիմանալով՝ ինչ անեմ. կամրջով հետուառաջ անող զբոսաշրջիկների ու դեռահասների հոսանքը հրում ու բոթում էր ինձ:

Ուշադիր նայում էի ամբոխին: Հին թմրավաճառներից ոչ մեկը չկար. ժամանակին շարվում էին մայթի երկայնքով ու անցորդներին կանչում: Ամբոխը հսկող պարեկային երկու ոստիկանի նկատեցի, որոնք առանձնանում էին վառ դեղին բաճկոններով: Նրանք կամրջից դեպի կայարան էին քայլում: Հանկարծ կողքից ցածր ձայն լսեցի:

- Խոտ կուզե՞ս, ախպե՞ր:

Նայեցի ներքև. խիստ կարճահասակ մի մարդ էր: Սկզբում երեխայի տեղ դրեցի. շատ փխրուն ու լղարիկ էր: Բայց դեմքն ասես խորդուբորդ տեղանքի ճանապարհային քարտեզ լիներ՝ լայնքով ու երկայնքով կնճիռներով ակոսված, կարծես վաղաժամ ծերացած երեխա լիներ: Դիմացի երկու ատամները չկային, ինչը խոսքին թեթև սվսվոց էր հաղորդում:

- Խո՞ւտ,- կրկնեց:

Գլխով արեցի:

Նա գլխի շարժումով հրավիրեց հետևել իրեն: Խցկվեց ամբոխի մեջ, հասավ անկյունադարձին ու հետնափողոց դուրս եկավ: Հետո մի հին պանդոկ մտավ, ես էլ՝ հետևից: Սրահը դատարկ էր, կեղտոտ ու մաշված, փսխուքի ու ծխախոտի ծխի ծանրացած հոտով:

- Գարեջուր պատվիրիր,- ասաց՝ բարի կողմը ցույց տալով: Այնքան ցածրահասակ էր, որ բարը հազիվ էր տեսնում: Դժկամությամբ նրա համար կես պինտ գարեջուր գնեցի: Տարավ ու անկյունում, սեղանին, դրեց: Նստեցի նրա դիմաց: Տղամարդը գաղտագողի նայեց շուրջը, հետո սեղանի տակից իմ կողմը սահեցրեց ցելոֆանով փաթաթած մի ոչ մեծ փաթեթ: Նրան մի քիչ փող տվեցի:

Հասա տուն, բացեցի փաթեթը՝ սպասելով, որ ինձ խաբել

են, բայց խոտի ծանոթ, սուր հոտը քթիս խփեց: Փաթեթի մեջ մանր, կանաչ, ոսկեգույն երակներով կոկոններ էին: Սիրտս ուժգին խփում էր, ասես վաղուց կորցրած ընկերոջս էի հանդիպել. ճիշտն ասած, այդպես էլ կար:

Այդ օրվանից էլ գնաց. հենց որ մի քանի ժամով տանը մենակ էի մնում ու հաստատ գիտեի, որ Քեթին շուտ չի վերադառնա, գլանակն անմիջապես ձեռքս էի առնում:

Այդ երեկո էլ, երբ հոգնած ու խորտակված տուն եկա ու իմացա, որ Քեթին փորձի է, արագ մի գլանակ փաթաթեցի: Բացեցի լոգարանի պատուհանն ու ծուխը դուրս փչեցի: Բայց շատ ուժեղ էի ներս քաշում ու շուտ-շուտ. ազդեցությունն ուժեղ էր, ասես բռունցքով ճակատիս խփած լինեին: Այնպես էի ուռել, ոտքերս մի կերպ էի շարժում, ասես թանձր մրգահյութի միջով էի քայլում: Հետո ախտահանման սովորական ծիսակատարությունը կատարեցի՝ թարմացուցիչ ցողեցի, ատամներս մաքրեցի, ցնցուղ ընդունեցի և, դժվարությամբ հյուրասենյակ հասնելով, ուժասպառ ընկա բազմոցին:

Նայեցի շուրջս՝ հեռուստացույցի վահանակը փնտրելով, բայց չգտա: Հետո տեսա, որ սուրճի սեղանիկին է: Քեթիի բաց համակարգչի հետևից երևաց: Զգվեցի, որ վերցնեմ, բայց ուղեղս այնքան էր մշուշվել, որ ընթացքում համակարգիչը հատակին գցեցի: Բարձրացրի, զգուշորեն բացեցի, ու էկրանը կենդանություն առավ: Քեթին էլեկտրոնային փոստն էր ստուգել: Չգիտես ինչու, աչքս էջից կտրել չէի կարողանում: Քարացել էի. նրա փոստը կանչում էր, իր կողմ էր ձգում հայացքս: Ոչ մի կերպ շրջվել չէի կարողանում: Սկզբում բառերը ցատկոտում էին, հետո վերջապես հասկացա, թե ինչ եմ կարդում. նամակների վերնագրերում ուշադրությունս գրավեցին

«սեքսուալ» ու «սեքս» բառերը և ԼԱՎՏՂԱ22-ից նորանոր նամակները:

Երանի այդտեղ էլ կանգ առնեի: Երանի վեր կենայի ու հեռանայի, բայց չարեցի:

Մկնիկն ամենաթարմ նամակին սեղմեցի ու բացեցի:

Թեմա: Re. փոքրիկ միսս լիրբ
Ումից. Քաթերամա_1
Ում. ԼԱՎՏՂԱ22

Ավտոբուսի մեջ եմ: Ահավոր ուզում եմ քեզ: Արդեն պատկերացնում եմ՝ ոնց ես ինձ քսվում: Ես քո բոզն եմ: Պաչ:
Ուղարկված է iPhone-ից:

Թեմա. փոքրիկ միսս լիրբ
Ումից. ԼԱՎՏՂԱ22
Ում. Քաթերամա_1

Իմ բոզն ես, բա ինչ: Լավ, մեռա: Հանդիպենք: Փորձից հետո:

Թեմա. Re: re: re: փոքրիկ միսս լիրբ
Ումից. ԼԱՎՏՂԱ22
Ում. Քաթերամա_1

Լավ: Ազատվեմ՝ կգրեմ:
Թեմա. Re: re: re: re: փոքրիկ միսս լիրբ
Ումից. Քաթերամա_1

Ում. ԼԱՎՏՂԱ22

Օքեյ: 8:30: 9: Երբ: Պաչ:

Ուղարկված է iPhone-ից:

Սեղանից վերցրի կնոջս համակարգիչը: Նստեցի, դրեցի ծնկներիս ու դեռ երկար հայացքս չէի կտրում: Չգիտեմ՝ ինչքան այդպես նստեցի: Տաքսը որպե: Քսան: Կես ժամ: Գուցե ավելի երկար: Ժամանակն այնքան դանդաղ էր անցնում:

Ձանում էի հասկանալ, թե տեսածս ինչ էր, բայց մարիխուանայի պատճառով ինքս էլ չէի հասկանում, թե ինչ եմ տեսել: Այդ ամենն իրական էր: Գուցե ինչ-որ թյուրիմացություն էր կամ պարզապես կատակ, որը չեմ հասկանում, որովհետև խոտի ազդեցության տակ եմ:

Ինձ ստիպեցի մի նամակ էլ կարդալ:

Հետո էլի մեկը:

Արդյունքում կարդացի Քեթիի ու ԼԱՎՏՂԱ22-ի ամբողջ նամակագրությունը: Նամակների մի մասը սեքսուալ բնույթ ուներ, տեղ-տեղ նույնիսկ անպարկեշտ: Որոշ նամակներ երկար էին, խոստովանության նման, հուզական. թվում էր՝ գրելիս հարբած է եղել: Գուցե նամակները ուշ գիշերով են գրել, երբ արդեն քնած եմ եղել: Պատկերացրի, որ ես մեր ննջարանում եմ՝ քնած, իսկ Քեթին նստել է այստեղ ու այդ անծանոթին ինտիմ նամակներ է ուղարկում: Անծանոթին, որի հետ քնում է:

Հանկարծ մշուշը ցրվեց, ժամանակը վերագտավ նախկին ռիթմը: Գլուխս պայծառացավ: Սարսափելի, ցավոտ սթափություն զգացի:

7

- Անցած անգամ ամեն ինչ այլ էր,- ասացի:

Պատասխան չեղավ:

Ալիսիան նստել էր բազկաթոռին՝ իմ դիմաց, գլուխը պատուհանի կողմն էր դարձրել: Անշարժ նստած էր՝ մեջքը պիրկ, ուղիղ: Կարծես թավջութակահար լիներ կամ զինվոր:

- Անընդհատ մտածում եմ, թե ինչպես ավարտվեց նախորդ սեանսը: Դուք հարձակվեցիք վրաս, և Ձեզ ստիպված եղան հանգստացնել:

Կրկին լռություն: Մի պահ հապաղեցի:

- Հետաքրքիր է՝ ինչ էիք ուզում ստուգել: Օրինակ, որ վախկոտ չեմ: Հուսամ՝ հիմա պարզ է, որ ինձ այնքան էլ հեշտ չէ վախեցնել: Ինչքան ուզում եք, հարձակվեք, միևնույն է, կդիմանամ:

Ալիսիան պատուհանի ճաղերի միջով նայում էր գորշ երկընքին: Փոքրիկ դադար տվեցի, ապա շարունակեցի.

- Ձեզ մի բան պիտի պատմեմ, Ալիսիա՛: Հասկացեք, ես Ձեր կողմից եմ: Հույս ունեմ՝ մի օր կհավատաք: Անկասկած, վստահության հասնելու համար ժամանակ է պետք: Իմ հոգեբանը սիրում էր ասել, որ սերտ կապ հաստատելու համար

պետք է մի քանի անգամ փորձել. այդ դեպքում կարելի է պատասխաններ ստանալ: Իսկ նման բաները մի վայրկյանում չեն կատարվում:

Ալիսիան անթարթ նայում էր ինձ անըմբռնելի հայացքով: Ժամանակն անցնում էր: Ավելի շատ դիմացկունության թեստ էր հիշեցնում, քան հոգեբույժի սեանս:

Որ կողմից էլ փորձում էի մոտենալ, առաջընթաց չկար ու չկար: Գուցե իսկապես անհույս է: Ըստ երևույթին, Քրիստիանը ճիշտ էր նկատել. առնետները խորտակվող նավից առաջինն են փախչում: Ես ինչո՞ւ եմ մագլցում այս ավերակի տախտակամածին, դեռ հերիք չէ, ինձ էլ կապում եմ կայմին՝ պատրաստվելով ծովի հատակն իջնել:

Բոլոր հարցերիս պատասխանը, անշուշտ, նստած էր իմ դիմաց: Պրոֆեսոր Դիոմիդիսի խոսքով՝ Ալիսիան լուռ ծովահարսի պես դյութում էր ինձ ու կործանման տանում:

Հանկարծ հուսահատվեցի: Ուզում էի գոռալ՝ գոնե մի բա՛ն ասա, ինչ կուզես: Միայն թե խոսի՛ր:

Բայց չասացի: Փոխարենը բուժման կանոնները խախտեցի: Մեղմ նախաբաններից հոգնել էի ու անմիջապես բուն նյութին անցա:

- Կցանկանայի Ձեր լռության մասին խոսել: Դա ի՞նչ է նշանակում... Ի՞նչ եք զգում: Եվ, ամենագլխավորը, ինչո՞ւ եք որոշել լռել:

Ալիսիան ինձ չէր նայում: Հետաքրքիր է, լսո՞ւմ էր:

- Նստել եմ այստեղ, Ձեզ հետ, իսկ գլխումս մի պատկեր է պտտվում. մեկը ցավոտ կծում է բռունցքը, որ չգոռա, որ զսպի դուրս պրծնող ճիչը: Հիշում եմ՝ երբ դեռ նոր էի սկսել հոգեբանին այցելել, անընդհատ փորձում էի չլացել: Վախենում

էի, որ չեմ դիմանա, արցունքների հեղեղը կքշի ինձ, կհաղթի: Հնարավոր է՝ Ձեր ներսում էլ նման բան է կատարվում: Հենց դրա համար էլ կարևոր է սպասել, մինչև ապահով զգաք և համոզվեք, որ հույզերի օվկիանոսում միայնակ չեք մնա: Կատաղի հոսքի մեջ ես Ձեզ հետ կլինեմ:

Լռություն:

– Ես ինձ ռելյատիվիզմի[1] հետևորդ եմ համարում,– ասացի: – Գիտե՞ք՝ դա ինչ է նշանակում:

Լռություն:

– Դա նշանակում է, որ Ֆրոյդն ինչ-որ հարցում սխալվում էր: Ի հեծուկս նրա համոզմունքի՝ չեմ կարծում, թե հոգեբանը կարող է մաքուր էջ լինել: Մենք ոչ միտումնավոր, ահռելի տեղեկատվություն ենք տալիս մեր մասին. օրինակ՝ իմ գուլպաների գույնից, նստելու դիրքից կամ խոսելու ձևից շատ բան կարելի է իմանալ: Այստեղ, Ձեզ հետ նստած, ես իմ մասին շատ բացահայտումներ եմ անում: Չնայած անտեսանելի մնալու իմ բոլոր փորձերին՝ Ձեզ ցույց եմ տալիս, թե իրականում ով եմ:

Ալիսիան բարձրացրեց հայացքը: Ուղիղ աչքերիս մեջ էր նայում, կզակը թեթև դողում էր. միթե այդ հայացքի մեջ մարտահրավեր կար: Վերջապես նրա ուշադրությանն արժանացա: Ավելի հարմար տեղավորվեցի:

---

[1] Ռելյատիվիզմը (լատիներեն relativus-«հարաբերական» բառից) բարոյագիտության էության մեկնաբանման մեթոդաբանական սկզբունք է, որը բարոյագիտական տեսությունների հիմքն է: Արտահայտվում է նրանում, որ բարոյական հասկացություններին ու պատկերացումներին հաղորդվում է ծայրահեղ հարաբերական, փոփոխական ու պայմանական բնույթ: Բարոյագիտական սկզբունքները, բարու և չարի գաղափարները տարբեր են զանազան ազգերում, սոցիալական խմբերում և առանձին անհատների շրջանում. դրանք որոշակիորեն կապված են մարդկանց հետաքրքրությունների, համոզմունքների և հակումների հետ և իրենց նշանակությամբ սահմանափակվում են տեղի ու ժամանակի պայմաններով:

– Հարցն այն է, թե մենք ինչպես ենք վարվում: Օրինակ՝ կարող ենք ուշադրություն չդարձնել կամ իսպառ մերժել, կամ էլ ձևացնել, թե բուժման կուրսում գլխավորը Դուք եք: Կամ կարող ենք ընդունել, որ հոգեբանությունը երկկողմանի գործընթաց է և այդ ոճով աշխատել: Այդ ժամանակ իսկապես ինչ-որ ուղղությամբ շարժելու հնարավորություն կունենանք:

Բարձրացրի ձեռքս՝ Ալիսիային հարսանեկան մատանիս ցույց տալով:

– Այս մատանին Ձեզ ինչ-որ բան է ասում, ճի՞շտ է:

Ալիսիայի հայացքը դանդաղ շարժվեց մատանու ուղղությամբ:

– Սա խոսում է այն մասին, որ ամուսնացած տղամարդ եմ: Հետևաբար կին ունեմ: Մենք ամուսնացած ենք համարյա ինը տարի:

Պատասխան չեղավ, բայց Ալիսիան առաջվա պես մատանուն էր նայում:

– Դուք յոթ տարի եք ամուսնացած եղել, ճի՞շտ է:

Ոչ մի պատասխան:

– Ես շատ եմ սիրում կնոջս: Իսկ Դուք Ձեր ամուսնուն սիրո՞ւմ էիք:

Ալիսիայի աչքերը շարժվեցին: Նիզակի պես խրվեցին դեմքիս մեջ: Մենք սևեռուն իրար էինք նայում:

– Սիրո մեջ ամենատարբեր զգացմունքներ են լինում, համաձա՞յն եք: Ե՛վ լավ, և՛ վատ: Ես սիրում եմ կնոջս, ի դեպ, անունը Ջեթի է, բայց երբեմն բարկանում եմ վրան: Իսկ երբեմն նաև... ատում եմ:

Ալիսիան աչքն ինձնից չէր կտրում, ասես ճագար լինեի լուսարձակների լույսի տակ, չէի կարողանում շարժվել կամ

փախցնել հայացքս: Ազդանշանի սարքը սեղանին էր՝ ձեռքիս տակ: Ինձ հազիվ էի զսպում, որ կոճակին չնայեմ:

Հասկանում էի, որ պետք է կանգ առնել, փակել բերանը, բայց դա իմ ուժերից վեր էր: Համառորեն շարունակեցի.

- Ատում եմ ասելով նկատի չունեմ, թե ամբողջ էությամբ եմ ատում նրան: Միայն իմ մի մասը: Հարցն էլ հենց այն է, որ պետք է միաժամանակ կառչել երկու մասից էլ: Ձեր մի մասը սիրում էր Գաբրիելին... Մյուս մասն ատում էր:

Ալիսիան բացասաբար օրորեց գլուխը: Արագ, բայց միանշանակ: Վերջապես արձագանքեց: Մարմնովս դող անցավ: Այստեղ պետք էր ընդհատել սեանսը, բայց ոչ:

- Ձեր մի մասն ատում էր Գաբրիելին,- ասացի նորից, ավելի վճռական:

Նորից օրորեց գլուխը: Աչքերը վառում էին ինձ, անցնում միջովս: Ինձ թվաց՝ սկսում է զայրանալ:

- Դա ճիշտ է, Ալիսիա՛: Հակառակ դեպքում նրան չէիք սպանի:

Ալիսիան հանկարծ վեր թռավ բազկաթոռից: Ինձ թվաց՝ հիմա կցատկի վրաս: Մարմինս լարվեց հարձակման սպասելով: Բայց հարձակվելու փոխարեն շրջվեց ու դեպի դուռը գնաց: Սկսեց բռնցքահարել:

Լսվեց պտտվող բանալու ձայնը, ու մի վայրկյանից Յուրին կտրուկ բացեց դուռը: Տեսնելով, որ Ալիսիան ինձ հատակին չի խեղդում, մի քիչ հանգստացավ: Ալիսիան նրա կողքով դուրս սողոսկեց ու միջանցք վազեց:

- Կամա՛ց, մի՛ շտապիր, սիրելի՛ս,- կանչեց Յուրին: Հետո դարձավ իմ կողմը: - Ամեն ինչ կարգի՞ն է: Ի՞նչ է պատահել:

Չպատասխանեցի: Յուրին ծամածռեց դեմքն ու դուրս եկավ: Ես մենակ մնացի:

Ապո՛ւշ, մտածեցի, անուղեղ: Այս ի՞նչ արեցի: Ինչո՞ւ ճնշեցի նրան շատ ուժեղ ու շատ վաղ: Ոչ պրոֆեսիոնալ մոտեցում էր, էլ չեմ ասում, որ բացարձակ տխմարություն էր: Այդ միջադեպն ավելի շատ բացահայտեց իմ, քան նրա հոգեվիճակը:

Ահա թե ինչ էր անում Ալիսիան: Նրա լռությունը հայելու պես ցույց էր տալիս մեր արտացոլանքը:

Եվ հաճախ այն այլանդակ էր:

8

Պետք չէ հոգեթերապևտ լինել հասկանալու համար, որ Քեթին համակարգիչը բաց էր թողել, որովհետև ուզում էր (համենայն դեպս, ենթագիտակցորեն), որ իր անհավատարմության ապացույցները գտնեմ:

Դե ինչ, արդեն գտել էի: Հիմա հաստատ գիտեի:

Երեկոյան, երբ Քեթին վերադարձավ, տեսարան չսարքեցի, քնած ձևացա, իսկ առավոտյան աշխատանքի գնացի, երբ դեռ քնած էր: Խուսափում էի Քեթիից, ավելի ճիշտ խուսափում էի ինքս ինձնից: Շոկային վիճակում էի: Հասկանում էի, որ պետք է ինձ հավաքեմ, թե չէ կորած եմ:

- Խելքդ գլուխդ հավաքիր,- փնթփնթում էի քթիս տակ՝ հերթական գլանակը փաթաթելով: Ծխեցի՝ բաց պատուհանից դուրս փչելով, իսկ հետո թեթևակի ազդեցության տակ խոհանոց գնացի մի գավաթ գինու ետևից:

Գավաթը դեռ նոր էի վերցրել, երբ ձեռքիցս դուրս պրծավ: Փորձեցի բռնել, բայց չհասցրի: Խփվեց սեղանին ու ջարդուփշուր եղավ, իսկ ինձ հաջողվեց միայն, ձեռքս կտորտանքին տանելով, ապակու սուր բեկորով կտրել մատս:

Հանկարծ շուրջն ամեն ինչ արյունոտվեց. արյունը բարակ

շիթով հոսում էր թևիս վրայով, արյունը ջարդված գավաթի վրա էր, արյունը խառնվում էր սեղանին թափված սպիտակ գինուն: Թղթե սրբիչից դժվարությամբ մի կտոր կտրեցի, փորձեցի մատս պինդ փաթաթել, որ արյունը դադարի: Ձեռքս պահեցի գլխավերևս ու նայեցի, թե ինչպես են բարակ, ալ առվակները դեպի արմունկ հոսում՝ նմանակելով մաշկիս տակ հոսող երակների բարդ զարդանախշը:

Քեթիի մասին էի մտածում:

Երբ իմ կյանքում ճգնաժամ էր լինում, ամեն անգամ, երբ կարեկցանքի կամ քաջալերման կարիք էի զգում կամ ուղղակի ուզում էի, որ ինձ համբուրեն, միշտ կնոջս աջակցությանն էի դիմում: Ուզում էի, որ խնամեր ինձ: Հիմա էլ մտածեցի նրան օգնության կանչել. միտքը դեռ չէր հասունացել, երբ պատկերացրի, որ դուռն արագ փակում են, բանալիով կողպում ու ինձ Քեթիից բաժանում: Քեթին այլևս չկար. ես կորցրել էի նրան: Ուզում էի լաց լինել, բայց չէի կարող. ցավը փակվել էր ներսումս, աղբի ու կեղտի հաստ շերտի տակ:

- Գրողը տանի,- անընդհատ քրթմնջում էի: - Գրո՛ղը...

Հանկարծ որսացի ժամացույցի թկթկոցը: Ձայնն արտասովոր բարձր թվաց: Փորձեցի կենտրոնանալ դրա վրա ու կանգնեցնել մտքերիս շրջապտույտը՝ թըկ-թըկ, թըկ-թըկ: Ձայների երգչախումբը գլխիս մեջ կամաց թափ էր հավաքում ու չէր լռում: Իսկ ինչո՞ւ էի որոշել, որ նա ինձ երբեք չի դավաճանի: Դա պիտի լիներ, անխուսափելի էր: Ես նրա համար երբեք էլ լավը չէի, անպիտան, տգեղ, ոչ մի բանի պիտանի մեկը. վաղ թե ուշ պետք է հոգներ ինձնից: Ես արժանի չէի Քեթիին, առհասարակ ոչնչի արժանի չէի... Եվ այսպես շարունակ սարսափելի մտքերը մեկը մյուսի հետևից հարվածում էին ինձ:

Ինչ վատ եմ ճանաչել կնոջս: Նամակներից հասկացա, որ անծանոթի հետ եմ ապրել: Եվ հիմա տեսա ճշմարտությունը: Քեթին չէր փրկել ինձ, ընդհանրապես նա ոչ մեկին չէր կարող փրկել: Նա հիացմունքի արժանի հերոսուհի չէր, այլ վախեցած, կործանված աղջնակ, դավաճան ու ստախոս: Մեր մասին այս ամբողջ լեգենդը, որն ինքս էի հորինել, մեր հույսերն ու երազանքները, այն, ինչ սիրում ու չէինք սիրում, ապագայի մեր ծրագրերը, կյանքը, որն այնքան պաշտպանված, այնքան կայուն էր թվում, հիմա փուլ էր եկել մի քանի վայրկյանում, ինչպես խաղաթղթե տնակը թեթև քամուց:

Հիշեցի համալսարանում տարիներ առաջ արածս ինքնասպանության անհաջող փորձը. ցրտից կարկամած, թմրած մատներով պատռում, բացում եմ պարացետամոլի փաթեթները: Հիմա ինձ նույն թմրությունն էր պատել, նույն ցանկությունը՝ կծկվել ու մեռնել: Մորս մասին մտածեցի: Գուցե զանգեմ: Հուսահատության ու կարիքի պահին օգնությանն կանչեմ: Պատկերացրի, թե նա դողացող ձայնով ինչպես է պատասխանում, իսկ մորս ձայնի դողը հորս տրամադրությունից ու մորս հարբածության աստիճանից էր կախված: Նա, իհարկե, կարեկցաբար կլսի, բայց միտքն ուրիշ տեղ կթափառի. չէ՞ որ մի աչքով ստիպված է հետևել, հսկել հորս: Ինձ ինչո՞վ պիտի օգնի: Մի խորտակվող առնետն ինչպե՞ս կարող է մյուսին փրկել:

Ես պետք է դուրս պրծնեմ: Այստեղ, շուշանների գարշահոտով լցված այս բնակարանում, խեղդվում էի: Ինձ մաքուր օդ էր պետք: Շնչել էր պետք:

Տնից դուրս եկա: Ձեռքերս խցկեցի գրպաններս, գլուխս կախեցի: Արագ ու աննպատակ դեգերում էի փողոցներով՝

դեպի ոչ մի տեղ, անհայտություն: Մտքով անընդհատ վերադառնում էի մեր հարաբերություններին, տեսարան առ տեսարան հիշում էի, ուսումնասիրում, քննում ամենափոքր մանրամասները, անընդհատ հուշում փնտրում: Հիշում էի կիսատ կռիվները, անհասկանալի բացակայությունները, հաճախակի ուշացումները: Մտքիս էին գալիս նաև ջերմության փոքրիկ դրսևորումները՝ ինձ հասցեագրված քնքուշ երկտողերը, որ Քեթին թողնում էր անսպասելի տեղերում, քնքշության և իսկական, անկեղծ սիրո պահերը: Մի՞թե դա հնարավոր է: Մի՞թե նա ամբողջ ընթացքում ձևացրել է: Երբևէ իսկապես սիրե՞լ է ինձ:

Հիշեցի հպանցիկ կասկածը, որ ինձ պատեց նրա ընկերուհիների հետ հանդիպման ժամանակ: Բոլորը դերասանուհիներ էին՝ աղմկոտ, ինքնասիրահարված, զուգված-զարդարված: Անդադար պատմություններ էին պատմում իրենց կամ ինձ անծանոթ մարդկանց մասին: Ասես տեղափոխվել էի շատ տարիներ առաջ՝ դպրոց, նորից միայնակ թափառում էի խաղահրապարակի շուրջը, հետևում, թե մյուս երեխաներն ինչպես են խաղում: Ինձ համոզեցի, որ Քեթին իր ընկերների նման չէ, բայց իրականում պարզվեց, որ ինքնախաբեություն էր: Եթե առաջին անգամ, երեկոյան, այնտեղ՝ բարում, Քեթիին հանդիպեի ընկերուհիների հետ, դա ինձ հե՞տ կպահեր: Դժվար թե: Ոչինչ չէր կարող խանգարել մեր միությանը. նրան տեսնելու պահից գիտեի, որ ճակատագիրս կանխորոշված է:

Հիմա ի՞նչ անեմ:

Բնականաբար, նրա հետ դեմ առ դեմ խոսեմ: Պատմեմ այն ամենը, ինչ տեսել եմ: Սկզբում կհերքի, բայց հետո, հասկանալով, որ անիմաստ է, կսկսի խոստովանել ճշմարտությունն

ու ծնկի կգա՝ խղճի խայթով խոցված: Կաղաչի, ներում կհայցի, չէ՞:

Իսկ եթե ո՞չ: Եթե արհամարհի՞ ինձ: Եթե ծիծաղի երեսիս, շրջվի և ընդմիշտ հեռանա՞: Այդ դեպքում ի՞նչ պիտի անեմ:

Մեր բաժանման դեպքում ամենից շատ ես կկորցնեմ, դա ակնհայտ էր: Քեթին երևի կդիմանա. նա սիրում էր ասել, որ կայծքարի պես պինդ է: Նա ոտքի կկանգնի, փոշու պես թափ կտա հոգու բեռն ու կմոռանա ինձ: Բայց ես նրան չեմ մոռանա: Մի՞թե կարող եմ: Առանց Քեթիի կվերադառնամ դատարկ, միայնակ ու խղճուկ գոյությանը, որ առաջ քարշ էի տալիս: Երբեք չեմ հանդիպի Քեթիի նմանին, այլևս երբեք չեմ զգա մյուս մարդու հետ առանձնահատուկ կապը, չեմ ապրի խորագույն զգացումները: Քեթին իմ ամբողջ կյանքի սերն էր, իմ կյանքն էր... Ես հասկացա, որ պատրաստ չեմ նրանից հրաժարվել: Դեռ պատրաստ չեմ: Թեկուզև Քեթին դավաճանել է ինձ, մեկ է, սիրում էի նրան:

Երևի խելագարվել էի...

Գլխավերևումս մի ինչ-որ միայնակ թռչուն սուր ծղրտաց վախեցնելով ինձ: Կանգ առա ու շուրջս նայեցի: Պարզվեց՝ շատ ավելի հեռուն էի հասել, քան մտածում էի: Ցնցվեցի, երբ տեսա, թե ոտքերս ուր են բերել ինձ. մի քանի փողոց այն կողմ Ռութի տունն էր:

Ծանրագույն պահին անգիտակցաբար քայլերս ինձ բերել էին հին հոգեբանիս մոտ, ինչը նախկինում բազմիցս արել էի: Այս ինչքա՞ն վշտացած էի, որ համարյա պատրաստ էի մոտենալ դռանը, զանգը տալ և օգնություն խնդրել:

Իսկ ինչո՞ւ ոչ, հանկարծ մտածեցի, այո, ինձ պրոֆեսիոնալի պես չէի պահում, ոչ պատշաճ վարք էի դրսևորում, բայց

հուսահատ էի ու օգնության կարիք ունեի: Եվ ահա շուտով կանգնած էի կանաչ դռան առաջ, տեսնում էի, թե ձեռքս ինչ-պես է երկարում դեպի զանգի կոճակն ու սեղմում այն:

Մի քանի վայրկյանից ոտնաձայն լսվեց: Նախասենյակի լույսը վառվեց, հետո Ռութը, դռան շղթան չհանելով, բացեց դուռը:

Ռութը ծիկրակեց ճեղքի արանքից: Ծերացել էր: Երևի արդեն ութսունն անց էր. իմ հիշածից ավելի նիհար էր, կռացած, մի թեթև կուզ ուներ: Բաց վարդագույն գիշերանոցի վրայից մոխրագույն կարդիգան էր հագել:

- Ո՞վ է,- հարցրեց նյարդայնացած: - Ասում եմ՝ ո՞վ կա:

- Ողջույն, Ռո՛ւթ,- լույսին մոտենալով արձագանքեցի ես:

Ճանաչեց ինձ, դեմքին զարմանք հայտնվեց:

- Թեռ, ի՞նչ ես անում այստեղ:

Հայացքը դեմքիցս սահեց վնասված մատիս՝ անփույթ, մի կերպ փաթաթած վիրակապին, որի միջով արյուն էր ծորում:

- Լա՞վ ես:

- Ոչ այնքան: Կարելի՞ է ներս գալ: Շատ եմ ուզում Ձեզ հետ խոսել:

Ռութը ոչ մի վայրկյան չտատանվեց, միայն հայացքն էր խիստ անհանգստացած:

- Իհարկե, մտի՛ր,- գլխով արեց: Հետո հանեց շղթան ու դուռը բացեց:

Ես ներս մտա:

9

– Թեյ կխմե՞ս,– հյուրասենյակ գնալիս հարցրեց Ռութը:
Սենյակը ճիշտ նույնն էր, ինչպես մտապահել էի. գորգը, ծանր վարագույրները, բուխարու գլխին թկթկացող արծաթե ժամացույցը, բազկաթոռն ու խունացած կապույտ պաստառով թախտը: Անմիջապես հանգստացա:

– Անկեղծ ասած, հիմա չէի հրաժարվի ավելի թունդ բանից,– ասացի:

Ռութն արագ, թափանցող հայացք նետեց վրաս, բայց չմեկնաբանեց: Նաև չմերժեց, ինչին թաքուն սպասում էի:

Մի բաժակ շերրի[1] լցրեց ու ինձ տվեց: Նստեցի թախտին: Սովորույթի ուժով տեղավորվեցի այնտեղ, որտեղ միշտ նստում էի հոգեբանի մոտ թերապիայի ընթացքում, հեռու, ձախ անկյունում: Ձեռքս արմնկակալին դրեցի, որի պաստառը մաշվել էր բազմաթիվ հիվանդների, այդ թվում՝ և իմ, մատների նյարդային քաշքշոցից:

Մի կում արեցի: Շերրին տաք էր, սրտխառնոց առաջացնելու չափ քաղցր, բայց մինչև վերջ խմեցի՝ զգալով, որ Ռութն ամբողջ ընթացքում ինձ է հետևում: Հայացքն անթաքույց էր,

[1] Շերրի – իսպանական թունդ գինի, պատրաստվում է սպիտակ խաղողից:

բայց չէր ճնշում, անհարմարավետություն չէր պատճառում. քսան տարիների ընթացքում Ռութը ոչ մի անգամ թույլ չէր տվել, որ անհարմար զգամ: Շերրին մինչև վերջ խմեցի, նոր խոսեցի:

- Տարօրինակ է. գինու գավաթը ձեռքիս նստած եմ այստեղ: Գիտեմ՝ Դուք սովորություն չունեք հիվանդներին ալկոհոլ առաջարկել:

- Դու այլևս իմ հիվանդը չես: Պարզապես ընկեր ես: Ու տեսքիցդ երևում է,- մեղմորեն ավելացրեց,- որ հիմա էլ ընկերոջ կարիք ունես:

- Տեսքս այդքան վա՞տ է:

- Վախենամ՝ այո: Ըստ երևույթին, պատճառը լուրջ է, այլապես առանց հրավերի չէիր գա: Համենայն դեպս, գիշերվա տասին:

- Ճիշտ եք: Ես... այլընտրանք չունեմ:

- Պատմիր, Թեո: Ի՞նչ է պատահել:

- Չգիտեմ՝ ինչպես պատմեմ Ձեզ: Չգիտեմ՝ որտեղից սկսեմ:

- Երևի սկզբից:

Գլխով արեցի: Խոր շունչ քաշեցի ու սկսեցի: Պատմեցի նրան տեղի ունեցածը, ասացի, որ նորից սկսել եմ մարիխուանա ծխել, որ թաքուն էի ծխում ու թե ինչպես դրա ազդեցության տակ կարդացի Քեթիի նամակագրությունն ու իմացա նրա սիրավեպի մասին: Արագ էի խոսում, շնչահեղձ էի լինում՝ ջանալով թոթափել սրտիս բեռը: Ասես խոստովանության էի եկել:

Ռութն առանց ընդհատելու մինչև վերջ լսեց: Դժվար էր դեմքի արտահայտությունից որևէ բան հասկանալ:

- Շատ եմ ցավում, Թեո,- վերջապես ասաց նա: - Գիտեմ,

թե քեզ համար որքան կարևոր է Քեթին: Թե որքան ես նրան սիրում:

- Այո, սիրում եմ...,- պապանձվեցի՝ չկարողանալով նրա անունը տալ: Ձայնս դողում էր: Ռութն առաջ եկավ ու անձեռոցիկների տուփն ինձ պարզեց: Առաջ շատ էի ջղայնանում, երբ սեանսների ժամանակ այդպես էր անում, մեղադրում էի, որ ինձ ստիպում է լաց լինել: Սովորաբար դա նրան հաջողվում էր: Բայց ոչ այսօր: Այսօր արցունքներս քարացել էին: Սառույցի կտորների էին վերածվել:

Ռութի սեանսներին Քեթիի հետ ծանոթանալուց շատ առաջ էի հաճախում և դրանից հետո՝ էլի երեք տարի, թերապիան շարունակում էի: Հիշում եմ Ռութի խորհուրդն ինձ, երբ ես ու Քեթին սկսեցինք հանդիպել. «Սիրելի մարդուն ընտրելը նույնն է, թե հոգեբան ընտրես,- ասում էր Ռութը: - Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ՝ արդյոք նա ազնիվ կլինի՞, արդյոք կլսի՞ քննադատությունը, կկարողանա՞ ընդունել իր սխալները, անիրականալի խոստումներ չի՞ տա»:

Այն ժամանակ այդ խոսքը Քեթիին փոխանցեցի, ու նա առաջարկեց, որ դաշինք կնքենք: Երդվեցինք երբեք իրար չխաբել: Երբեք չձևացնել: Միշտ հավատարիմ լինել:

- Բայց ի՞նչ պատահեց,- հարցրի: - Որտեղի՞ց գնաց սխալը:

Ռութը միանգամից չպատասխանեց: Լսածս ինձ անակնկալի բերեց:

- Կարծում եմ՝ ինքդ էլ գիտես պատասխանը: Մնում է միայն՝ խոստովանես քեզ:

- Չգիտեմ,- ասացի գլուխս օրորելով: - Չգիտեմ:

Ես վրդովված լռեցի, հետո հանկարծ աչքիս առաջ հառնեց Քեթիի պատկերը նամակները գրելիս. ի՞նչ կրքոտ էին

դրանք, ի՞նչ հուզումնալից, նամակագրությունից ասես հաճույք է ստացել, այդ տղամարդու հետ գաղտնի, ծածուկ կապից: Քեթին հաճույքով ստում ու թաքնվում էր, ասես դեր էր խաղում, բայց ոչ թե բեմի վրա, այլ կյանքում:

- Ինձ թվում է՝ Քեթին ձանձրանում է,- վերջապես խոսեցի:

- Ինչո՞ւ այդպես որոշեցիր:

- Նա հույզերի պակաս ունի: Դրամայի: Միշտ այդպիսին է: Որոշ ժամանակ առաջ տրտնջում էր, որ այլևս չենք զվարճանում, որ ես անընդհատ լարված եմ, չափից դուրս շատ եմ աշխատում: Վերջերս այդ առիթով վիճեցինք: Քեթին բավական հաճախ օգտագործում էր «հրավառություն» բառը:

- Հրավառությո՞ւն:

- Այո: Ասում էր՝ մեր հարաբերություններում հրավառություն չկա:

- Պարզ է, հասկացա,- գլխով արեց Ռութը: - Մենք խոսել ենք այդ մասին, ճի՞շտ է:

- Հրավառությա՞ն:

- Սիրո մասին: Այն մասին, թե ինչպես ենք հաճախ սերը սխալմամբ հրավառության հետ շփոթում՝ հրավառության, դրամայի, դիսֆունկցիայի: Մինչդեռ իսկական սերը շատ խաղաղ է, շատ հանդարտ: Դրամայով ապրող մարդուն այն գուցե ձանձրալի թվա: Սերը խորն է, անխռով ու մշտական: Երևի դու Քեթիին հենց այդպիսի սիրով ես շրջապատել բառիս բուն իմաստով: Կարո՞ղ է նա փոխադարձությամբ պատասխանել, թե ոչ, արդեն ուրիշ հարց է:

Անթարթ սեղանին էի նայում, ուղիղ իմ դիմաց դրված անձեռոցիկների տուփին: Ինձ դուր չէր գալիս, թե Ռութը խոսքն ուր էր տանում: Փորձեցի առարկել նրան:

– Սխալներ երկուսս էլ թույլ ենք տվել,– ասացի: – Ես էլ էի խաբում նրան: Մարիխուանայի մասին չգիտի:

Ռութը տխուր ժպտաց:

– Չգիտեմ՝ արդյոք մշտական սեռական ու զգացմունքային դավաճանությունն այլ մարդու հետ համարժեք է նրան, որ մեկը ժամանակ առ ժամանակ խոտի հետ է խաղ անում: Ահա ևս մի ապացույց, թե որքան տարբեր եք դուք. հաճախ ու ճարպկորեն ստողն ընդունակ է դավաճանել զուգընկերոջն առանց խղճի խայթ զգալու…

– Դուք չգիտեք,– հուզված բացականչեցի ես: – Գուցե Քեթին հիմա սարսափելի վատ է զգում:

Ասացի ու հասկացա, որ ինքս ինձ չեմ հավատում: Ռութն էլ չհավատաց:

– Դժվար թե,– ասաց: – Նրա պահվածքը հուշում է, որ Քեթին տրավմա է տարել. նրան հատուկ չեն ապրումակցումը, ամբողջականության ու պարզ բարության զգացումները. այն ամենը, ինչ լիուլի քեզ է տրված:

– Բայց այդպես չէ,– օրորեցի գլուխս:

– Այդպես է, Թեո,– Ռութը մի քիչ հապաղեց: – Չե՞ս կարծում, որ նորից նույն սխալն ես անում:

– Քեթիի հե՞տ:

Ռութը տարուբերեց գլուխը:

– Դա նկատի չունեմ: Խոսքս ծնողներիդ մասին է: Քո մանկության: Գուցե մանկությանդ մոդելն ես կրկնում:

– Ոչ,– ասացի ու հանկարծ զգացի, որ նյարդայնանում եմ: – Իմ ու Քեթիի միջև կատարվողն իմ մանկության հետ ոչ մի կապ չունի:

– Իսկապե՞ս,– զարմացավ Ռութը: – Անվերջ փորձում ես

անկանխատեսելի պահվածքով հաճոյանալ զգացմունքներից զուրկ, ոչ հոգատար, ոչ բարի մեկին, փորձում ես երջանկացնել նրան, նվաճել նրա սերը. ոչինչ չի հիշեցնում, Թեո: Մի՞թե պատմությունը ծանոթ չէ:

Սեղմեցի բռունցքս ու ոչինչ չասացի: Ռութը զգույշ շարունակեց.

– Գիտեմ, թե ինչքան տխուր ես: Բայց ուզում եմ՝ խոստովանես, որ այդ տխրությունը Քեթիի հետ հանդիպելուց շատ առաջ էլ ունեիր: Երկար տարիներ քո մեջ կրում ես այդ տխրությունը: Գիտե՞ս, Թեո, որն է ամենաճանրը. խոստովանել, որ մեզ այն ժամանակ, երբ ամենաշատն էինք դրա կարիքը զգում, չեն սիրել: Չսիրված լինելու ցավը սարսափելի զգացում է:

Իհարկե, նա իրավացի էր: Անկարող էի բառեր գտնել՝ նկարագրելու այն նողկալի զգացումը, որ հարազատ մարդու դավաճանությունից է ծնվում, ներսումդ բացվող ահավոր խոռոչը, ու երբ Ռութն ասաց «չսիրված լինելու ցավը», ես տեսա, թե ձևակերպումն ինչպես իմ ամբողջ գիտակցության մեջ թափանցեց և դարձավ միաժամանակ անցյալիս, ներկայիս ու ապագայիս պատմությունը: Խնդիրը միայն Քեթին չէր, այլ հայրս և մանկությունից եկող լքվածության զգացումս. ցավ զգացի այն ամենի համար, ինչ երբեք չէի ունեցել ու սրտիս խորքում համոզված էի, որ երբեք էլ չեմ ունենա: Ըստ Ռութի՝ հենց դա էր պատճառը, որ Քեթիին էի ընտրել: Կա՞ր ավելի լավ միջոց ապացուցելու, որ հայրս իրավացի էր (որ սիրո անարժան ոչնչություն եմ), քան հետապնդել մեկին, որը երբեք ինձ չի սիրելու:

Գլուխս ափերիս մեջ թաղեցի:

– Ուրեմն այս ամենն անխուսափելի՞ էր: Ուզում եք ասել, որ ի՞նքս եմ ինձ այս ծուղակը գցել: Ուրեմն ամեն ինչ անհո՞ւյս է:

– Ոչ, անհույս չէ: Դու այլևս հոր բարյացակամությունը փնտրող երեխա չես: Հասուն տղամարդ ես և ընտրության հնարավորություն ունես: Ամեն ինչ քեզնից է կախված. կա՛մ կորոշես, որ սա քո անարժանության հերթական հաստատումն է, կա՛մ կխզես կապդ անցյալի հետ: Կդադարես միևնույն սխալները կրկնել:

– Իսկ դա ինչպե՞ս անեմ: Բաժանվե՞մ Քեթիից:

– Կարծում եմ՝ վիճակը բարդ է:

– Բայց կարծում եք, որ լավ կլինի՝ բաժանվե՞մ Քեթիից:

– Դու չափազանց հեռուն ես գնացել, չափազանց շատ ջանք ես գործադրել, որ վերադառնաս այն կյանքին, որտեղ քո հանդեպ անազնիվ են, որտեղ քեզ անտարբերության են մատնում, նվաստացնում: Դու արժանի ես ավելի լավին:

– Ասե՛ք: Ուղղակի ասեք, Ռո՛ւթ: Կարծում եք, որ պետք է բաժանվե՞մ Քեթիից:

Ռութը նայեց ուղիղ աչքերիս մեջ: Երկար, ուշադիր նայեց:

– Կարծում եմ, որ պարտավոր ես բաժանվել,– ասաց: – Սա որպես քո հոգեբան չեմ ասում, այլ որպես հին ընկեր: Չեմ կարծում, որ կկարողանաս վերադառնալ ու ձևացնել, թե ոչինչ չի պատահել, եթե նույնիսկ շատ ուզես: Ենթադրենք՝ մի քիչ էլ ձգեցիր, բայց մի քանի ամսից նորից նման մի բան կպատահի, ու դարձյալ կհայտնվես այստեղ, այս բազմոցին: Ազնիվ եղիր քեզ հետ, Թեո, Քեթիի և այս ամբողջ իրադրության հարցում. ստի ու անհավատարմության վրա կառուցված ցանկացած բան վաղ թե ուշ կոչնչանա: Հիշի՛ր, սերը, որը հիմնված չէ ազնվության վրա, արժանի չէ սեր կոչվելու:

Ծանր հառաչեցի, պարպված, ընկճված ու անասելի հոգնած:

- Անկեղծության համար շատ շնորհակալ եմ, Ռո՛ւթ: Բարձր եմ գնահատում:

Ռութը դռան մոտ, երբ պատրաստվում էի հեռանալ, գրկեց ինձ: Առաջ երբեք այդպես չէր արել: Իմ գրկում նա այնքան փխրուն էր, ոսկորներն այնպես բարակ էին: Նրանից ծաղկի անորսալի բույր էր տարածվում՝ խառնված կարդիգանի բրդի հոտին: Այնպես էի ուզում լաց լինել: Բայց լաց չեղա կամ էլ չկարողացա:

Փոխարենը դուրս եկա առանց հետ նայելու:

Ավտոբուս նստեցի, որ տուն վերադառնամ: Նստել էի պատուհանի մոտ ու դուրս էի նայում՝ մտածելով Քեթիի, նրա ձյունաճերմակ մաշկի, աներևակայելի գեղեցիկ, զմրուխտե աչքերի մասին: Սիրտս լի էր անասելի կարոտով. նրա շուրթերի քաղցր համի, նրա փափկության: Բայց Ռութն իրավացի էր: Սերը, որը հիմնված չէ ազնվության վրա, արժանի չէ սեր կոչվելու:

Ստիպված էի տուն գնալ ու Քեթիին ամեն ինչ ասել:

Ու նրանից բաժանվել:

10

Երբ տեղ հասա, Քեթին տանն էր: Թախտին նստած ինչ-որ տեքստ էր հավաքում:

- Ո՞ւր էիր կորել,- աչքն էկրանից չկտրելով՝ հարցրեց նա:

- Հեչ, զբոսնում էի... Ո՞նց անցավ փորձը:

- Ինչպես միշտ: Հոգնեցուցիչ:

Նայում էի Քեթիի մատներին՝ փորձելով գուշակել, թե ում է գրում: Հասկանում էի, որ խոսակցություն սկսելու ժամանակն էր: «Ես գիտեմ, որ թաքուն սիրավեպ ունես: Ուզում եմ բաժանվել»: Բացեցի բերանս, որ բարձրաձայնեմ նախապես պատրաստած նախադասությունը, բայց ինչյուն արձակել չկարողացա: Մինչ փորձում էի վերագտնել ձայնս, Քեթին կանխեց ինձ: Դադարեց տեքստ հավաքել ու հեռախոսը մի կողմ դրեց:

- Խոսելու բան կա, Թեո:

- Ինչի՞ մասին:

- Դու ինձ ոչինչ չե՞ս ուզում ասել:

Քեթիի ձայնի մեջ խիստ շեշտեր լսվեցին: Խուսափում էի նրա աչքերին նայելուց՝ վախենալով, որ մտքերս կկարդա: Կանգնել էի նրա առաջ ամոթահար, մեղավոր, ասես խայտառակ գաղտնիքն իմն էր:

Շուտով պարզվեց, որ չէի սխալվում: Քեթին ձեռքը բազմոցի հետևը տարավ ու ինչ-որ բան հանեց: Սիրտս մարեց: Նրա ձեռքին փոքրիկ սափորն էր, որի մեջ խոտն էի պահում: Մատս կտրելուց հետո լրիվ մոռացել էի այն նորից թաքցնել:

- Սա ի՞նչ է,- սափորը բարձրացնելով հարցրեց Քեթին:

- Խոտ է:

- Գիտեմ: Ինչո՞ւ է այստեղ:

- Առել եմ: Շատ էի ուզում:

- Ի՞նչ էիր շատ ուզում: Ուռե՞լ: Լո՞ւրջ:

Հայացքս նրանից փախցնելով՝ չարաճճի երեխայի պես թոթվեցի ուսերս:

- Գրողը տանի: Աստված իմ,- Քեթին զայրացած օրորում էր գլուխը: - Ինձ մեկ-մեկ թվում է՝ քեզ բոլորովին չեմ ճանաչում:

Ինչպե՞ս էի ուզում խփել նրան: Ուզում էի նետվել նրա վրա ու բռունցքներով հարվածել: Ուզում էի ավերել սենյակը, կահույքը պատերին տալով ջարդել: Ուզում էի լաց լինել, ոռնալ ու թաղվել նրա գրկում:

Բայց ոչինչ էլ չարեցի:

- Քնելու ժամանակն է,- ասացի ու սենյակից դուրս եկա:

Լուռ անցանք ննջարան: Խավարի մեջ նրա կողքին պառկեցի: Մի քանի ժամ արթուն էի, զգում էի նրա մարմնի ջերմությունը, ուշադիր նայում Քեթիին, իսկ նա քնած էր:

Ուզում էի ասել՝ ինչո՞ւ չեկար ինձ մոտ: Ինչո՞ւ չխոսեցիր ինձ հետ: Չէ՞ որ քո լավագույն ընկերն էի: Գոնե մի բառ ասեիր, ու ամեն ինչ կկարգավորեինք: Ինչո՞ւ լռեցիր: Չէ՞ որ ես կողքիդ եմ: Ես այստեղ եմ:

Ուզում էի Քեթիին սեղմել կրծքիս: Ուզում էի գրկել նրան, բայց չէի կարողանում: Քեթին չքացել էր. այն Քեթին, ում

այնքան սիրում էի, անհետ կորել էր, ու հիմա նրա փոխարեն օտար մարդ էր:

Հեկեկոցը բարձրացավ, կոկորդիս հասավ: Հետո այտերովս տաք արցունքներ հոսեցին:

Խավարում անձայն լալիս էի:

***

Առավոտյան վեր կացանք անկողնուց, ու սովորական առօրյան սկսվեց. Քեթին մտավ լոգարան, մինչ ես սուրճ էի եփում: Երբ խոհանոց եկավ, գավաթը նրան տվեցի:

- Գիշերը տարօրինակ ձայներ էիր հանում: Քնի մեջ կարծես խոսում էիր:

- Ինչ:

- Չգիտեմ: Չհասկացա: Ինչ-որ անհեթեթություն: Երևի դեռ խոտի ազդեցության տակ էիր,- թունոտ հայացք նետեց ինձ, հետո նայեց ժամացույցին: - Պետք է գնամ, թե չէ կուշանամ:

Քեթին սուրճը խմեց-վերջացրեց, գավաթը լվացարանում դրեց: Արագ համբուրեց այտս: Շուրթերի հպումից ցնցվեցի:

Նրա գնալուց հետո ցնցուղ ընդունեցի: Ջերմաստիճանը բարձրացրի այնքան, որ ջուրը համարյա այրում էր մարմինս: Տաք ջուրը մտրակում էր դեմքս, ու ես հեկեկում էի: Հեկեկում էի անզուսպ, փոքր երեխայի պես: Հետո սրբվելիս հայելու մեջ պատահմամբ արտացոլանքս տեսա: Ցնցվեցի. մոխրագույն էի, կնճռոտված, մի գիշերում ասես երեք տասնյակ տարով ծերացած: Ծեր էի, ուժասպառ, երիտասարդությունս անհետ կորել էր: Եվ հենց այդ ժամանակ ու այդտեղ որոշում ընդունեցի:

Քեթիից բաժանվելը նույնն է, թե կտրեմ ձեռքս կամ ոտքս: Ես պարզապես պատրաստ չէի այդպես հաշմվելուն: Թքած Ռութի կարծիքի վրա: Նա անսխալական չէ: Քեթին հայրս չէ, ու ես դատապարտված չեմ անընդհատ կրկնել անցյալը: Ես կարող եմ փոխել ապագան: Քեթին ու ես կարողացել ենք երջանիկ լինել, ուրեմն նորից կկարողանանք: Քեթին մի օր անպայման կխոստովանի, կպատմի ամեն ինչ, ու ես կներեմ նրան: Մենք կհաղթահարենք դժվար ժամանակները:

Ես բաց չեմ թողնի Քեթիին: Ու ոչինչ չեմ ասի նրան: Կձևացնեմ, թե չեմ կարդացել նամակները: Ու ինչ-որ կերպ կմոռանամ: Կթաղեմ: Շարունակելուց բացի ուրիշ ընտրություն չունեմ: Ես հրաժարվեցի զիջել, հրաժարվեցի հանձնվել ու կտոր-կտոր լինել:

Չէ՞ որ պատասխանատվություն եմ կրում ոչ միայն ինձ համար: Իսկ իմ խնամքի տակ գտնվող հիվանդները: Մարդիկ ուղղակիորեն ինձնից են կախված:

Նրանց հուսախաբ անել չեմ կարող:

11

- Էլիֆին եմ փնտրում,- ասացի ես: - Չգիտե՞ք՝ որտեղ է:
Յուրին հետաքրքրությամբ նայեց ինձ:

- Իսկ Ձեր ինչի՞ն է պետք:

- Ուղղակի ուզում եմ բարևել: Կուզեի բոլոր հիվանդներին ներկայանալ, տեղեկացնել՝ ով եմ և ինչ պարտականություններ եմ կատարում:

Յուրին կասկածով ինձ նայեց:

- Պարզ է: Դե, նրա հետ դժվար է լեզու գտնել, սրտին մոտ չընդունեք,- Յուրին նայեց պատի ժամացույցին: - Հիմա անց կես է, ուրեմն արտ թերապիան հենց նոր է վերջացրել: Հավանաբար հանգստի սենյակում է:

- Շնորհակալ եմ:

Հանգստի սենյակը մեծ, կլոր սրահ էր, որտեղ մաշված պաստառով բազմոցներ էին, ցածր սեղանիկներ, գրապահարան՝ հին գրքերով, որոնք ոչ ոք չէր կարդում: Կահույքը ներծծվել էր թեյի ու ծխախոտի ծխի ծանր հոտով: Անկյունում, սեղաններից մեկի վրա, երկու հիվանդ նարդի էին խաղում: Էլիֆը մենակ նստած էր բիլիարդի սեղանի մոտ: Ժպտալով մոտեցա նրան:

- Ողջույն, Էլի՛ֆ:

Վախվորած, կասկածամիտ աչքերով նայեց ինձ:

- Ինչ ես ուզում:

- Մի՛ անհանգստացեք, Էլի՛ֆ: Ուզում էի մի քանի բառ փոխանակել:

- Դու իմ բժիշկը չես: Մեկին նշանակել են:

- Ես ընդհանրապես բժիշկ չեմ: Հոգեթերապևտ եմ:

Էլիֆը քամահրանքով փնչացրեց:

- Դրանից էլ ունեմ:

Ես ժպտացի՝ հոգուս խորքում ուրախ, որ նրա հետ Ինդիրան է աշխատում, ոչ թե ես: Էլիֆը մոտիկից ավելի սարսափելի տեսք ուներ: Պատճառը միայն նրա ահռելի չափերը չէին, այլ մոլեգնությունը, որ դաջված էր յուրաքանչյուր դիմագծի վրա, անփոփոխ մռայլ տեսքը, չարությամբ լի սև աչքերը, հայացքի մեջ ակնհայտ կարդացվող հոգեկան շեղումը: Նրանից քրտինքի ու թութունի հոտ էր փչում: Նա անընդհատ ծխում էր, ինչից մատների ծայրերը սևացել էին, իսկ եղունգներն ու ատամները մուգ դեղնագույն էին դարձել:

- Կուզեմ մի քանի հարց տալ,- ասացի,- եթե կարելի է... Ալիսիայի մասին:

Էլիֆը մռայլվեց ու բիլիարդի ձողը դղրդոցով սեղանին շպրտեց: Սկսեց գնդերը շարել նոր խաղի համար: Հետո դադար առավ: Քարացած կանգնած էր՝ անմիտ աչքերը հառած լռության մեջ:

- Էլի՛ֆ:

Ոչ մի ձայն: Դեմքի արտահայտությունից հասկացա՝ ինչ է կատարվում:

- Էլի՛ֆ, ձայնե՞ր եք լսում:

Կասկածամիտ իմ կողմը նայեց: Թոթվեց ուսերը:

– Ի՞նչ են ասում:

– Ասում են, որ քեզ չի կարելի վստահել: Ու որ պետք է քեզ ուշադիր հետևել:

– Հասկացա: Ճիշտ է: Դուք ինձ չեք ճանաչում, դրա համար էլ ինձ չեք վստահում: Դեռ շուտ է: Գուցե ժամանակի հետ ամեն ինչ փոխվի:

Հայացքից դատելով Էլիֆը խիստ կասկածում էր:

– Բիլիարդ սիրո՞ւմ եք,– հարցրի՝ գլխով սեղանի կողմն անելով:

– Չէ:

– Ինչո՞ւ:

Թոթվեց ուսերը:

– Մյուս ձողը ջարդվել է: Մինչև հիմա նորը չեն տվել:

– Եթե խաղանք, Ձեր ձողն ինձ կտա՞ք:

Ձողը սեղանին էր: Ձգվեցի դրա կողմը, բայց Էլիֆը ճանկեց այն:

– Թո՛ղ, իմն է: Գնա, քեզ ուրիշը գտիր:

Հետ քաշվեցի՝ նրա կատաղի արձագանքից ապշած: Նա զգալի ուժով հարվածեց խաղագնդին: Որոշ ժամանակ նրա խաղին էի հետևում, ապա նորից փորձեցի:

– Գուցե պատմե՞ք, թե ինչ է պատահել Ալիսիայի՝ Գրոուվ գալու առաջին օրերին: Հիշո՞ւմ եք:

Էլիֆը բացասաբար օրորեց գլուխը: Ես շարունակեցի.

– Նրա անձնական գործում կարդացել եմ, որ ճաշարանում Ձեր միջև վիճաբանություն է եղել: Ի՞նքը Ձեզ վրա հարձակվեց:

– Հա, հա, ուզում էր սպանել ինձ: Գրողը տանի, քիչ էր մնում՝ վիզս կտրի:

– Հաշվետվության մեջ նշված է, որ բուժքույրը տեսել է,

որ հարձակումից առաջ Ալիսիայի ականջին ինչ-որ բան եք շշնջացել: Կասեք ինչ:

- Չէ,- Էլիֆը կատաղի օրորեց գլուխը: - Ոչ մի բան էլ չեմ շշնջացել:

- Չեմ պնդում, թե սադրել եք նրան: Պարզապես հետաքրքրքիր է: Ինչ ասացիք:

- Մի բան հարցրի, հետո ինչ:

- Ինչ հարցրիք:

- Հարցրի՝ արժանի՞ էր:

- Ո՞վ:

- Դե, դրա մարդը,- Էլիֆը ժպտաց, բայց դա ժպիտ չէր, այլ ավելի շուտ այլանդակ ծամածռություն:

- Այսինքն՝ Ալիսիայի ամուսինը,- նորից հարցրի՝ վստահ չլինելով, որ ճիշտ եմ հասկացել: - Ուրեմն Ալիսիային հարցրիք՝ ամուսինն արժանի էր սպանվելու:

Էլիֆը գլխով արեց ու խաղաղդին հարվածեց:

- Հետո հարցրի, թե էդ մարդն ինչ տեսք ուներ: Ախր, երբ կրակել էր, գանգը ցաքուցրիվ էր արել, ուղեղը լրիվ թափվել էր,-նա քրքջաց:

Անասելի զզվանք զգացի: Էլիֆի բառերն Ալիսիայի մեջ հաստատ նույն զգացողությունն էին առաջացրել: Էլիֆը նողկանք ու ատելություն էր հարուցում. դա նրա պաթոլոգիան էր. մայրը նորածին Էլիֆին հենց այդպիսի զգացումներ էր փոխանցել: Ատելություն ու նողկանք: Եվ Էլիֆն էլ անգիտակցաբար դիմացինին մղում էր իր հանդեպ ատելություն զգալ ու հիմնականում բավական հաջող էր ստացվում:

- Իսկ հիմա,- հարցրի,- Ալիսիայի հետ լավ հարաբերություններ ունեք:

– Բա ո՞նց: Շատ մոտ ենք: Լավագույն ընկերուհիներ:

Էլիֆը նորից ծիծաղեց: Չհասցրեցի ծիծաղել, գրպանումս անսպասելի դռռաց հեռախոսը: Նայեցի: Անծանոթ համար էր:

– Պիտի պատասխանեմ: Շատ շնորհակալ եմ օգնության համար:

Էլիֆն ինչ-որ անհասկանալի բան փնթփնթաց ու խաղին վերադարձավ:

***

Դուրս եկա միջանցք, որ զանգին պատասխանեմ:

– Լսում եմ:

– Թեո Ֆաբեռն է:

– Այո: Ո՞վ է:

– Մաքս Բերենսոնը: Ինձ տեղեկացրին, որ զանգել եք:

– Ախ, այո՛: Շնորհակալ եմ, որ զանգեցիք: Ուզում էի Ձեզ հետ Ալիսիայի մասին խոսել:

– Ինչո՞ւ: Ինչ-որ բա՞ն է պատահել: Խնդիրնե՞ր կան:

– Ո՛չ: Ավելի ճիշտ, ոչ այնքան: Ալիսիան իմ հիվանդն է, կխնդրեի Ձեզ հարմար ժամանակ մի քանի հարցի պատասխանել:

– Որքան հասկանում եմ, հեռախոսային խոսակցություն չէ: Անկեղծ ասած, շատ զբաղված եմ:

– Կնախընտրեի անձամբ հանդիպել, եթե հնարավոր է:

Մաքս Բերենսոնը հոգոց հանեց, ձեռքով խոսափողը ծածկելով՝ ինչ-որ մեկին դիմեց, ապա՝ նորից ինձ.

– Վաղը երեկոյան 7-ին իմ գրասենյակ եկեք:

Ուզում էի ճշտել հասցեն, բայց նա արդեն անջատել էր:

12

Մաքս Բերենսոնի քարտուղարուհին խիստ մրսել էր: Թղթե անձեռոցիկը քթին տարավ, քիթն աղմուկով մաքրեց ու ձեռքով ցույց տվեց, որ սպասեմ:

- Հեռախոսով է խոսում: Մի րոպեից կազատվի:

Ես գլխով արեցի ու սպասասրահում տեղավորվեցի: Սրահում մի քանի անհարմարավետ, ուղղահայաց բազկաթոռ կար, սուրճի սեղանիկ, վրան՝ մի տրցակ հին ամսագրեր: Հանկարծ մտքովս անցավ, որ բոլոր սպասասրահներն իրար նման են. նույն հաջողությամբ կարող էի նստած լինել բժշկի, թաղման բյուրոյի տնօրենի կամ փաստաբանի ընդունարանում:

Վերջապես ընդունարանի հեռավոր ծայրի դուռը բացվեց: Շեմին հայտնվեց Մաքս Բերենսոնը և ձեռքի շարժումով ներս հրավիրեց: Ապա անմիջապես անհետացավ առանձնասենյակի խորքում: Վեր կացա ու նրա հետևից սենյակ մտա:

Ամենավատին էի սպասում հատկապես հեռախոսով նրա կոշտ խոսելաոճից հետո: Բայց, ի զարմանս ինձ, խոսքը ներողություն խնդրելուց սկսեց.

- Կներեք, եթե հեռախոսով խոսելիս կտրուկ էի,- ասաց:

- Ծանր շաբաթ էր, ու այնքան էլ լավ չէի զգում: Կնստեք:

Նստեցի նրա գրասեղանի հակառակ կողմից դրված աթոռին:

- Շնորհակալ եմ,- ասացի: - Եվ շնորհակալություն, որ համաձայնեցիք ընդունել ինձ:

- Դե, սկզբում մտածեցի, որ չարժի: Ինձ թվաց՝ լրագրող եք, որը փորձում է Ալիսիայի մասին ինձնից տեղեկություններ կորզել: Բայց հետո զանգեցի Գրոուվ և պարզեցի, որ այնտեղ եք աշխատում:

- Ահա՛ թե ինչ: Իսկ դա հաճա՛խ է պատահում: Նկատի ունեմ, լրագրողները հաճա՛խ են անհանգստացնում:

- Վերջերս՝ ոչ: Առաջ՝ այո: Ամեն ինչ ստուգելու սովորությունն այդ ժամանակից մնաց...

Բերենսոնն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չդիմացավ ու փռշտաց: Ձեռքն անձեռոցիկների տուփին մեկնեց:

- Կներեք: Ամբողջ ընտանիքով հիվանդ ենք:

Նա աղմուկով մաքրեց քիթը, իսկ ես ավելի ուշադիր ուսումնասիրեցի նրան: Ի տարբերություն կրտսեր եղբոր՝ Մաքս Բերենսոնը գրավիչ տղամարդ չէր: Մաքսը պատկառելի, ճաղատացող տղամարդ էր, դեմքն ակոսված էր պատանեկան բշտիկների խոր սպիներով: Նրանից տղամարդու հնաոճ օդեկոլոնի թունդ հոտ էր փչում. համարյա այդպիսին հայրս էր օգտագործում: Աշխատասենյակի կահավորանքը նույնպես աչքի էր ընկնում ավանդական ոճով, սենյակում կաշվե կահույքի, փայտի ու գրքերի հոտ էր: Գաբրիելի աշխարհի ճիշտ հակադրությունը՝ գույնի ու գեղեցկության աշխարհ՝ հանուն գեղեցկության: Նա և Մաքսն ընդհանուր ոչինչ չունեին:

Մաքսի աշխատասեղանին Գաբրիելի լուսանկարն էր՝ շրջանակի մեջ: Պարզ նկար էր (գուցե հենց Մաքսն էր նկարել). Գաբրիելը նստած էր ցանկապատին, գյուղի դաշտում, մազերը քամուց ալիքվում էին, իսկ կրծքին կախված էր լուսանկարչական սարքը: Գաբրիելն ավելի շուտ դերասանի էր նման, քան լուսանկարչի, կամ լուսանկարչի դեր խաղացող դերասանի:

Մաքսը նկատեց, որ նկարին եմ նայում, ու գլխով արեց՝ ասես մտքերս կարդալով:

- Եղբորս բաժին էին ընկել մազերն ու բարետես արտաքինը: Իսկ ինձ՝ ուղեղը,- ծիծաղեց: - Կատակում եմ: Իրականում ինձ որդեգրել են: Ես ու Գաբրիելն արյունակցական կապ չունենք:

- Այ քեզ նորություն: Գաբրիելին էլ էին որդեգրել:

- Ոչ, միայն ինձ: Մեր ծնողները երկար ժամանակ երեխա չեն ունեցել, բայց ինձ որդեգրելուց հետո մայրիկն անսպասելի հղիացել է, և շուտով որդի են ունեցել: Այդպես հաճախ է պատահում: Հավանաբար սթրեսի թուլացման հետ է կապված:

- Գաբրիելի հետ մտերիմ էիք:

- Շատ մտերիմ էինք: Չնայած Գաբրիելին միշտ ավելի մեծ ուշադրություն էին դարձնում, իսկ ես նրա ստվերում էի մեծանում:

- Իսկ ինչու էր այդպես:

- Այլ կերպ չէր կարող լինել: Գաբրիելն առանձնահատուկ էր դեռ երեխա ժամանակից:

Մաքսը մատանու հետ խաղալու սովորություն ուներ: Խոսելիս անընդհատ պտտում էր մատի վրա:

- Գիտեք, Գաբրիելն ուր գնում էր, լուսանկարչական սարքն իր հետ էր տանում, անվերջ լուսանկարում էր: Հայրիկը կարծում էր, թե խելագար է: Պարզվեց՝ եղբայրս իսկապես հանճարեղ էր: Նրա աշխատանքները տեսե՞լ եք:

Դիվանագիտորեն ժպտացի: Գաբրիելի լուսանկարչական տաղանդը քննարկելու ցանկություն չունեի: Փոխարենը զգուշորեն Ալիսիայի մասին խոսք բացեցի:

- Պետք է որ նրան լավ ճանաչեիք:

- Ալիսիայի՞ն: Իսկ ինչո՞ւ պետք է լավ ճանաչեի:

Ալիսիայի անունը հիշատակելն անգամ բավական էր, որ Մաքսը փոխվի: Ջերմությունն անհետացավ: Ձայնը սառեց:

- Չգիտեմ՝ կկարողանամ Ձեզ օգնել,- շարունակեց: - Ալիսիային դատարանում ես չեմ ներկայացրել: Եթե դատաքննության մանրամասներն են հարկավոր, պատրաստ եմ ծանոթացնել իմ գործընկեր Պատրիկ Դոհերթիի հետ:

- Ճիշտն ասած, ես ուրիշ բանի համար եմ եկել:

- Ուրի՞շ,- հայացքում հետաքրքրասիրություն հայտնվեց: - Չեմ կարծում, թե հոգեբույժներն իրենց հիվանդի փաստաբանի հետ հաճախ են զրուցում:

- Եթե հիվանդն ի վիճակի է խոսելու, ապա՝ ոչ:

Թվում էր՝ Մաքսը փորձում է ասածս մարսել:

- Պարզ է: Իսկապես չեմ պատկերացնում՝ ինչով կարող եմ օգնել, ուստի...

- Մի քանի հարց տամ Ձեզ:

- Շատ լավ: Հարցրե՛ք:

- Հիշում եմ, թերթերը գրել էին, որ սպանության նախորդ օրը տեսել եք Գաբրիելին ու Ալիսիային:

- Այո, միասին ճաշել ենք:

- Եվ: Ամեն ինչ կարգին էր:

Զրուցակցիս աչքերը խամրեցին: Ըստ երևույթին, նման հարց արդեն հարյուր անգամ տվել էին, ուստի պատասխանեց մեխանիկորեն, առանց մտածելու:

- Ամեն ինչ կարգին էր: Լիովին:

- Իսկ Ալիսիան...

- Իրեն նորմալ էր պահում,- Մաքսը թոթվեց ուսերը: - Գուցե մի քիչ հուզվում էր, բայց...

- Բայց:

- Ոչինչ:

Զգում էի, որ ասելու բան ունի: Սպասեցի: Կարճ դադարից հետո Մաքսը շարունակեց.

- Չգիտեմ՝ որքանով եք տեղյակ Ալիսիայի ու Գաբրիելի հարաբերություններից:

- Միայն այնքանը, ինչ թերթերում եմ կարդացել:

- Եվ ինչ եք թերթերում կարդացել:

- Որ նրանք երջանիկ էին:

- Երջանիկ,- Մաքսը սառը ժպտաց: - Իհարկե, երջանիկ էին: Գաբրիելը կաշվից դուրս էր գալիս, միայն թե Ալիսիան երջանիկ լիներ:

- Պարզ է:

Իրականում ոչինչ էլ պարզ չէր: Չէի հասկանում, թե Մաքսը խոսքն ուր է տանում: Երևի մտահոգ տեսք ունեի, որովհետև նա ուսերը թոթվեց ու ասաց.

- Չեմ պատրաստվում քննարկել, եթե Ձեզ բամբասանքներ են պետք, դիմեք Ժան-Ֆելիքսին:

- Ժան-Ֆելիքսին:

- Ժան-Ֆելիքս Մարթինին՝ Ալիսիայի ցուցահանդեսների

կազմակերպչին: Հարյուր տարվա ծանոթներ էին, անբաժան ընկերներ: Անկեղծ ասած, նա ինձ երբեք դուր չի եկել:

- Բամբասանքներն ինձ չեն հետաքրքրում,- ասացի՝ մտքումս որոշելով հնարավորինս շուտ հանդիպել Ժան-Ֆելիքսին: - Ինձ Ձեր անձնական կարծիքն է հետաքրքիր: Կարո՞ղ եմ ուղիղ հարցնել:

- Ինձ թվաց՝ արդեն հարցրեցիք:

- Ալիսիան Ձեզ դո՞ւր էր գալիս:

Մաքսի դեմքը քարացավ, երբ սկսեց խոսել:

- Իհարկե:

Չհավատացի:

- Այս վիճակում Դուք հանդես եք գալիս երկու դեմքով՝ որպես փաստաբան, որը, հասկանալի պատճառներով, շրջահայաց է, և որպես եղբայր: Ես Ձեզ մոտ եկել եմ, որպես եղբոր մոտ:

Լռություն տիրեց: Մտածեցի՝ երևի Մաքսը հիմա ինձ դուրս կանի: Թվաց, թե պատրաստվում է ինչ-որ բան ասել, բայց միտքը փոխեց: Հետո կտրուկ վեր կացավ սեղանի մոտից և պատուհանին մոտեցավ: Լայն բացեց: Սառը օդը սենյակ լցվեց: Մաքսը մի քանի անգամ խոր շնչեց, ասես սենյակում շնչահեղձ էր լինում: Վերջապես ցածր ձայնով խոսեց.

- Ճիշտն ասած... ես ատում էի նրան... տանել չէի կարողանում:

Ոչինչ չասացի: Սպասեցի, որ շարունակի: Նա պատուհանից դուրս էր նայում: Հետո դանդաղ շարունակեց.

- Գաբրիելը պարզապես եղբայր չէր, լավագույն ընկերս էր: Անսահման բարի մարդ էր: Չափից դուրս բարի: Իսկ նրա տաղանդը, մարդամոտությունը, կենսասիրությունը. ամեն

ինչ այդ տականքի պատճառով կորավ: Ոչ միայն Գաբրիելի կյանքը կործանեց, այլև իմը: Փառք Աստծո, ծնողներս մինչև այդ օրը չապրեցին...,- համակած հույզերից ձայնը խզվեց:

Անհնար էր Մաքսի ցավը չզգալ, ու ես իսկապես խղճացի նրան:

- Պատկերացնում եմ՝ ինչ դժվար է եղել Ձեզ համար Ալիսիայի պաշտպանությունը կազմակերպելը,- ասացի:

Մաքսը փակեց պատուհանն ու սեղանի մոտ վերադարձավ: Արդեն տիրապետում էր իրեն: Նորից իրավաբանի դիմակի տակ էր թաքնվել՝ չեզոք, հավասարակշիռ, սառը: Թոթվեց ուսերը:

- Գաբրիելը կուզեր, որ այդպես լիներ: Նա Ալիսիայի համար միշտ լավագույնին էր ձգտում: Խենթի պես սիրում էր կնոջը: Իսկ կինը պարզապես խելագար էր:

- Կարծում եք, որ Ալիսիան հոգեկան հիվանդ էր:

- Դուք ասեք: Մասնագետը Դուք եք:

- Իսկ Ձեր կարծիքով:

- Ես գիտեմ այն, ինչ տեսել եմ:

- Եվ ի՞նչ եք տեսել:

- Տրամադրության փոփոխություններ: Կատաղություն: Բրոնության նոպաներ: Ձարդուխուրդ էր անում իրերը, շուրջն ամեն ինչ ավերում էր: Գաբրիելը պատմեց, որ Ալիսիան մի քանի անգամ սպառնացել է, որ կսպանի իրեն: Եթե լսեի, միջոցներ կձեռնարկեի Ալիսիայի ինքնասպանության առաջին փորձից հետո... Ինչո՞ւ չմիջամտեցի: Պետք է պնդեի, որ նա բժշկական օգնության կարիք ունի: Բայց ոչինչ չձեռնարկեցի: Գաբրիելն ամեն կերպ պաշտպանում էր նրան, իսկ ես ապուշի պես թույլ էի տալիս:

Մաքսը հառաչեց ու ժամացույցին նայեց՝ ակնարկելով, որ խոսակցությունն ավարտելու ժամանակն է: Բայց ես շարունակեցի ակնդետ նրան նայել:

- Ալիսիան ինքնասպանության փորձ է արել: Ինչ նկատի ունեք: Երբ: Սպանությունից հետո:

- Ո՛չ,- Մաքսն օրորեց գլուխը: - Դրանից մի քանի տարի առաջ: Չգիտեիք: Կարծում էի՝ տեղյակ եք:

- Երբ է պատահել:

- Նրա հոր մահից հետո: Դեղաչափը չարաշահել էր... հաբեր էր ընդունում կամ նման մի բան: Հաստատ չեմ հիշում: Նյարդային նոպա էր:

Ուզում էի Մաքսին էլի հարցեր տալ, բայց դուռը բացվեց: Շեմին հայտնվեց քարտուղարուհին ու խոսեց մրսած ձայնով:

- Սիրելի՛ս, ժամանակն է: Կուշանանք:

- Ճիշտ որ,- ասաց Մաքսը: - Գալիս եմ, սիրելի՛ս:

Դուռը փակվեց: Բերենսոնը, մեղավոր հայացքով նայելով ինձ, տեղից վեր կացավ:

- Թատրոն պիտի գնանք,- ըստ երևույթին, դեմքիս զարմանք էր հայտնվել, դրա համար էլ ծիծաղեց: - Ես ու Տանյան անցյալ տարի ամուսնացանք:

- Ահա՛ թե ինչ:

- Գաբրիելի մահը շատ մտերմացրեց մեզ: Առանց նրա չէի հաղթահարի:

Մաքսի հեռախոսի զանգը շեղեց նրան: Գլխով նշան արեցի, որ զանգին պատասխանի:

- Շատ շնորհակալ եմ օգնության համար,- ասացի:

Դուրս եկա աշխատասենյակից: Ընդունարանում ավելի ուշադիր նայեցի Տանյային. շիկահեր էր, հաճելի արտաքինով,

նրբակազմ: Նա նորից մաքրեց քիթը: Մատնեմատին նկատեցի հսկա ադամանդով մատանին:

Ի զարմանս ինձ, արագ վեր կացավ ու խոժոռված ինձ մոտեցավ: Հետո խոսեց շտապ-շտապ ու ցածր ձայնով:

- Եթե ուզում եք Ալիսիայի մասին ավելին իմանալ,- ասաց,- անպայման խոսեք նրա զարմիկ Փոլի հետ: Նա բոլորից լավ գիտի Ալիսիային:

- Ես փորձել եմ կապվել նրա ազգականուհու՝ Լիդիա Ռոուզի հետ,- ասացի: - Առանձնապես շփվող չէ:

- Լիդիան Ձեզ չի օգնի: Մեկնեք Քեմբրիջ: Խոսեք Փոլի հետ: Հարցրեք Ալիսիայի մասին, վթարին հաջորդած գիշերվա, և...

Առանձնասենյակի դուռը բացվեց, ու Տանյան անմիջապես լռեց: Հայտնվեց Մաքսը, ու, Տանյան լայն ժպտալով, շտապեց դեպի ամուսինը:

- Պատրաստ ես, սիրելիս:

Տանյան ժպտում էր, բայց ձայնի մեջ տագնապ կար: Մտածեցի, որ Մաքսից վախենում է: Բայց ինչու:

13

Ալիսիա Բերենսոնի օրագրից

Հուլիսի 22

Ատում եմ, որ մեր տանը զենք կա:

Երեկ երեկոյան նորից դրա պատճառով վիճեցինք: Համենայն դեպս, ինձ թվաց, թե հենց դրա համար ենք վիճում, բայց հիմա այնքան էլ վստահ չեմ:

Գաբրիելն ասաց, որ վեճի մեղավորը ես եմ: Երևի իրավացի է: Չեմ սիրում, երբ տրամադրություն չի ունենում, ինձ տխուր աչքերով է նայում: Ատում եմ նրան ցավ պատճառելը, բայց երբեմն զգում եմ, որ նրան ցավեցնելու անդիմադրելի ցանկություն ունեմ, ու ինքս էլ չգիտեմ ինչու:

Գաբրիելի ասելով՝ երեկ ահավոր տրամադրությամբ եմ տուն եկել: Ասում է՝ բարձրացել եմ վերև ու սկսել եմ նրա վրա գոռալ: Հնարավոր է: Երևի շատ վատ եմ եղել: Լավ չեմ հիշում, թե ինչ է պատահել: Զբոսայգուց նոր էի վերադարձել: Բուն զբոսանքի մասին համարյա ոչինչ չեմ հիշում. ժամանակի մեծ մասը սավառնում էի ամպերի մեջ, մտածում էի աշխատանքի՝ Հիսուսի նկարի մասին: Հիշում եմ՝ տունդարձի ճանապարհին մի տան մոտով անցա: Բակում երկու տղա ջրի խողովակով էին խաղում: Փոքր էին՝ յոթ-ութ տարեկան: Մեծը ջրում էր փոքրին, ու ջրի շիթը ծիածանի գույների պես շողում

էր լույսի տակ: Կատարյալ ծիածան էր: Փոքր տղան ծիծաղելով ձեռքերն էր պարզում: Անցա նրանց կողքով ու հասկացա, թե ինչպես են արցունքներն այտերովս հոսում:

Այն ժամանակ այդ մտքից խույս տվեցի, բայց հիմա այդ մասին մտածելով տեսնում եմ, թե ամեն ինչ ինչքա՜ն ակնհայտ էր: Չեմ ուզում ճշմարտությունը խոստովանել՝ իմ կյանքից մի հսկա կտոր բացակայում է: Միշտ ասում էի, որ երեխա չեմ ուզում, ձևացնում էի, թե երեխաներն ինձ չեն հետաքրքրում, որ ինձ լիովին արվեստին եմ նվիրել: Բայց դա սուտ էր: Պարզապես պատրվակ. իրականում մայր դառնալուց ահավոր վախենում եմ: Ես այն մարդը չեմ, ում կարելի է երեխա վստահել:

Ախր իմ երակներում մորս արյունն է հոսում:

Ահա թե ինչ էր կատարվում գլխումս, գիտակցաբար թե անգիտակցաբար, երբ երեկ տուն էի վերադառնում: Գաբրիելն իրավացի էր. վիճակս վատ էր:

Բայց երբեք չէի պայթի, եթե նրան հրացանը մաքրելիս չտեսնեի: Ո՞նց եմ նեղվում, որ զենք է պահում: Նեղանում եմ, որ ոչ մի կերպ դրանից չի հրաժարվում. քանի՞ անգամ եմ խնդրել: Գաբրիելն անընդհատ կրկնում է. հոր հին հրացաններից մեկն է՝ իրենց ագարակից, որը նվիրել է, երբ ինքը 16 տարեկան է եղել: Ընտանեկան մասունք է և այլն, և այլն, և այդպես շարունակ: Չեմ հավատում: Կարծում եմ՝ հրացանից չի ուզում բաժանվել ինչ-որ ուրիշ պատճառով: Այդպես էլ ասացի: Առարկեց, թե դատապարտելի ոչինչ չի տեսնում անվտանգ լինելու, իր տունն ու կնոջը պաշտպանելու ցանկության մեջ: Իսկ եթե տուն գո՞ղ մտնի:

- Կզանգենք ոստիկանություն,- ասացի: - Գողերին հո չե՞նք սպանելու, գրողը տանի:

Ձայնս բարձրացրել էի, իսկ Գաբրիելն ավելի բարձր պատասխանեց, ու շուտով սկսեցինք իրար վրա գոռգոռալ: Երևի ինքնավերահսկողությունս մի քիչ կորցրել էի: Բայց չէ՞ որ ընդամենը Գաբրիելին էի արձագանքում. իրականում նրա մեջ ագրեսիա կա, ու նրա այդ կողմը հազվադեպ եմ տեսնում: Եվ երբ դա ի հայտ է գալիս, շատ եմ վախենում: Այդպիսի պահերին ինձ թվում է, թե օտար մարդու հետ եմ ապրում: Եվ դա իսկապես սարսափելի է:

Վեճից հետո, ամբողջ երեկոյի ընթացքում, իրար հետ չէինք խոսում: Լռության մեջ գնացինք քնելու:

Այսօր առավոտյան սիրեցինք իրար ու հաշտվեցինք: Մեր բոլոր խնդիրներն անկողնում ենք լուծում: Այդպես ավելի հեշտ է՝ մերկ, կիսանիրհի մեջ, ընդհանուր սավանի տակ պառկած, սրտանց շշնջալ՝ ներիր:

Բոլոր փաստարկներն ու հիմար տարաձայնությունները դեն են նետվում հագուստի հետ, որն անկանոն հատակին է կիտվում:

- Գուցե պետք է կանոն դարձնենք բոլոր վեճերն անկողնում լուծելը,- ինձ համբուրելով ասաց Գաբրիելը: - Սիրում եմ քեզ: Կազատվեմ հրացանից, խոստանում եմ:

- Չէ,- ասացի: - Կարևոր չէ, մոռացիր: Ամեն ինչ կարգին է: Ազնիվ խոսք:

Գաբրիելը նորից ինձ համբուրեց ու իր կողմը քաշեց: Սեղմվեցի նրան, ու մերկ մարմինս նրա մարմնի վրա հայտնվեց: Աչքերս փակեցի ու ձգվեցի այդ հարազատ ապառաժի վրա, որն ասես իմ մարմնի ուրվագծերով էր ձևված: Իմ ներսում վերջապես խաղաղություն հաստատվեց:

Հուլիսի 23

Գրում եմ Caffe dell'Artista սրճարանից: Հիմա հաճախ եմ այստեղ գալիս: Տանը մնալ չեմ կարողանում: Երբ շուրջս մարդիկ են, թեկուզ ձանձրացած մատուցողուհին, աշխարհի հետ ինչոր կապ եմ զգում, ինձ մարդ եմ զգում: Այլապես ինձ պատում է անասելի վախը, որ կդադարեմ գոյություն ունենալ: Պարզապես կչքանամ:

Երբեմն ուզում եմ անհետանալ, օրինակ՝ այսօր երեկոյան: Գաբրիելն ընթրիքի էր հրավիրել ավագ եղբորը: Այսօր առավոտյան այդ լուրով ինձ հանկարծակիի բերեց:

- Ես ու Մաքսը հարյուր տարի իրար չենք տեսել,- ասաց Գաբրիելը: - Երևի Ջոելի տան նորամուտից: Ես խորոված կանեմ,- Գաբրիելը հարցական նայեց ինձ: - Դեմ չես, չէ՞:

- Ինչո՞ւ պիտի դեմ լինեմ:

Գաբրիելը ծիծաղեց:

- Գիտես, չէ՞, դու ստել չես կարողանում: Ամեն ինչ գրված է դեմքիդ, ասես գիրք լինի:

- Եվ ի՞նչ ես կարդում դեմքիս:

- Մաքսը քեզ դուր չի գալիս: Ու երբեք դուր չի եկել:

- Ճիշտ չէ,- զգացի, թե դեմքս ինչպես է կարմրում, ուսերս թոթվեցի ու փախցրի հայացքս: - Մաքսն ինձ, իհարկե, դուր է գալիս,- ասացի: - Դեմ չեմ նրան նորից տեսնել: Ի դեպ, ե՞րբ կկարողանաս բնորդել նկարիս համար: Ախր պիտի վերջացնեմ այդ գործը:

Գաբրիելը ժպտաց:

- Առաջարկում եմ հանգստյան օրերին: Ու մի բան էլ, լավություն արա, նկարը Մաքսին ցույց մի՛ տուր, լա՞վ: Եթե ինձ

Հիսուսի կերպարում տեսնի, ձեռքից էլ երբեք չեմ ազատվի:

- Մաքսը չի տեսնի,- ասացի: - Նկարը դեռ պատրաստ չէ:

Նույնիսկ եթե պատրաստ լիներ, Մաքսի նման մեկին իմ արվեստանոց չէի թողնի: Այդպես մտածեցի, բայց բարձրաձայն չասացի:

Վախենում եմ տուն գնալ: Ուզում եմ մնալ այստեղ՝ սրճարանի օդորակված սրահում, ու թաքնվել, մինչև Մաքսը գնա: Բայց մատուցողուհին անհամբեր նշաններ է անում, անընդհատ ժամացույցին է նայում: Ինձ շուտով կվռնդեն: Իսկ դա նշանակում է, որ ամբողջ գիշեր խելագարի պես փողոցներում չթափառելու համար ստիպված կլինեմ տուն գնալ և ընդունել անխուսափելին՝ երեկոն Մաքսի հետ:

Հուլիսի 24

Նորից սրճարանում եմ: Ինչ-որ մեկն իմ սեղանն է զբաղեցրել, ու մատուցողուհին կարեկցանքով ինձ է նայում. գոնե ինձ թվում է, թե նրա հայացքը հենց դա է նշանակում՝ համերաշխություն, բայց գուցե սխալվում եմ, ո՞վ գիտի: Նստեցի ուրիշ սեղանի մոտ, դեմքով դեպի ներս, ոչ թե դուրս, ուղիղ օդորակիչի տակ:

Այստեղ լույսը քիչ է. մութ է ու ցուրտ՝ ճիշտ իմ տրամադրության պես:

Անցած երեկոն զզվելի էր: Ավելի վատ, քան սպասում էի:

Երբ Մաքսը եկավ, չճանաչեցի. կյանքում առաջին անգամ նրան առանց կոստյումի էի տեսնում: Շորտով հիմար տեսք ուներ: Կայարանից ոտքով էր եկել ու քրտինքի մեջ կորած էր,

ճաղատը կարմիր էր ու փայլուն, իսկ թևատակերից տարածվել էր երկու թաց բիծ: Ջանում էր աչքերիս չնայել: Թե՞ ես էի խուսափում հայացքների հանդիպումից:

Մաքսը երկար շրջում էր տանը, ասում, որ ամեն ինչ փոխվել է, ու տրտնջում, որ վաղուց իրեն հյուր չենք կանչել, ու իբր արդեն հրավերից հույսը կտրել էր: Գաբրիելն էլ մի գլուխ ներողություն էր խնդրում, բացատրում, թե զբաղված ենք, ինքը նկարահանումների է, ես էլ պատրաստվում եմ գալիք ցուցահանդեսին, դրա համար էլ ոչ մեկին չենք հրավիրում: Գաբրիելը ժպտում էր, բայց զգում էի, որ նյարդայնանում է, որ եղբայրն այդ հարցին այդքան կարևորություն է տալիս:

Սկզբում ինձ լավ էի պահում: Հարմար պահի էի սպասում: Եվ շուտով այդ պահը եկավ: Մաքսն ու Գաբրիելն այգի գնացին խորոված անելու: Իսկ ես մտա խոհանոց՝ ասելով, որ աղցան եմ պատրաստում: Գիտեի՝ Մաքսը ցանկացած պատրվակով ինձ մոտ է գալու: Ու չէի սխալվում: Հինգ րոպեից լսվեցին նրա ծանր ոտնաձայները: Նա բոլորովին Գաբրիելի նման չի քայլում. ամուսինս անձայն է քայլում՝ կատվի պես, ու տանը նրա ոտնաձայները բոլորովին չեն լսվում:

- Ալիսիա՛,- իմ թիկունքում լսվեց Մաքսի ձայնը:

Այդ պահին լոլիկ էի կտրատում ու զգացի, թե ձեռքերս ինչպես դողացին: Դանակը ցած դրեցի: Շրջվեցի ու նայեցի Մաքսին: Մաքսը ցույց տվեց գարեջրի դատարկ շիշն ու ժպտաց: Առաջվա պես ինձ չէր նայում:

- Էլի եմ ուզում,- ասաց:

Լուռ գլխով արեցի: Ոչինչ չասացի: Մաքսը բացեց սառնարանն ու նոր շիշ վերցրեց: Հետո բացիչ փնտրելով շուրջը նայեց: Ես նորից գլխի շարժումով ցույց տվեցի դարակը:

Շիշը բացելիս ժպտում էր, ասես ինչ-որ բան էր ուզում ասել, բայց ես կանխեցի:

- Գաբրիելին պատահածի մասին պատմելու եմ: Մտածեցի՝ լավ կլինի՝ իմանաս:

Մաքսի դեմքից թռավ ժպիտը: Առաջին անգամ օձի հայացքով նայեց:

- Ինչ:

- Գաբրիելին կպատմեմ, թե Զոելի մոտ ինչ պատահեց:

- Գաղափար չունեմ, թե ինչ ես ասում:

- Գաղափար չունե՞ս:

- Չեմ հիշում: Վախենամ՝ շատ խմած էի:

- Սուտ:

- Ազնիվ խոսք:

- Այսինքն՝ չես հիշում, որ ուզում էիր ինձ համբուրե՞լ: Չես հիշում, որ ուզում էիր ձեռք գցել:

- Ալիսիա՛, պետք չէ:

- Ինչ պետք չէ: Ոչնչից մեծ աղմուկ բարձրացնել: Դու հարձակվեցիր վրաս:

Զգում էի, որ զայրույթից եռում եմ: Կամքի ուժով ձայնս իջեցրի ու ինձ ստիպեցի չբղավել: Հետո նայեցի պատուհանից: Գաբրիելն այգու հեռու անկյունում էր, խորոված էր պատրաստում: Ծուխն ու տաք օդի ալիքներն աղավաղել էին նրա ուրվագծերը, ու նրա կերպարանքն ասես կորացած էր:

- Նա ձգտում է քեզ նմանվել,- ասացի: - Դե, իհարկե, մեծ եղբայրն ես: Շատ կվիրավորվի, երբ ամեն ինչ պատմեմ:

- Ուրեմն մի՛ պատմիր: Պատմելու բան էլ չկա:

- Նա պետք է ճշմարտությունն իմանա: Ես ուզում եմ, որ տեսնի եղբոր իսկական դեմքը: Դու...

Չհասցրի խոսքս ավարտել, երբ Մաքսը բռնեց ձեռքս և ուժով իր կողմը քաշեց: Հավասարակշռությունս կորցրի ու նրան խփվեցի: Բարձրացրեց բռունցքը: Վախեցա, որ կխփի: Բայց փոխարենը կրքոտ շշնջաց.

- Ես սիրում եմ քեզ,- սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ...

Մինչ կհասցնեի արձագանքել, Մաքսն ինձ համբուրեց: Փորձեցի նրանից ազատվել, բայց թույլ չտվեց: Զգացի, թե կոպիտ շուրթերն ինչպես սեղմեց շուրթերիս, իսկ լեզուն բերանս խցկեց: Եվ այդտեղ բնազդը գլուխ բարձրացրեց:

Ամբողջ ուժով կծեցի նրա լեզուն:

Մաքսը գոռաց ու հրեց ինձ: Երբ գլուխը բարձրացրեց, տեսա, որ բերանն արյունով է լցվել:

- Ա՛խ, շան քած,- խոսքն աղավաղված էր, ատամները՝ կարմիր: Ինձ էր նայում վիրավոր գազանի կատաղի հայացքով:

Հավատս չի գալիս, որ Մաքսը Գաբրիելի եղբայրն է: Մաքսը Գաբրիելի հրաշալի հատկանիշներից ոչ մեկը չունի՝ ո՛չ օրինավորությունը, ո՛չ բարությունը: Մաքսն իմ մեջ զզվանք է հարուցում, ինչը և ասացի նրան:

- Ալիսիա՛, ոչինչ չպատմես Գաբրիելին,- ասաց: - Թե չէ կզղջաս: Զգուշացնում եմ:

Ոչ մի բառ չասացի: Լեզվիս նրա արյան համն էի զգում, ուստի բացեցի ծորակն ու բերանս ողողեցի, մինչև համն անցավ: Հետո միայն այգի դուրս եկա:

Ճաշելիս անընդհատ նրա անպատկառ հայացքն էի զգում: Երբ բարձրացնում էի գլուխս, ու մեր աչքերը հանդիպում էին, Մաքսն անմիջապես փախցնում էր հայացքը: Ոչ մի պատառ չկերա: Ուտելիքի մասին մտքից սիրտս խառնում էր: Բերանիս մեջ առաջվա պես նրա արյան համն էր:

Չգիտեմ՝ ինչ անեմ: Գաբրիելին խաբել չեմ ուզում: Տեղի ունեցածը թաքցնել՝ նույնպես: Բայց եթե ամեն ինչ պատմեմ Գաբրիելին, Մաքսից ընդմիշտ երես կթեքի: Երբ հասկանա, թե եղբոր հարցում որքան է սխալվել, Գաբրիելը կկործանվի: Չէ՞ որ վստահում է Մաքսին: Աստվածացնում է նրան: Եվ իզուր:

Չեմ կարծում, թե Մաքսը սիրահարված է ինձ: Նա ատում է Գաբրիելին, այդքան բան: Կարծում եմ՝ նաև ահավոր նախանձում է, դրա համար էլ ուզում է խլել այն ամենը, ինչ Գաբրիելինն է, այդ թվում՝ և ինձ: Բայց երեկ կարողացա ինձ պաշտպանել, ու հիմա Մաքսն ինձ էլ չի անհանգստացնի: Համենայն դեպս, հուսով եմ: Թեկուզ՝ որոշ ժամանակ:

Դրա համար էլ որոշեցի առայժմ Գաբրիելին ոչինչ չպատմել:

Իհարկե, նա հրաշալի կարդում է մտքերս: Կամ էլ ես լավ դերասան չեմ: Երեկ երեկոյան, երբ պառկում էինք քնելու, Գաբրիելն ասաց, որ ամբողջ երեկոյի ընթացքում մի տեսակ տարօրինակ էի:

- Ուղղակի հոգնել էի:

- Չէ, հոգնածությունը կապ չունի: Անընդհատ լուռ էիր: Ինչ է, դժվա՞ր էր գոնե մի քիչ ջանք թափել: Ես ու Մաքսը հազվադեպ ենք հանդիպում: Չեմ հասկանում, թե ինչու լավ չես վերաբերվում նրան:

- Լավ եմ վերաբերվում: Մաքսը կապ չունի: Մտքերի մեջ էի, անընդհատ աշխատանքի մասին էի մտածում: Չեմ հասցնում ցուցահանդեսի բացմանը, միայն դրա մասին եմ մտածում,- հնարավորինս վստահ ասացի ես:

Գաբրիելը թերահավատորեն նայեց ինձ, բայց չառարկեց: Զգում էի, որ հաջորդ անգամ, երբ Մաքսը նորից այցի գար

մեզ, նույն խնդրի առաջ եմ կանգնելու, թեև ինչ-որ բան հուշում էր, որ դա շուտ չի լինի:

Հիմա, երբ գրեցի պատահածի մասին, սրտիցս կարծես քար ընկավ: Պատմությունը թղթին հանձնեցի ու ավելի հանգիստ եմ: Ծայրահեղ դեպքում օրագիրը կկարողանամ որպես ապացույց օգտագործել:

Եթե երբևէ անհրաժեշտություն ծագի:

Հուլիսի 26

Այսօր ծննդյանս օրն է: 33 տարեկան դարձա:

Անսովոր զգացումներ են. երբեք չէի մտածի, որ մի օր 33 տարեկան կլինեմ. այս տարիքը երևակայության սահմաններից դուրս էր: Մորիցս երկար ապրեցի: Շատ տարօրինակ զգացում է. հիմա ես նրանից մեծ եմ: Նա դարձավ 32 տարեկան ու վերջ: Ես նրանից երկար եմ ապրել, ու սա դեռ վերջը չէ: Ես ավելի ու ավելի մեծ եմ լինելու: Իսկ նա՝ երբեք:

Գաբրիելն առավոտյան այնքան քնքուշ էր. արթնացրեց համբույրով ու 33 ալ վարդ նվիրեց: Ինչ գեղեցիկ էին: Փուշը պատահմամբ ծակել էր Գաբրիելի մատը: Արյան ալ կարմիր կաթիլ էր հայտնվել: Ու այն կատարյալ էր:

Նախաճաշին ինձ համար զբոսայգում պիկնիկ կազմակերպեց: Արևը նոր էր հորիզոնին հասել, և շոգը դեռ տանելի էր: Լճակից զովություն էր փչում, ամենուր հնձած խոտի բույր էր: Մենք պառկել էինք ափին, լացող ուռենու տակ, Մեքսիկայից բերած կապույտ ծածկոցի վրա: Ուռենու ճյուղերը մեր գլխավերևում կազմել էին ամպհովանի, տերևների արանքից երկ-

չոտ թափանցում էին արևի ճառագայթները: Մենք շամպայն էինք խմում, փոքրիկ քաղցր լոլիկներ ուտում՝ ապխտած սաղմոնով ու հացի բարակ շերտերով: Ինչ-որ տեղ, մտքիս խորքերում, աղոտ զգացողություն էր, ասես այդ ամենն արդեն եղել էր. դեժավյուի զգացողություն էր: Չէի կարողանում հասկանալ, թե որտեղից էր հայտնվել: Կամ մանկական հեքիաթների ու զրույցների հիշողությունն էր՝ կախարդական ծառերով, որոնք դեպի այլ աշխարհներ էին մուտք ծառայում: Կամ էլ ավելի հողեղեն ինչ-որ բան էր: Ու հանկարծ հիշողությունս արթնացավ:

Տեսա ինձ. դեռ շատ փոքրիկ էի, նստում էի Քեմբրիջի մեր այգու լացող ուռենու ճյուղերի տակ: Ժամերով թաքնվում էի այնտեղ: Գուցե և երջանիկ երեխա չէի, բայց այն ժամանակ մտնելով ուռենու տակ նույն հանգստությունն էի զգում, ինչ հիմա, երբ պառկած եմ Գաբրիելի հետ: Եվ հիմա կարծես անցյալն ու ներկան միասին գոյություն ունենային, մեկ կատարյալ ակնթարթի մեջ: Ուզում էի, որ այդ ակնթարթը հավերժ տևի: Գաբրիելը ննջում էր: Ճեպանկարեցի նրան՝ փորձելով արևի բծերի խաղը նրա դեմքին հաղորդել: Այս անգամ աչքերն ավելի լավ ստացվեցին: Ավելի հեշտ էր, քանի որ փակ էին, բայց կարողացել էի ճիշտ պատկերել ձևը: Գաբրիելը հիշեցնում էր փոքրիկ տղայի, որը կծկված քնել էր, թեթև շնչում էր, իսկ շրթունքներին հացի փշուրներ էին կպել:

Պիկնիկից հետո տուն վերադարձանք ու սիրեցինք իրար: Գաբրիելը գրկեց ինձ ու մի ապշեցնող արտահայտություն արեց.

– Ալիսիա՛, սիրելի՛ս, լսի՛ր: Ուզում եմ քեզ հետ մի բան քննարկել:

Խոսակցության այսպիսի սկիզբն անմիջապես անհանգստացրեց ինձ: Պատրաստվեցի վատագույնին:

– Շարունակի՛ր:

- Ուզում եմ՝ երեխա ունենանք:

Մի պահ պապանձվեցի: Այնքան էի զարմացել, որ չգիտեի, թե ինչ ասեմ:

- Բայց... դու երեխաներ չէիր ուզում: Ասում էիր...

- Մոռացի՛ր: Միտքս փոխել եմ: Մեզ փոքրիկ է պետք: Դե՞: Ի՞նչ կասես:

Գաբրիելը նայեց ինձ. աչքերում թաքուն հույս, ակնկալիք կային: Նա պատասխանի էր սպասում: Արցունքները հորդեցին աչքերիցս:

- Այո՛,- ասացի: - Այո, այո, այո...

Գրկեցինք իրար՝ միաժամանակ ծիծաղելով ու լացելով:

Հիմա Գաբրիելը քնած է: Անկողնուց անձայն վեր եմ կացել և այդ ամենը գրառում եմ օրագրում. ուզում եմ մինչև կյանքիս վերջն այս օրը հիշել: Յուրաքանչյուր վայրկյանը:

Ինձ համակել են ուրախությունն ու հույսը:

14

Մտքումս անընդհատ պտտվում էին Մաքս Բերենսոնի խոսքերն այն մասին, որ հոր մահից հետո Ալիսիան ինքնասպանության փորձ էր արել: Նրա թղթերում այդ մասին ոչ մի խոսք չկար. հետաքրքիր է՝ ինչո՞ւ:

Հաջորդ օրը զանգեցի Մաքսին. նա պատրաստվում էր գրասենյակից դուրս գալ:

- Պարզապես ուզում եմ ևս երկու հարց տալ, եթե դեմ չեք,- ասացի:

- Տառացիորեն հենց հիմա գրասենյակից դուրս եմ գալիս:

- Երկար չի տևի:

Մաքսը հոգոց հանեց, իջեցրեց լսափողն ու ցածր ձայնով Տանյային ինչ-որ բան ասաց, ինչից ոչինչ չհասկացա:

- Ունեք ուղիղ հինգ րոպե,- ասաց: - Եվ ոչ մի վայրկյան ավելի:

- Անչափ շնորհակալ եմ: Դուք ասացիք, որ Ալիսիան ինքնասպանության փորձ է արել: Ինձ հետաքրքրում է՝ նա ո՞ր հիվանդանոցում է բուժվել:

- Նրան հիվանդանոց չեն տարել:

- Չե՞ն տարել:

- Ոչ: Ալիսիան տանն էր վերականգնվում: Եղբայրս էր նրան խնամում:

- Բայց հավանաբար նրան բժիշկ է զննել: Ասացիք՝ դեղահաբերի մեծ չափաբաժին է ընդունել:

- Այո: Իհարկե, Գաբրիելը բժիշկ էր կանչել: Եվ նա... դե, բժիշկը, համաձայնեց լռել:

- Իսկ ո՞վ էր բժիշկը: Անունը հիշո՞ւմ եք:

Մի պահ լռություն տիրեց: Մաքսը մտածում էր:

- Կներեք, չեմ կարող ասել... Չեմ հիշում:

- Ամենայն հավանականությամբ, սովորական թերապևտ էր:

- Ոչ, հաստատ ոչ: Իմ ու եղբորս թերապևտը նույնն է: Հիշում եմ՝ Գաբրիելը պնդեց, որ մեր բժշկին այդ մասին ոչինչ չասեմ:

- Հաստա՞տ չեք հիշում անունը:

- Կներեք: Ավարտեցի՞ք: Պետք է գնամ:

- Մի վերջին հարց, խնդրում եմ... Ուզում եմ Գաբրիելի կտակի մանրամասները ճշտել:

Մաքսը թեթև շունչ քաշեց, ու ձայնը հանկարծ լարվեց:

- Կտա՞կը: Չեմ հասկանում՝ կտակն ի՞նչ կապ ունի:

- Հիմնական ժառանգորդն Ալիսիա՞ն էր:

- Անկեղծ ասած, տարօրինակ հարց եք տալիս:

- Ուղղակի փորձում եմ հասկանալ...

- Ի՞նչը հասկանալ,- Մաքսն ընդհատեց խոսքս. ձայնը նյարդայնացած էր: - Գլխավոր ժառանգորդը ես էի: Հոր մահից հետո Ալիսիան բավական մեծ գումար էր ստացել, ուստի Գաբրիելը որոշեց, որ նա առանց այդ էլ ապահովված է, հետևաբար ունեցվածքի մեծ մասն ինձ էր թողել: Իհարկե, նա չէր էլ պատկերացնում, որ մահից հետո դրա արժեքը մի քանի անգամ կավելանա: Ավարտեցի՞ք:

- Իսկ Ալիսիայի կտա՞կը: Եթե Ալիսիան մահանա, ո՞վ է նրա ունեցվածքը ժառանգելու:

- Հույժ գաղտնի տեղեկատվություն է,- շեշտեց Մաքսը,- չեմ կարող ասել: Հուսով եմ՝ սա մեր վերջին խոսակցությունն է:

Մաքսն անջատեց հեռախոսը, բայց ինչ-որ բան ինձ հուշում էր, որ մեր զրույցը դեռ չէր ավարտվել:

Երկար սպասելու կարիք չեղավ:

***

Ճաշից հետո Դիոմիդիսն ինձ աշխատասենյակ կանչեց: Երբ ներս մտա, նայեց ինձ, բայց չժպտաց:

- Ձեզ ի՞նչ է պատահել:

- Ի՞նձ:

- Մի՛ ձևացրեք, թե չեք հասկանում: Գիտե՞ք՝ առավոտյան ով էր ինձ զանգել: Մաքս Բերենսոնը: Ասում է՝ երկու անգամ զանգել եք իրեն ու անձնական բնույթի բազմաթիվ հարցեր տվել:

- Ալիսիայի մասին մի քանի հարց եմ տվել: Նա կարծես թե դեմ չէր:

- Իսկ հիմա դեմ է: Ձեր գործողությունները որակում է որպես հետապնդում:

- Ախր պարզից էլ պարզ է...

- Մեզ միայն դա էր պակաս. փաստաբանն ուզում է մեր դեմ դատական հայց ներկայացնել: Այսուհետև բոլոր գործողություններն անում եք բաժանմունքում և բոլոր քայլերը համաձայնեցնում ինձ հետ: Պա՞րզ է:

Ներսս զայրույթից եռում էր, բայց գլխով արեցի: Գլուխս կախեցի մեղավոր դեռահասի պես: Դիոմիդիսը ճիշտ գնահատեց արձագանքս ու հայրաբար թփթփացրեց ուսիս:

- Թեո, ընդունեք խորհուրդս: Դուք սխալ ճանապարհ եք ընտրել: Հարցեր եք տալիս, հուշումներ փնտրում, ասես ինչ-որ դետեկտիվ պատմության մեջ լինեք,- ծիծաղեց ու օրորեց գլուխը: - Այդպես ոչ մի տեղ չեք հասնի:

- Իսկ ո՞ւր պիտի հասնեմ:

- Ճշմարտությանը: Հիշո՞ւմ եք Բիոնին. «Չկա հիշողություն, չկա ցանկություն»[1]: Ոչ մի օրակարգ. հոգեթերապևտի գլխավոր խնդիրներն են հիվանդի կողքին լինելը և այդ ընթացքում ուշադիր հետևելը, թե ինչ է զգում: Ահա թե ինչ է պետք: Մնացածն ինքն իր հունով կգնա:

- Գիտեմ,- ասացի: - Ճիշտ եք:

- Դե, իհարկե, ճիշտ եմ: Էլ չլսեմ, որ Ալիսիայի հարազատներին նորից եք անհանգստացրել: Պա՞րզ է:

- Խոստանում եմ:

---

[1] «Չկա հիշողություն, չկա ցանկություն» - Ուիլֆրեդ Բիոնի առանցքային կանխադրույթներից է, որով հոգեվերլուծաբանը պարտավոր է առաջնորդվել սեանսի ընթացքում: «Մոռացեք այն ամենը, ինչ գիտեք և ուզում եք»: Հիշողություններն ու ցանկություններն աղճատում են իրականության ընկալումը: Հոգեվերլուծաբանը պարտավոր է վերացարկվել սեփական ես-ից, լինել առավելագույնս օբյեկտիվ դիտող, տվյալ պահին, սեանսի ընթացքում տեսածն ու լսածը չհամեմատել ոչ անցյալի, այն է՝ հիշողության, ոչ ապագայի, այն է՝ ցանկության հետ:

15

Նույն օրը, կեսօրին, Քեմբրիջ գնացի. այցելելու էի Ալիսիայի հորաքրոջ տղային՝ Փոլ Ռոուզին:

Գնացքը կայարանին մոտեցավ, բնապատկերը հարթվեց, և երևացին անծայրածիր դաշտերը, որոնք սառցակապույտ լույսով էին ողողված: Ինչ լավ է, որ Լոնդոնից փախա. երկինքն այստեղ այդքան ճնշող չէր, ու ավելի հեշտ էի շնչում:

Ուսանողների ու զբոսաշրջիկների մի փոքր խմբի հետ գնացքից դուրս եկա ու հեռախոսիս քարտեզի օգնությամբ առաջ շարժվեցի: Փողոցները լուռ էին. ոտնաձայներս խուլ արձագանքում էին: Հանկարծ ճանապարհն ավարտվեց: Առջևում անմշակ տարածություն էր, ցեխ ու խոտ, իսկ քիչ ներքևում՝ քչքչան գետ:

Գետի ափին միայնակ մի տնակ կար: Անպատեհ ու համառ՝ կարմիր աղյուսից այդ շինությունը ցցվել էր համատարած ցեխի մեջ: Այլանդակ տուն էր, վիկտորյանական ոճի հրեշ: Բաղեղներն աջ ու ձախից գրոհել էին տան պատերը, իսկ լքված այգում իշխում էին բույսերը, հատկապես մոլախոտը: Մի պահ թվաց՝ բնությունը դանդաղ ներխուժում է, վերադարձնում այն տարածքը, որը ժամանակին մարդն իրենից խլել է: Ալիսիան

այս տանն էր ծնվել, այստեղ էր անցկացրել կյանքի առաջին 18 տարիները: Այս պատերից ներս ձևավորվել էր նրա անհատականությունը, այստեղ էին թաղված հասուն կյանքում նրա հետ պատահած դեպքերի, դրանց արդյունքում կայացրած բոլոր որոշումների հետևանքները: Երբեմն դժվար է հասկանալ, թե ինչու է պետք ներկա բոլոր հարցերի պատասխաններն անցյալում փնտրել: Գուցե այս պարզ օրինակն օգտակար լինի. սեռական բռնության հակված հիվանդների բուժման մի առաջատար մասնագետ-հոգեբույժ ինձ մի անգամ ասաց, որ մանկապիղծների հետ աշխատանքի 30 տարիների ընթացքում հայտնաբերել է, որ բոլոր բուժառուները մանուկ հասակում նույնպես բռնության են ենթարկվել: Սա չի նշանակում, որ բռնության ենթարկված ցանկացած երեխա անխուսափելիորեն բռնարար կդառնա, բայց եթե երեխայի հանդեպ սեռական ոտնձգություն չի կատարվել, հասուն տարիքում բռնարար չի դառնա: Մարդիկ չար չեն ծնվում: Ինչպես Ուինիքոթն է ասում, երեխան մորը կարող է ատել միայն այն դեպքում, եթե մայրն առաջինն ատի երեխային: Նորածին երեխան անմեղ է, մաքուր էջ և միայն հիմնական կարիքներ ունի՝ ուտել, աղիները դատարկել, սիրել և սիրվել: Բայց ինչ-որ բան կարող է սխալ գնալ՝ կախված հանգամանքներից և այն ընտանիքից, որտեղ մեծանում է: Տանջանքների ու բռնության ենթարկված երեխան երբեք ի զորու չէ իրական կյանքում վրեժ լուծել, որովհետև թույլ է ու անպաշտպան, բայց կարող է և, ըստ ամենայնի, այդպես էլ կանի, երևակայության մեջ վրեժի մասին ֆանտազիաները տաքուկ տեղավորել: Մոլեգնությունը, ինչպես և վախը, երբեք առանց պատճառի չեն ծնվում: Ալիսիայի կյանքում ինչ-որ բան է եղել,

հնարավոր է՝ վաղ մանկության տարիներին, ինչից էլ նրա մեջ գլուխ է բարձրացրել մարդասպանության հակումը, որը դրսևորվել է ժամանակ առ ժամանակ հետագա տարիներին: Ինչն էլ որ նրան մղած լինի այդ քայլին, այս աշխարհում ամենոք ի վիճակի չէ վերցնել հրացանն ու ուղիղ նշանառությամբ կրակել Գաբրիելի դեմքին: Ըստ էության, մարդկանց մեծ մասն այդքան համարձակություն չէր ունենա: Ալիսիայի այդ քայլը վկայում է նրա ներքին աշխարհի լուրջ խանգարման մասին: Եվ հենց դա է պատճառը, որ ձգտում էի հասկանալ, թե ինչպես է ապրել Ալիսիան այս տանը. փնտրում էի, թե ինչը կարող էր խեղել նրան, դարձնել այնպիսին, ինչպիսին կա հիմա, այսինքն՝ սպանության ընդունակ մարդ:

Դժվարությամբ շարժվեցի փարթամ այգու, մոլախոտի ու օրորվող վայրի ծաղիկների միջով. ճանապարհս պատի երկայնքով էր անցնում: Անկյունում խոշոր, լացող ուռենի տեսա. գեղեցիկ ծառ էր, փառահեղ, երկար, գետնին հակված մերկ ճյուղերով: Պատկերացրի, թե փոքրիկ Ալիսիան ինչպես է ծառի մոտ խաղում ու ճյուղերի տակ թաքնվում գաղտնի, կախարդական աշխարհում: Շուրթերիս ժպիտ հայտնվեց:

Հանկարծ թեթևության զգացումն անհետացավ. զգացի ինչ-որ մեկի հայացքն ու գլուխս բարձրացնելով երկրորդ հարկի պատուհանից տեսա մեկի դեմքը: Այլանդակ պառավ էր, դեմքն ապակուն սեղմած՝ ուղիղ աչքերիս էր նայում: Մարմնովս երկյուղի տարօրինակ, անբացատրելի դող անցավ:

Ցավոք, իմ թիկունքում ոտնաձայներ լսեցի, երբ արդեն շատ ուշ էր: Ծոծրակիս ինչ-որ ծանր բան ընկավ, ու զարհուրելի ցավը տարածվեց մարմնովս մեկ:

Ամեն ինչ կորավ խավարի մեջ:

16

Ուշքի եկա պինդ, սառը գետնին մեջքի վրա: Առաջին զգացողությունս ցավն էր: Գլուխս ուժեղ տրոփում էր, ասես գանգս դաշույնով երկու կես էին արել: Ուղղվեցի ու զգուշորեն ծոծրակս շոշափեցի:

- Արյուն չկա,- լսվեց ինչ-որ մեկի ձայնը,- բայց վաղը հաստատ կապտուկ կլինի: Էլ չեմ ասում ահավոր գլխացավի մասին:

Աչքերս բարձրացրի ու առաջին անգամ Փոլ Ռոուզին տեսա: Բեյսբոլի թին ձեռքին կանգնել էր գլխավերևումս: Համարյա իմ տարիքին էր, բայց ավելի բարձրահասակ ու թիկնեղ: Դեմքը պատանեկան էր, գլխին՝ կարմիր մազերի դեզ՝ ճիշտ Ալիսիայի մազերի գույնի: Վրայից վիսկիի հոտ էր փչում:

Փորձեցի նստել, բայց չստացվեց:

- Լավ կլինի՝ չշտապեք: Մի քիչ էլ պառկեք:

- Վախենամ՝ ուղեղի ցնցում է:

- Հնարավոր է:

- Բայց ինչի՞ համար, գրողը տանի:

- Իսկ ի՞նչ էիք սպասում, բարեկամս: Մտածեցի՝ գող եք:

- Շատ իզուր:

- Դե, հիմա արդեն գիտեմ: Փորփրեցի Ձեր դրամապանակը: Փաստորեն հոգեթերապևտ եք:

Տաբատի հետևի գրպանից հանեց դրամապանակս ու ինձ նետեց: Շրխկոցով ընկավ կրծքիս: Վերցրի ու մի կողմ դրեցի:

- Վկայականն էլ տեսա,- ասաց: - Հիվանդանոցո՞ւմ եք աշխատում, Գրոուվու՞մ:

Գլխով արեցի, ու գլուխս նորից ցավից տրոփեց:

- Այո:

- Ճանաչեցի՞ք ինձ:

- Ալիսիայի հորաքրոջ որդի՞ն եք:

- Փոլ Ռոուզ,- մեկնեց ձեռքը: - Դե, եկեք օգնեմ՝ բարձրանաք:

Փոլը զարմանալի թեթևությամբ բարձրացրեց ինձ: Ուժեղ տղա էր: Ոտքի վրա չէի կարողանում կանգնել:

- Քիչ էր մնում՝ ինձ սպանեիք,- քթիս տակ փնթփնթացի:

Փոլը թոթվեց ուսերը:

- Իսկ եթե զինվա՞ծ լինեիք: Ի դեպ, անձնական տարածք էիք մուտք գործել: Ի՞նչ էիք սպասում: Ի միջի այլոց, ինչի՞ համար եք եկել:

- Ուզում էի Ձեզ հետ հանդիպել,- ցավից ծամածռեցի դեմքս,- բայց երանի չգայի:

- Ներս եկեք, նստեք:

Ցավն այնքան ուժգին էր, որ հակաճառելու ուժ չունեի, նրա հետևից գնացի: Ամեն քայլի հետ գլխիս մեջ տրոփյունն ուժեղանում էր: Մենք հետնադռնով ներս մտանք:

Ներսից տունը նույնքան խարխուլ էր, որքան դրսից: Խոհանոցի պատերը ծածկված էին նարնջագույն երկրաչափական պատկերով պաստառներով: Դրանք հավանաբար նորաձև

են եղել մոտ 40 տարի առաջ: Պաստառները տեղ-տեղ պատերից պոկվել էին, կախվել, ոլորվել ու սևացել, ասես այրված լինեին: Միջատների չորացած մումիաներն առաստաղի անկյունների հին սարդոստայններից էին կախվել: Հատակի փոշու շերտն այնքան հաստ էր, որ կարծես կեղտոտ գորգ լիներ: Սենյակը ներծծված էր կատվի մեզի հոտով, որից սիրտս խառնում էր: Խոհանոցում ամենաքիչը հինգ կատու կարքնած էին աթոռներին ու բոլոր մակերեսներին: Հատակին բաց ցելոֆանե տոպրակներ էին, որոնք բերնեբերան լցված էին կատվի կերի գարշահոտ տարաներով:

- Նստե՛ք,- ասաց: - Հիմա թեյ կիյուրասիրեմ:

Փոլը բեյսբոլի թին պատին, դռան մոտ, հենեց: Աչքս դրանից չէի կտրում: Փոլի կողքին մի տեսակ վտանգ էի զգում:

- Ահա, խմե՛ք,- ասաց ու թեյի ճաքած գավաթն ինձ մեկնեց:

- Ցավազրկող ունե՞ք:

- Ինչ-որ տեղ պիտի որ ասպիրին լինի: Հիմա նայեմ: Ի դեպ,- վիսկիի շիշը բարձրացնելով՝ ասաց,- սա էլ կօգնի:

Գավաթիս մեջ վիսկի լցրեց: Մի քիչ խմեցի: Տաք էր, քաղցր ու թունդ: Փոլն անշտապ խմում էր թեյը՝ հայացքն ինձնից չկտրելով. անմիջապես հիշեցի Ալիսիային, նրա ծակող հայացքը:

- Ինչպե՞ս է նա,- վերջապես հարցրեց: Չհասցրեցի պատասխանել, ու շարունակեց: - Վաղուց չեմ հանդիպել: Այստեղից դուրս պրծնելը հեշտ չէ... Մայրս էլ վատառողջ է... Չեմ ուզում նրան մենակ թողնել:

- Հասկանում եմ: Վերջին անգամ Ալիսիային ե՞րբ եք տեսել:

- Միլիոն տարի առաջ: Վաղուց չենք շփվել: Կապ չունենք: Ես նրանց հարսանիքին եմ եղել, հետո մի քանի անգամ էլ հանդիպել ենք, բայց... Կարծում եմ՝ Գաբրիելն արգելում էր

նրան: Համենայն դեպս, ամուսնությունից հետո Ալիսիան այլևս չէր զանգում: Այցերը նույնպես դադարեցրեց: Անկեղծ ասած, մայրս շատ էր նեղվում:

Չէի խոսում: Գլուխս այնպես էր դմփդմփում, որ հազիվ էի կարողանում մտածել: Զգում էի, որ հետևում է ինձ:

- Ինչո՞ւ էիք ուզում ինձ հետ հանդիպել,- հարցրեց:

- Ուզում էի մի քանի հարց տալ... Ալիսիայի մասին: Նրա... մանկության մասին:

Փոլը գլխով արեց ու գավաթի մեջ էլի մի քիչ վիսկի լցրեց: Թվում էր՝ մի քիչ թուլացավ. վիսկին ինձ վրա էլ ազդեց, ցավը մեղմացավ, գլուխս սկսեց ավելի լավ աշխատել: Կարևորը թեմայից չշեղվելն է: Միայն փաստեր: Իսկ հետո այստեղից գրողի ծոցը կփախչեմ:

- Միասի՞ն եք մեծացել:

Փոլը գլխով արեց:

- Մայրս ու ես հորս մահից հետո այստեղ տեղափոխվեցինք: Ութ-ինը տարեկան էի: Մտածում էի՝ ժամանակավոր է, բայց հետո Ալիսիայի մայրն ավտովթարից զոհվեց... Դե, այդպես էլ մայրս մնաց այստեղ, որ խնամի Ալիսիային ու քեռի Վերնոնին:

- Վերնոն Ռոուզի՞ն: Ալիսիայի հո՞րը:

- Հա:

- Նա էլ մի քանի տարի հետո այստեղ մահացավ, չէ՞:

- Հա, մի քանի տարի ապրեց,- Փոլը խոժոռվեց: - Ինքնասպան եղավ: Ձեղնահարկում կախվեց: Մարմինը ես գտա:

- Ինչ ահավոր է:

- Հա, ծանր բան է: Ալիսիան ուշքի չէր գալիս: Երևի հենց այդ օրն էլ վերջին անգամ նրան տեսա: Քեռի Վերնոնի թաղմանը: Ահավոր տեսք ուներ,- Փոլը կանգնեց: - Էլի՞ վիսկի:

Փորձեցի հրաժարվել, բայց նա պատմությունը շարունակելով էլի լցրեց:

- Ի դեպ, չեմ հավատում, որ նա է սպանել Գաբրիելին. ուղեղիս մեջ չի տեղավորվում:

- Ինչո՞ւ:

- Ալիսիան երբեք այդպիսին չի եղել: Նրա մեջ երբեք այդքան չարություն չի եղել:

«Իսկ հիմա կա»,- մտածեցի, բայց ոչինչ չասացի: Փոլը մի կում էլ խմեց:

- Այդպես էլ չխոսե՞ց:

- Դեռ ոչ:

- Շատ տարօրինակ է: Բան չեմ հասկանում: Ինձ թվում էր, թե նա...

Մեր զրույցն ընդհատվեց. ուղիղ մեր գլխավերևում թրմփոց լսվեց, ու ինչ-որ ծանր բան ընկավ: Դրան հետևեց կնոջ խլացած ձայնը. նա ինչ-որ անհասկանալի բառեր էր ասում:

Փոլն անմիջապես տեղից վեր թռավ:

- Մի վայրկյան,- ասաց ու դուրս եկավ: Շտապեց դեպի սանդուղքն ու բարձր գոռաց.

- Մա՛մ, ամեն ինչ կարգի՞ն է:

Վերևից անհասկանալի մռթմռթոց լսվեց:

- Ի՞նչ: Լավ, լավ, հիմա: Մի րոպե,- ձայնն անհանգիստ էր: Խոժոռ իմ կողմ նայեց: Գլխով արեց: - Մայրս ուզում է, որ իր մոտ բարձրանաք:

17

Ոտքերիս վրա արդեն ավելի ամուր էի կանգնում, բայց գլուխս դեռ պտտվում էր: Քայլեցի Փոլի հետևից, որը փոշոտ սանդուղքով աղմուկով բարձրանում էր:

Վերևում՝ բազրիքի մոտ, սպասում էր Լիդիա Ռոուզը: Հիշեցի. պատուհանից հենց նրա սպառնալից դեմքն էի տեսել: Կնոջ երկար, սպիտակ մազերը սարդոստայնի պես ուսերից կախվել էին: Սարսափելի գեր էր, այտուցված պարանոցով, հաստ նախաբազուկներով, ծառաբուն հիշեցնող ուռած ոտքերով: Ամբողջ մարմնով ձեռնափայտին էր հենվել, որը մարմնի ծանրությունից ճկվել էր, ու, թվում էր, ուր որ է տեղի կտա:

- Սա ո՞վ է:

Կռվարար տոնով հարցը Փոլին ուղղեց, բայց սևեռուն հայացքով ինձ էր նայում: Աչքերն ինձնից չէր կտրում: Ի՞նչ նման էր Ալիսիայի լարված, ոչնչացնող հայացքին:

- Մա՛մ, միայն թե մի՛ անհանգստացիր,- հանդարտ պատասխանեց Փոլը: - Ալիսիայի հոգեբույժն է, այդքան բան: Հիվանդանոցից է եկել, ուզում է ինձ հետ խոսել:

- Քեզ հե՞տ: Ի՞նչ է ուզում քեզնից: Ի՞նչ ես արել:

- Ալիսիայի մասին է ուզում խոսել:

- Ուրեմն լրագրող է, տխմա՛ր,- ճչաց կինը: - Հենց հիմա վռնդի՛ր:

- Լրագրող չէ: Փաստաթղթերը տեսել եմ, հասկանո՞ւմ ես: Հերիք է, մայրի՛կ, խնդրում եմ: Արի օգնեմ, գնա, պառկիր:

Ծեր կինը փնթփնթալով թույլ տվեց, որ իրեն ննջասենյակ ուղեկցեն: Փոլը գլխով նշան արեց, որ հետևեմ իրենց:

Լիդիան թրմփոցով ընկավ անկողնու վրա: Մահճակալը ճռռաց նրա ծանրության տակ: Փոլն ուղղեց բարձերը: Ոտքերի տակ կծկված՝ մի հնադարյան կատու էր քնել: Ավելի այլանդակ կատու չէի տեսել. գլուխն ամբողջությամբ մարտական սպիներով էր ծածկված, տեղ-տեղ ճաղատ էր, մի ականջը՝ պոկած: Քնի մեջ մռնչում էր: Շուրջս նայեցի: Ամենուր թափված էին անպետք իրեր՝ հին ամսագրերի ու դեղնած թերթերի տրցակներ, հին հագուստի կույտեր: Պատի տակ թթվածնի բալոն էր, մահճակալի մոտ, սեղանիկին՝ տորթի հին, թիթեղյա տուփ՝ բերնեբերան լցված դեղերի փաթեթներով:

Անընդհատ զգում էի Լիդիայի թշնամական հայացքը: Աչքերը հաստատում էին ախտորոշումը. ծեր կինն իսկապես հոգեկան հիվանդ էր:

- Ուզածն ի՞նչ է,- հարցրեց: Տենդագին աչքերը վերից վար ինձ էին չափում: - Ո՞վ է:

- Արդեն ասացի, մա՛մ: Ալիսիայի մասին տեղեկություններ է հավաքում, որ ավելի արդյունավետ բուժում նշանակի: Ալիսիայի հոգեթերապևտն է:

Լիդիան գլուխը շրջեց, կոկորդը մաքրեց ու թքեց հատակին, ուղիղ ոտքերիս տակ, հասկացնելով, թե հոգեթերապևտների մասին ինչ կարծիք ունի:

Փոլը հառաչեց:

- Մա՛մ, խնդրում եմ...

- Զայնդ կտրի՛ր,- Լիդիան թշնամաբար ինձ նայեց: - Իզուր են Ալիսիային հիվանդանոցում փակել: Նա արժանի չէ:

- Իսկապե՞ս,- ասացի: - Իսկ նրան ո՞ւր տանենք:

- Իհարկե, բանտ: Ուրիշ էլ ո՞ւր,- Լիդիան արհամարհական ինձ նայեց: - Ուզում ես Ալիսիայի մասին իմանալ, հա՞: Հիմա կպատմե՞մ: Փոքրիկ տականք է, կեղտի մեկը: Փոքր տարիքում էլ նույնն էր:

Լսեցի, ու գլուխս նորից դմփդմփաց: Իսկ Լիդիան շարունակեց՝ աստիճանաբար ավելի տաքանալով:

- Խե՞ղճ եղբայրս՝ Վերնոնը, այդպես էլ Եվայի մահվան հետ չհաշտվեց: Ես էի խնամում նրան: Ալիսիային էլ: Ու ի՞նչ ես կարծում, շնորհակալ եղա՞վ, թեկուզ մի կաթիլ երախտագիտություն ցո՞ւյց տվեց:

Պատասխանի կարիք չկար: Լիդիան դրան չէր էլ սպասում:

- Գիտե՞ս՝ ստորն ինչպես փոխհատուցեց ինձ: Իմ բարության դիմաց գիտե՞ս՝ ինչ արեց:

- Մա՛մ, խնդրում եմ...

- Բերանդ փակի՛ր, Փո՛լ,- Լիդիան նորից իմ կողմ շրջվեց: Ապշած էի. ինչքա՞ն զայրույթ կար ձայնի մեջ: - Տականքն ինձ նկարեց: Դիմանկարս խզբզեց՝ առանց ինձ մի բառ ասելու, առանց իմ թույլտվության: Գնացի նրա ցուցահանդեսին, մեկ էլ ի՞նչ տեսնեմ: Նկարը պատին է՝ նողկալի, զզվելի, անպարկեշտ ծաղրանկար:

Լիդիան զայրույթից դողում էր, իսկ Փոլն անհանգիստ էր: Մռայլ ինձ էր նայում:

- Կարծում եմ՝ բավական է: Լավ կլինի՝ տուն գնաք, բարեկա՛մս: Մորս անհանգստանալ չի կարելի:

Լուռ գլխով արեցի: Լիդիա Ռոուզը, անկասկած, վատ վիճակում էր: Ես էլ ուրախ էի, որ այս տնից դուրս կպրծնեմ:

Դուրս եկա ու կայարան վերադարձա՝ ծոծրակիս հսկայական կապտուկով. գլուխս ցավից պայթում էր: Ժամանակի ինչպիսի՜ կորուստ: Ոչ մի նոր բան չիմացա, միայն թե ինձ համար հիմա պարզից էլ պարզ էր, թե Ալիսիան ինչու է հենց առաջին հնարավորության դեպքում տնից փախել: Հիշեցի, թե ինչպես ինքս էլ 18 տարեկանում հորիցս փախա: Իսկ ումի՞ց էր փախել Ալիսիան. դե, իհարկե, Լիդիա Ռոուզից:

Մտածեցի Լիդիայի դիմանկարի մասին: Ծեր կինն այն անպարկեշտ ծաղրանկար անվանեց: Դե ինչ, ուրեմն ժամանակն է Ալիսիայի պատկերասրահ այցելել և հասկանալ՝ ինչն էր նրա հորաքրոջն այդքան զայրացրել:

Քեմբրիջից վերադառնալիս մտքերով Փոլի հետ էի: Խեղճ տղա: Ստիպված է հրեշավոր կնոջ հետ մի տանիքի տակ ապրել, նրա համար ձրի աշխատուժ լինել: Ահավոր միայնակ կյանք է: Չեմ կարծում, թե շատ ընկերներ ունի: Ընկերուհի էլ չի ունենա: Ճիշտն ասած, չէի զարմանա, եթե իմանայի, որ Փոլը դեռ կույս է: Չնայած ֆիզիկական ուժին ու հասակին՝ մի տեսակ նվազ է, քայքայված:

Լիդիան անմիջապես իմ մեջ հակակրանք առաջացրեց, հավանաբար որովհետև հորս էր հիշեցնում: Հիմա ես էլ թշվառ Փոլի վիճակում կլինեի, եթե չհեռանայի, եթե մնայի Սյուրեյում, ծնողներիս տանը, խելագար բռնակալի ձեռքի տակ:

Լոնդոն վերադառնալիս ամբողջ ճանապարհին ընկճված էի: Տխուր, հոգնած, քիչ էր մնում՝ լաց լինեի: Չգիտեմ՝ իմ, թե Փոլի տխրությունն էր ինձ համակել:

18

Երբ տեղ հասա, Քեթին տանը չէր:

Համակարգիչը բացեցի, փորձեցի էլեկտրոնային փոստ մտնել, բայց չստացվեց: Էջը փակել էր:

Գուցե Քեթին էլ երբեք չկրկնի սխալը: Մի՞թե պիտի անվերջ ստուգեմ նրա փոստը, ինձ խելագարության հասցնեմ: Հրաշալի հասկանում էի, որ արդեն վերածվել եմ խանդոտ ամուսնու: Ճակատագրի հեգնանքով՝ Քեթին վերջերս «Օթելլոյում» Դեզդեմոնայի դերն էր փորձում:

Այն չարաբաստիկ գիշերը, նամակները կարդալուց հետո, դրանք պետք է ինձ ուղարկեի: Այդպես նրա դավաճանության ապացույցները ձեռքիս տակ կլինեին: Աններելի սխալ էր: Ու հիմա փորձում էի մտովի վերականգնել, թե այն երեկո ինչ եմ տեսել, և առհասարակ տեսե՞լ եմ, թե՞ ոչ: Արդյոք կարելի՞ է վստահել իմ հիշողությանը: Ի վերջո, մարիխուանայի լուրջ չափաբաժնի ազդեցության տակ էի, ու չի բացառվում, որ նամակների բովանդակությունը սխալ եմ հասկացել: Հանկարծ, որտեղից որտեղ, սկսեցի անհեթեթ տեսություններ հորինել, միայն թե Քեթիի անմեղությունն ապացուցեմ: Գուցե ընդամենը դերասանական վարժանք էր, ասենք, նա դերի մեջ էր

մտնում, «Օթելլոյին» պատրաստվում: Հիշում եմ, երբ պատրաստվում էր «Իմ բոլոր որդիները» ներկայացմանը, ուղիղ վեց շաբաթ ամերիկյան առոգանությամբ էր խոսում: Գուցե հիմա էլ նման մի բան կա: Միայն թե էլեկտրոնային նամակների հեղինակը ոչ թե Դեզդեմոնան էր, այլ Քեթին:

Ափսոս, որ այս պատմությունը երազում չեմ տեսել: Կարթնանայի ու կմոռանայի պատահածը, ինչպես վատ երազն ես մոռանում: Աչքերս կբացեի, ու երազն օդում կցնդեր: Իսկ հիմա մնացել էի անվստահության, կասկածների, ցնորամտության այս անվերջանալի մղձավանջում: Արտաքուստ մեր կյանքում ոչինչ չէր փոխվել: Առաջվա պես կիրակի օրերին զբոսանքի էինք գնում, ուրիշ զույգերի պես թափառում էինք զբոսայգում: Գուցե մեր զրույցներն ընդհատող լռությունը հիմա սովորականից երկար էր ձգվում, բայց դրանից անհարմարավետություն չէինք զգում: Ու երբ լուռ քայլում էինք, մտովի ինքս ինձ հետ տաքացած վիճում էի: Միլիոնավոր հարցեր էի տալիս ինձ: Ինչո՞ւ այդպես վարվեց: Ինչպե՞ս կարողացավ: Ինչո՞ւ էր ասում, թե սիրում է ինձ, ինչո՞ւ ամուսնացավ, ինչո՞ւ էր քնում ինձ հետ, անկողին կիսում, իսկ հետո ստում, ստում տարիներ շարունակ: Ե՞րբ է սկսվել նրանց սիրավեպը: Սիրո՞ւմ է այդ տղամարդուն: Պատրաստվո՞ւմ է ինձ լքել ու նրա մոտ գնալ:

Մինչ Քեթին ցնցուղ էր ընդունում, մի քանի անգամ ուսումնասիրեցի նրա հեռախոսը, աչքի անցկացրի տեքստային հաղորդագրությունները, բայց ոչինչ չգտա: Չնայած, եթե նույնիսկ վտանգավոր նամակներ ունենար, արդեն ջնջած կլիներ: Քեթին գուցե անուշադիր էր, բայց հաստատ հիմար չէր:

Հնարավոր է, որ երբեք ճշմարտությունը չիմանամ: Իսկ գուցե այսպես ավելի լավ է:

Մի տեսակ հույս էի փայփայում, որ երբեք չեմ պարզի, թե իրականում ինչ է եղել:

Երբ զբոսանքից հետո նստեցինք բազմոցին, Քեթին հարցական ինձ նայեց:

- Ամեն ինչ կարգին է:

- Այսինքն:

- Չգիտեմ: Մի տեսակ ես:

- Այսօր:

- Չէ, ընդհանրապես, վերջերս:

- Գործս շատ է: Երևի հոգնում եմ,- ասացի՝ փորձելով նրանից փախցնել հայացքս:

Քեթին գլխով արեց ու կարեկցանքով սեղմեց ձեռքս: Ինչ լավ դերասանուհի է: Քիչ էր մնում՝ հավատայի, որ կարևոր եմ իր համար:

- Փորձերը լավ են անցնում,- հարցրի:

- Արդեն ավելի լավ: Թոնին մի քանի հրաշալի գաղափար առաջարկեց: Հաջորդ շաբաթ սովորականից երկար ենք աշխատելու, որ ամեն ինչ հասցնենք:

- Պարզ է:

Այլևս նրա ոչ մի խոսքին չէի հավատում: Վերլուծում էի յուրաքանչյուր նախադասությունն այնպես, ինչպես հիվանդի հետ սեանսի ժամանակ: Ենթատեքստ էի փնտրում, փորձում կարդալ թաքնված հուշումների տողատակը՝ անսովոր առոգանություն, լղոզված ձևակերպումներ, բացթողումներ: Մի խոսքով, ստեր:

- Թոնին ինչ է,- հարցրի:

- Լավ,- ասաց ուսերը թոթվելով՝ ասես հասկացնելով, որ Թոնին իրեն չի հետաքրքրում:

Չհավատացի: Քեթին աստվածացնում էր Թոնիին՝ իր ղեկավարին, անվերջ խոսում էր նրա մասին. համենայն դեպս, առաջ այդպես էր, բայց վերջին ժամանակներս հազվադեպ էր նրա անունը հիշատակում: Առաջ ոգևորված պատմում էր պիեսների, դերասանական աշխատանքի ու թատրոնի մասին, աշխարհ, որն ինձ անհայտ էր: Շատ էի լսել Թոնիի մասին, բայց ընդամենը մեկ անգամ էի տեսել, այն էլ՝ կարճ ժամանակով, երբ փորձից հետո Քեթիի մոտ էի գնացել: Այն ժամանակ ինձ տարօրինակ թվաց, որ Քեթին մեզ չծանոթացրեց: Թոնին դերասանուհու հետ էր ամուսնացած: Ինձ թվում է՝ Քեթին չէր սիրում նրան: Հնարավոր է, որ Թոնիի կինը, ինչպես և ես, խանդով էր վերաբերվում նրանց հարաբերություններին: Հիշում եմ, մի անգամ առաջարկեցի չորսով գնալ ճաշելու, բայց այդ միտքը Քեթիին առանձնապես չոգևորեց: Այն ժամանակ մտածեցի, որ Քեթին փորձում է ինձ Թոնիից հեռու պահել:

Նայում էի, թե Քեթին ինչպես է բացում համակարգիչը: Երբ տեքստ էր հավաքում, էկրանն իմ տեսադաշտից հեռացնում էր: Մատները ստեղնաշարի վրա կտկտում էին: Հետաքրքիր է՝ ում էր գրում: Թոնիի՞ն:

– Ի՞նչ գործի ես,– հարցրի հորանջելով:

– Մի երկու խոսք փոխանակեմ քրոջս հետ... Սիդնեյում է:

– Լո՞ւրջ: Իմ կողմից բարևիր:

– Անպայման:

Քեթին մի քիչ էլ գրեց, հետո փակեց ու ցած դրեց համակարգիչը:

– Գնամ, լոգանք ընդունեմ:

– Լավ,– գլխով արեցի:

Զարմացած նայեց ինձ:

- Թթված տեսք ունես, սիրելի՛ս: Հաստա՞մտ լավ ես:

Ժպտացի ու գլխով արեցի: Քեթին վեր կացավ ու սենյակից դուրս եկավ: Սպասեցի, մինչև լոգարանի դուռը փակվեց, հետո լսվեց հոսող ջրի ձայնը: Սահեցի այն կողմ, որտեղ նստած էր, վերցրի համակարգիչը: Դողացող մատներով բացեցի: Հետո բացեցի բրաուզերն ու էլեկտրոնային փոստ մտա:

Ցավոք, Քեթին փոստից դուրս էր եկել:

Զզվանքով հրեցի համակարգիչը: «Ժամանակն է վերջ տալ, կանգ առնել»,- մտածեցի: Այլապես սա խելագարությամբ կվերջանա: Իսկ գուցե արդե՞ն խելագարվել եմ:

Ավելի ուշ, երբ մահճակալի ծածկոցն էի հանում, որ պառկեմ, Քեթին ատամները խոզանակելով ննջարան մտավ:

- Քիչ էր մնում՝ մոռանայի: Մյուս շաբաթ Նիկոլը Լոնդոն է վերադառնում:

- Նիկո՞լը:

- Հիշում ես, չէ՞: Նրա հրաժեշտի խնջույքին միասին ենք գնացել:

- Ախ հա՛: Բայց նա կարծեմ Նյու Յորք էր տեղափոխվել:

- Ճիշտ է: Հիմա վերադարձել է,- մի պահ լռեց: - Ուզում է, որ հինգշաբթի հանդիպենք... Հինգշաբթի երեկոյան, փորձից հետո:

Չգիտեմ, բայց ինչ-որ բան իմ մեջ կասկած առաջացրեց: Գուցե Քեթիի հայացքը. նա իմ կողմ էր նայում, բայց խուսափում էր հայացքիս հետ հանդիպումից: Զգում էի, որ ստում է, բայց ցույց չէի տալիս: Նա լռեց: Նորից լոգարան գնաց: Լսում էի, թե ինչպես է թքում ատամի մածուկն ու ողողում բերանը:

Իսկ եթե սխալվո՞ւմ եմ: Իսկ եթե Քեթին իսկապես հինգշաբթի երեկոյան պատրաստվում էր Նիկոլին հանդիպել:

Հնարավոր է:

Պարզելու միայն մի միջոց կար:

19

Այս անգամ պատկերասրահի մուտքի մոտ հերթ չկար: Ուղիղ 6 տարի առաջ, երբ «Ալկեստիսը» տեսնելու էի գնացել, երկար հերթ էր: Հիմա ցուցափեղկին ուրիշ, գուցե և նույնպես տաղանդավոր նկարչի ազդագիր էր փակցված, բայց նա Ալիսիայի մեծ ճանաչումը չուներ. ճանաչում, որն ի զորու էր գրավել բազմության ուշադրությունը:

Պատկերասրահ մտա ու կծկվեցի. այստեղ շատ ավելի ցուրտ էր, քան փողոցում: Հարցը ջերմաստիճանը չէր, պատկերասրահի սառեցնող մթնոլորտն էր՝ հին մետաղական հեծաններ, մերկ բետոնե հատակ: Անհոգի ու դատարկ:

Պատկերասրահի տնօրենը նստած էր աշխատասեղանի առաջ: Երբ մոտեցա, տեղից բարձրացավ:

Ժան-Ֆելիքս Մարթինը 40-ն անց բարետես տղամարդ էր՝ սև աչքերով, սև մազերով, կիպ վերնաշապիկով, որի վրա կարմիր գանգ էր նկարած: Ներկայացա ու ասացի, թե ինչու եմ եկել: Ի զարմանս ինձ, Ալիսիայի մասին ուրախությամբ խոսեց: Խոսքի մեջ թեթև առոգանություն զգացի: Հետաքրքրվեցի՝ ֆրանսիացի՞ է:

- Ծագումով Փարիզից եմ, բայց ուսանող ժամանակից այս-

տեղ եմ ապրում, արդեն 20 տարի: Հիմա ինձ ավելի շատ բրիտանացի եմ համարում,- ժպտաց ու ձեռքով հետևի սենյակ հրավիրեց: - Գնանք: Ձեզ սուրճ կհյուրասիրեմ:

- Շնորհակալություն:

Ժան-Ֆելիքսն ինձ առաջնորդեց դեպի գրասենյակ, որը, ըստ էության, պահեստ էր՝ պատերի տակ շարված բազմաթիվ նկարներով:

- Ալիսիան ինչպե՞ս է,- հարցրեց՝ փորձելով գլուխ հանել արտաքինից բարդ երևացող սուրճի մեքենայից: - Դեռ չի՞ խոսում:

- Չէ,- օրորեցի գլուխս:

- Ի՞նչ տխուր է,- հոգոց հանեց: - Նստեք, խնդրեմ: Ի՞նչ եք ուզում իմանալ: Կաշխատեմ հնարավորինս ազնիվ պատասխանել,- Ժան-Ֆելիքսը ծամածռեց դեմքը և հետաքրքրությամբ ինձ ուսումնասիրեց: - Թեև այնքան էլ չեմ հասկանում, թե ինչու եք ինձ մոտ եկել:

- Դուք և Ալիսիան մտերիմ եք եղել, ճի՞շտ է: Եվ ոչ միայն մասնագիտական հետաքրքրությունների առումով...

- Ո՞վ է Ձեզ նման բան ասել:

- Գաբրիելի եղբայրը՝ Մաքս Բերենսոնը: Նա խորհուրդ տվեց, որ խոսեմ Ձեզ հետ:

Ժան-Ֆելիքսը ոլորեց աչքերը:

- Ա՜խ, ուրեմն Մաքսին եք հանդիպե՞լ: Տաղտկալի կերպար է:

Այնպիսի արհամարհանքով ասաց, որ ծիծաղս չկարողացա զսպել:

- Ճանաչո՞ւմ եք Մաքս Բերենսոնին:

- Այո, դժբախտաբար բավական լավ եմ ճանաչում,- ասաց ու սուրճի փոքր գավաթն ինձ մեկնեց: - Ես ու Ալիսիան իսկա-

պես մտերիմ էինք: Շատ: Տարիներ առաջ ենք ծանոթացել, երբ նա դեռ Գաբրիելին չէր հանդիպել:

- Իսկապե՞ս: Չգիտեի:

- Այո, արվեստի դպրոցում միասին ենք սովորել: Իսկ ավարտելուց հետո սկսեցինք միասին աշխատել:

- Ուզում եք ասել՝ համատեղ նկարնե՞ր էիք ստեղծում:

- Ոչ այնքան,- Ժան-Ֆելիքսը ծիծաղեց: - Ուզում եմ ասել՝ շենքերի պատերին էինք նկարում:

- Ահա՛ թե ինչ,- ժպտացի:

- Պարզվեց՝ պատերին ներկելուց ավելի լավ եմ հասկանում, քան գեղանկար անելուց: Մի խոսքով, նկարչությունը թողեցի, իսկ այդ նույն ժամանակ Ալիսիան լուրջ հաջողություն ունեցավ: Ու երբ սկսեցի ղեկավարել պատկերասրահը, բնականաբար, որոշեցի, որ Ալիսիայի գործերը ցուցադրելու ճիշտ ժամանակն է: Ամեն ինչ շատ բնական, օրգանական ստացվեց:

- Պարզ է: Իսկ Գաբրիե՞լը:

- Գաբրիելն ի՞նչ:

Զգացի, որ Ժան-Ֆելիքսը լարվեց՝ պաշտպանական ռեակցիան աշխատեց: Ուրեմն այստեղ ինչ-որ կարևոր բան կա: Փորփրել է պետք:

- Դե, կուզեի իմանալ, թե նա ինչ դեր ուներ Ձեր դինամիկ հարաբերություններում: Ենթադրում եմ, որ նրան լավ էիք ճանաչում:

- Ոչ այնքան:

- Ո՞չ:

- Ոչ,- Ժան-Ֆելիքսը մի վայրկյան հապաղեց: - Գաբրիելն ինձ հետ առանձնապես չէր ուզում շփվել: Նա... ինքնասիրահարված էր:

– Երևում է՝ այնքան էլ նրան չեք հավանել:

– Ճիշտ եք: Եվ կարծում եմ՝ դա փոխադարձ էր: Ավելի ճիշտ, վստահ եմ:

– Իսկ պատճառը:

– Գաղափար չունեմ:

– Միգուցե խանդում էր Ալիսիայի հետ Ձեր հարաբերություններին:

Ժան-Ֆելիքսը մի կում սուրճ խմեց ու գլխով արեց:

– Դե, հնարավոր է:

– Գուցե Ձեր մեջ մրցակցի՞ էր տեսնում:

– Այնպիսի տպավորություն է, որ գիտեք բոլոր հարցերի պատասխանները:

Հասկացա նրա ակնարկն ու այլևս չշարունակեցի: Փորձեցի թեման փոխել:

– Որքան գիտեմ, Ալիսիային հանդիպել եք սպանությունից մի քանի օր առաջ, ճի՞շտ է:

– Այո: Նրա տուն էի գնացել:

– Այդ մասին մի քիչ կպատմե՞ք:

– Դե, նա պատրաստվում էր ցուցահանդեսին և չէր հասցնում աշխատանքն ավարտել: Նյարդայնացած էր, ինչը շատ բնական է:

– Այդ ժամանակ դեռ չէի՞ք տեսել նրա նոր գործերը:

– Ոչ, Ալիսիան նկարները ցույց տալու համար ժամանակ չէր գտնում: Ես էլ որոշեցի ինքս նրա մոտ գնալ: Մտածեցի, որ արվեստանոցում է, այգու եզրին: Բայց Ալիսիան այնտեղ չէր:

– Ե՞վ:

– Տանն էր:

– Ինչպե՞ս տուն մտաք:

Ժան-Ֆելիքսն իմ հարցից անակնկալի եկավ:

- Ինչ:

Զգում էի, թե ինչպես է մտքում հորինում պատասխանը: Հետո գլխով արեց:

- Ա՛խ, հասկացա, հիմա բացատրեմ: Այգու հակառակ կողմում դարպաս կար, որը դեպի փողոց էր տանում: Ալիսիան սովորաբար չէր կողպում այն: Այգուց, հետևի դռնով, խոհանոց մտա: Այն նույնպես միշտ բաց էր,- ժպտաց: - Գիտեք, Դուք ավելի շատ խուզարկուի եք նման, քան հոգեբույժի:

- Ես հոգեթերապևտ եմ:

- Տարբերություն կա:

- Ուղղակի փորձում եմ Ալիսիայի հոգեկան վիճակը հասկանալ: Ինչ տրամադրություն ուներ, երբ հանդիպեցիք:

Ժան-Ֆելիքսն ուսերը բարձրացրեց:

- Սովորական: Գուցե մի քիչ լարված էր՝ ցուցահանդեսի համար էր անհանգստանում:

- Եվ վերջ:

- Նրա արտաքինից չէր երևում, որ մի քանի օրից ամուսնուն կկրակի, եթե դա եք ուզում իմանալ: Նա կարծես թե... լավ էր,- մինչև վերջ խմեց սուրճը, ու ասես գլխում ինչ-որ գաղափար ծնվեց: - Կուզեք նրա նկարներից տեսնել:

Առանց պատասխանի սպասելու՝ Ժան-Ֆելիքսը վեր կացավ ու քայլեց դեպի դուռը՝ ձեռքով ինձ հրավիրելով:

- Գնանք:

20

թվականը է 1915-ուն ձայնը

Ժան-Ֆելիքսի հետևից պահոց մտա: Նա մոտեցավ հսկայական դարակաշարին, մեկը մյուսի հետևից ծածկոցների մեջ փաթաթած երեք նկար հանեց: Հետո ամրացրեց կեռերին, ապա հերթով, զգուշորեն հանեց կտավների պաշտպանիչ ծածկոցը: Հետ գնաց ու նկարներից մեկը հպարտությամբ ինձ ներկայացրեց:

- Վուալյա՛:

Նկարն իրականության լուսանկարչական արտացոլումն էր, ինչն այնքան հատուկ էր Ալիսիային: Կտավի վրա ամենայն մանրամասնությամբ պատկերված էր ավտովթարը, որը մոր կյանքն էր խլել: Կնոջ մարմինն անշարժ ընկած էր վթարված մեքենայի ղեկին: Նա արնաշաղախ էր ու, անկասկած, մեռած: Հոգին դեղին թևերով խոշոր թռչնի տեսքով հառնում էր մարմնից ու երկնքի մեջ մխրճվում:

- Փառահեղ է, չէ՞,- ասաց Ժան-Ֆելիքսը նկարին նայելով: - Սքանչելի գույներ՝ դեղին, կարմիր, կանաչ: Ես կորչում եմ այս գույների մեջ: Ինչ ցնծություն:

Ցնծությունն. ես ուրիշ բառ կընտրեի: Գուցե տագնապ: Ինքս էլ վստահ չէի, թե ինչ եմ զգում:

Անցանք հաջորդ նկարին: Հիսուսն էր խաչի վրա: Կամ գուցե սխալվում էի:

- Գաբրիելն է,- ասաց Ժան-Ֆելիքսը: - Զարմանալի նմանություն:

Կտավի վրա իսկապես Գաբրիելն էր, բայց Ալիսիան նրան Հիսուսի կերպարում խաչի վրա էր պատկերել. արյունը շիթերով հոսում էր վերքերից, գլխին փշե պսակ էր: Աչքերը խոնարհված չէին, այլ, հակառակը, պլշած, անթարթ, տառապանքով ու համր կշտամբանքով լի. դիտողին այրում էին: Մոտեցա, որ ուշադիր նայեմ նկարին: Հատկապես հետաքրքրում էր Գաբրիելի իրանին կապված անհասկանալի առարկան: Հրացանը:

- Այս հրացանո՞վ են սպանել նրան:

- Այո,- Ժան-Ֆելիքսը գլխով արեց: - Ու, որքան գիտեմ, հրացանը Գաբրիելինն էր:

- Ալիսիան սպանությունից առա՞ջ է նկարել:

- Մոտ մեկ ամիս առաջ: Փորձում եք հասկանալ, թե ինչ էր կատարվում Ալիսիայի գլխում, ճի՞շտ է,- ասաց Ժան-Ֆելիքսը՝ մոտենալով երրորդ նկարին:

Երրորդը մյուսներից ավելի խոշոր էր:

- Այս մեկն ամենալավն է: Հետ կանգնեք, որ ավելի լավ տեսնեք:

Հետևեցի նրա խորհրդին ու մի քանի քայլ հետ գնացի, հետո շրջվեցի ու նայեցի նկարին, ինձնից անկախ քմծիծաղ տվեցի:

Իմ առաջ Ալիսիայի հորաքրոջ՝ Լիդիա Ռոուզի դիմանկարն էր: Եվ հիմա պարզ էր, թե ինչն էր այդքան զայրացրել նրան: Նկարում Լիդիայի մերկ կերպարանքը հենված էր փոքրիկ

մահճակալին, որը ճկվել էր նրա ծանրության տակ: Նա վիթխարի էր, սարսափելի գեր. մսոտ մարմինը թափվել էր մահճակալի վրա ու հոսում էր հատակին՝ տարածվելով սենյակով մեկ, ալիքվելով ու ծալծլվելով մոխրագույն, եփած կրեմի պես:

- Տեր աստված,- ասացի: - Շատ դաժան է:

- Իսկ ես կարծում եմ՝ հետաքրքիր է ստացվել,- Ժան-Ֆելիքսը հետաքրքրությամբ ինձ նայեց: - Ճանաչո՞ւմ եք Լիդիային:

- Այո, վերջերս եմ նրան այցելել:

- Պարզ է,- ժպտաց նա: - Ձանասիրաբար կատարում եք տնային աշխատանքը: Ես չեմ հանդիպել Լիդիային: Գիտե՞ք, Ալիսիան ատում էր նրան:

- Այո,- ասացի՝ աչքս նկարից չկտրելով: - Տեսնում եմ:

Ժան-Ֆելիքսը սկսեց զգուշորեն հավաքել նկարները:

- Կարելի՞ է «Ալկեստիսը» տեսնել,- հարցրի:

- Իհարկե: Գնանք:

Ժան-Ֆելիքսն առաջնորդեց նեղ միջանցքով, ու շուտով հայտնվեցինք պատկերասրահի մյուս կողմում: «Ալկեստիսը» մի ամբողջ պատ էր զբաղեցնում: Առաջվա պես գեղեցիկ էր ու առեղծվածային: Մերկ Ալիսիան արվեստանոցում էր, դատարկ կտավի առաջ: Ձեռքին ալ կարմիր վրձին էր: Ուսումնասիրեցի Ալիսիայի դեմքը: Ու դարձյալ դեմքի արտահայտությունը կարդալ չկարողացա:

- Ոչինչ չեմ հասկանում,- խոժոռվեցի:

- Համաձայն եմ: Նկարը մերժում է ցանկացած մեկնաբանություն: Այս նկարը լռության մասին է:

- Ես այնքան էլ չեմ հասկանում:

- Դե, ցանկացած արվեստի գործի հիմքում ինչ-որ առեղծված է: Ալիսիայի լռությունն էլ հենց նրա գաղտնիքն է,

առեղծվածը՝ կրոնական իմաստով: Ահա թե ինչու է կտավն «Ալկեստիս» անվանել: Եվրիպիդեսի ողբերգությունը կարդացե՞լ եք,- հետաքրքրվեց նա: - Անպայման կարդացե՛ք: Այդ դեպքում կհասկանաք:

Գլխով արեցի, հետո նկարի մեջ մի բան նկատեցի, որ մինչև այդ չէի տեսել: Թեքվեցի առաջ, որ ավելի ուշադիր նայեմ: Նկարի խորապատկերում, սեղանի վրա, մրգաման էր, որի մեջ խնձոր ու տանձ էր: Կարմիր խնձորների վրա փոքր սպիտակ կետեր էին. պարզվեց՝ փոքրիկ, սպիտակ շարժվող որդեր են, որոնք ներսից ու դրսից փորփրում էին միրգը: Մատով ցույց տվեցի:

- Սրանք...

- Այո,- Ժան-Ֆելիքսը գլխով արեց: - Ճիճուներ են:

- Սքանչելի է: Հետաքրքիր է, իսկ դա ի՞նչ է նշանակում:

- Հրաշալի գործ է: Գլուխգործոց,- Ժան-Ֆելիքսը տխուր հոգոց հանեց ու դիմանկարին նայեց: Հետո ցածր ձայնով, ասես Ալիսիան կարող էր մեզ լսել, ավելացրեց,- երանի այն ժամանակ ճանաչեիք նրան: Ավելի հետաքրքիր մարդու չեմ տեսել: Մարդիկ հիմնականում մի տեսակ անկենդան են, հասկանո՞ւմ եք: Ամբողջ կյանքում զառանցում են, ասես քնած լինեն: Բայց Ալիսիան աշխույժ էր ու կենսուրախ: Նրանից հնարավոր չէր աչք կտրել,- Ժան-Ֆելիքսը շրջվեց ու երկար նայեց Ալիսիայի մերկ մարմնին: - Ու շշմելու՜ գեղեցիկ է:

Ես էլ նորից Ալիսիայի մարմնին նայեցի: Բայց այնտեղ, որտեղ Ժան-Ֆելիքսը գեղեցկություն էր տեսնում, ես միայն ցավ տեսա՝ վերքեր ու սպիներ, որոնք ինքնավնասման բազմաթիվ փորձերի հետևանք էին:

- Ձեզ երբևէ ինքնասպանության փորձի մասին պատմե՞լ է,- հարցրի հենց այնպես, բայց Ժան-Ֆելիքսը կուլ տվեց խայծը:

- Գիտեք այդ մասին: Իհարկե, պատմել է:

- Դա հոր մահից հետո է եղել:

- Նա ջարդուփշուր եղավ,- Ժան-Ֆելիքսը դարձյալ գլխով արեց: - Ճիշտն ասած, Ալիսիան կործանված էր ոչ որպես նկարիչ, այլ որպես մարդ: Նա ահավոր խոցելի էր: Երբ հայրը կախվեց, այլևս չդիմացավ: Համբերության բաժակը լցվեց:

- Երևի հորը շատ էր սիրում:

Ժան-Ֆելիքսը մի տեսակ զուսպ քմծիծաղ տվեց: Այնպես ինձ նայեց, ասես խելագար լինեի:

- Ինչ եք ասում:

- Այդպես չէ՞:

- Ալիսիան չէր սիրում հորը: Ատում էր: Տանել չէր կարողանում: Ականջներիս չէի հավատում:

- Նա՞ է այդպես ասել:

- Դե, իհարկե, նա է ասել: Ալիսիան վաղ մանկությունից ատում էր հորը, հենց այն օրից, երբ մայրը մահացավ:

- Այդ դեպքում ինչո՞ւ հոր մահից հետո փորձեց ինքնասպան լինել: Եթե պատճառը վիշտը չէր, ապա ի՞նչն էր:

- Գուցե մեղքի զգացո՞ւմը: Ո՞վ գիտի,- ասաց Ժան-Ֆելիքսն ուսերը թոթվելով:

Ինձ թվաց՝ Ժան-Ֆելիքսը կիսատ է պատմում: Ինչ-որ բան այն չէ: Ինչ-որ բան սխալ է:

Նրա հեռախոսը զանգեց:

- Կներեք,- ասաց ու շրջվեց, որ պատասխանի զանգին: Ձայնից զգացի, որ զանգողը կին է: Նրանք խոսեցին, հանդիպման ժամ նշանակեցին:

- Կզանգեմ, սիրելի՛ս,- ասաց ու անջատեց: Հետո շրջվեց իմ կողմ,- կներեք:

- Ամեն ինչ կարգին է: Ձեր ընկերուհին էր:

- Ուղղակի ընկեր է,- ժպտաց: - Ես շատ ընկերներ ունեմ:

«Կունենաս, բա ո՞նց»,- մտածեցի: Մի տեսակ հակակրանք զգացի նրա հանդեպ, բայց չէի հասկանում, թե ինչու: Երբ ճանապարհում էր, վերջին հարցը տվեցի.

- Քիչ էր մնում՝ մոռանայի: Ալիսիան երբևէ հիշատակե՞լ է բժշկի անունը:

- Բժշկի՞:

- Ինքնասպանության փորձից հետո նա հավանաբար ինչ-որ բժշկի հսկողության տակ է եղել: Ես փնտրում եմ նրան:

- Հըմ,- Ժան-Ֆելիքսը խոժոռվեց: - Կարծես թե մեկը կար...

- Անունը կհիշե՞ք:

Մի պահ մտածեց ու օրորեց գլուխը:

- Կներեք, չէ: Անկեղծ ասած, չեմ հիշում:

- Եթե հանկարծ մտաբերեք, կարո՞ղ եք կապվել ինձ հետ:

- Իհարկե: Բայց դժվար թե հիշեմ,- անորոշ ինձ նայեց, հետո ցածր ձայնով ասաց,- խորհուրդ կընդունե՞ք:

- Սիրով:

- Եթե իսկապես ուզում եք, որ Ալիսիան խոսի... ներկեր ու վրձիններ տվեք: Թող նկարի: Միայն այդպես կհամաձայնի Ձեզ հետ խոսել: Արվեստի միջոցով:

- Հետաքրքիր միտք է... Օգտակար խորհուրդ էր: Շնորհակալություն, պարո՛ն Մարթին:

- Ձեզ համար՝ Ժան-Ֆելիքս: Երբ տեսնեք Ալիսիային, ասեք, որ սիրում եմ:

Նա ժպտաց, ու նորից հակակրանք զգացի: Ժան-Ֆելիքսի մեջ ինչ-որ բան կար, որ ոչ մի կերպ չէի կարողանում մարսել: Հիմա վստահ էի. նա իսկապես Ալիսիայի հետ շատ մտերիմ

է եղել: Նրանք շատ վաղուց են ճանաչում իրար, և ակնհայտ է, որ Ալիսիան դուր էր գալիս Ժան-Ֆելիքսին: Իսկապե՞ս սիրում էր Ալիսիային: Հավատս չի գալիս: Հիշում էի, թե դեմքի ինչ արտահայտությամբ էր նայում «Ալկեստիսին»: Այո, աչքերի մեջ սեր կար, բայց սերը ոչ թե նկարչի, այլ արվեստի գործի հանդեպ էր: Ժան-Ֆելիքսը երկրպագում էր արվեստը: Հակառակ դեպքում Գրոուվ կգար, Ալիսիային կայցելեր: Ալիսիայից ոչ մի քայլ չէր հեռանա, դա հաստատ գիտեմ: Տղամարդը երբեք չի լքում կնոջը:

Եթե սիրում է:

21

Աշխատանքի գնալիս մտա «Ուոթերսթոունս»[1] և Եվրիպիդեսի «Ալկեստիսը» գնեցի: Նախաբանում նշվում էր, որ այն Եվրիպիդեսի ամենավաղ պահպանված և ամենահայտնի ողբերգությունն է:

Անմիջապես սկսեցի կարդալ հենց մետրոյում: Հեշտ պիես չէր: Բավական տարօրինակ գործ էր: Գլխավոր հերոսին՝ Ադմետոսին, մոյրաները[2] մահվան են դատապարտում: Բայց Ապոլլոնի միջնորդությամբ նա փրկության հնարավորություն է ստանում: Ադմետոսը կխուսափի մահից, եթե ինչ-որ մեկին համոզի իր փոխարեն մեռնել: Նախ փորձում է համոզել մորն ու հորը՝ խնդրելով իրենց կյանքն իր համար զոհել, բայց ծնողները կտրականապես մերժում են: Դժվար է Ադմետոսի քայլը գնահատել: Որ կողմից էլ նայես, նրա պահվածքը հերոսական չէ, իսկ հին հույները, ամենայն հավանականությամբ, համարում էին, որ նա հիմար է: Ալկեստիսն ավելի ուժեղ կերպար է. նա խիզախորեն հայտարարում է, որ պատրաստ է մեռնել հանուն ամուսնու: Գուցե չի սպասում, որ Ադմետոսը

---

[1] Գրախանութների հայտնի ցանց: Առաջինը բացվել է Լոնդոնում 1982-ին:

[2] Հին հունական դիցաբանության մեջ ճակատագրի աստվածուհիները:

կընդունի իր առաջարկը, բայց վերջինս համաձայնում է, և Ալկեստիսը պատրաստվում է հրաժեշտ տալ կյանքին ու տեղափոխվել Հադեսի թագավորություն:

Սակայն պատմությունն այստեղ չի ավարտվում: Երջանիկ ավարտ ունի՝ deus ex machina-ի[1] լավագույն ավանդույթներով: Հերակլեսն Ալկեստիսին առևանգում է Հադեսի թագավորությունից և հաղթական վերադարձնում ողջերի երկիր: Նա կենդանություն է առնում: Ադմետոսն այնքան է հուզվում կնոջ հետ վերամիավորումից, որ արտասվում է: Թե ինչ է զգում Ալկեստիսը, անհնար է գուշակել. նա լուռ է: Ու այլևս չի խոսում:

Քիչ էր մնում տեղիցս թռչեի, երբ այդ հատվածին հասա: Հավատս չէր գալիս:

Պիեսի վերջին էջը մի անգամ էլ կարդացի՝ դանդաղ, ամենայն մանրամասնությամբ:

Ալկեստիսը վերադառնում է Հադեսի թագավորությունից: Նա ողջ է, բայց չի կարող կամ չի ուզում ասել, թե ինչ է ապրել այն աշխարհում: Ադմետոսը հուսահատ դիմում է Հերակլեսին. «Բայց ինչո՞ւ է կինս կանգնել ու չի խոսում»:

Պատասխան չկա: Ողբերգությունն ավարտվում է, երբ Ադմետոսը նրան տուն է առաջնորդում՝ առանց մի խոսքի, լուռ ու մունջ:

Ինչո՞ւ: Ինչո՞ւ չի խոսում:

---

[1] Deus ex machina – բառացի՝ «աստված մեքենայից» (լատ.), իրավիճակի անսպասելի հանգուցալուծում նոր, նախկինում չգործող գործոնի ներգրավմամբ: Անտիկ թատրոնում արտահայտությունը նշանակում էր աստված, որը հայտնվում է ներկայացման ավարտին հատուկ մեխանիզմների միջոցով (օրինակ՝ իջնում է երկնքից) և լուծում հերոսների խնդիրները: Անտիկ ողբերգակներից այս միջոցին սիրում էր դիմել հատկապես Եվրիպիդեսը:

22

Ալիսիա Բերենսոնի օրագրից

Օգոստոսի 2

Այսօր ահավոր շոգ է: Իսկապես որ, Լոնդոնում ավելի շոգ է, քան Աթենքում: Բայց Աթենքում գոնե լողափ կա...

Փոլն այսօր Քեմբրիջից զանգեց: Զարմացա, երբ լսեցի նրա ձայնը: Վերջին մի քանի ամիսներին չէինք խոսել: Սկզբում մտքովս անցավ, որ գուցե ուզում է հորաքույր Լիդիայի մահվան լուրը հայտնել: Անկեղծ ասեմ, մի պահ այնպիսի թեթևություն զգացի:

Բայց շուտով պարզվեց՝ սխալվում եմ: Ճիշտն ասած, լավ չհասկացա, թե ինչու էր զանգել: Մի տեսակ խուսափում էր, ջուր էր ծեծում: Երկար սպասեցի, որ բուն թեմային անցնի, բայց անօգուտ: Անվերջ հարցնում էր՝ ինչպես եմ, Գաբրիելն ինչպես է, հետո ինչ-որ բան քրթմնջաց, ինչից հասկացա, որ Լիդիայի կյանքում ոչինչ չի փոխվել, ամեն ինչ առաջվա պես է:

- Կգամ Ձեզ մոտ,- ասացի: - Հազար տարի չեմ եկել: Լավ կլինի՝ հանդիպենք:

Իրականում Քեմբրիջ մեկնելու, Լիդիային ու Փոլին հանդիպելու միտքը խառը զգացմունքներ է առաջացնում: Ես խուսափում եմ հետ գնալուց ու մեղքի զգացում եմ ունենում, բայց, միևնույն է, ոչ մի կերպ վախս չեմ հաղթահարում:

- Պետք է այդ սխալն ուղղել,- ասացի: - Մոտ օրերս կայցելեմ Ձեզ: Իսկ հիմա, կներես, տնից դուրս եմ գալիս, չեմ կարող խոսել...

Ու հանկարծ Փոլը խոսեց ցածր ձայնով, այնպես, որ ոչինչ չլսեցի:

- Ինչ,- ասացի: - Չլսեցի, մի անգամ էլ ասա:

- Ասում եմ՝ խնդիրներ ունեմ, Ալիսիա՛: Քո օգնության կարիքն ունեմ:

- Ինչ է պատահել:

- Հեռախոսով պատմելու չէ: Արի հանդիպենք, խնդրում եմ:

- Ուղղակի... մի վայրկյանում դժվար թե Քեմբրիջ հասնեմ:

- Ուրեմն ես կգամ: Կեսօրին: Հարմա՞ր է:

Փոլի ձայնում ինչ-որ բան ինձ ստիպեց առանց երկար մտածելու համաձայնել: Ձայնը հուսահատ էր:

- Իհարկե, հարմար է, արի՛,- ասացի: - Իսկ չե՞ս կարող գոնե երկու բառով ասել:

- Կհանդիպենք, կպատմեմ,- ասաց Փոլն ու անջատեց:

Ամբողջ առավոտ նրա մասին էի մտածում: Ինչ լուրջ բան կարող էր պատահած լինել, որ Փոլն աշխարհի բոլոր մարդկանցից հենց ինձ դիմեր: Գուցե Լիդիայի հե՞տ է կապված: Իսկ եթե խոսքը տա՞ն մասին է: Ենթադրությունների մեջ մոլորվել էի:

Ճաշից հետո աշխատել ոչ մի կերպ չէր ստացվում: Մեղքը շոգ եղանակի վրա էի գցում, բայց, ճիշտն ասած, միտքս հեռուներում էր թափառում: Գնում-գալիս էի խոհանոցում, ժամանակ առ ժամանակ պատուհանից նայում այնքան, մինչև որ փողոցում Փոլին տեսա: Նա ձեռքով արեց:

- Ալիսիա՛, ողջո՛ւյն:

Առաջինը, որ աչքիս զարնեց, Փոլի սարսափելի տեսքն էր: Ահավոր նիհարել էր հատկապես դեմքի, քունքերի ու կզակի շրջանում: Խրտվիլակի էր նման, անառողջ տեսք ուներ: Ուժասպառ էր: Վախեցած:

Նստեցինք խոհանոցում, որտեղ շարժական օդափոխիչն էր աշխատում: Նրան գարեջուր առաջարկեցի, բայց, ի զարմանս ինձ, Փոլն ասաց, որ ավելի թունդ բան կուզեր: Չեմ հասկանում՝ որտեղից նրան խմիչքի հանդեպ սեր: Մի քիչ վիսկի լցրեցի, իսկ Փոլը, մտածելով, թե չեմ տեսնում, բաժակը մինչև վերջ լցրեց:

Սկզբում ոչինչ չէր խոսում: Որոշ ժամանակ լուռ նստած էինք: Հետո կրկնեց այն, ինչ ասել էր հեռախոսով.

- Խնդիրներ ունեմ:

Հարցրի, թե ինչ է պատահել: Տա՞ն հետ է կապված:

Փոլը զարմացած ինձ նայեց ու օրորեց գլուխը:

- Իսկ ո՞ւմ հետ:

- Ինձ հետ,- ասաց: Մի պահ հապաղեց, հետո վերջապես ասաց,- մոլախաղով եմ տարվել: Ու վերջին ժամանակներս անընդհատ պարտվում եմ:

Պարզվում է՝ արդեն երկար տարիներ խաղում է: Սկզբում խաղն ուղղակի տնից դուրս գալու պատրվակ էր՝ ինչ-որ տեղ գնալ, ինչ-որ բան անել, մի քիչ զվարճանալ: Նրան չէի մեղադրում: Լիդիայի հետ ապրողի կյանքը բնավ էլ ուրախ չէ: Փոլն ավելի ու ավելի հաճախ էր պարտվում, իսկ հիմա վիճակը ծայրահեղ վատ էր: Փոլը սկսել էր փող հանել բանկային խնայողություններից: Թեպետ այդ գումարը նույնպես չնչին էր:

- Ինչքա՞ն փող է պետք,- հարցրի:

- Քսան:

Ականջներիս չէի հավատում:

- Քսան հազար տանո՞ւլ ես տվել:

- Ոչ միանգամից: Մարդկանցից եմ պարտք վերցրել, հիմա նրանք գումարը հետ են պահանջում:

- Ովքե՞ր են այդ մարդիկ:

- Այնպիսի մարդիկ են, որ եթե չվերադարձնեմ, վիճակս վատ կլինի:

- Մայրդ գիտի՞:

Արդեն գիտեի հարցի պատասխանը: Փոլը գուցե անպատասխանատու է, բայց հիմար չէ:

- Ոչ, իհարկե: Մայրս կսպանի ինձ: Քո օգնության կարիքն ունեմ, Ալիսիա՛: Դրա համար էլ եկել եմ:

- Ես այդքան փող չունեմ, Փո՛լ:

- Ես կվերադարձնեմ: Հիմա ամբողջ գումարը պետք չէ: Գոնե մի քիչ:

Չպատասխանեցի, իսկ նա շարունակում էր համոզել: Ասաց, որ «նրանք» երեկոյան գալու են փողի առաջին մասը ստանալու: Փոլը չէր համարձակվում դատարկաձեռն տուն վերադառնալ: Խնդրում էր թեկուզ մի քիչ գումար տալ: Մոլորվել էի: Մի կողմից ուզում էի օգնել նրան, բայց հասկանում էի, որ այդ գումարով հարցը չի լուծվի: Հասկանում էի, որ պետք է հորաքրոջիցս գաղտնի պահել նրա ֆինանսական խնդիրները: Չգիտեմ՝ ինչ կանեի Փոլի փոխարեն: Չգիտեմ՝ ինչն է ավելի սարսափելի՝ Լիդիային դիմանա՞լը, թե՞ վաշխառուներին հանդիպելը:

- Բանկային չեկ կգրեմ,- վերջապես որոշեցի:

Փոլը խեղճացած երախտագիտություն հայտնեց՝ անընդհատ քթի տակ «շնորհակալություն, շնորհակալություն» ասելով:

Նրա համար 2000 ֆունտի չեկ գրեցի, որ կանխիկացնի: Գիտեմ, Փոլն ավելի շատ գումար էր ակնկալում: Ես նման խնդիրներ երբեք չէի ունեցել ու նրա ասածին էլ չէի հավատում: Այս պատմության մեջ ինչ-որ հորինված բան կար:

- Գուցե քեզ էլի փող տամ, միայն թե նախ պետք է Գաբրիելի հետ խոսեմ,- ասացի: - Բայց ավելի լավ կլինի, եթե ես ու դու միասին այս խնդիրը լուծելու ուրիշ միջոց գտնենք: Գիտես, Գաբրիելի եղբայրը փաստաբան է: Գուցե նա կարողանա...

Փոլը վեր թռավ տեղից ու սարսափած օրորեց գլուխը:

- Ո՛չ,- ասում էր անընդհատ,- ո՛չ, ո՛չ: Միայն թե չասես Գաբրիելին: Նրան այս գործին մի՛ խառնիր: Խնդրում եմ: Ես գլուխ կհանեմ: Մի բան կմտածեմ:

- Իսկ Լիդիան: Կարծում եմ՝ լավ կլինի...

Փոլը զայրացած թափահարեց գլուխն ու վերցրեց կտրոնը: Հիասթափված նայեց գումարին, բայց ոչինչ չասաց ու շուտով հեռացավ:

Մեր հանդիպումից դառը նստվածք մնաց. ինձ անընդհատ թվում էր, թե Փոլին հուսախաբ արեցի: Նրա հանդեպ միշտ նույն զգացողությունն եմ ունեցել դեռ մանկությունից: Այդպես էլ չկարողացա նրա ակնկալիքներն արդարացնել: Փոլն ինձնից մայրական ջերմություն էր սպասում: Փաստորեն նա դեռ չէր հասկացել, որ ի վիճակի չեմ իր մորը փոխարինել:

Երբ Գաբրիելը տուն վերադարձավ, ամեն ինչ պատմեցի: Եվ, իհարկե, նա բարկացավ: Ասաց, որ պետք չէր Փոլին փող տալ, ասաց, որ ոչինչ նրան պարտք չեմ, որ պարտավոր չեմ նրա համար պատասխանատվություն կրել:

Հասկանում եմ՝ Գաբրիելն իրավացի է, բայց ես, միևնույն է, մեղքի զգացումից չեմ կարողանում ազատվել: Ինձ հաջողվեց

այդ տնից, Լիդիայից փախչել, իսկ Փոլին՝ ոչ: Նա ծուղակում մնաց: Նա ընդամենը 8 տարեկան էր: Ու ես ուզում եմ օգնել նրան:

Բայց ինչպե՞ս:

Օգոստոսի 6

Ամբողջ օրը նկարում էի, փորձարկումներ անում Հիսուսի նկարի խորապատկերի հետ: Ճեպանկարներ էի անում այն լուսանկարներից, որոնք ես ու Գաբրիելն արել էինք Մեքսիկայում՝ կարմիր ճաքած հող, մուգ փշոտ թփեր. փորձում էի ահավոր տապի, ծայրահեղ ջրազրկման զգացողություն հաղորդել, երբ հանկարծ Ժան-Ֆելիքսի ձայնը լսեցի. ինձ էր կանչում:

Սկզբում ուզում էի անտեսել ու չպատասխանել՝ ձևացնելով, թե տանը չեմ: Հետո լսեցի դարպասի չխկոցն ու հասկացա, որ արդեն շատ ուշ էր: Գլուխս պատուհանից հանեցի ու այգում քայլող Ժան-Ֆելիքսին տեսա:

- Ողջույն, փոքրի՛կ,- ասաց ձեռքը թափահարելով: - Չե՞մ խանգարում: Աշխատու՞մ ես:

- Ճիշտն ասած, աշխատում եմ:

- Լավ է, լավ է,- ասաց,- շարունակիր նույն ոգով: Ցուցահանդեսի բացմանն ընդամենը վեց շաբաթ է մնացել: Հետ ես մնում,- ծիծաղեց իր անդուր ծիծաղով: Դեմքիս արտահայտությունը երևի ինձ մատնեց, որովհետև անմիջապես ավելացրեց,- լավ-լա՛վ, կատակում եմ: Չեմ անհանգստացնի:

Չպատասխանեցի: Լուռ վերադարձա արվեստանոց, Ժան-Ֆելիքսը՝ իմ հետևից: Աթոռն օդափոխիչին մոտեցրեց, հարմար տեղավորվեց: Սիգարետ վառեց, ու թանձր ծուխը քամու

հոսանքի հետ նրա շուրջը պտտվեց: Նկարակալի մոտ վերադարձա, վերցրի վրձինս: Ժան-Ֆելիքսը խոսում էր, իսկ ես՝ աշխատում: Բողոքում էր շոգից՝ ասելով, որ Լոնդոնը, ի տարբերություն Փարիզի և այլ քաղաքների, այսպիսի եղանակի համար հարմար չէ: Շուտով դադարեցի լսել: Նա շարունակ խոսում էր, դժգոհում, արդարացնում իրեն, խղճում իրեն, ու այդ ամենը՝ մահու չափ ձանձրալի: Ոչինչ չէր հարցնում: Իրականում նրան բոլորովին չէի հետաքրքրում: Նույնիսկ այսքան տարի անց նրա համար ընդամենը գործիք էի, նրա շոուի հանդիսատեսը:

Այո, գուցե չի կարելի այդպես խոսել: Ի վերջո, Ժան-Ֆելիքսն իմ վաղեմի ընկերն է ու միշտ եղել է կողքիս: Ուղղակի միայնակ է: Ինչպես և ես: Դե, ավելի լավ է՝ միայնակ մնամ, քան ապրեմ չսիրած մարդու հետ: Դա է պատճառը, որ Գաբրիելից առաջ լուրջ հարաբերություններ չեմ ունեցել: Ես սպասում էի Գաբրիելին՝ իրական, հավատարիմ ու վստահելի մարդու, ի տարբերություն մյուսների, որոնք կեղծ էին: Ժան-Ֆելիքսը միշտ խանդում էր մեզ: Փորձում էր և մինչև հիմա էլ փորձում է դա թաքցնել, բայց ինձ համար ակնհայտ է. նա ատում է Գաբրիելին: Վատաբանում է նրան, ակնարկում է, որ իմ չափ տաղանդավոր չէ, նրան համարում է սնափառ ու ինքնասիրահարված: Երևի Ժան-Ֆելիքսը կարծում է, որ կգա ժամանակը, և կապացուցի, որ իրավացի է, ու ես իր ոտքերի տակ կընկնեմ: Բայց չի հասկանում, որ ամեն մի ծաղրական արտահայտություն, ամեն կծու ակնարկ ինձ ավելի են մոտեցնում Գաբրիելին:

Ժան-Ֆելիքսն անվերջ շատախոսում էր մեր վաղեմի, երկարատև ընկերության մասին ու փորձում ինձ իր կողքին

պահել՝ հիշելով հին ու բարի ժամանակները, մեր ընկերության վաղ շրջանը, երբ միայնակ էինք «ամբողջ աշխարհի դեմ»: Ժան-Ֆելիքսի մտքով երևի չէր էլ անցնում, որ իմ կյանքի այն շրջանը, որն իրեն էր պատկանում, ամենաերջանիկներից չէր: Ու այն ամենը, ինչ զգում եմ իր հանդեպ, պայմանավորված է լոկ վաղեմության գաղափարով: Մենք կարծես այն ամուսնական զույգից լինենք, որոնց զգացմունքները սառել են համատեղ կյանքում: Այսօր հատկապես սուր զգացի, թե որքան տհաճ է նա ինձ համար:

- Պիտի աշխատեմ, կներես,- ասացի: - Ավարտեմ այս գործը: Այնպես որ, եթե դեմ չես...

Ֆան-Ֆելիքսը նեղացած դեմք ընդունեց:

- Վռնդում ես, հա՞: Ես միշտ հետևել եմ, թե ինչպես ես աշխատում, դեռ այն ժամանակներից, երբ առաջին անգամ վրձինը ձեռքդ առար: Երևի այնքան էլ չեմ խանգարել քեզ, այլապես կակնարկեիր...

- Համարիր, որ հիմա եմ ակնարկում:

Դեմքս վառվում էր, բարկանում էի ու զայրույթս զսպել չէի կարողանում: Փորձեցի շարունակել նկարել, բայց ձեռքս դողում էր: Զգում էի, թե Ժան-Ֆելիքսն ինչպես է ճնշում ինձ: Կարելի է ասել՝ լսում էի, թե ինչպես է աշխատում նրա միտքը՝ չխկչխկալով, բզզալով, պտտվելով:

- Նեղացրե՞լ եմ քեզ,- ասաց վերջապես: - Ի՞նչ եմ արել:

- Արդեն բացատրեցի: Չի կարելի հենց այնպես, առանց զգուշացնելու հայտնվել: Լավ կլինի՝ նախապես գրես կամ զանգես:

- Չգիտեի, որ մտերիմ ընկերուհուս տեսնելու համար հրավիրատոմս է պետք:

Դադար եղավ: Ըստ ամենայնի, խոսքերիցս վիրավորվեց:

Դե, ուրիշ տարբերակ չկար: Իրականում չէի ուզում կոպտել, լավ կլիներ՝ ասելիքս ավելի մեղմ տեղ հասցնեի, բայց ինձ զսպել չկարողացա: Եվ, որ ամենածիծաղելին է, ուզում էի ցավեցնել նրան: Ուզում էի կոպիտ լինել:

- Ժան-Ֆելիքս, լսի՛ր:

- Լսում եմ:

- Չգիտեմ էլ՝ ինչպես ասեմ: Բայց ցուցահանդեսից հետո պետք է ինչ-որ բան փոխել:

- Ի՞նչն ես ուզում փոխել:

- Պատկերասրահը: Ինձ:

Ժան-Ֆելիքսը զարմացած ինձ նայեց: Ասես փոքր տղա լիներ, որն ուր որ է լաց կլինի: Մի պահ հասկացա, որ բարկությունից բացի ուրիշ ոչինչ չեմ զգում:

- Ժամանակն է ամեն ինչ սկսել նոր էջից,- ասացի: - Այդպես երկուսիս համար էլ լավ կլինի:

- Պարզ է,- ասաց ու վառեց հերթական սիգարետը: - Որքան հասկանում եմ, Գաբրիելն է գլխի գցել:

- Գաբրիելը ոչ մի կապ չունի:

- Նա ինձ տանել չի կարողանում:

- Հիմարություններ մի՛ ասա:

- Ուզում է, որ վիճենք: Առաջին անգամը չէ: Արդեն քանի տարի է՝ թունավորում է քեզ:

- Ճիշտ չէ:

- Ուրիշ ինչպե՞ս կարելի է բացատրել այս ամենը: Ինչո՞ւ հանկարծ որոշեցիր թիկունքից ինձ հարվածել:

- Մի՛ բարդացրու: Ես միայն պատկերասրահի մասին եմ խոսում: Իմ ու քո հարաբերությունները կապ չունեն: Մենք առաջվա պես ընկերներ կմնանք: Կարող ենք երբեմն շփվել:

- Միայն թե նախապես պիտի գրեմ կամ զանգեմ քեզ, չէ՞,- Ժան-Ֆելիքսը քմծիծաղ տվեց ու սկսեց արագ-արագ խոսել, ասես ուզում էր ամեն ինչ հասցնել, քանի դեռ չէի ընդհատել: - Ա՜յ քեզ բան: Իսկ ես անկեղծորեն հավատում էի, գիտե՞ս, հավատում էի, որ մեր հարաբերությունները յուրահատուկ են, իսկ դու որոշեցիր ամեն ինչ փչացնել: Հենց այդպես: Իմացիր՝ քո մասին ոչ ոք հոգ չի տանում այնպես, ինչպես ես: Ոչ ոք:

- Ժան-Ֆելիքս, խնդրում եմ...

- Հավատս չի գալիս, որ սա քո որոշումն է:

- Վաղուց էի ուզում քեզ ասել:

Այս նախադասությունն ավելորդ էր: Ժան-Ֆելիքսը տեղում քարացավ:

- Ինչպե՞ս թե: Երբվանի՞ց:

- Չգիտեմ: Վաղուց:

- Ուրեմն երկակի խա՞ղ էիր խաղում: Հա՞: Աստված իմ, Ալիսիա՛: Պետք չէ ամեն ինչ այսպես ավարտել: Ինձնից մի՛ հրաժարվիր:

- Չեմ հրաժարվում: Մի՛ բարդացրու: Մենք միշտ ընկերներ կմնանք:

- Արի թեման փոխենք: Գիտե՞ս՝ ինչու էի եկել: Ուզում էի ուրբաթ երեկոյան քեզ թատրոն հրավիրել,- նա բաճկոնի ծոցագրպանից երկու տոմս հանեց ու մեկնեց ինձ: Եվրիպիդեսի ողբերգության տոմսերն էին՝ Ազգային թատրոնում: - Արի միասին գնանք: Իրար հրաժեշտ տալու ավելի քաղաքակիրթ ձև է, ի՞նչ կասես՝ հանուն հին ու բարի ժամանակների: Մի՛ մերժիր:

Մի պահ տատանվեցի: Երբևէ Ժան-Ֆելիքսի հետ թատրոն գնալու մասին չէի մտածել: Բայց չէի ուզում էլ ավելի նեղացնել

նրան: Այդ պահին երևի ամեն ինչի կհամաձայնեի, միայն թե արվեստանոցից հեռանար: Հրավերն ընդունեցի:

22:30

Երբ Գաբրիելը տուն հասավ, պատմեցի իմ ու Ժան-Ֆելիքսի խոսակցության մասին: Ասաց, որ երբեք չի հասկացել մեր ընկերությունը, Ժան-Ֆելիքսին սողուն անվանեց ու ավելացրեց, որ իրեն դուր չի գալիս Ժան-Ֆելիքսի վերաբերմունքը:

- Այսինքն:

- Կարծես իր սեփականությունը լինես: Լավ կլինի՝ անմիջապես նրա պատկերասրահից հեռանաս, նույնիսկ ցուցահանդեսին չսպասես:

- Չեմ կարող, շատ ուշ է: Չեմ ուզում, որ ատի ինձ: Դու չգիտես՝ ինչ վրեժխնդիր մարդ է:

- Այնպիսի տպավորություն է, որ նրանից վախենում ես:

- Չեմ վախենում: Ուղղակի ավելի ճիշտ կլինի նրան աստիճանաբար վանել:

- Որքան շուտ, այնքան լավ: Նա սիրահարված է քեզ: Ու դու դա լավ գիտես, չէ՞:

Չվիճեցի, բայց Գաբրիելը սխալվում էր: Ժան-Ֆելիքսն ինձ սիրահարված չէ: Նա ավելի կապված է իմ նկարների, քան ինձ հետ: Ահա և նրանից հեռանալու ևս մի պատճառ: Նրա համար ես ոչինչ եմ: Թեև մի հարցում Գաբրիելն իրավացի էր:

Ես իսկապես նրանից վախենում եմ:

23

Դիոմիդիսն աշխատասենյակում էր: Նստած էր աթոռին, ոսկեգույն լարերով տավիղի առաջ:

- Գեղեցիկ գործիք է,- ասացի:

Գլխով արեց:

- Շատ դժվար է նվագել,- ասաց ու մատները լարերի վրայով սահեցրեց: Աշխատասենյակը երաժշտության ինչյուններով լցվեց այնպես, ինչպես ջրվեժից թափվող ջուրը: - Կուզե՞ք փորձել:

Ժպտացի ու օրորեցի գլուխս:

- Տեսնո՞ւմ եք,- ծիծաղեց նա,- անընդհատ հարցնում եմ՝ հուսալով, որ միտքը կփոխեք: Համառ մարդ եմ, ինչ խոսք:

- Երաժշտական հակումներ չունեմ: Դեռ դպրոցի երաժշտության ուսուցիչն է ժամանակին միանշանակ հայտարարել:

- Ինչպես հոգեթերապիան, երաժշտությունն էլ հարաբերությունների հետ անմիջական կապ ունի: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ ուսուցիչ կընտրեք:

- Լիովին համաձայն եմ:

Նա պատուհանից դուրս նայեց ու գլխով ցույց տվեց սևացող երկինքը:

- Ամպերից երևում է, որ շուտով ձյուն է գալու:

- Ինձ թվում է՝ ավելի շատ անձրևաբեր ամպեր են:

-Չէ, ձյուն,- ասաց: - Հավատացեք ինձ, ես սերում եմ հին հունական տոհմից, որի տղամարդիկ սերնդեսերունդ հովիվներ են եղել: Այսօր երեկոյան ձյուն է գալու, հավատացեք:

Դիոմիդիսը վերջին անգամ էլ ամպերին նայեց, հետո դեպի ինձ շրջվեց:

- Ինչո՞վ կարող եմ Ձեզ օգնել, Թեո:

- Ահա,- պիեսի կրկնօրինակը սեղանին, նրա դիմաց, դրեցի: Դիոմիդիսն ուշադիր նայեց:

- Սա ի՞նչ է:

- Եվրիպիդեսի ողբերգությունն է:

- Տեսնում եմ: Բայց ինչո՞ւ եք ցույց տալիս ինձ:

- Դե, պիեսը կոչվում է «Ալկեստիս»: Ալիսիայի դիմանկարը, որը նա նկարել է Գաբրիելի սպանությունից անմիջապես հետո, նույնպես այդպես է կոչվում:

- Ա՜խ, այո՛, այո՛, իհարկե,- հիմա նրա աչքերում հետաքրքրություն առաջացավ: - Փաստորեն Ալիսիան իրեն ողբերգության հերոսուհու հետ է նույնացնում:

- Հնարավոր է: Պետք է խոստովանեմ, որ մի քիչ մոլորվել եմ: Ուզում եմ խնդրել՝ միգուցե պիեսի իմաստը մեկնաբանե՞ք:

- Ուրեմն ենթադրում եք, որ եթե հույն եմ, ուրեմն փայլուն գիտեմ բոլոր հունական ողբերգությունները,- պրոֆեսորը ծիծաղեց:

- Դե, համենայն դեպս, ինձնից լավ կիմանաք:

- Չեմ հասկանում: Դա նույնն է, ինչ ենթադրել, որ բոլոր անգլիացիները Շեքսպիրի ստեղծագործությունների գիտակ են,- նա ներողամտորեն ժպտաց: - Պետք է տխրեցնեմ Ձեզ, բայց

մեր երկրներն այդ առումով խիստ տարբեր են: Յուրաքանչյուր հույն իսկապես գիտի հին հունական ողբերգությունները: Դրանք մեր առասպելներն են, մեր պատմությունը, արյունը:

- Ուրեմն կկարողանաք ինձ օգնել,- ասացի:

Դիոմիդիսը վերցրեց թղթերն ու աչքի անցկացրեց:

- Այստեղ ի՞նչ խնդիր կա:

- Խնդիրն այն է, որ նա չի խոսում: Ալկեստիսը մեռնում է հանուն ամուսնու փրկության, իսկ հետո վերադառնում է ողջերի աշխարհ, բայց այդպես էլ լուռ է մնում:

- Հա՛, ինչպես Ալիսիան:

- Այո:

- Կրկնում եմ հարցս. այստեղ ի՞նչ խնդիր կա:

- Դե, ակնհայտ է, որ հերոսուհու ու Ալիսիայի միջև ինչ-որ կապ կա, բայց չեմ կարողանում որսալ այն: Պիեսի վերջում Ալկեստիսն ինչո՞ւ է հրաժարվում խոսել:

- Դուք ի՞նչ եք կարծում:

- Չգիտեմ: Հնարավոր է՝ զգացմունքները հաղթել են նրան:

- Չի բացառվում: Իսկ խոսքը ո՞ր զգացմունքի մասին է:

- Ուրախության,- ենթադրեցի:

- Ուրախությա՞ն,- ծիծաղեց նա: - Թեո, մտածե՛ք, իսկ Դուք ի՞նչ կզգայիք նրա փոխարեն: Մարդը, ում աշխարհում բոլորից շատ եք սիրում, սեփական վախկոտության պատճառով Ձեզ մահվան է դատապարտում: Ախր դա դավաճանություն է:

- Ուզում եք ասել՝ Ալկեստիսը վշտացա՞ծ էր:

- Ձեզ երբեք չե՞ն դավաճանել:

Հարցը դանակի պես սուր էր: Զգացի, թե դեմքս ինչպես է կարմրում: Շուրթերս շարժվեցին, բայց չկարողացա ձայն հանել:

Դիոմիդիսը ժպտաց:

- Ինչպես տեսնում եմ, դավաճանել են: Դե... ասացեք: Ալկեստիսն ինչ է զգում:

Այս անգամ գիտեի պատասխանը:

- Բարկություն: Սարսափելի բարկացած է:

- Ճիշտ եք,- Դիոմիդիսը գլխով արեց: - Դա սովորական բարկություն չէ, այլ մահացու կատաղություն...,- պրոֆեսորը քմծիծաղ տվեց: - Աստված գիտի՝ ինչպիսին կլինի նրանց ամուսնական կյանքն ապագայում, դե, նկատի ունեմ Ալկեստիսինն ու Ադմետոսինը: Դժվար է վերականգնել վստահությունը, երբ մի անգամ խաբում են:

- Իսկ Ալիսիան,- հարցրի մի քանի վայրկյանից, երբ վերջապես խոսելու ունակությունս վերագտա:

- Ալիսիան ինչ:

- Ամուսնու վախկոտության պատճառով Ալկեստիսը մահվան էր դատապարտված, իսկ Ալիսիան...

- Ոչ, Ալիսիան չմահացավ... համենայն դեպս, ոչ ֆիզիկապես,-Դիոմիդիսի կիսատ խոսքն օդում կախվեց: - Մյուս կողմից՝ ֆիզիկապես...

- Պարզ է: Ուրեմն ինչ-որ բան է պատահել, որը կոտրել է նրա ոգին... ոչնչացրել ապրելու, կյանքի զգացողությունը:

- Հնարավոր է:

Դժգոհ մնացի: Վերցրի գիրքն ու շապիկին նայեցի. դրա վրա դասական արձան էր պատկերված, կնոջ սքանչելի մարմարով հավերժացած կերպար: Ուշադիր նրան էի նայում, իսկ մտքումս Ժան-Ֆելիքսի խոսքերն էին պտտվում:

- Եթե Ալիսիան մեռած է... ինչպես Ալկեստիսը, ապա մենք պետք է նրան կյանք վերադարձնենք:

- Ճիշտ է:

- Գիտեք՝ մտքովս ինչ անցավ, եթե արվեստն Ալիսիայի ինքնարտահայտման միջոցն է, ապա գուցե նրան արտահայտվելու հնարավորություն տանք:

- Ինչպե՞ս:

- Թույլ տանք, որ նկարի:

Դիոմիդիսը զարմացած ինձ նայեց, ինչին հաջորդեց ձեռքի մերժող շարժումը:

- Նա արդեն արտ-թերապիա է անցնում:

- Խոսքս արտ-թերապիայի մասին չէ. ուզում եմ, որ Ալիսիան աշխատի այնպես, ինչպես ցանկանում է՝ միայնակ ուիր անձնական տարածքում, որտեղ կարող է արարել: Նրան պետք է թույլ տալ ինքնարտահայտվել, ազատություն տալ զգացմունքներին: Դա կարող է հրաշքներ գործել:

Դիոմիդիսը միանգամից չպատասխանեց: Մտքերի մեջ ընկավ:

- Պետք է նրա արտ-թերապևտի հետ համաձայնեցնել: Արդեն խոսել եք նրա հետ: Ռովենա Հարթ: Նկատի ունեցեք, որ Ռովենայի հետ լեզու գտնելը հեշտ չէ:

- Կխոսեմ նրա հետ: Բայց ինձ Ձեր օրհնությունն է պետք:

Դիոմիդիսը թոթվեց ուսերը:

- Եթե կարողանաք Ռովենային համոզել, խնդրեմ: Բայց զգուշացնում եմ՝ Ձեր գաղափարը նրան դուր չի գա: Հաստատ:

24

- Կարծում եմ՝ հրաշալի գաղափար է,- ասաց Ռովենան:

- Իսկապե՞ս,- փորձում էի զարմանքս չմատնել: - Այդպե՞ս եք կարծում:

- Իհարկե: Միակ խնդիրն այն է, որ Ալիսիան չի գործակցի:

- Որտեղի՞ց Ձեզ այդ վստահությունը:

Ռովենան ծաղրական փնչացրեց.

- Դե, որովհետև Ալիսիան ամենաանհաղորդ, ամենաչշըփվող տականքն է, որի հետ երբևէ աշխատել եմ:

- Ա՛յ քեզ բան:

Ռովենայի հետևից արտ-թերապիայի սենյակ մտա: Հատակին ներկի գույնզգույն բծեր էին, ասես վերացական խճանկար լիներ, իսկ պատերից հիվանդների ստեղծագործություններն էին կախված՝ մի քանիսը հաճելի, բայց մեծամասնությունը՝ տարօրինակ: Ռովենան կարճ, շեկ մազեր ուներ, հոնքերը մշտապես խոժոռելու պատճառով ճակատին խոր ակոս էր առաջացել, տեսքը հոգնած էր, ինչի պատճառն ակնհայտորեն բարդ հիվանդներն էին: Ամենայն հավանականությամբ, Ալիսիան Ռովենայի հերթական հիասթափություններից էր:

- Արտ-թերապիայի դասերին չի՞ մասնակցում,- հարցրի:

- Չի մասնակցում,- պատասխանեց Ռովենան՝ շարունակելով նկարների դարակը դասավորել: - Ես մեծ հույսեր էի փայփայում, երբ դեռ նոր էր խմբին միացել: Ամեն ինչ արեցի. նրա համար հարմարավետ պայմաններ ստեղծեցի, բայց նա ուղղակի նստում ու անթարթ մաքուր էջին է նայում: Ոչինչ ի զորու չէ ստիպել, որ նկարի, նույնիսկ մատիտը չի վերցնում, որ մի գիծ քաշի: Մյուսների համար ահավոր օրինակ է:

Կարեկցանքով գլուխս թափահարեցի: Արտ-թերապիայի նպատակը հիվանդի մեջ նկարելու ցանկություն արթնացնելն է և, ինչն ավելի կարևոր է, ստիպել, որ իր աշխատանքի մասին խոսի՝ վեր հանելով դրա կապը ներքին հույզերի հետ: Սա հրաշալի միջոց է, որը հիվանդներին թույլ է տալիս տառացիորեն թղթին հանձնել այն, ինչ ենթագիտակցաբար զգում են, իսկ նկարը հնարավորություն է տալիս մտորել ու խոսել այդ մասին: Ինչպես միշտ, ամեն ինչ կախված է հոգեթերապևտի անհատական հմտություններից: Ռութն ասում էր, որ իսկապես օժտված ու հմուտ մասնագետները շատ քիչ են. մեծ մասն ուղղակի փականագործներ են: Իմ կարծիքով՝ Ռովենան էլ այդ «փականագործներից» էր: Զարմանալի չէ, որ Ալիսիան իր պահվածքով վիրավորել էր նրան: Ես փորձում էի հնարավորինս նրբանկատ լինել:

- Գուցե գեղանկարչությունը նրան հոգեկան ցավ է պատճառում,- ասացի հնարավորինս մեղմ:

- Հոգեկան ցա՞վ:

- Դե, նրա մակարդակի նկարչի համար դժվար է նկարչությամբ զբաղվել ուրիշ հիվանդների ներկայությամբ:

- Ինչո՞ւ: Ինչ է, նա յուրահատո՞ւկ է: Ես տեսել եմ նրա գործերը:

Չէի ասի, թե բարձրակարգ նկարիչ է,- ասաց ու ծամածռեց դեմքը, ասես ինչ-որ տհաճ բան էր համտեսել:

Ահա՛ թե ինչ. ես հասկացա, թե ինչու Ռովենան Ալիսիային չէր սիրում: Փաստորեն նախանձում էր:

- Ցանկացած մեկն էլ կարող է այդպես նկարել,- ասաց: - Կտավի վրա լուսանկարչական իրականություն պատկերելու համար մեծ խելք պետք չէ: Դրան իմաստ հաղորդելն ավելի բարդ է:

Չէի ուզում Ալիսիայի արվեստի շուրջ վեճի բռնվել, ուստի ասացի.

- Այսինքն՝ ուզում եք ասել՝ դեմ չեք լինի, եթե ես այդ բարդ հիվանդին «խլեմ»:

Ռովենան խեթ նայեց ինձ:

- Ձեզ եմ նվիրում:

- Շնորհակալություն: Երախտապարտ եմ:

Ռովենան արհամարհական փնչացրեց:

- Բայց նկատի ունեցեք, որ նկարչական նյութերը Դուք եք հայթայթելու: Ցուղաներկի համար ինձ գումար չեն տրամադրում:

25

- Պետք է Ձեզ խոստովանեմ:

Ալիսիան ինձ չէր նայում: Շարունակեցի՝ ուշադիր նրան հետևելով.

- Վերջերս Սոհոյում պատահաբար Ձեր հին պատկերասրահի կողքով էի անցնում ու որոշեցի ներս մտնել: Տնօրենը բավական սիրալիր էր, Ձեր գործերից մի քանիսը ցույց տվեց: Ի դեպ, Ձեր վաղեմի ընկերներից է: Անունը Ժան-Ֆելիքս Մարթին էր:

Պատասխանի սպասեցի: Իզուր:

- Միայն թե չմտածեք, թե Ձեր անձնական կյանք եմ ներխուժում: Գուցե պետք էր նախ Ձեզ հետ խորհրդակցել: Հուսով եմ՝ դեմ չեք:

Արձագանք չկար:

- Պատկերասրահում ինձ մի քանի նկար ցույց տվեցին, որոնք նախկինում չէի տեսել: Նկարներից մեկում Ձեր մայրն էր, մյուսում՝ հորաքույր Լիդիա Ռոուզը:

Ալիսիան դանդաղ բարձրացրեց գլուխն ու հայացքն ինձ հառեց: Աչքերի արտահայտությունը նոր էր, անսովոր: Իմաստը չէի կարողանում հասկանալ: Միթե զարմացած էր:

- Ձեր արվեստն ինձ հետաքրքրում է ոչ միայն այն պատճառով, որ ուզում եմ իմ բուժառուի նկարները տեսնել: Ձեր կտավներն անձամբ ինձ շատ են տպավորել: Իսկապես հզոր գործեր են:

Ալիսիան խոնարհեց հայացքը: Նա սկսում էր ձանձրանալ: Ուստի արագ ավելացրի.

- Ինձ հատկապես մի բան ապշեցրեց: Ավտովթարի նկարում Ձեր մայրիկն է պատկերված, բայց ինչ-որ մեկը բացակայում է... Դուք: Չեմ հասկանում՝ ինչու Ձեզ չեք նկարել, թեև Դուք էլ եք այնտեղ եղել:

Ոչ մի արձագանք:

- Գուցե խնդիրն այն է, որ Ձեր կարծիքով՝ ավտովթարը բացառապես Ձեր մայրիկի՞ ողբերգությունն է: Որովհետև միայն նա՞ է զոհվել: Բայց չէ՞ որ մեքենայի մեջ նաև փոքրիկ աղջիկ կար: Աղջիկ, որի կորստի ցավը, ենթադրում եմ, նույնպես ուժեղ էր և ոչ լիովին գիտակցված:

Ալիսիան բարձրացրեց գլուխն ու ինձ նայեց: Հայացքով մարտահրավեր էր նետում: Վերջապես ինչ-որ ցավոտ կետի էի դիպել: Ուստի շարունակեցի:

- Ես հարցրի Ժան-Ֆելիքսին Ձեր ինքնանկարի՝ «Ալկեստիսի» մասին: Միասին քննարկեցինք, թե նկարն ինչ խորհուրդ ունի: Եվ ինձ առաջարկեց մի գիրք կարդալ,- ասացի ու հանեցի «Ալկեստիսի» իմ օրինակը: Դրեցի սեղանին ու ձեռքով սահեցրի նրան մոտեցնելով: Ալիսիան գրքին նայեց:

- Բայց ինչո՞ւ չի խոսում,- հարցնում է Ադմետոսը: Ես էլ Ձեզ եմ ուղղում նույն հարցը, Ալիսիա՛: Այդ ի՞նչն եք վախենում բարձրաձայնել: Ինչո՞ւ եք լուռ:

Ալիսիան փակեց աչքերը. երևի ուզում էր, որ չքվեմ: Խոսակ-

ցությունն ավարտված էր: Նայեցի նրա թիկունքում պատից կախված ժամացույցին: Սեանսը գրեթե ավարտված էր: Մի քանի րոպե էր մնում:

Մինչև այդ վայրկյանը հաղթական խաղաթուղթս պահել էի: Եվ հիմա որոշեցի օգտագործել: Հուսով եմ՝ ձայնս չէր մատնում հուզմունքս:

- Ժան-Ֆելիքսը բավական հետաքրքիր առաջարկ արեց: Կարծում եմ՝ լավ գաղափար է: Նրա կարծիքով՝ պետք է Ձեզ թույլ տալ նկարել... Կցանկանայիք նկարել: Մենք կարող ենք առանձին տարածք տրամադրել Ձեզ, նաև կտավներ, վրձիններ ու ներկեր կգնենք:

Ալիսիայի աչքերը շողացին: Կոպերն ասես բացվեցին: Աչքերի մեջ կարծես լույս վառեցին: Մանկան աչքեր էին՝ լայն բացված, անմեղ, արհամարհանքից ու կասկածից հեռու: Դեմքը գույն առավ: Հանկարծ կենդանություն ստացավ:

- Ես խոսել եմ պրոֆեսոր Դիոմիդեսի հետ: Նա համաձայն է: Ռովենան՝ նույնպես... Ուրեմն հիմա որոշելու Ձեր հերթն է, Ալիսիա՛: Ի՞նչ կասեք:

Սպասում էի: Նա լուռ ինձ էր նայում:

Եվ հետո վերջապես նկատեցի այն նշանը, որն ինձ հուշեց, որ ճիշտ ճանապարհի վրա եմ:

Փոքր շարժում էր: Համարյա անորսալի, բայց ինձ համար այն շատ բան էր նշանակում:

Ալիսիան ժպտաց:

26

Ճաշարանը Գրոուվի ամենատաք սենյակն էր: Տաքացուցիչ-ները շարված էին պատի երկայնքով, ու մտնողներն արագ զբաղեցնում էին դրանց ամենամոտ նստարանները: Ճաշի ժամին սենյակում ասեղ գցելու տեղ չկար. թե՛ բուժանձնակազմը, թե՛ հիվանդները կողք կողքի նստած ճաշում էին: Նրանց բարձր ձայներից խառնաղմուկ էր առաջանում ու մի տեսակ անհարմար հուզմունք այն բանից, որ բոլոր հիվանդները նույն տեղում էին հավաքվում:

Երկու կարիբցի խոհարարուհիները ծիծաղում և ուրախ շատախոսում էին՝ ափսեները նրբերշիկ ու կարտոֆիլի խյուս, ձուկ ու չիպս, հավ ու կարրիի սոուս լցնելով. բոլոր ճաշատեսակների հոտն ավելի լավն էր, քան համը: Ես որոշեցի չարյաց փոքրագույնն ընտրել՝ ձուկ ու չիպս: Քայլերս ուղղեցի դեպի ազատ սեղանը և ճանապարհին Էլիֆի կողքով անցա: Նա նստած էր իր ընկերախմբի հետ, անբարյացակամ մարդկանց, որոնք հոգեբուժարանի ամենաբարդ հիվանդներն էին: Երբ անցնում էի սեղանի կողքով, Էլիֆն ուտելիքից էր դժգոհում:

- Ես էս աղբը չեմ ուտի,- ասաց՝ սկուտեղը դեն հրելով:

Նրանից աջ նստած հիվանդը փորձեց սկուտեղն իր կողմ քաշել, բայց Էլիֆն ուժգին հարվածեց նրա ծոծրակին:

- Ագահ քա՛ծ,- գոռաց: - Թաթերդ հե՛տ տար:

Սեղանակիցները բարձր հռհռացին: Էլիֆն իր կողմ քաշեց ափսեն ու ագահաբար ուտելիքի վրա հարձակվեց:

Հանկարծ ճաշարանի հեռու անկյունում միայնակ նստած Ալիսիային նկատեցի: Ափսեի մեջ ձկան մի բարալիկ կտոր էր այսուայնկողմ քշում առանց ախորժակի. երևում էր, որ բերանին մոտեցնել չի պատրաստվում: Քիչ էր մնում՝ գնայի ու կողքին նստեի, բայց որոշեցի գայթակղությանը չտրվել: Եթե Ալիսիան վերև նայեր, ու մեր աչքերը հանդիպեին, գուցե համարձակություն հավաքեի, գնայի: Բայց նա ցած էր նայում, ասես փորձում էր իր տարածությունն ուրվագծել և այն շրջապատողների տարածությունից առանձնացնել: Գուցե Ալիսիան մտածի, թե իր կյանք եմ ներխուժում, ուստի նստեցի ուրիշ՝ ազատ սեղանի առաջ, մյուս բոլոր հիվանդներից բավական հեռու և սկսեցի ճաշել: Մի կտոր լպրծուն ձուկ կերա՝ անհամ, դրսից՝ տաքացրած, բայց ներսից՝ դեռ սառը: Մըտքումս համաձայնեցի Էլիֆի գնահատականին: Քիչ էր մնում՝ ճաշն աղբամանը նետեի, երբ ինչ-որ մեկը նստեց իմ դիմաց:

Ի զարմանս ինձ, Քրիստիանն էր:

- Ի՞նչ կա: Ամեն ինչ կարգի՞ն է,- հարցրեց:

- Այո, դո՛ւ ոնց ես:

Քրիստիանը չպատասխանեց: Փորձում էր ամեն գնով կարիի սուուսով հավից մի կտոր կտրել, որը քարի պես բրնձին էր կպել:

- Լսել եմ՝ որոշել ես Ալիսիային նկարելու հնարավորություն տալ,- ասաց լիքը բերանով:

- Տեսնում եմ՝ լուրերն արագ են տարածվում:

- Մեր կողմերում՝ հատկապես: Քո՞ գաղափարն է:

- Այո,- մի պահ տատանվելուց հետո պատասխանեցի ես: - Կարծում եմ՝ նրան օգտակար կլինի:

- Զգույշ եղիր, ընկերս,- ասաց Քրիստիանն ու կասկածանքով ինձ նայեց:

- Իհարկե, շնորհակալ եմ: Բայց առայժմ զգուշանալու պատճառ չկա:

- Համենայն դեպս, իմացիր, որ սահմանային խանգարումով հիվանդները հաճախ գայթակղում ու մանիպուլյացիայի են ենթարկում: Դու արդեն նրա թակարդն ես ընկել, բայց դեռ չես գիտակցում:

- Ոչ մի մանիպուլյացիա էլ չկա, Քրիստիան:

- Կա, այն էլ ինչպես կա,- ծիծաղեց նա: - Դու չես նկատում, որ պատրաստ ես նրան տալ այն, ինչ ուզում է:

- Ես պատրաստ եմ նրան տալ այն, ինչ նրան պետք է: Տարբերությունը մեծ է:

- Որտեղի՞ց գիտես՝ ինչ է նրան պետք: Դու նրան նույնացնում ես քեզ հետ, ընդ որում, չափից դուրս: Դա ակնհայտ է: Բայց հասկացի՛ր, հիվանդը նա է, ոչ թե դու:

Նայեցի ժամացույցիս՝ փորձելով զայրույթս թաքցնել:

- Պիտի գնամ,- ասացի, վեր կացա ու վերցրի սկուտեղս: Արդեն ճաշարանից դուրս էի գալիս, երբ Քրիստիանը ձայն տվեց.

- Զգույշ եղիր, Թեո, նա կկործանի քեզ,- ասաց: - Հետո չասես, թե չեմ զգուշացրել:

Նրա խոսքերից լարվեցի, ու այդ լարվածությունը պահպանվեց ամբողջ օրվա ընթացքում:

***

Աշխատանքից հետո Գրոուվից դուրս եկա, քայլեցի դեպի մոտակա փոքրիկ խանութը՝ մի տուփ ծխախոտ գնելու: Մի գլանակ հանեցի, վառեցի ու ծուխը խոր ներս քաշեցի: Ամեն ինչ մեխանիկորեն էի անում, առանց մտածելու: Գլխիս մեջ Քրիստիանի խոսքերն էին պտտվում, իսկ մեքենաներն արագ սլանում էին կողքովս: «Սահմանային խանգարումով հիվանդները հաճախ են մանիպուլյացիայի ենթարկում»,- զրնգում էր ուղեղիս մեջ:

Մի՞թե դա ճիշտ է: Դրա համա՞ր տրամադրությունս ընկավ: Իսկապե՞ս Ալիսիան փորձում է ինձ մանիպուլյացիայի ենթարկել: Քրիստիանը վստահ էր, իսկ Դիոմիդիսը հավանաբար նույնպես կասկածներ ուներ: Արդյոք նրանք իրավացի՞ էին:

Նախ մանրամասն վերլուծեցի դրությունը, ապա աներկբա եզրահանգեցի. նման բան չկա: Ճիշտ է, ես ուզում եմ օգնել Ալիսիային, բայց միաժամանակ նրա հանդեպ կարող եմ լիովին օբյեկտիվ լինել, երբեք չկորցնել զգոնությունս և հստակ նշագծված սահմաններից դուրս չգալ:

Ցավոք, սխալվում էի: Արդեն շատ ուշ էր. իսկ ես դա նույնիսկ ինքս ինձ չէի կարող խոստովանել:

***

Զանգեցի պատկերասրահ Ժան-Ֆելիքսին: Հարցրի, թե որտեղ են Ալիսիայի նկարչական նյութերը՝ ներկեր, վրձիններ, կտավներ:

- Երևի պահեստում են, հա՛:

- Ճիշտն ասած, ոչ,- փոքր դադարից հետո պատասխանեց Ժան-Ֆելիքսը: - Նրա բոլոր իրերն ինձ մոտ են:

- Ձեզ մո՞տ:

- Այո: Դատավարությունից հետո հավաքեցի նրա արվեստանոցն ու վերցրի այն ամենը, ինչը գեղարվեստական արժեք ուներ, դե, բոլոր նախապատրաստական էսքիզները, նոթատետրերը, նկարակալը, յուղաներկերը: Որոշեցի Ալիսիայի համար պահել:

- Կեցցե՛ք:

- Ուրեմն հետևեցի՞ք իմ խորհրդին: Թույլ եք տալու, որ Ալիսիան նկարի՞:

- Այո,- ասացի: - Դեռ պարզ չէ: Տեսնենք, թե դրանից ինչ դուրս կգա:

- Դե, մի բան հաստատ դուրս կգա: Կտեսնեք: Միայն մի խնդրանք ունեմ: Թույլ տվեք տեսնել նրա ավարտուն նկարները:

Նրա ձայնում տարօրինակ, քաղցած նոտաներ զգացի: Մտովի պատկերացրի պահեստը, նորածինների պես ծածկոցների մեջ փաթաթված կտավները: Հետաքրքիր է, Ժան-Ֆելիքսը դրանք իսկապե՞ս Ալիսիայի համար էր պահում: Թե՞ ուղղակի դրանցից ի վիճակի չէր բաժանվել:

- Եթե դժվար չէ, կխնդրեի Նյութերը Գրոուվ բերել, եթե, իհարկե, դեմ չեք:

- Դե...

Ժան-Ֆելիքսը լռեց: Զգացի, որ վախենում է, ու որոշեցի օգնության հասնել:

- Եթե կուզեք, ես կվերցնեմ,- ասացի: - Այդպես հարմա՞ր է:

- Այո, այո, շնորհակալություն: Հրաշալի միտք է,- թեթևացած ասաց:

Ժան-Ֆելիքսը վախենում էր Գրոուվ գալ, վախենում էր Ալիսիայի հետ հանդիպումից: Ինչո՞ւ: Ի՞նչ էր պատահել:

Այդ ի՞նչ էր եղել, ինչի պատճառով Ժան-Ֆելիքսը համառորեն չէր ուզում Ալիսիային տեսնել:

27

- Ո՞ր ժամին ես ընկերուհուդ հանդիպելու,- հարցրի:
- Ժամը 7-ին: Փորձից հետո:
Քեթին սուրճի իր գավաթն ինձ մեկնեց:
- Հիշո՞ւմ ես նրա անունը, Թեո: Նիկոլը:
- Հրաշալի է,- ասացի հորանջելով:
Քեթին խեթ ինձ նայեց:
- Գիտե՞ս, վիրավորական է, որ չես հիշում նրա անունը: Ախր Նիկոլն իմ ամենամոտ ընկերուհին է: Գրողը տանի, նրա հրաժեշտի խնջույքին մասնակցել ես:
- Իհարկե, Նիկոլին չեմ մոռացել: Ուղղակի անունը չէի հիշում, այդքան բան:
Քեթին աչքերը ոլորեց:
- Չես հիշում՝ մեղրաջուր խմիր: Լավ, գնամ, ցնցուղ ընդունեմ:
Խոհանոցից դուրս եկավ:
Քթիս տակ ժպտացի:
Ժամը 7-ն էր:

***

18:45 գետի հարավային ափի կողմից մոտեցա այն թատրոնի շենքին, որտեղ Քեթիի փորձերն էին անցնում:

Նստեցի թատրոնի դիմացի մայթին դրված նստարանին՝ թիկունքս ծառայողական մուտքին դարձրած, որպեսզի Քեթին ինձ անմիջապես չնկատի, եթե հանկարծ շուտ դուրս գա: Ժամանակ առ ժամանակ, գլուխս թեքում էի, ուսիս վրայով նայում, բայց դուռն առաջվա պես փակ էր:

19:05 հանկարծ դուռը բացվեց: Խոսակցության ու ծիծաղի պատառիկներ լսվեցին. դերասանները շենքից դուրս էին գալիս: Երկու-երեք հոգանոց խմբերով դեպի փողոց քայլեցին: Քեթին նրանց մեջ չէր:

Ես սպասում էի: Անցավ 5 րոպե: 10 րոպե: Մարդկանց հոսքը դադարեց, ու այլևս ոչ ոք թատրոնից դուրս չեկավ: Երևի բաց թողեցի նրան: Ամենայն հավանականությամբ, մինչև իմ գալն է դուրս եկել: Եթե, իհարկե, առհասարակ փորձին ներկա է եղել:

Ուրեմն ստո՞ւմ էր:

Նստարանից վեր կացա ու քայլերս դեպի թատրոնի մուտքն ուղղեցի: Պետք է համոզվեի: Իսկ եթե պարզվի, որ դեռ ներսում է ու ինձ տեսնի, այդ դեպքում ի՞նչ կլինի: Պետք է պատճառ հորինեմ, թե ինչու եմ եկել: Կասեմ, որ որոշել եմ անակնկալ մատուցել: Այո, կասեմ, որ ուզում եմ իրեն ու Նիկոլին ճաշի հրավիրել: Քեթին էլ կուչ կգա, հերթական հիմար պատըրվակը կհորինի, օրինակ՝ կասի, որ Նիկոլը հիվանդացել է, ստիպված են եղել հանդիպումը չեղարկել: Արդյունքում ես ու Քեթին միասին ևս մի անհարմարավետ երեկո կանցկացնենք: Երկար լռության հերթական երեկոն:

Մոտեցա մուտքին: Մի պահ վարանելուց հետո ժանգոտած կանաչ բռնակը քաշեցի ու հրելով բացեցի դուռը: Ներս մտա:

Քայլեցի դատարկ սրահում, ցեմենտից հատակի վրայով: Խոնավության հոտ էր փչում: Քեթիի փորձասենյակը 4-րդ հարկում էր (միշտ դժգոհում էր, որ ամեն օր ստիպված է աստիճաններով բարձրանալ), ուստի սկսեցի կենտրոնական սանդուղքով բարձրանալ: Հասա 2-րդ հարկ ու պատրաստվում էի դեպի 3-րդ հարկ թեքվել, երբ վերևի հարկից ձայն լսեցի: Քեթին էր: Հեռախոսով էր խոսում:

- Գիտեմ, կներես: Շուտով կլինեմ: Երկար չի տևի: Լավ, լավ, ցտեսություն:

Քարացա. ևս մի քանի վայրկյան, ու մեր հանդիպումն անխուսափելի կլիներ: Աստիճաններով ցած սլացա ու թաքնվեցի անկյունում: Քեթին անցավ կողքովս ու ինձ չնկատեց: Քայլերն ուղղեց դեպի դուռը: Շուտով դուռը շրխկոցով փակվեց:

Նրա հետևից վազելով շենքից դուրս եկա: Քեթին արագ դեպի կամուրջն էր քայլում: Հետևեցի նրան՝ ժամանակ առ ժամանակ քաղաքացիների ու զբոսաշրջիկների արանքում թաքնվելով, փորձելով ապահով հեռավորություն պահել, բայց միաժամանակ նրան տեսադաշտից չկորցնել:

Քեթին անցավ կամուրջն ու իջավ մետրոյի «Իմբանքմենթ» կայարանի աստիճաններով: Գնացի նրա հետևից. հետաքրքիր է՝ որ ուղղությամբ է գնալու:

Բայց նա գնացք չնստեց: Ուղղակի անցավ կայարանի սրահով ու մյուս կողմից դուրս եկավ: Հետո շարունակեց Չարինգ քրոսսի երկայնքով քայլել, ես էլ՝ նրա հետևից: Լուսակրի տակ, նրանից մի քանի քայլ հետ, կանգնեցի: Հետո մեկս մյուսի հետևից անցանք փողոցը և դեպի Սոհո քայլեցինք:

Այդպես ես ու Քեթին քայլեցինք նեղ փողոցներով: Նա թեքվեց աջ, հետո ձախ, հետո նորից աջ, ապա կտրուկ կանգ առավ: Մենք Լեքսինգթոն փողոցի անկյունում էինք: Երևում էր, որ Քեթին ինչ-որ մեկին է սպասում:

Ուրեմն սա՛ էր հանդիպման վայրը: Հարմար տեղ է՝ կենտրոնում, մարդաշատ փողոցում, որտեղ քեզ ոչ ոք չի ճանաչում: Քայլերս դանդաղեցրի ու թաքնվեցի փողոցի անկյունում՝ պանդոկում: Բարի մոտ տեղավորվեցի, որ պատուհանից դիմացի մայթին կանգնած Քեթիին պարզ տեսնեմ:

- Ասեք,- դժկամությամբ արտաբերեց անխնամ մորուքով, ձանձրացած բարմենը:

- Մի պինտ: «Գինես»:

Նա հորանջելով բարի մյուս կողմն անցավ, որ գարեջուր լցնի: Աչքս Քեթիից չէի կտրում: Այստեղ ապահով էր: Դրսից ինձ անհնար էր նկատել, նույնիսկ եթե Քեթին իմ կողմ նայեր: Քիչ անց հենց այդպես էլ եղավ. մի պահ Քեթին իսկապես ուղիղ ինձ նայեց: Շունչս կտրվեց: Վստահ էի, որ նկատել էր ինձ, բայց չէ՛, բարեբախտաբար, հայացքն այլ ուղղությամբ սահեց:

Րոպեներն անցնում էին, իսկ Քեթին դեռ նույն տեղում էր: Ես՝ նույնպես: Դանդաղ, կում-կում գարեջուրս էի խմում: Չգիտեմ, թե Քեթին ում էր սպասում, բայց այդ մարդը հաստատ չէր շտապում: Քեթին չի սիրում, երբ իրեն սպասեցնում են, թեև ինքն էլ միշտ ուշանում է: Տեսնում էի, թե ինչպես է նյարդայնանում, խոժոռվում, անընդհատ ժամացույցին նայում:

Հետո մի տղամարդու տեսա, որն անցավ փողոցն ու նրա կողմ քայլեց: Մի քանի վայրկյանում, մինչև կտրեց-անցավ փողոցը, ինչպես հարկն է, ուսումնասիրեցի ու գնահատեցի նրան: Ամրակազմ էր, մինչև ուսերը հասնող խարտյաշ մազե-

րով: Զարմանալի էր: Քեթին միշտ ասում էր, որ իրեն դուր են գալիս մուգ մազերով ու իմ աչքերի նման աչքերով տղամարդիկ, թեև չի բացառվում, որ դա էլ հերթական սուտն էր:

Բայց տղամարդը նրա կողքով անցավ: Քեթին նույնիսկ չնայեց նրան: Շուտով անծանոթը տեսադաշտից կորավ: Ուրեմն նա չէր: Հետաքրքիր է՝ Քեթին ի՞նչ է նույնը մտածում, ինչ ես. նրան էլ են խաբել, ինչ է:

Ապա դեմքն աշխուժացավ, նա ժպտաց, փողոցի հակառակ կողմում ինչ-որ մեկին, որը լավ չէր երևում, ձեռքով արեց: Վերջապե՛ս: Հիմա կտեսնեմ՝ մրցակիցս ով է: Վիզս երկարեցրի ու...

Ի զարմանս ինձ, ճոճվելով Քեթիի կողմ էր գնում անհավանական կարճ կիսաշրջազգեստով և անհավատալի բարձր կրունկներով, գրավիչ արտաքինով մոտ 30-ամյա մի շիկահեր: Տեղնուտեղը ճանաչեցի նրան: Նիկոլն էր: Նրանք գրկախառնվեցին ու համբուրվեցին, հետո ծիծաղելով ու զրուցելով թևանցուկ առաջ քայլեցին: Ուրեմն Քեթին Նիկոլին հանդիպելու մասին չէր ստում:

Տարօրինակ զգացողություններ ունեցա. պետք է որ թեթևացած հոգոց հանեի ու ուրախանայի, որ չի ստել: Պետք է որ շնորհակալ լինեի: Բայց, ո՛չ:

Հիասթափված էի:

28

- Դե, ինչ կասեք, Ալիսիա՛: Լուսավոր է, չէ՞: Ձեզ դո՞ւր է գալիս,- Յուրին Ալիսիային հպարտությամբ ցույց տվեց նոր արվեստանոցը:

Հենց նա էր առաջարկել ակվարիումի հարևանությամբ չօգտագործվող սենյակն արվեստանոցի վերածել, ու ես ուրախությամբ համաձայնել էի: Ավելի լավ կլինի, եթե Ալիսիան այստեղ աշխատի, քան Ռովենայի արտ-թերապիայի սենյակում, հատկապես եթե հաշվի առնենք վերջինիս ակնհայտ թշնամական վերաբերմունքը, ինչը միայն կբարդացնի վիճակը: Այժմ Ալիսիան իր սեփական սենյակն ուներ, որտեղ կարող էր ցանկացած ժամանակ նկարել, ու նրան ոչ ոք չէր խանգարի:

Ալիսիան շուրջը նայեց: Նրա նկարակալը փաթեթից հանել ու տեղադրել էին պատուհանի մոտ, սենյակի ամենալուսավոր մասում: Յուղաներկերի բաց արկղը սեղանին էր: Երբ Ալիսիան սեղանին մոտեցավ, Յուրին ինձ աչքով արեց: Նա ոգևորված էր արվեստանոցի գաղափարով, իսկ ես երախտապարտ էի նրան աջակցության համար: Յուրին անփոխարինելի օգնական էր ու նաև անձնակազմի ամենասիր-

ված անդամը: Համենայն դեպս, հիվանդները նրան շատ էին սիրում:

– Հաջողություն, մնացածն՝ առանց ինձ,– ասաց ականջիս ու սենյակից դուրս եկավ:

Դուռը նրա հետևից շրխկոցով փակվեց: Բայց Ալիսիան կարծես չէր լսում:

Նա իր աշխարհում էր. սեղանին կռացած թեթև ժպիտով ներկերն էր ուսումնասիրում: Վերցրեց սև վրձիններն ու մատների ծայրերով զգուշորեն շոյեց, ասես ձեռքում նուրբ ծաղիկներ լինեին: Հետո փաթեթից հանեց յուղաներկի երեք մետաղյա սրվակ՝ պրուսական կապույտ, հնդկական դեղին, կարմիր կադմիում, ու խնամքով դասավորեց: Հետո նկարակալին ամրացված մաքուր կտավի կողմ շրջվեց: Մտքերի մեջ խորասուզված նայում էր: Այնտեղ բավական երկար մնաց: Մի պահ թվաց՝ իրականությունից կտրվել է, անուրջների գիրկն ընկել. միտքը հեռուներում էր թափառում, ինչ-որ կերպ կարողացել էր փախչել ու հիմա այս փոքրիկ սենյակում չէր: Հետո վերջապես ուշքի եկավ և սեղանի կողմը շրջվեց: Սեղմելով ներկապնակի վրա մի քիչ սպիտակ ներկ լցրեց, հետո մի քիչ կարմիր ներկ ավելացրեց: Ստիպված էր վրձնով խառնել ներկերը. երբ նկարչական պարագաները հասցրել էին Գրոուվ, Ստեֆանին հասկանալի պատճառներով ներկապնակի դանակներն անմիջապես «բռնագրավել էր»:

Ալիսիան վրձինը մոտեցրեց կտավին ու խազ արեց: Միակ կարմիր վրձնահարվածը՝ ճեպ-ճերմակ կտավի վրա:

Ուշադիր ուսումնասիրեց այն, հետո կողքին երկրորդ վրձնախազն արեց: Հետո ևս մեկը: Շուտով արդեն նկարում

էր՝ ազատ ու առանց դադարի, սահուն շարժումներով: Այն, ինչ կատարվում էր կտավի ու Ալիսիայի միջև, պար էր հիշեցնում: Կանգնած հետևում էի, թե ինչ երկրաչափական մարմիններ է ստեղծում:

Լուռ էի, հազիվ էի համարձակվում շնչել: Հասկանում էի, որ բախտս բերել է, որ խիստ անձնական պահի եմ ներկա. ասես հետևում էի, թե վայրի կենդանին ինչպես է լույս աշխարհ բերում իր ձագուկին: Ու թեև Ալիսիան գիտեր իմ ներկայության մասին, բայց ինձ թվում էր՝ նրան բոլորովին չեմ խանգարում: Նկարելիս երբեմն-երբեմն բարձրացնում էր գլուխն ու իմ կողմ մի շտապ հայացք նետում:

Կարծես ինձ էր ուսումնասիրում:

***

Հաջորդ մի քանի օրերին նկարը սկսում էր հստակ ուրվագծեր ստանալ: Սկզբում դրանք կոպիտ էին ու սխեմատիկ, ապա աստիճանաբար՝ ավելի հստակ: Եվ ահա վերջապես կտավի վրա լուսանկարչական իրականության իրական փայլն ի հայտ եկավ:

Ալիսիան կարմիր աղյուսից շինություն էր նկարել՝ հիվանդանոց: Անկասկած, Գրոուվն էր: Հիվանդանոցն ամբողջությամբ այրվում էր, բայց երկու մարդու ուրվագիծ էր նշմարվում, որոնց կարծես թե հրդեհից հաջողվել էր խույս տալ: Տղամարդն ու կինը փախչում էին: Կնոջ կերպարը, որի մազերը հրագույն-կարմիր էին ճիշտ կրակի լեզուների պես, ինձ Ալիսիային հիշեցրին, իսկ տղամարդունը՝ ինձ: Ես Ալիսիային

գրկած տանում էի կրակի բաժին դարձած շենքից, իսկ հրե լեզուները լիզում էին կոծերս:

Այդպես էլ չհասկացա, թե նկարում ինչ էր պատկերված. փորձում էի փրկել Ալիսիային, թե հակառակը՝ պատրաստվում էի նրան կրակների մեջ նետել:

29

- Ա՛յ քեզ նորություն,- ասաց: - Առաջին անգամ չէ, որ այստեղ եմ գալիս, ու այսօր հանկարծ հայտարարում են, թե պետք էր նախօրոք զանգել: Ես հո չեմ կարող ամբողջ օրն այստեղ նստել: Ախր զբաղված մարդ եմ:

Ընդունարանի սեղանիկի առաջ կանգնած՝ մի ամերիկուհի բարձրաձայն բողոքում էր Ստեֆանի Քլարկին: Ճանաչեցի, Բարբի Հելմանն էր՝ լրագրող, ինձ ծանոթ էր թերթերում և հեռուստատեսությամբ սպանությունների մասին լուսաբանումներով: Նաև Հեմփսթեդում էր ապրում, Ալիսիայի հարևանությամբ, Գաբրիելի սպանության գիշերը հենց նա էր լսել կրակոցներն ու ոստիկանություն զանգել:

Բարբին տիպիկ կալիֆոռնիացի շիկահեր էր, մոտ 65 տարեկան կամ գուցե ավելի: Զգացվում էր, որ «Շանել 5» էր ցողել և բազմաթիվ պլաստիկ վիրահատությունների ենթարկվել: Անունը սազում էր նրան. կինն իսկապես մշտապես զարմացած Բարբի տիկնիկ էր հիշեցնում: Երևում էր՝ այն կանանցից էր, որոնք հասնում են իրենց ուզածին, ուստի զարմանալի չէր, որ ընդունարանում խիստ վրդովվել էր այն նորությունից, որ այցելության համար պետք է նախապես պայմանավորվել:

- Կառավարչին կանչեք,- ասաց մի այնպիսի ժեստով, ասես ոչ թե հոգեբուժարանում էր, այլ ռեստորանում: - Չլսված բան է, անհեթեթություն: Որտե՞ղ է ձեր կառավարիչը:

- Կառավարիչը ես եմ, տիկի՛ն Հելման,- ասաց Ստեֆանին: - Մենք ծանոթ ենք:

Առաջին անգամ Ստեֆանիի հանդեպ մի քիչ կարեկցանք զգացի. խղճում էի նրան, որ Բարբիի կատաղի գրոհի թիրախն էր դարձել: Բարբին շատ էր խոսում, արագ-արագ, առանց դադարի՝ զրուցակցին պատասխանելու ժամանակ չտալով:

- Երբեք չեք ասել, որ պետք է նախապես պայմանավորվել,- ասաց՝ միտումնավոր բարձր ծիծաղելով: - Ի սեր Աստծո, «Իվիում»[1] սեղան պատվիրելն ավելի հեշտ է:

Ես նրանց մոտեցա ու Ստեֆանիին անմեղ ժպտացի:

- Կարո՞ղ եմ օգնել,- հարցրի:

Ստեֆանին նյարդայնացած նայեց ինձ:

- Ոչ, շնորհակալ եմ: Ինքս գլուխ կհանեմ:

- Դո՞ւք ով եք,- ասաց Բարբին ու հետաքրքրությամբ վերից վար ինձ նայեց:

- Ես Թեո Ֆաբերն եմ: Ալիսիայի հոգեթերապևտը:

- Իսկապե՞ս,- ասաց Բարբին: - Ինչ հետաքրքիր է:

Երևում է՝ հոգեթերապևտների հետ լեզու գտնելն ավելի հեշտ էր, քան հիվանդանոցի ղեկավարության: Այդ պահից սկսած տիկինը միայն ինձ հետ էր խոսում, իսկ Ստեֆանիին վերաբերվում էր այնպես, ասես նա ընդունարանի աշխատակից էր ու վերջ. պիտի խոստովանեմ, որ դա ինձ բավական ուրախացրեց:

---

[1] Հայտնի մարդկանց, թատերական գործիչների, գեղանկարիչների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների շրջանում հայտնի ռեստորան Լոնդոնում:

- Երևի նոր աշխատող եք: Մենք չենք հանդիպել,- ասաց Բարբին, ու դեռ բերանս չէի հասցրել բացել ու պատասխանել, երբ շարունակեց,- սովորաբար մեկ-երկու ամիսը մեկ Գրոուվ եմ գալիս: Այս անգամ դադարը երկար տևեց: Նահանգներ էի մեկնել ընտանիքիս տեսնելու, բայց վերադառնալուն պես որոշեցի Ալիսիային այցելել: Նրան շատ եմ կարոտում: Գիտեք, Ալիսիան իմ ամենալավ ընկերուհին էր:

- Ոչ, չգիտեի:

- Ա՛խ, այո: Երբ նրանք մեր թաղամաս տեղափոխվեցին, շատ օգնեցի, որ Ալիսիան ու Գաբրիելը նոր միջավայրին հարմարվեն: Ես ու Ալիսիան շատ էինք մտերմացել: Ամեն հարցում վստահում էինք իրար:

- Պարզ է:

Ընդունարանում հայտնվեց Յուրին, ես հրավիրեցի միանալ զրույցին:

- Տիկին Հելմանը եկել է Ալիսիային տեսնելու,- ասացի:

- Ձեզ համար՝ ուղղակի Բարբի, սիրելի՛ս: Ես ու Յուրին վաղեմի ընկերներ ենք,- ասաց նա Յուրիին աչքով անելով: - Նա ինձ վաղուց է ճանաչում: Նրա հետ խնդիր չկա: Ինչն այս տիկնոջ մասին չէի ասի:

Նա ձեռքն արհամարհանքով թափ տվեց Ստեֆանիի կողմը, որն էլ, վերջապես օգտվելով Բարբիի կարճատև ընդմիջումից, խոսելու հնարավորություն ստացավ:

- Ներեցեք, տիկի՛ն Հելման,- ասաց,- բայց Ձեր նախորդ այցից հետո հիվանդանոցի կանոնները փոխվել են. փոփոխությունն անցյալ տարի է տեղի ունեցել: Մենք խստացրել ենք անվտանգության պահանջները: Այսուհետև հիվանդներին այցելելու համար անհրաժեշտ է նախապես պայմանավորվել...

- Աստված իմ, ուզում եք ամեն ինչ նորից սկսել: Եթե մի անգամ էլ նոր կանոնների պատմությունը լսեմ, կճչամ: Առանց այդ էլ կյանքը հեշտ չէ:

Ստեֆանին հանձնվեց, ու Յուրին Բարբիին բաժանմունք ուղեկցեց: Ես գնացի նրանց հետևից:

Հանդիպումների սենյակ մտանք ու Ալիսիային սպասեցինք: Պարզ սենյակ էր՝ միայն մի սեղան, մեկ-երկու աթոռ, պատուհան չկար, առաստաղից սենյակի վրա դեղնավուն լույս էր ծորում: Պատին հենված հետևում էի, թե ինչպես է Ալիսիան երկու բուժքրոջ ուղեկցությամբ ներս մտնում: Բարբիին տեսնելիս որևէ զգացմունք չարտահայտեց: Մոտեցավ սեղանին ու առանց այցելուին նայելու նստեց աթոռներից մեկին: Բարբիի արձագանքը, հակառակը, շատ ավելի բուռն էր:

- Ալիսիա, սիրելի՛ս, կարոտել էի քեզ: Ո՞նց ես նիհարել: Կաշիդ ու ոսկորդ են մնացել: Նախանձում եմ քեզ: Ինչպե՞ս ես: Ձեր մուտքի մոտ մի ահավոր կին է նստած, իսկական վիշապ: Հազիվ կարողացա քեզ մոտ գալ: Մղձավանջ էր...

Բարբին անվերջ խոսում ու խոսում էր, Սան Դիեգո, ուր մեկնել էր մայրիկին ու եղբորը տեսնելու, ուղևորության մանրամասներն էր պատմում: Ալիսիան լուռ նստած էր, դեմքը քարացած էր, ասես դիմակ լիներ, իրեն չէր մատնում, ոչինչ ցույց չէր տալիս: Մոտ 20 րոպե անց, հուրախություն ունկնդիրների, մենախոսությունն ավարտվեց: Յուրին Ալիսիային սենյակից դուրս ուղեկցեց. նրա դեմքը նույնքան անհաղորդ էր, որքան սենյակ մտնելիս:

Հիվանդանոցի դռան մոտ մոտեցա Բարբիին:

- Կարելի՞ է երկու բառ փոխանակել,- հարցրի:

Բարբին գլխով արեց, ասես հենց դրան էր սպասում:

- Ուզում եք Ալիսիայի մասի՞ն խոսել: Ուր գնում եմ, ինչ-որ մեկը մոտենում ու հիմար հարցեր է տալիս: Միայն ոստիկանությունը չցանկացավ ինձ լսել: Իհարկե, տխմար որոշում էր. չէ՞ որ Ալիսիան միշտ կիսվում էր ինձ հետ: Բոլոր հարցերում: Նա ինձ այնպիսի՛ բան է պատմել, որ կյանքում չեք հավատա,- Բարբին հատուկ շեշտեց վերջին նախադասությունն ու բազմանշանակ ժպտաց: Հասկանում էր, որ հետաքրքրասիրությունս բորբոքել է:

- Կմանրամասնե՞ք,- հարցրի:

Թաքուն ժպտաց ու հագավ մուշտակը:

- Միայն թե ոչ հիմա: Պետք է գնամ, արդեն ուշացել եմ: Եկեք երեկոյան հանդիպենք, օրինակ՝ ժամը 6-ին:

Բարբիի տուն այցելելու միտքն առանձնապես չուրախացրեց. անկեղծ հույս էի փայփայում, որ Դիոմիդիսը չի իմանա: Բայց այլընտրանք չունեի. վճռել էի պարզել, թե նրան ինչ էր հայտնի: Ստիպված դեմքիս ծիծաղ նկարեցի:

- Հասցեն կասե՞ք:

30

Բարբիի տունը Հեմփսթեդ Հիթ զբոսայգու երկայնքով ձգվող փողոցում էր: Տան պատուհաններից շրջակա լճակներից մեկի տեսարանն էր բացվում: Տունը բավական մեծ էր և նկատի ունենալով տեղանքը, ըստ ամենայնի, ֆանտաստիկ թանկ:

Բարբին արդեն մի քանի տարի Հեմփսթեդում էր ապրում, երբ Գաբրիելն ու Ալիսիան տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին նրա հարևանությամբ: Նախկին ամուսինը ներդրումային բանկի կառավարիչ էր և հաճախ ստիպված էր լինում Լոնդոնից Նյու Յորք և հակառակը մեկնել այնքան ժամանակ, մինչև ամուսնալուծվեցին: Հետո նա գտավ նախկին կնոջ ավելի երիտասարդ, ավելի շիկահեր տարբերակը, իսկ տունը Բարբիին մնաց:

- Բոլորս էլ գոհ մնացինք,- ծիծաղեց նա: - Հատկապես ես:

Բարբիի տունը ներկած էր բաց կապույտ և տարբերվում էր փողոցի մյուս տներից, որոնք հիմնականում սպիտակ էին: Այգում աճում էին փոքր դեկորատիվ ծառեր, կային նաև ծաղկամաններով բույսեր:

- Ողջույն, սիրելի՛ս,- Բարբին ինձ դիմավորեց դռան շեմին: - Ուրախ եմ, որ ճշտապահ եք: Դա լավ նշան է: Համեցեք:

Նրա հետևից միջանցքից անցա հյուրասենյակ: Տնից ջերմոցի հոտ էր գալիս. ամենուր բույսեր ու ծաղիկներ էին: Որ կողմ նայում էիր, վարդեր, շուշաններ, խոլորձներ էին: Պատերին՝ կողք կողքի նկարներ, հայելիներ, շրջանակներով լուսանկարներ, իսկ արձանիկները, ծաղկամաններն ու այլ առարկաները զարդասեղանների վրա տեղի համար կռիվ էին տալիս: Բոլորն էլ թանկ իրեր էին, բայց այնպես էին լցված իրար վրա, ասես էժանագին աղբ լինեին: Եթե ընդունենք, որ տունը տանտերերի մտածողության արտացոլանքն է, ապա այս ամենն առնվազն վկայում էր Բարբիի ներքին ներդաշնակության բացակայության մասին: Տան ձևավորումը քաոսի, խառնաշփոթի, ագահության, անհագ քաղցի մտքեր էր արթնացնում: Հետաքրքիր է՝ ինչպիսի մանկություն է ունեցել:

Մի քանի ծոպավոր բարձ մի կողմ հրելով՝ ինձ համար տեղ ազատեցի ու վիթխարի, անհարմարավետ բազմոցին նստեցի: Բարբին բացեց խմիչքի պահարանն ու երկու բաժակ հանեց:

- Ի՞նչ կխմեք: Ինձ թվում է՝ վիսկիի սիրահար եք: Նախկին ամուսինս օրական մի գալոն վիսկի էր խմում: Ասում էր՝ առանց դրա ինձ դիմանալ չի լինի,- Բարբին ծիծաղեց:

- Ճիշտն ասած, ես գինիների գիտակ եմ: Ֆրանսիայում, Բորդոյում, հատուկ դասընթացների եմ մասնակցել: Փայլուն հոտառություն ունեմ:

Հենց որ Բարբին դադար տվեց, որ շունչ քաշի, օգտվեցի խոսելու հնարավորությունից ու վերջապես պատասխանեցի.

- Ճիշտն ասած, վիսկի չեմ սիրում: Խմելու հետ առհասարակ սեր չունեմ... Առիթից առիթ՝ միայն գարեջուր:

- Օ՛,- Բարբին լարվեց,- տանը գարեջուր չունեմ:

- Դե լավ, ոչինչ, մի կերպ կդիմանամ...

- Իսկ ես՝ ոչ: Այսօր դժվար օր էր:

Բարբին մի մեծ գավաթ կարմիր գինի լցրեց ու հարմար տեղավորվեց բազկաթոռին, ասես երկար զրույցի էր պատրաստվում:

- Ամենայն ուշադրությամբ Ձեզ եմ լսում,- ասաց գայթակղիչ ժպիտով: - Ինչ եք ուզում իմանալ:

- Մի քանի հարց ունեմ, եթե դեմ չեք:

- Դե, սկսեք:

- Ալիսիան երբևէ ասե՞լ է Ձեզ, որ բժշկի է գնում:

- Բժշկի՞,- հարցս կարծես զարմացրեց նրան: - Ուզում եք ասել հոգեբույժի՞:

- Չէ, նկատի ունեմ սովորական բժշկի:

- Չէ, չի ասել...,- Բարբին խոսքը կիսատ թողեց ու մտածեց: - Ձնայած... այ հիմա, երբ հարցրիք, հիշեցի... Այո, ասում էր, որ ինչ-որ բժշկի մոտ է գնում...

- Գիտե՞ք նրա անունը:

- Չգիտեմ, բայց հիշում եմ, որ Ալիսիային խորհուրդ տվեցի իմ բժշկին՝ Մոնքսին: Նա ուղղակի հրաշք է: Հերիք է՝ մի անգամ նայի մարդուն ու տեղնուտեղը կասի՝ ինչ ուտի, ինչ չուտի: Արտակարգ բժիշկ է:

Դրան հետևեց սննդի հետ կապված բժիշկ Մոնքսի խորհուրդների երկար և խճճված բացատրությունը, իսկ հետո Բարբին ինձ թախանձագին խնդրեց շուտափույթ այցելել իր հրաշք բժշկին: Համբերությանս բաժակը լցվում էր ու հիմա նրան դժվարությամբ կարողացա բուն թեմային վերադարձնել:

- Սպանության օրն Ալիսիային տեսե՞լ եք:

- Այո, դեպքից ընդամենը մի քանի ժամ առաջ,- նա մի կում գինի խմեց: - Նրա մոտ էի գնացել: Հաճախ էի նրանց տուն

մտնում, սուրճ էինք խմում. ավելի ճիշտ, նա սուրճ էր խմում, իսկ ես սովորաբար մի շիշ խմիչք էի տանում: Ժամերով զրուցում էինք: Չեք պատկերացնում՝ ինչ մտերիմ էինք:

«Բա ո՞նց»,- մտածեցի: Ես արդեն մտովի Բարբիի ախտորոշումը տվել էի. նա նարցիսական խանգարմամբ անհատականության վառ օրինակ էր: Խիստ կասկածում եմ, որ ի վիճակի է որևէ մեկի հետ լեզու գտնել, ընկեր համարել, այլ ոչ թե իր նպատակներին հասնելու միջոց: Չեմ կարծում, թե նրա այցերի ընթացքում Ալիսիան շատ էր խոսում:

- Այդ օրը նրա հոգեվիճակն ինչպե՞ս կնկարագրեք:

Բարբին ուսերը թոթվեց:

- Ոչ մի արտառոց բան չեմ նկատել: Միայն ահավոր գլխացավից էր բողոքում: Այդքանը:

- Ուրեմն Ալիսիան նյարդային վիճակո՞ւմ չէր:

- Ոչ, իսկ ինչո՞ւ պիտի լիներ:

- Դե, եթե նկատի ունենանք հանգամանքները...

Բարբին զարմացած ինձ նայեց:

- Հուսով եմ՝ չեք կարծում, որ մեղավորն Ալիսիան է,- ծիծաղեց նա: - Ա՜խ, սիրելիս, կարծում էի՝ ավելի խելացի եք:

- Վախենամ՝ ոչ այնքան...

- Ալիսիան երբեք ոչ մեկի վրա ձեռք չէր բարձրացնի: Նա մարդասպան չէ: Հավատացեք ինձ: Ալիսիան անմեղ է: Հարյուր տոկոսով համոզված եմ:

- Հետաքրքիր է՝ ինչպե՞ս կարող եք այդքան վստահ լինել, մանավանդ երբ հանցանշանները...

- Թող գրողի ծոցը կորչեն Ձեր այդ հանցանշանները: Ի դեպ, ես մի բան եմ տեսել...

- Իսկապե՞ս:

- Բա իհարկե: Բայց նախ... պետք է համոզվեմ, որ կարող եմ վստահել Ձեզ,- Բարբիի աչքերն ուղիղ աչքերիս էին նայում:

Ես հանդարտ նրան էի նայում:

- Ես մի տղամարդու եմ տեսել,- անսպասելի ասաց Բարբին:

- Տղամարդո՞ւ:

- Այո: Նրան, որ հետևում էր:

Նախ ցնցվեցի, հետո անմիջապես զգաստացա ու հարցրի:

- Ինչպե՞ս թե հետևում էր:

- Հենց այդպես: Հետևում էր: Ոստիկաններին պատմեցի, բայց նրանք ուշադրություն չդարձրին: Երբ տեսան Ալիսիային, Գաբրիելի մարմինն ու հրացանը, անմիջապես որոշում կայացրեցին: Ու այլևս չցանկացան որևէ այլ պատմություն լսել:

- Կոնկրետ ո՞ր պատմությունը:

- Հիմա կպատմեմ, ու Դուք անմիջապես կհասկանաք, թե ինչու չցանկացա այնտեղ, հիվանդանոցում, պատմել: Սա լսելու համար արժեր այստեղ գալ:

«Դե հերիք է՝ ձգես, Բարբի, պատմի՛ր»,- ասացի մտքում, բայց չբարձրաձայնեցի ու նրան ոգևորելու համար ժպտացի:

Նա գինի լցրեց ու սկսեց պատմել:

- Ամեն ինչ սպանությունից երկու շաբաթ առաջ սկսվեց: Սովորականի պես Ալիսիայի մոտ գնացի, խմեցինք, հետո նկատեցի, որ ինչ-որ բան այն չէ. սովորականից լուռ էր... Հարցրի՝ ինչ է պատահել, ու Ալիսիան սկսեց լաց լինել: Երբեք նրան այդ վիճակում չէի տեսել: Արցունքները հեղեղի պես թափվում էին աչքերից: Սովորաբար զուսպ էր, բայց այդ օրն ինքնատիրապետումը կորցրեց: Ծանր վիճակում էր, սիրելի՛ս:

- Եվ ի՞նչ ասաց:

– Ինձ հարցրեց՝ մեր տների մոտ ինչ-որ մեկին նկատել եմ: Ալիսիան տեսել էր, որ փողոցում իրեն ինչ-որ տղամարդ է հետևում,– Բարբին լռեց: – Հիմա ցույց կտամ: Նա հեռախոսիս նկար է ուղարկել:

Բարբին վերցրեց հեռախոսն ու լաքապատ եղունգներով սկսեց թերթել նկարները: Հետո հեռախոսն իմ կողմը շրջեց:

Ուշադիր նայեցի էկրանին, բայց որոշ ժամանակ էր պետք, որ հասկանամ, թե ինչ է լուսանկարում: Ծառի լղոզված ու խավար նկար էր:

– Ի՞նչ է սա:

– Ինչի՞ եք նմանեցնում:

– Ծառի:

– Իսկ ծառի հետևո՞ւմ:

Ծառի հետևում ինչ-որ մոխրագույն բիծ էր երևում, որն ինչ ասես կարող էր լինել, թեկուզ լապտերասյուն կամ մեծ շուն:

– Այդ տղամարդն է,– ասաց: – Նրա ուրվագծերը նկարում հստակ նշմարվում են:

Ես համոզված չէի, բայց չվիճեցի: Չէի ուզում Բարբիի ուշադրությունը թեմայից շեղել:

– Շարունակե՛ք,– ասացի:

– Այդքանը:

– Հետո ի՞նչ եղավ:

Բարբին ուսերը թոթվեց:

– Ոչինչ: Ալիսիային խորհուրդ տվեցի ոստիկանություն դիմել: Հետո իմացա, որ նույնիսկ ամուսնուն այդ մասին չի պատմել:

– Գաբրիելին չէ՞ր պատմել: Ինչո՞ւ:

– Չգիտեմ: Ինձ թվում է՝ նրա համար միևնույն է: Ամեն դեպ-

քում, պնդեցի, որ ոստիկանություն դիմի: Ախր, ի վերջո, իմ մասին էլ էի մտածում: Իսկ ի՞մ անվտանգությունն ով է ապահովելու: Մեր տան մոտ ինչ-որ անհայտ անձ է թափառում, իսկ ես մենակ եմ ապրում, հասկանո՞ւմ եք: Չեմ ուզում գիշերները վախից դողալ:

- Իսկ Ալիսիան Ձեր խորհրդին հետևե՞ց:

- Ոչ,- Բարբին օրորեց գլուխը: - Մի քանի օր անց ասաց, որ ամուսնու հետ խոսել է, ու իրենք որոշել են, որ իր աչքին է երևացել: Ասաց, որ մոռանամ պատահածը, ու խնդրեց՝ Գաբրիելին տեսնելիս այդ մասին ոչինչ չասեմ: Չգիտեմ, անկեղծ ասած, տհաճ պատմություն էր: Ալիսիան խնդրեց, որ չարաբաստիկ լուսանկարը ջնջեմ: Ես չջնջեցի, ու, երբ նրան ձերբակալեցին, ոստիկանին ցույց տվեցի, բայց նա ուշադրություն չդարձրեց: Ոստիկաններն արդեն ունեին իրենց վարկածը: Բայց վստահ եմ, որ այս պատմությունը դեռ շարունակություն է ունենալու: Կարո՞ղ եմ Ձեզ վստահել,- նա ձայնն իջեցրեց՝ գրեթե դրամատիկ շշուկի հասցնելով,- Ալիսիան շատ վախեցած էր:

Բարբին բեմական դադար տվեց ու պարպեց գինու գավաթը: Ապա ձեռքը նորից շշին մեկնեց:

- Միգուցե խմե՞ք:

Նորից մերժեցի, շնորհակալություն հայտնեցի, ասացի, որ գործեր ունեմ ու հեռացա: Երկար մնալն իմաստ չուներ. նա ամեն ինչ պատմել էր: Հիմա մտածելու այնքա՞ն բան կար:

Մութ էր, երբ նրա տնից հեռացա: Հարևան տան կողքով անցնելիս՝ մի պահ կանգ առա. այստեղ Ալիսիան էր ապրել: Դատավարությունից անմիջապես հետո տունը վաճառել էին, և հիմա այնտեղ ապրում էր մի ճապոնացի զույգ: Բարբիի

խոսքով՝ բոլորովին մարդամոտ մարդիկ չէին: Մի քանի անգամ մտերմանալու փորձեր էր արել, բայց նրանք մերժել էին: Հետաքրքիր է, իսկ ինչպե՞ս կարձագանքեի ես, եթե Բարբին իմ հարևանությամբ ապրեր ու անընդհատ ինձ հյուր գար: Տեսնես Ալիսիան հարևանուհուն ինչպե՞ս է դիմացել:

Սիգարետ վառեցի ու քիչ առաջ լսածս պատմության մասին մտածեցի: Ուրեմն Ալիսիան Բարբիին պատմել է, որ իրեն հետևում են: Ոստիկանությունն էլ իր հերթին որոշել է, որ Բարբին ուղղակի ուզում է ուշադրություն գրավել ու հորինում է, ուստի նրա պատմությանն ուշադրություն չի դարձրել: Զարմանալի չէ: Դժվար էր Բարբիին լուրջ ընդունել:

Ուրեմն Ալիսիան այնքան վախեցած է եղել, որ որոշել է նախ Բարբիից խորհուրդ հարցնել, հետո՝ Գաբրիելին դիմել: Հետո՞: Ուրիշ էլ ո՞ւմ հետ է Ալիսիան խորհրդակցել: Պետք էր պարզել:

Հանկարծ աչքիս առաջ մանկությունից մի պատկեր հայտնվեց. փոքրիկ տղան՝ տագնապից ծվատված հոգով, իր մշտական վախերն ու անամոք ցավը զսպած, սենյակում անվերջ հետուառաջ է անում, անհանգիստ, վախեցած, խելագար հոր սարսափի հետ դեմ հանդիման: Ո՞ւմ պատմի: Ոչ ոք չի լսի: Ալիսիան երևի նույն հուսահատությունն է զգացել, այլապես երբեք Բարբիին չէր վստահի:

Մարմնովս դող անցավ. ծոծրակիս ծակող հայացք զգացի:

Կտրուկ շրջվեցի, բայց ոչ ոք չկար: Մենակ էի: Փողոցը դատարկ էր, մռայլ ու լուռ:

31

Հաջորդ առավոտ Գրոուվ մտա Ալիսիայի հետ Բարբիի պատմածի մասին խոսելու հստակ մտադրությամբ: Բայց հենց որ ընդունարան մտա, բարձր բղավոցներ լսեցի. կնոջ ձայն էր: Հոգեվարքի ճչոցներն արձագանքում էին հիվանդանոցի միջանցքներում:

- Ինչ է պատահել: Ինչ է կատարվում այստեղ,- հարցրեցի անվտանգության աշխատակցին, բայց նա հարցս չլսեց, վազելով անցավ կողքովս ու բաժանմունք մտավ:

Նրա հետևից գնացի: Որքան մոտենում էի, բղավոցներն այնքան ավելի ուժգին էին լսվում: Միայն թե Ալիսիային ոչինչ պատահած չլինի, ու նա այդ ամենի հետ կապ չունենա: Բայց վատ կանխազգացում ունեի:

Թեքվեցի: Անկյունում, ակվարիումի մոտ, մեծ խումբ էր հավաքվել՝ բուժքույրեր, հիվանդներ և անվտանգության աշխատակիցներ: Դիոմիդիսը թերապիայի բաժին էր զանգում: Նրա վերնաշապիկին արյան հետքեր էին, բայց նրա արյունը չէր: Երկու բուժքույր՝ հատակին ծնկի իջած, բարձր ճչացող կնոջը հազիվ էին զսպում: Ալիսիան չէր:

Էլիֆն էր:

Էլիֆը գալարվում էր, փորձում իրեն պահող թևերից դուրս պրծնել, ճչում ու ճանկռոտում էր արյունոտված դեմքը: Աչքերն արյունով էին լցվել: Ակնախոռոչից ինչ-որ բան էր կախված՝ հենց ակնագնդին կպած: Սկզբում թվաց՝ փայտի կտոր է: Բայց ոչ: Անմիջապես հասկացա, թե ինչ էր: Վրձին էր:

Ալիսիան կանգնած էր պատի մոտ, Յուրին և մի բուժքույր պահում էին նրան: Թեև ֆիզիկական ուժ կիրառելու կարիք չկար: Նա բավական հանգիստ էր, գրեթե անշարժ՝ արձանի պես: Դեմքի արտահայտությունն ինձ անմիջապես դիմանկարում պատկերված «Ալկեստիսին» հիշեցրեց՝ անիմաստ, ոչինչ չարտահայտող դեմքով, դատարկ հայացքով: Ալիսիան նայեց ուղիղ աչքերիս:

Ու ես առաջին անգամ վախեցա:

32

- Էլիֆն ինչպե՞ս է,- հարցրի Յուրիին, որն ինտենսիվ թերապիայի բաժանմունքից ակվարիում էր վերադառնում:
- Վիճակը կայուն է,- ասաց՝ ծանր հոգոց հանելով: - Հուսանք, որ կայունությունը կպահպանվի:
- Կուզեմ տեսնել նրան:
- Էլիֆի՞ն: Թե՞ Ալիսիային:
- Նախ Էլիֆին:
Յուրին գլխով արեց:
- Թող այսօր հանգստանա, իսկ վաղն առավոտյան Ձեզ նրա մոտ կտանեմ:
- Ի՞նչ է պատահել: Դուք այնտե՞ղ էիք: Ենթադրում եմ, որ Էլիֆն է Ալիսիային սադրել:
Յուրին դարձյալ հոգոց հանեց ու ուսերը թոթվեց:
- Չգիտեմ: Միայն հայտնի է, որ Էլիֆն Ալիսիայի արվեստանոցի մոտ էր պտտվում: Հետո, ամենայն հավանականությամբ, նրանց միջև ինչ-որ հակասություն է առաջացել: Գաղափար չունեմ, թե ինչի համար են վիճել:
- Այդ սենյակի բանալին ունե՞ք: Եկեք գնանք, նայենք: Գուցե ինչ-որ հուշում գտնենք:

Մենք ակվարիումից դուրս եկանք ու Ալիսիայի արվեստանոցի կողմ քայլեցինք: Ցուրին բացեց դուռը, միացրեց լույսը:

Հերիք էր մի անգամ նկարակալին նայել, ու ամեն ինչ պարզ կդառնար:

Ալիսիայի նկարը, որում այրվող Գրոուվն էր, փչացրել էին: Կտավի կենտրոնում կարմիր ներկով ու խոշոր տառերով գրված էր ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ:

Գլխով արեցի:

Հիմա ամեն ինչ պարզ է:

- Կարծում եք՝ Էլիֆն է արել:

- Ուրիշ էլ ո՞վ:

***

Գնացի ինտենսիվ թերապիայի բաժին Էլիֆին տեսնելու: Պառկած էր մահճակալին, ստանում էր կաթիլային ներարկում: Գլուխն ու վիրավոր աչքը վիրակապի մի քանի շերտով էին փաթաթված: Նա ընկճված էր, զայրացած: Ցավից տանջվում էր:

- Գրողի ծոցը գնա,- ասաց, երբ ինձ տեսավ:

Աթոռը մոտեցրի մահճակալին ու նստեցի: Հանգիստ էի խոսում, հարգանքով.

- Կներեք, Էլի՛ֆ: Անկեղծորեն ցավում եմ: Ահավոր բան է պատահել: Սա ողբերգություն է:

- Համաձայն եմ, գրողը տանի: Իսկ հիմա ռադդ քաշիր, հանգիստ թող:

- Էլի՛ֆ, պատմեք, ի՞նչ է պատահել:

- Էդ շան քածն աչքս հանեց: Ինչ պիտի պատահի:

- Բայց ինչու՞ այդպես արեց: Վիճեցի՞ք:

- Ինձ ես մեղադրում, հա՞: Ես ոչ մի բան էլ չեմ արել:

- Չեմ մեղադրում Ձեզ: Ուղղակի ուզում եմ պատճառը հասկանալ:

- Ինչ պատճառ: Ծալը պակաս է ու վերջ:

- Այսինքն՝ վեճն Ալիսիայի նկարի հետ կապ չունե՞ր: Ես տեսա, թե ինչ եք արել: Փչացրել եք նկարը, ճի՞շտ է:

Էլիֆը նեղացրեց մնացած աչքը, հետո ամուր փակեց:

- Վատ բան եք արել, Էլի՛ֆ: Իհարկե, Ալիսիայի արձագանքը չեմ արդարացնում, բայց ամեն դեպքում...

- Դրա համար չի հարձակվել:

Էլիֆը բացեց աչքն ու արհամարհանքով ինձ նայեց:

Մի պահ երկմտեցի:

- Չէ՞: Այդ դեպքում ինչու՞:

Էլիֆի շուրթերին ժպիտի պես մի բան հայտնվեց: Նա լուռ էր: Այդպես մի քանի րոպե անցավ: Արդեն ուզում էի գնալ, երբ ասաց.

- Ես նրան ճշմարտությունը պատմեցի:

- Ինչ ճշմարտություն:

- Դե, որ հավանում ես իրեն:

Ապշել էի: Չհասցրի պատասխանել: Էլիֆը շարունակեց խոսել սառը արհամարհանքով.

- Լսիր, մինչև ականջներդ սիրահարված ես, չէ՞: Դե, էդպես էլ ասացի՝ նա սիրում է քեզ: Ասացի՝ սիրում է քեզ... Սիրում-միրո՛ւմ է: Թեոն և Ալիսիան նստած են ծառի տակ: Թեոն ու Ալիսիան ՀԱՄԲՈՒՐՎՈ՛ՒՄ ԵՆ...,- Էլիֆը սկսեց սուր ծիծաղից ցնցվել: Մնացածը կարելի էր հեշտությամբ պատկերացնել...

Ալիսիան զայրացել է, պտտվել, վերցրել վրձինն ու... մտցրել Էլիֆի աչքը:

– Աննորմալ,– Էլիֆը քիչ էր մնում՝ լաց լիներ. տառապած էր, ուժասպառ: – Ցնդածի մեկը:

«Իսկ գուցե նա իրավացի՞ է»,– նայելով վիրակապած վերքին՝ մտածեցի ես:

33

Ժողովը տեղի ունեցավ Դիոմիդիսի գրասենյակում, բայց Ստեֆանի Քլարկը հենց սկզբից նախաձեռնությունն իր ձեռքն առավ: Միջադեպն արդեն հոգեբանության վերացական աշխարհից դուրս էր ու առնչվում էր առողջության ու անվտանգության կոնկրետ ու շոշափելի հարցերին, իսկ այս տարածքը Ստեֆանիին էր պատկանում, և նա այդ մասին լավ գիտեր: Դատելով պրոֆեսոր Դիոմիդիսի մռայլ լռությունից՝ երևում էր, որ նա նույնպես գիտեր:

Ստեֆանին թևերը խաչած կանգնած էր. նրա հուզմունքն ակնհայտ էր: Մտածեցի, որ հարբել է իշխանությունից ու վերջին խոսքն ասելու իրավունքից. կարելի էր պատկերացնել, թե որքան վիրավորանք էր կուտակվել նրա մեջ. չէ՞ որ միշտ որոշումներ կայացնելիս շրջանցել ենք, նրա դեմ թիմ հավաքել: Եվ հիմա պատրաստվում էր վրեժ լուծել:

– Երեկ առավոտյան պատահածն ուղղակի անթույլատրելի է,– ասաց: – Ես մտավախություն ունեի, զգուշացնում էի, որ պետք չէ Ալիսիային թույլ տալ նկարել, բայց Դուք ինձ անտեսեցիք: Հիվանդների նկատմամբ անհավասար մոտեցումը մշտապես խանդի ու դժգոհության տեղիք է տալիս: Այդպես

էլ գիտեի, որ վաղ թե ուշ նման մի բան կլինի: Այսուհետև անվտանգությունը պետք է առաջին տեղում լինի:

- Եվ դա՞ է Ալիսիային մեկուսարան տանելու պատճառը,- հարցրի: - Անվտանգության նկատառումներո՞վ:

- Նա սպառնալիք է իր և մյուսների համար: Հարձակվել է Էլիֆի վրա: Ախր կարող էր նրան սպանել:

- Նրան սադրել են:

- Չեմ կարծում, թե ուրիշի վրա հարձակումը կարելի է որևէ սադրանքով արդարացնել,- խոսակցությանը միացավ Դիոմիդիսը գլուխն օրորելով: Նա դժվար էր խոսում:

- Միանշանակ,- գլխով արեց Ստեֆանին:

- Բայց դա եզակի դեպք է,- ասացի: - Ալիսիային մեկուսացնելը ոչ թե ուղղակի դաժան է, այլ բարբարոսություն:

Բրոդմուրում տեսել էի հիվանդների, որոնց մեկուսարանում էին տեղավորում, փոքրիկ սենյակում, որտեղ պատուհան չկար, ու մահճակալը հազիվ էր տեղավորվում, ուր մնաց թե այլ կահույք լիներ: Օրեր կամ նույնիսկ ժամեր տևած մեկուսացումը բավարար էր, որ մարդը խելագարվեր, հատկապես, երբ խոսքն այն մարդկանց էր վերաբերում, որոնք առանց այդ էլ անկայուն հոգեվիճակում էին:

Ստեֆանին թոթվեց ուսերը:

- Որպես կլինիկայի ղեկավար, ես լիազորված եմ ձեռնարկել ցանկացած միջոց, որն անհրաժեշտ կհամարեմ: Խորհրդակցել եմ Քրիստիանի հետ. նա իմ առաջարկին համաձայն է:

- Դե, իհարկե:

Սենյակի հակառակ կողմից Քրիստիանն ինքնագոհ ժպտաց ինձ: Զգում էի, թե Դիոմիդիսն ինչպես է ակնդետ նայում ինձ: Իհարկե, հասկանում էի, թե ինչ են մտածում... Ինձ

թույլ էի տվել Ալիսիայի հանդեպ դրսևորել խիստ անձնական վերաբերմունք, ցույց էի տվել զգացմունքներս: Բայց ինձ համար միևնույն էր:

- Մեկուսացումը հարցի լուծում չէ: Պետք է անընդհատ խոսենք նրա հետ: Պետք է հասկանանք:

- Ես հրաշալի հասկանում եմ,- ասաց Քրիստիանը մեղադրական տոնով, ասես ծնող լիներ, որը խոսում էր զանցանք կատարած երեխայի հետ: - Խնդիրը դու ես, Թեո:

- Ես:

- Ուրիշ էլ ո՞վ: Այս ամբողջ շիլան դո՛ւ ես եփել:

- Ի՞նչ շիլա:

- Դո՞ւ չէիր, որ ընդհատակյա պայքար էիր մղում Ալիսիայի դեղաչափը նվազեցնելու համար:

- Թույլ տուր չհամաձայնել,- ծիծաղեցի: - Դա ոչ թե ընդհատակյա պայքար էր, այլ բացահայտ միջամտություն: Ալիսիային մինչև մազերի ծայրը հանգստացնողներ էին ներարկում, կարծես քայլող զոմբի լիներ:

- Հիմարություն:

Ես Դիոմիդիսին նայեցի:

- Դուք իսկապես ամեն ինչում ի՞նձ եք մեղադրում: Դա՞ է այսօրվա ժողովի բուն նպատակը:

Դիոմիդիսը տարուբերեց գլուխը, բայց աչքերը փախցրեց:

- Իհարկե, ոչ: Բայց միաժամանակ միանգամայն ակնհայտ է, որ բուժման սկզբունքի փոփոխությունն ապակայունացրել է Ալիսիայի վիճակը: Դուք նրանից շատ բան եք պահանջում և շատ շուտ: Կարծում եմ՝ հենց դա է երեկ տեղի ունեցած այս դժբախտ դեպքի պատճառը:

- Համաձայն չեմ:

- Գուցե փոքր-ինչ հեռվից նայեք վիճակին, դե, օտար աչքով,- Դիոմիդիսը հոգոց հանելով բարձրացրեց ձեռքերը, ասես էլ վիճելու ցանկություն չուներ: - Մենք իրավունք չունենք հերթական սխալը թույլ տալ, այն էլ՝ այսպիսի օրհասական պահի: Ինչպես գիտեք, հոգեբուժարանի ապագան վտանգված է: Ու մեր ցանկացած սխալ կառավարող կազմակերպության ձեռքում կլինի բաժանմունքը փակելու օգտին հերթական փաստարկը:

Դիոմիդիսի պարտվողական դիրքորոշումից, նրա պարտադրված համաձայնությունից սարսափելի նյարդայնացա:

- Ախր հասկացեք՝ Ալիսիային դեղերով խեղդելն ու մեկուսարանում հավերժ փակելը բուժում չեն,- ասացի: - Մենք բժիշկ ենք, ոչ թե բանտապահ:

- Համաձայն եմ,- ասաց Ինդիրան՝ իր աջակցությունը հայտնելով ժպիտով, ապա շարունակեց,- խնդիրն այն է, որ մենք չափազանց շատ ենք վախենում ամեն ինչից, ուստի նախընտրում ենք դեղաչափն ավելացնել, քան վտանգել հիվանդի վիճակը... Պետք է համարձակություն ունենալ լեզու գտնել խելագարի հետ, զսպել նրան, ոչ թե փակի տակ պահել:

Քրիստիանը նյարդայնացած ոլորեց աչքերն ու պատրաստվում էր հակաճառել, բայց Դիոմիդիսն առաջինը խոսեց գլուխը տարուբերելով.

- Չափազանց ուշ է: Մեղավորը ես եմ: Ալիսիան հոգեթերապիայի համար հարմար թեկնածու չէ: Ես ոչ մի դեպքում այդ սխալը չպետք է թույլ տայի:

Դիոմիդիսն իրեն էր մեղադրում, բայց գիտեի, որ իրականում ինձ է համարում բոլոր խնդիրների պատճառը: Բոլորի հայացքներն ինձ էին ուղղված. Դիոմիդիսը՝ հոգնած ու

խոժոռ, Քրիստիանը՝ հաղթական ու ինքնագոհ, Ստեֆանին՝ ակնհայտ թշնամանքով, իսկ Ինդիրան՝ մտահոգ:

Փորձեցի խոսել այնպես, որ ասածս խնդրանք չթվա:

- Եթե ուզում եք, Ալիսիային արգելեք նկարել,- ասացի,- միայն թե բուժման հին մեթոդին մի՛ վերադարձեք: Միայն այդ դեպքում նա մեզ իրեն մոտ կթողնի:

- Ես սկսում եմ մտածել, որ Ալիսիան ընդհանրապես անբուժելի է,- գլուխն օրորելով ասաց Դիոմիդիսը:

- Ուղղակի մի քիչ էլ ժամանակ տվեք ինձ ու...

- Ո՛չ,- ասաց Դիոմիդիսը: - Ամեն ինչ ավարտված է:

Նրա ձայնն ինձ հուշեց, որ վիճելն անիմաստ է:

34

Ձյունաբեր ամպերի վերաբերյալ Դիոմիդիսի վարկածը սխալ էր: Ձյուն չեկավ. փոխարենն այդ օրն ուժեղ անձրև տեղաց: Փոթորիկ բարձրացավ՝ ամպրոպի տարափով ու կայծակի փայլատակումներով:

Հոգեթերապիայի սենյակում Ալիսիային էի սպասում ու նայում, թե անձրևն ինչպես է պատուհանին խփում:

Հոգնած ու ճնշված էի: Պարզվեց՝ Ալիսիային բուժելու մտահղացումը ժամանակի անիմաստ կորուստ էր: Ինձ արգելել էին Ալիսիայի հետ աշխատել. ես չհասցրեցի ինչ-որ կերպ օգնել նրան: Ու հիմա արդեն ուշ էր:

Դուռը թակեցին: Ցուրին Ալիսիային թերապիայի սենյակ բերեց: Նա ավելի վատ տեսք ուներ, քան սպասում էի: Գունատ էր, դալուկ՝ ուրվականի նման: Շարժումներն անփույթ էին, աջ ոտքն անդադար դողում էր: Անիծված Քրիստիանը: Դեղերով նրան մահվան դուռն էր հասցրել:

Ցուրիի հեռանալուց հետո երկար դադար եղավ: Ալիսիան ինձ չէր նայում: Վերջապես խոսեցի: Բարձր ու հստակ, որ խոսքս ճեղքի մշուշված գիտակցությունը:

- Ալիսիա՛, կներեք, որ Ձեզ մեկուսացրել են: Ցավում եմ, որ ստիպված եք այս ամենի միջով անցնել:

Ոչ մի արձագանք չեղավ: Մի քիչ սպասեցի, հետո շարունակեցի.

- Էլիֆի հետ պատահածի պատճառով մեր սեանսները, ցավոք, դադարեցված են: Որոշումն իմը չէ: Ես, իհարկե, դիմադրում էի, բայց ամեն ինչ որոշված է: Ոչինչ չեմ կարող անել: Ինձ հաջողվեց միայն մի վերջին սեանս խնդրել, փորձել Ձեզ հետ խոսել Ձեր ու Էլիֆի միջև պատահած միջադեպի մասին ու օգնել, որ արտահայտեք Ձեր ափսոսանքը, ինչը, վստահ եմ, զգում եք:

Ալիսիան լուռ էր: Մտավախություն ունեի, որ դեղերի ազդեցության տակ է և ի վիճակի չէ խոսքերս ընկալել:

- Գիտեք հիմա ինչ եմ զգում,- շարունակեցի: - Անկեղծ ասած, զայրացած եմ: Զայրացած եմ, որ դեռ չէինք սկսել աշխատել, բայց մեր սեանսներն արդեն արգելեցին: Զայրանում եմ, որ բավարար ջանք չգործադրեցիք:

Ալիսիան շարժեց գլուխը: Հայացքն ինձ հառեց:

- Դուք վախենում եք, գիտեմ,- ասացի: - Փորձեցի Ձեզ օգնել, բայց թույլ չտվեցիք: Իսկ հիմա գաղափար չունեմ, թե ինչ անեմ:

Պարտվածի պես լռեցի:

Ու այդ ժամանակ եղավ մի բան, որը երբեք չեմ մոռանա:

Ալիսիան ինձ մեկնեց դողացող ձեռքը, որում փոքր, կաշեպատ գրքույկ էր:

- Ի՞նչ է սա:

Ձայն չկար: Գրքույկը դեռ մեկնած էր: Հետաքրքրությունս չէի կարողանում զսպել:

- Ուզում եք, որ վերցնեմ,- հարցրի:

Նա լուռ էր: Նրա դողացող մատներից զգուշությամբ վերց-

ոի գրքույկը: Բացեցի ու թերթեցի էջերը: Օրագիր էր՝ ձեռագրային նշումներով:

Ալիսիայի օրագիրն էր:

Դատելով ձեռագրից գրառումներն արել էր հոգեկան անհավասարակշիռ վիճակում, հատկապես վերջին էջերը, որտեղ գրառումները գրեթե անընթեռնելի էին: Էջերի տարբեր անկյուններում արված գրառումներն իրար էին կապված սլաքներով, իսկ որոշ էջերում գրառումների վրա նկարներ ու նախշեր կային. ծաղիկները խաղողի որթերի էին վերածվում՝ նուրբ մանրագծերով ծածկելով գրված տեքստը:

- Ի՞նչ անեմ,- ասացի հետաքրքրությունից այրվելով:

Հարցն անիմաստ էր: Ինքս էլ կռահում էի:

Ալիսիան ուզում էր, որ կարդամ օրագիրը:

ՄԱՍ
երրորդ

Չի կարելի տարօրինակ բաներ տեսնել այնտեղ, որտեղ իրականում ոչ մի տարօրինակ բան էլ չկա: Կարծում եմ՝ օրագիր պահելու վտանգը հենց դա է. անընդհատ ամեն ինչ չափազանցնում ես, անընդհատ փոխում ես ճշմարտությունը: Մյուս կողմից էլ՝ վստահաբար կարելի է ասել, որ ամեն վայրկյան էլ կարող եմ նորից զգալ երեկ չէ առաջին օրվա զգացածս:

Ժան Պոլ Սարտր, *«Սրտխառնոց»*[1]

Թեև ես բնությամբ պատվավոր մարդ չեմ, բայց երբեմն, բախտի բերումով, այդպիսին եմ դառնում:

Ուիլյամ Շեքսպիր, *«Զմեռային հեքիաթ»*[2]

---

[1] Թարգմանությունը՝ Հայկ Ֆելեքյանի:

[2] Թարգմանությունը՝ Ստեփան Ալաջաջյանի:

Ալիսիա Բերենսոնի օրագրից

Օգոստոսի 8

Այսօր տարօրինակ բան պատահեց:

Խոհանոցում էի, սուրճ էի պատրաստում ու մտքերիս մեջ ընկած պատուհանից աննպատակ նայում էի, երբ հանկարծ դրսում մի բան նկատեցի, ավելի ճիշտ՝ մեկին: Տղամարդ էր: Ուշադրությունս գրավեց, որովհետև, արձանի պես անշարժ կանգնած, մեր տանն էր նայում: Դիմացի մայթին՝ զբոսայգու մուտքի մոտ էր թաքնվել: Ծառի ստվերում էր: Բարձրահասակ էր, թիկնեղ: Դիմագծերը չկարողացա տեսնել, որովհետև արևային ակնոցով ու կեպիով էր:

Չեմ կարող ասել՝ ապակու միջով տեսնո՞ւմ էր ինձ, թե ոչ, բայց այնպիսի տպավորություն էր, որ հենց ինձ է նայում: Ա՜յ քեզ տարօրինակ բան. մեր տան դիմաց ավտոբուսի կանգառ կար, ու այնտեղ մշտապես սպասող մարդիկ ինձ համար սովորական էին: Բայց այս տղամարդն ավտոբուսի չէր սպասում: Անթարթ մեր տանն էր նայում:

Հասկանալով, որ այնտեղ շատ երկար կանգնեցի, ինձ մի կերպ ստիպեցի հեռանալ պատուհանից ու գնացի արվեստանոց: Փորձեցի նկարել, բայց կենտրոնանալ չէի կարողանում: Մտքով անընդհատ վերադառնում էի անծանոթ տղա-

մարդուն: Որոշեցի ևս 20 րոպե սպասել, հետո խոհանոց վերադառնալ ու նորից նայել: Իսկ եթե տղամարդը դեռ այնտեղ լիներ, ի՞նչ էի անելու: Ճիշտն ասած, ոչ մի վատ բան չէր անում: Սկզբում մտածեցի՝ գուցե գող է, տունն է ուսումնասիրում: Բայց եթե այդպես է, ինչո՞ւ է անթաքույց կանգնել փողոցում: Գուցե մտքին կա մեր թաղամա՞ս տեղափոխվել: Օրինակ՝ ուզում է մեր փողոցի տներից մեկը գնել: Եթե այդպես է, ուրեմն ամեն ինչ հասկանալի է:

Բայց երբ վերադարձա խոհանոց ու նայեցի պատուհանից, չկար: Փողոցը դատարկ էր:

Երևի այդպես էլ չեմ իմանա, թե տղամարդն ինչ էր անում մեր տան մոտ: Ա՛յ քեզ բան:

Օգոստոսի 10

Երեկ երեկոյան Ժան-Ֆելիքսի հետ ներկայացման գնացի: Գաբրիելը դեմ էր, բայց ես, միևնույն է, գնացի: Թեև վախենում էի, բայց որոշեցի Ժան-Ֆելիքսին ընդառաջ գնալ ու հրավերն ընդունել. գուցե դրանից հետո ինձ հանգիստ թողնի: Համենայն դեպս, անկեղծորեն հույս էի փայփայում:

Պայմանավորվեցինք շուտ հանդիպել, ներկայացումից առաջ մի բան խմել (սա, ի դեպ, նրա գաղափարն էր), ու, երբ տեղ հասանք, դեռ մութը չէր ընկել: Արևն իջնում էր հորիզոնում՝ ներկելով գետի ջրերն արնակարմիր: Ժան-Ֆելիքսն Ազգային թատրոնի մուտքի մոտ ինձ էր սպասում: Առաջինը ես տեսա նրան, հետո նա՝ ինձ: Անցորդների մեջ ինձ էր փնտրում: Հայացքը խոժոռ էր: Երբ տեսա զայրացած դեմքը,

բոլոր կասկածներս, թե արդյոք ճիշտ եմ վարվում, թե ոչ, փոշիացան: Սիրտս սարսափելի վախով լցվեց. քիչ էր մնում՝ շրջվեի ու փախուստի դիմեի, բայց չհասցրի. նա շրջվեց ու տեսավ ինձ: Թափահարեց ձեռքը: Նրա կողմ քայլեցի: Ձևացրի, թե ժպտում եմ, նա՝ նույնպես:

- Ուրախ եմ, որ եկար,- ասաց Ժան-Ֆելիքսը: - Մտածում էի՝ չես գա: Գնանք, մի-մի գավաթ խմենք:

Նախասրահում խմեցինք: Քիչ է ասել, որ մթնոլորտը լարված էր: Ո՛չ ես, ո՛չ նա նախորդ օրվա մասին չխոսեցինք: Դես ու դենից էինք խոսում, ավելի ճիշտ, Ժան-Ֆելիքսը խոսում էր, իսկ ես լսում էի: Մի քանի բաժակ խմեցինք: Ամբողջ օրը ոչինչ չէի կերել, ու խմիչքն արագ ազդեց: Հավանական է, որ Ժան-Ֆելիքսի մտքինն էլ հենց դա էր: Նա ամեն ինչ անում էր, որ մասնակցեմ զրույցին, բայց խոսակցությունն անբնական էր ստացվում, սարքովի, բեմադրված: Նրա բոլոր նախադասություններն այսպես էին սկսվում. «Ինչ ուրախ էր, չէ՞, երբ մենք...» կամ «Հիշո՞ւմ ես այն ժամանակները, երբ մենք...»: Թվում էր՝ հատուկ պատրաստվել էր խոսել անցյալի թեմայով՝ հուսալով, որ վճռականությունս կկոտրի ու կհիշեցնի, թե որքան ընդհանուր հիշողություններ ունենք, ինչքան մոտ ենք իրար: Ըստ ամենայնի՝ դեռ չի գիտակցում, որ որոշումս կայացրել եմ: Ու հիմա ինչ էլ որ ասի, ոչինչ չի փոխվելու:

Ճիշտն ասած, ուրախ եմ, որ նրա հետ թատրոն գնացի: Ոչ թե որովհետև Ժան-Ֆելիքսին հանդիպեցի, այլ հրաշալի ներկայացում նայեցի: «Ալկեստիս» ողբերգության մասին երբեք չէի լսել: Պիեսն անհասկանալի է թվում, որովհետև փոքր կենցաղային պատմություն է ու հենց դրանով էլ ինձ շատ դուր եկավ: Դեպքերը մեր ժամանակներում են տեղի ունենում

Աթենքի արվարձանում, մի փոքրիկ տանը: Բեմադրության մեկնաբանությունն իմ սրտով էր: Մտերմիկ, ընտանեկան մթնոլորտ է: Գլխավոր հերոսին մահվան են դատապարտում, իսկ կինը՝ Ալկեստիսը, վճռում է փրկել նրան: Ալկեստիսի դերակատարուհին հունական արձան էր հիշեցնում. սքանչելի դիմագծեր ուներ: Ես անընդհատ նրան նկարելու մասին էի մտածում: Նույնիսկ մտածեցի՝ անունն իմանամ ու դերասանուհու գործակալի հետ կապվեմ: Քիչ էր մնում՝ այդ մասին ասեի Ժան-Ֆելիքսին, բայց ժամանակին զսպեցի ինձ: Էլ չեմ ուզում, որ ոչ մի առումով իմ կյանքին մասնակցի: Ներկայացման եզրափակիչ մասն այնքան հուզիչ էր, որ արտասվեցի. Ալկեստիսը մահանում է, հետո հարություն է առնում: Նա տառացիորեն վերադառնում է մեռյալների աշխարհից: Ես դեռ երկար կմտածեմ այդ մասին: Առայժմ չեմ կարող ձևակերպել, թե կոնկրետ ինչն էր ինձ հուզել: Անշուշտ, Ժան-Ֆելիքսը պիեսի մասին շատ բան ասաց, բայց նրա կարծիքներից և ոչ մեկը կապ չուներ նրա հետ, ինչ ես էի զգում: Ուստի ուղղակի դադարեցի լսել նրան:

Ալկեստիսի մահն ու հարությունը մտքիցս դուրս չէին գալիս, անընդհատ այդ մասին էի մտածում, երբ ոտքով անցանք կամուրջն ու կայարանին մոտեցանք: Ժան-Ֆելիքսը հարցրեց՝ կուզե՞մ էլի խմել, բայց հրաժարվեցի՝ ասելով, որ հոգնած եմ: Եվ նորից անհարմար լռություն տիրեց: Կայարանի մուտքի մոտ էինք կանգնած: Երեկոյի համար շնորհակալություն հայտնեցի, ասացի, որ բեմադրությունը հրաշալի էր:

- Արի գնանք, մի բաժակ էլ խմենք,- ասաց Ժան-Ֆելիքսը: -Երկար չի տևի: Հանուն հին ու բարի ժամանակների:

- Ոչ, պետք է գնամ:

Փորձեցի քայլել դեպի կայարանի մուտքը, բայց նա բռնեց ձեռքս:

- Ալիսիա,- ասաց: - Լսի՛ր ինձ: Խոսելու բան կա:

- Ոչ, խնդրում եմ, պետք չէ, մենք ամեն ինչ քննարկեցինք...

- Լսիր, խնդրում եմ: Քո մտածածը չէ:

Նա իրավացի էր: Սխալվում էի՝ մտածելով, թե հիմա Ժան-Ֆելիքսը կաղաչի, որ ընկերություն անենք, կամ կփորձի խղճիս վրա ազդել, որ որոշել եմ իր պատկերասրահից հեռանալ: Բայց այն, ինչ ասաց, ուղղակի ցնցեց ինձ:

- Զգույշ եղիր,- ասաց: - Չափից շատ ես վստահում քեզ շրջապատող մարդկանց... Մի՛ արա: Մի՛ վստահիր:

Զարմացած նրան էի նայում ու միայն մեկ վայրկյան անց կարողացա խոսել:

- Ի՞նչ ես ասում: Ի՞նչ նկատի ունես:

Ժան-Ֆելիքսը միայն թափահարեց գլուխն ու ոչինչ չասաց: Հետո բաց թողեց ձեռքս ու հեռացավ:

- Ժան-Ֆելիքս: Կանգնի՛ր,- կանչեցի նրա հետևից, բայց չկանգնեց:

Նույնիսկ հետ չնայեց: Հետևեցի, թե ինչպես անհետացավ անկյունում: Քարացած կանգնել էի փողոցի կենտրոնում: Ոչինչ չէի հասկանում: Ինչպե՞ս կարելի էր առեղծվածային նախազգուշացում անել, իսկ հետո լուռ հեռանալ: Երևի ուզում էր ինձ վրա տպավորություն թողնել, իսկ հետո գնալ՝ ինձ թողնելով անորոշ ու անօգնական վիճակում: Պետք է խոստովանեմ, որ նրան հաջողվեց:

Նա զայրացրեց, թեև ինչ-որ առումով, նաև դրությունս հեշտացրեց: Հիմա հաստատ գիտեմ, որ նրա հետ բոլոր կապերս կխզեմ: Ի՞նչ նկատի ուներ, երբ ասում էր «քեզ շրջապատող

մարդիկ»: Ենթադրում եմ, որ Գաբրիելին էր ակնարկում: Բայց ինչո՞ւ:

Ո՛չ, չեմ անի: Ժան-Ֆելիքսի ուզածն էլ հենց դա է, որ իր զառանցանքին հավատամ: Ուզում է ինձ թյուրիմացության մեջ գցել: Ուզում է իմ ու Գաբրիելի միջև խցկվել:

Չի ստացվի: Այդ մասին նույնիսկ չեմ մտածի:

Երբ տուն վերադարձա, Գաբրիելն արդեն քնած էր: Վաղ առավոտյան, ժամը 5-ին, նկարահանում ուներ: Բայց ես նրան արթնացրի, ու մենք սիրեցինք իրար: Այնպես էի ուզում ամուր սեղմվել նրա մարմնին, ամբողջ մարմնով զգալ նրան: Ուզում էի ձուլվել նրա հետ: Ուզում էի մտնել մարմնի մեջ ու անհետանալ, լուծվել նրա մեջ:

Օգոստոսի 11

Նորից տեսա այն տղամարդուն: Այս անգամ մի քիչ հեռու էր նստած՝ նստարանին, զբոսայգու խորքում: Բայց նա էր, հաստատ նա էր: Ի տարբերություն մյուսների, որոնք շոգ եղանակին զբոսնում էին բաց գույների կարճ տաբատներով ու շապիկներով, նրա հագին մուգ վերնաշապիկ ու տաբատ էր, սև ակնոց ու կեպի: Գլուխը թեքել էր մեր տան կողմ ու նայում էր:

Հանկարծ գլխումս զվարճալի միտք ծնվեց. իսկ գուցե ոչ թե գող է, այլ նկարիչ: Հնարավոր է, որ ինձ նման նկարիչ է ու որոշել է փողոցը կամ մեր տունը նկարել: Բայց հենց նույն պահին հասկացա, որ սխալվում եմ: Եթե իսկապես տունը նկարելու մտադրություն ուներ, հենց այդպես չէր նստի, ճեպանկարներ կաներ:

Հանկարծ մարմնովս սարսուռ անցավ ու որոշեցի զանգել Գաբրիելին: Բայց դա սխալ էր: Ձայնից հասկացա, որ խիստ զբաղված է ու բոլորովին ցանկություն չունի լսել, թե ինչպես եմ գանգատվում մի ինչ-որ տղամարդուց, որն իբր մեր տանն է հետևում:

Իհարկե, միայն ենթադրում էի, թե տղամարդու թիրախը տունն է:

Գուցե նա հենց ինձ էր հետևում:

Օգոստոսի 13

Նա դարձյալ այնտեղ էր:

Առավոտ էր, Գաբրիելը քիչ առաջ էր տնից դուրս եկել: Ցընցուղ էի ընդունում ու հանկարծ նրան լոգարանի պատուհանից տեսա: Այսօր ավելի մոտ էր տանը, ավտոբուսի կանգառի մոտ էր կանգնած, իբր ավտոբուսին էր սպասում:

Սրա՞ն տեսեք, ո՞ւմ է խաբում:

Արագ հագնվեցի ու խոհանոց գնացի, որ ավելի լավ տեսնեմ: Բայց չկար:

Որոշեցի երեկոյան ամեն ինչ պատմել Գաբրիելին: Կարծում էի, թե ուշադրություն չի դարձնի խոսքերիս, բայց լուրջ ընդունեց: Նույնիսկ անհանգստացած էր երևում:

- Ժան-Ֆելի՞քսն է,- ուղիղ հարցրեց:

- Ո՛չ, իհարկե, ո՛չ: Ինչպե՞ս կարող ես նման բան մտածել:

Ձևացրի, թե զարմացած ու վրդովված եմ, բայց իրականում իմ մտքով էլ էր անցել: Տղամարդն ու Ժան-Ֆելիքսը կազմվածքով նման էին: Գուցե և Ժան-Ֆելիքսն է, բայց եթե նույ-

Նիսկ այդպես է, հրաժարվում եմ հավատալ: Նա ընդունակ չէ այսպես վախեցնել ինձ: Թե՞ սխալվում եմ:

- Ժան-Ֆելիքսի հեռախոսահամարն ասա: Հենց հիմա կզանգեմ,- վճռական ասաց Գաբրիելը:

- Սիրելի՛ս, պետք չէ, խնդրում եմ: Վստահ եմ, որ նա չէր:

- Հաստա՞տ:

- Հաստատ: Իրականում լուրջ բան չի եղել: Իզուր էլ մանրուքից մեծ պատմություն սարքեցի: Մոռացի՛ր:

- Որքա՞ն մնաց տան մոտ:

- Երկար չմնաց: Մոտ մի ժամ, իսկ հետո անհետացավ:

- Ինչպե՞ս թե անհետացավ:

- Ուղղակի անհետացավ ու վերջ:

- Պարզ է: Իսկ միգուցե աչքի՞դ է երևացել:

Նրա խոսելու ձևն ինձ զայրացրեց:

- Ոչինչ էլ աչքիս չի երևացել: Դու պիտի հավատաս ինձ:

- Հավատում եմ:

Բայց զգում էի, որ ինձ լիարժեք չի վստահում: Գաբրիելի միայն մի մասն էր հավատում: Նրա մյուս մասը ծաղրում էր: Եվ դա, անկեղծ ասած, ինձ բարկացնում էր: Այնքան, որ այստեղ էլ թերևս կանգ առնեմ, այլապես գուցե ինչ-որ բան գրեմ, ինչի համար հետո կզղջամ:

Օգոստոսի 14

Առավոտյան, արթնանալուս պես, խոհանոց շտապեցի: Նայեցի պատուհանից՝ հուսալով, որ տղամարդն այնտեղ կլինի, ու նրան ցույց կտամ Գաբրիելին, բայց տղամարդու

հետքն անգամ չկար: Ու հիմա ինքս իմ աչքում ավելի հիմար երևացի:

Թեև շոգ էր, կեսօրին որոշեցի զբոսանքի դուրս գալ: Ուզում էի զբոսայգի իջնել՝ շենքերից, ճանապարհներից, ուրիշ մարդկանցից հեռու, մտքերիս հետ մեն-մենակ: Քայլեցի մինչև Պառլամենտական բլուր՝ շրջանցելով քայլուղու աջ ու ձախ կողմում փռված՝ արևի լոգանք ընդունողների կիսամերկ մարմինները: Ազատ նստարան գտա ու նստեցի՝ նայելով հեռվում փայլփլող Լոնդոնին:

Քանի դեռ զբոսայգում էի, ինձ ամեն վայրկյան թվում էր, թե թիկունքումս ինչ-որ մեկը կա: Շարունակ շրջվում էի, հետ նայում, բայց ոչ ոքի չէի տեսնում: Բայց ախր ինչ-որ մեկը կար անընդհատ: Զգում էի: Ինձ հետևում էին:

Վերադարձի ճանապարհին լճակի կողքով քայլեցի: Պատահաբար բարձրացրի հայացքս և ահա տեսա նրան. կանգնած էր հանդիպակաց ափին, շատ հեռու էր, ուստի մանրամասները չէի կարող հստակ տեսնել, բայց հաստատ նա էր: Վստահ էի՝ նա էր: Հանդարտ, անշարժ կանգնած էր, ուղիղ ինձ էր նայում:

Մարմնովս սառը դող անցավ. վախեցած էի:

- Ժան-Ֆելի՛քս,- բնազդաբար գոռացի ես: - Դո՛ւ ես: Վե՛րջ տուր: Հերի՛ք է՝ հետևես ինձ:

Նա չէր շարժվում: Հնարավորինս արագ ձեռքս տարա գրպանս, հանեցի հեռախոսս ու նկարեցի: Չգիտեմ, թե դա ինչպես էր գործին օգնելու: Հետո շրջվեցի ու սկսեցի արագ դեպի լճակի ծայրը քայլել՝ ինքս ինձ թույլ չտալով հետ նայել այնքան ժամանակ, մինչև գլխավոր ճանապարհին հասա: Վախենում էի, որ անծանոթն ուղիղ թիկունքիս է:

Շրջվեցի, բայց չկար:

Հուսով եմ՝ Ժան-Ֆելիքսը չէր: Անկեղծ հույս եմ փայփայում:

Երբ տուն հասա, ծայրահեղ լարված էի. վարագույրները քաշեցի, լույսն անջատեցի: Պատուհանից ծիկրակեցի. այնտեղ էր:

Փողոցում կանգնած ուղիղ ինձ էր նայում: Քարացա. չգիտեի ինչ անել:

Քիչ էր մնում՝ կաթված ստանայի, երբ ինչ-որ մեկն ինձ կանչեց:

- Ալիսիա՛: Ալիսիա՛, այստե՞ղ ես:

Այն սարսափելի կինն էր, հարևանուհիս՝ Բարբի Հելմանը: Հեռացա պատուհանից, գնացի դուռը բացելու: Բարբին դարպասից էր ներս մտել ու արդեն այգում էր՝ ձեռքին մի շիշ գինի:

- Ողջույն, քա՛ղցրս,- ասաց: - Մտա արվեստանոց, տեսա այնտեղ չես: Մտածեցի՝ տանն ես:

- Դուրս էի եկել, քիչ առաջ վերադարձա:

- Մի-մի բաժակ չխմե՞նք,- ասաց երեխայական ձայնով, որը երբեմն օգտագործում էր, և որն ինձ սարսափելի նյարդայնացնում էր:

- Ճիշտն ասած, ուզում էի աշխատել:

- Շատ չեմ զբաղեցնի: Ես էլ պիտի գնամ՝ երեկոյան իտալերենի դաս ունեմ: Լա՛վ:

Առանց պատասխանիս սպասելու՝ ներս մտավ: Քթի տակ ինչ-որ բան փնթփնթաց, թե խոհանոցում խավար է ու, առանց ինձ հարցնելու, սկսեց բացել վարագույրները: Ուզում էի խանգարել, բայց երբ պատուհանից դուրս նայեցի, փողոցում ոչ ոք չկար: Տղամարդն անհետացել էր:

Չգիտեմ ինչու այդ մասին Բարբիին պատմեցի: Ախր նա ինձ դուր չի գալիս, բոլորովին չեմ վստահում, բայց երևի շատ

վախեցած էի և ուզում էի ինչ-որ մեկի հետ կիսվել: Պետք էր խոսել մեկի հետ, իսկ այդ պահին կողքիս միայն նա էր: Խմեցինք, մի բան, որը երբեք չեմ անում, իսկ հետո լաց եղա: Բարբին, աչքերը լայն բացած, լուռ ինձ էր նայում: Երբ ավարտեցի պատմությունը, նա գինու շիշը սեղանին դրեց:

- Ավելի թունդ բան է պետք,- ասաց ու երկու բաժակ վիսկի լցրեց: - Վերցրու, խմի՛ր,- ասաց: - Քեզ հիմա շատ է պետք:

Իրավացի էր, ինձ իսկապես թունդ բան էր պետք: Մինչև վերջ խմեցի ու զգացի, որ լարվածությունս դանդաղ թուլանում է: Հիմա լսելու իմ հերթն էր: Բարբին ասաց, որ չի ուզում ինձ վախեցնել, բայց նրա խոսքերից սարսափեցի:

- Հեռուստատեսային շոուներում դա միլիոն անգամ տեսել եմ, ձեր տունն է ուսումնասիրում, հասկանո՞ւմ ես: Պատրաստվում է, որ հետո հաջորդ քայլն անի:

- Կարծում ես՝ բնակարանային գո՞ղ է:

- Կամ բռնաբարող,- Բարբին թոթվեց ուսերը: - Ի՞նչ կարևոր է: Ինչ էլ որ լինի, շատ վատ է:

Թեթևացած ծիծաղեցի: Շնորհակալ էի, որ գոնե ինչ-որ մեկն ինձ լուրջ է ընդունում, թեկուզ Բարբին: Ցույց տվեցի հեռախոսիս նկարը, բայց Բարբին բոլորովին էլ տպավորված չէր:

- Լուսանկարն ուղարկիր ինձ, հետո ակնոցով կնայեմ: Թե չէ առանց ակնոցի աչքիս լղոզված կետ է երևում: Ասա, խնդրում եմ, ամուսնուդ արդեն պատմե՞լ ես:

Որոշեցի ստել:

- Դեռ ոչ,- ասացի:

Բարբին ծամածռեց դեմքը:

- Ինչո՞ւ:

- Չգիտեմ, ինձ թվում է՝ Գաբրիելը կասի, թե հորինում եմ:

- Բայց դու չես հորինում, չէ՞:

- Չէ:

Բարբին գոհ էր:

- Եթե Գաբրիելը քեզ չհավատա, միասին կգնանք ոստիկանություն: Դու և ես: Հավատա՛ ինձ, ես կարողանում եմ համոզել մարդկանց:

- Շնորհակալություն, բայց վստահ եմ, որ դրա կարիքը չկա:

- Արդեն կա: Հասկացի՛ր, ամեն ինչ շատ լուրջ է, սիրելի՛ս: Խոստացիր, որ կպատմես Գաբրիելին, երբ նա տուն վերադառնա:

Լուռ գլխով արեցի: Բայց արդեն որոշել էի այլևս ոչինչ Գաբրիելին չպատմել: Պատմելու բան էլ չկար: Ապացույց չունեի, որ տղամարդը հետապնդում կամ հետևում է ինձ: Բարբին իրավացի էր. լղոզված լուսանկարն ապացույց չէ:

Արդեն գիտեի՝ Գաբրիելը կասի, որ այս ամենն իմ հիվանդ երևակայությունն է: Ավելի լավ է ընդհանրապես նրան ոչինչ չասել, քան ռիսկի դիմել ու բարկացնել: Ի՞նչ իմաստ ունի անհանգստացնել նրան:

Կաշխատեմ մոռանալ:

Առավոտյան ժամը 4-ին

Ծանր գիշեր էր:

Գաբրիելը տուն եկավ մոտավորապես ժամը 10-ին՝ ուժասպառ: Երկար աշխատանքային օրն ավարտվել էր, ու հիմա ուզում էր շուտ քնել: Ես էլ փորձեցի քնել, բայց անօգուտ: Մի քանի ժամ առաջ ձայներ լսեցի: Այգու կողմից էր: Անկողնուց վեր կացա, մոտեցա պատուհանին: Դուրս նայեցի. ոչինչ չէր

երևում, բայց ինչ-որ մեկի սևեռուն հայացքն էի զգում: Խավարի միջից մեկն ինձ էր նայում:

Ինձ ստիպեցի հետ գնալ պատուհանից ու դեպի ննջարան վազել: Ցնցելով արթնացրի Գաբրիելին:

- Այնտեղ մարդ կա, դրսում,- ասացի: - Այգո՛ւմ:

Գաբրիելը միանգամից չհասկացավ, թե ինչ եմ խոսում: Երբ վերջապես հասկացավ, զայրացավ:

- Ի սեր Աստծո,- ասաց: - Հանգի՛ստ թող ինձ, Ալիսիա՛: Երեք ժամից աշխատանքի եմ: Հերիք է՝ գլուխս տանես:

- Ճիշտ եմ ասում: Արի՛, ինքդ նայիր: Խնդրում եմ:

Մոտեցանք պատուհանին, ու... իհարկե, տղամարդն այնտեղ չէր: Ընդհանրապես ոչ ոք չկար:

Սկսեցի խնդրել, որ Գաբրիելն այգի դուրս գա, ստուգի, բայց լսել անգամ չուզեց: Զայրացած վերադարձավ, 2-րդ հարկ բարձրացավ: Փորձեցի բացատրել, բայց ընդհատեց, ասաց, որ չի ուզում ինձ հետ խոսել ու գնում է ուրիշ սենյակում քնելու:

Ննջարան չվերադարձա: Նստել էի խոհանոցում, սպասում էի, ուշադիր ականջ դնում ամեն մի ձայնի, երբեմն-երբեմն պատուհանից էի նայում: Առայժմ ոչ ոք չկար:

Եվս մի քանի ժամ, ու շուտով լույսը կբացվի:

Օգոստոսի 15

Գաբրիելն իջավ ննջասենյակից. պատրաստվում էր նկարահանման գնալ: Երբ ինձ պատուհանի մոտ տեսավ, հասկացավ, որ ամբողջ գիշեր արթուն եմ եղել, լռեց ու սկսեց տարօրինակ բաներ խոսել:

– Ալիսիա՛, նստի՛ր,– ասաց: – Մենք պիտի խոսենք:

– Այո, խոսենք,– ասացի: – Օրինակ՝ այն մասին, որ ինձ չես հավատում:

– Հավատում եմ, որ դու քեզ հավատում ես:

– Դրանք տարբեր բաներ են: Ինձ հիմարի տեղ ես դնում:

– Ես քեզ երբեք հիմար չեմ համարել:

– Իսկ ինչ:

Ինձ թվաց՝ ուր որ է կսկսվի մեր հերթական կռիվը, բայց ի զարմանս ինձ, Գաբրիելը սկսեց շշուկով խոսել, այնպես, որ հազիվ էի լսում նրան:

– Ուզում եմ, որ զրուցես մի մարդու հետ,– ասաց: – Խնդրում եմ:

– Նկատի ունես ոստիկանի՞:

– Ոչ,– ասաց Գաբրիելն ու նորից զայրացավ,– ոչ ոստիկանի:

Հասկացա, թե ինչ նկատի ունի: Ընդհանրապես կես խոսքից նրան հասկանում էի, բայց հիմա ինձ պետք էր, որ ինքն ասի:

– Այդ դեպքում ո՞ւմ հետ:

– Բժշկի:

– Ես ոչ մի բժշկի մոտ չեմ գնա, Գաբրիե՛լ:

– Խնդրում եմ, Ալիսիա՛, հանուն ինձ: Ընդառաջիր ինձ,– կրկնեց Գաբրիելը: – Խնդրում եմ, ընդառաջիր:

– Չեմ հասկանում՝ ինչ նկատի ունես: Ընդառաջ ո՞ւր: Ես արդեն այստեղ եմ:

– Ոչ, այստեղ չես: Դու այստեղ չես:

Այնքա՜ն հոգնած էր, այնքա՜ն ուժասպառ: Ուզում էի պաշտպանել նրան: Ուզում էի հանդարտեցնել:

– Մի՛ անհանգստացիր, սիրելի՛ս,– ասացի: – Ամեն ինչ լավ կլինի, այ կտեսնես:

Գաբրիելը ճոճեց գլուխը, իբր չհավատաց ինձ:

- Քեզ բժիշկ Ուեսթի մոտ կգրանցեմ: Առաջիկա օրերին: Եթե ստացվի, հենց այսօր,- նա մի պահ լռեց, հետո նայեց ինձ ու ասաց,- դեմ չես, չէ՞:

Գաբրիելը մեկնեց ձեռքը: Այնպե՛ս էի ուզում խփել կամ ճանկռել: Հազիվ ինձ զսպեցի, որ չկծեմ նրան, ուժեղ չհրեմ այնպես, որ սեղանին ընկնի: Ո՞նց էի ուզում գոռալ՝ գիժ եմ, հա՞: Կարծում ես՝ խելքս թռցրե՞լ եմ: Ես գիժ չե՞մ, գիժ չե՞մ, գիժ չե՞մ:

Բայց զսպեցի ինձ: Փոխարենը գլխով արեցի, բռնեցի Գաբրիելի ձեռքն ու ասացի.

- Լավ, սիրելի՛ս: Ինչպես կուզես:

Օգոստոսի 16

Այսօր բժիշկ Ուեսթի մոտ գնացի: Դժկամությամբ, բայց, այնուամենայնիվ, գնացի:

Ատում եմ նրան, տանել չեմ կարողանում: Ինձ դուր չեկավ բժիշկը, նրա նեղ տունը, դուր չեկան 2-րդ հարկի այդ տարօրինակ, փոքր սենյակում նստելն ու լսելը, թե նրա շունն ինչպես է հյուրասենյակում հաչում: Իմ այցի ընթացքում անդադար, անընդհատ հաչում էր: Ուզում էի գոռալ, որ ձայնը կտրի ու շարունակ մտածում էի, որ բժիշկ Ուեսթն էլ կգոռա շան վրա, բայց այնպես էր իրեն պահում, ասես չէր լսում: Գուցե խո՞ւլ էր: Ինձ թվում է՝ իմ ասածներից էլ ոչ մի բառ չէր լսում: Նրան պատահածի մասին պատմեցի: Պատմեցի տղամարդու մասին, որը հետևում է մեր տանը, պատմեցի, որ տեսել եմ նրան զբոսայգում ինձ հետևելիս: Մի խոսքով,

ամեն ինչ պատմեցի, բայց նա լուռ էր: Նստած էր՝ դեմքին կիսատ ժպիտ նկարած: Այնպես էր նայում ինձ, ինչպես միջատի կնայեր: Ամենայն հավանականությամբ, Գաբրիելի ընկերն է, բայց չեմ հասկանում՝ ինչպես կարելի է այսպիսի մարդու հետ ընկերություն անել: Գաբրիելն այնքան ջերմ է, իսկ բժիշկ Ուեսթը՝ ճիշտ հակառակը: Տարօրինակ է բժշկի մասին նման բան ասելը, բայց նրա մեջ մի կաթիլ բարություն չկա:

Երբ տղամարդու մասին պատմությունն ավարտեցի, Ուեսթը դեռ երկար ժամանակ լուռ էր: Թվում էր՝ մի ամբողջ հավերժություն այդպես էլ լուռ կմնանք, և միայն ներքևում շան հաչոցն էր խախտում անծայրածիր լռությունը: Մտովի ականջ դրեցի շան հաչոցի ելևէջներին ու մի տեսակ երանության գիրկն ընկա: Ու հանկարծ բժիշկ Ուեսթն անսպասելի խոսեց:

– Մենք նորից նույն տեղում ենք, Ալիսիա՛,– ասաց: – Ճիշտ է:

Ապշած նրան նայեցի: Չէի հասկանում, թե ինչ նկատի ունի:

– Նույն տեղո՞ւմ:

– Այո,– գլխով արեց: – Իհարկե:

– Հասկանում եմ, Դուք երևի կարծում եք, թե ամեն ինչ հորինում եմ,– ասացի: – Բայց չեմ հորինում: Իսկապես տեսել եմ:

– Նախորդ անգամ էլ այդպես ասացիք: Հիշո՞ւմ եք մեր նախորդ հանդիպումը: Հիշո՞ւմ եք՝ այն ժամանակ ինչ պատահեց:

Չպատասխանեցի: Թող շատ չոգևորվի: Լուռ նստած նրան էի նայում այնպես, ինչպես չարաճճի երեխան՝ ծնողներին:

Բժիշկ Ուեսթը պատասխանի չէր սպասում: Նա հիշեցրեց, որ հորս մահից հետո սաստիկ նյարդային նոպա էի ունեցել, ինչից հետո խելացնորություն էր առաջացել: Անընդհատ դժգոհում էի, որ ինչ-որ մեկը հետևում է ինձ, քայլում է հետևիցս, լրտեսում է:

- Ուրեմն հիմա ամեն ինչ կրկնվում է, ճիշտ է:

- Ոչ, նախորդ անգամ ուրիշ էր: Այն ժամանակ զգացողություն կար, բայց իրականում ոչ ոքի չէի տեսնում: Իսկ այս անգամ իսկապես տեսա:

- Ո՞ւմ տեսաք:

- Արդեն ասացի: Տղամարդու:

- Նկարագրե՛ք նրան:

- Չեմ կարող,- վարանելով ասացի:

- Ինչո՞ւ:

- Կարգին չեմ տեսել: Ախր ասացի, չէ՞, որ շատ հեռու էր:

- Պարզ է:

- Ու բացի այդ... ծպտված էր, կեպիով ու արևային ակնոցով:

- Այս եղանակին շատերն են ակնոց դնում: Կեպի՝ նույնպես: Ինչ է, ուրեմն բոլորը ծպտվո՞ւմ են:

Համբերությանս բաժակը լցվում էր:

- Հասկանում եմ, թե ինչ եք ակնարկում:

- Ի՞նչ:

- Ուզում եք, որ հավատամ, թե հոգեխանգարման հերթական նոպան է: Ինչպես հայրիկի մահից հետո՞:

- Իսկ Դո՞ւք ինչ կարծիքի եք:

- Այն ժամանակ հիվանդ էի: Իսկ հիմա՝ ոչ: Այժմ ամեն ինչ կարգին է, եթե չհաշվենք այն հանգամանքը, որ ինչ-որ մեկն ինձ հետևում է, իսկ Դուք ինձ չեք հավատում:

Բժիշկ Ուեսթը գլխով արեց, բայց ոչինչ չասաց: Նոթատետրում ինչ-որ գրառում արեց:

- Ձեզ նորից դեղորայք կնշանակեմ,- ասաց: - Որպես նախազգուշական միջոց: Մենք չենք ուզում, որ վիճակը վերահսկողությունից դուրս գա, ճիշտ է:

- Ոչ մի դեղահաբ էլ չեմ խմի,- ասացի գլուխս օրորելով:

- Պարզ է: Դե, եթե հրաժարվում եք բուժումից, հարկ է, որ տեղյակ լինեք նաև հետևանքների մասին:

- Ինչ հետևանքներ: Սպառնում եք ինձ:

- Իհարկե, ոչ: Խոսքը Ձեր ամուսնու մասին է: Ինչ եք կարծում, Գաբրիելն ինչ չարչարանքների միջով անցավ նախորդ անգամ, երբ հիվանդացել էիք:

Պատկերացրի Գաբրիելին ներքևում, հյուրասենյակում նստած, հաչող շան հետ մեն-մենակ:

- Չգիտեմ,- ասացի: - Գուցե նրան հարցնեք:

- Ուզում եք, որ այս անգամ էլ վերապրի նույն սարսափը: Հասկանում եք, որ յուրաքանչյուր մարդ կուտակած հնարավորությունների որոշակի սահման ունի:

- Ինչ է, ակնարկում եք, որ կարող եմ կորցնել Գաբրիելին: Այդպես է:

Գաբրիելին կորցնելու մտքից անգամ վատ զգացի: Եթե այդպիսի բան պատահի, ես չեմ ապրի: Չեմ դիմանա: Ամեն բան կանեմ, միայն թե չկորցնեմ նրան: Պետք լինի՝ կձևացնեմ, թե խելագար եմ, թեև գիտեմ, որ իրականում այդպես չէ: Մի խոսքով, հանձնվեցի: Համաձայնեցի մտքերիս ու զգացմունքներիս հարցում «ազնիվ» լինել բժիշկ Ուեսթի հետ ու պատմել, եթե նորից ձայներ լսեմ: Խոստացա, որ կխմեմ նրա նշանակած դեղերն ու երկու շաբաթից կներկայանամ հերթական ստուգմանը:

Երևում էր, որ բժիշկ Ուեսթը գոհ է: Ասաց, որ հիմա կարող ենք իջնել ու միանալ Գաբրիելին: Նրա հետևից իջնելիս՝ պատկերացնում էի, թե ինչպես եմ ուժով հրում ու աստիճաններից ցած գլորում նրան: Ափսոս, որ չարեցի:

Տուն վերադառնալու ճանապարհին Գաբրիելն աշխուժացավ: Վարելիս անընդհատ նայում էր ինձ ու ժպտում:

- Կեցցե՛ս: Հպարտանում եմ քեզնով: Այս դժվարությունն էլ միասին կհաղթահարենք, այ կտեսնես:

Գլխով արեցի, բայց ոչինչ չասացի: Դե, իհարկե, հիմարություն էր. ոչ մի բան էլ «միասին» չենք հաղթահարի:

Ես մենակ եմ հաղթահարելու:

Ձղջում էի, որ պատմել եմ կասկածներիս մասին: Վաղը Բարբիին կասեմ, որ ամեն ինչ մոռանա, որ թեման փակված է, ու էլ այդ մասին չեմ ուզում խոսել: Նա չի ուրախանա. դե իհարկե, այսպիսի՞ սենսացիայից եմ հրաժարվում... Բայց ոչինչ, եթե ինձ սովորական պահեմ, շուտով ամեն ինչ կմոռանա: Ինչ վերաբերում է Գաբրիելին, նրան հանգիստ կթողնեմ: Կձևացնեմ, թե ամեն ինչ կարգին է: Մի խոսքով, թատրոն կսարքեմ: Ոչ մի վայրկյան չի կարելի ինքնատիրապետումը կորցնել:

Վերադարձի ճանապարհին դեղատուն մտանք, Գաբրիելը գնեց նշանակված բոլոր դեղերը: Տուն հասնելուն պես խոհանոց մտանք:

- Խմի՛ր,- ասաց՝ մեկնելով մի քանի դեղին դեղահաբ ու մի բաժակ ջուր:

- Ես երեխա չեմ,- ասացի: - Ինքնուրույն կարող եմ դեղերս խմել:

- Գիտեմ, որ երեխա չես: Ուղղակի ուզում եմ համոզված լինել, որ իսկապես խմում ես ու դեղահաբերը դեն չես նետում:

- Լավ, լավ, կխմեմ:

- Դե, քեզ տեսնեմ:

Գաբրիելը հետևեց, թե ինչպես հաբերը բերանս դրեցի ու մի քիչ ջուր խմեցի:

- Այ, ապրե՛ս, իմ լավ աղջիկ,- ասաց ու համբուրեց այտս, հետո սենյակից դուրս եկավ:

Հենց որ շրջվեց, դեղահաբերը լվացարանի մեջ թքեցի ու խնամքով լվացվեցի: Ոչ մի դեղ էլ չեմ խմելու: Նախորդ անգամ բժիշկ Ուեսթի նշանակած դեղերից քիչ էր մնում՝ խելագարվեի:

Այս անգամ նույն ռիսկին չեմ դիմի:

Հիմա չի կարելի զգոնությունը կորցնել:

Պետք է պատրաստվել:

Օգոստոսի 17

Սկսել եմ օրագիրս թաքցնել: Ազատ ննջասենյակի հատակի տախտակներից մեկը թուլացել է. այնտեղ եմ պահում՝ աչքից հեռու, տախտակների տակ: Ինչո՞ւ:

Դե, չափազանց ազնիվ եմ գրում, ու հիմա վտանգավոր է օրագիրը պահել, որտեղ պատահի: Անընդհատ աչքերիս առաջ նույն տեսարանն է: Գաբրիելը հանկարծ գտնում է օրագիրը, նախ պայքարում է այն բացելու գայթակղության դեմ, բայց հետո բացում է ու սկսում կարդալ: Եթե իմանա, որ դեղերս չեմ խմում, կվիրավորվի ու դավաճանություն կհամարի: Թույլ չեմ տա:

Փառք Աստծո, որ գոնե օրագրում կարող եմ ազատ սիրտս բացել:

Միայն դա է օգնում, որ խելքս չթռցնեմ: Ուրիշ ոչ մեկի հետ չեմ կարող անկեղծանալ:

Ոչ մեկին չեմ կարող վստահել:

Օգոստոսի 21

Երեք օր է՝ տնից դուրս չեմ եկել: Գաբրիելին խաբում եմ՝ ասելով, թե կեսօրին, երբ նա տանը չէ, զբոսանքի եմ դուրս գալիս, բայց դա ճիշտ չէ:

Դուրս գալու մասին միտքն ինձ վախեցնում է: Դրսում անօգնական եմ, իսկ տանն ավելի ապահով եմ զգում: Կարող եմ պատուհանի մոտ նստել, մանրամասն ուսումնասիրել անցորդներին: Ուշադիր զննում եմ բոլորի դեմքերը, նմանություններ եմ փնտրում այն տղամարդու հետ, բայց ախր խնդիրն այն է, որ դեմքը չեմ տեսել: Գուցե հագուստը փոխել է ու հիմա աչքիս առաջ հանգիստ գնում-գալիս է:

Այդ միտքն ինձ հանգիստ չի տալիս:

Օգոստոսի 22

Առայժմ ամեն ինչ խաղաղ է, բայց պետք չէ զգոնությունը կորցնել: Ժամանակի հարց է: Վաղ թե ուշ կհայտնվի: Պետք է պատրաստ լինեմ: Չի կարելի ձեռքերը ծալած նստել:

Այսօր առավոտյան արթնացա ու հիշեցի, որ Գաբրիելը հրացան ունի: Դատարկ ննջարանում է: Երևի գնամ, առաջին հարկ իջեցնեմ, թող աչքիս առաջ լինի: Խոհանոցի պահարանում կպահեմ, պատուհանի մոտ: Թող այնտեղ մնա. ո՞վ գիտի, գուցե պե՞տք գա:

Գիտեմ՝ այս ամենը խելագարի զառանցանքի է նման: Հուսով եմ՝ ամեն ինչ կվերջանա, ու ես էլ երբեք չեմ տեսնի այն տղամարդուն:

Բայց ինչ-որ բան ինձ, այնուամենայնիվ, հուշում է, որ տեսնելու եմ:

Որտեղ է նա: Ինչո՞ւ է կորել: Ուզում է, որ թուլացնեմ զգոնությունս: Շատ իզուր: Կշարունակեմ պատուհանի մոտ հերթապահել:

Կսպասեմ:

Աչքս չորս արած:

Օգոստոսի 23

Սկսում եմ մտածել, որ ամեն ինչ ես եմ հորինել: Երևի այդպես էլ կա:

Գաբրիելն անընդհատ հարցնում է, թե ինչպես եմ: Երևում է, որ անհանգստանում է, թեև վստահեցնում եմ, որ ամեն ինչ կարգին է: Երևի դերասանական խաղս նրա համար այլևս համոզիչ չէ: Ուրեմն պիտի ավելի շատ ջանք գործադրեմ: Այսօր կձևացնեմ, թե ամբողջ օրն աշխատել եմ, մինչդեռ իրականում աշխատանքի մասին մտքերը գլխիցս հանել եմ: Կորցրել եմ գեղանկարչության հետ ցանկացած կապ, նկարներն ավարտին հասցնելու ոչ մի խթան չկա: Նույնիսկ հիմա, երբ գրում եմ այս տողերը, հաստատ չեմ կարող ասել՝ երբևէ նորից կնկարեմ: Համենայն դեպս, քանի դեռ այս մղձավանջը չի ավարտվել, վրձինը ձեռքս չեմ վերցնի: Անընդհատ պատրվակներ եմ փնտրում, որ բացատրեմ, թե ինչու չեմ ուզում տնից դուրս գալ, բայց Գաբրիելն այսօր ասաց, որ այլընտրանք չունեմ: Մաքսը մեզ ճաշի է հրավիրել:

Մաքսին տեսնելուց ավելի վատ բան չեմ պատկերացնում:

Աղաչեցի, որ Գաբրիելը չեղարկի հանդիպումը, ասացի, որ պիտի աշխատեմ, բայց Գաբրիելը պատասխանեց, որ ընտանեկան ճաշկերույթն ինձ համար օգտակար կլինի: Համառորեն պնդեց, ուստի դիմադրելն անիմաստ էր: Ջիջեցի ու համաձայնեցի:

Ամբողջ օրը, պայմանավորված այդ հանդիպումով, անհանգիստ էի: Բայց հենց որ մտքերս ի մի բերեցի, ամեն ինչ կարծես տեղն ընկավ: Տրամաբանական շղթան վերականգնվեց: Չեմ հասկանում՝ ինչո՞ւ ավելի վաղ չէի կռահել: Ախր այնքա՜ն ակնհայտ է:

Հիմա եմ հասկանում. ինձ հետևող տղամարդը Ժան-Ֆելիքսը չէ: Ժան-Ֆելիքսն այնքան ստոր ու խորամանկ չէ, որ մտքով նման բան անցնի: Ուրիշ էլ ո՞վ կուզեր այսքան չարչարել, վախեցնել, պատժել ինձ:

Մա՜քսը:

Դե, իհարկե, Մաքսն է: Ուրիշ էլ ո՞վ: Նա փորձում է ինձ խելագարության հասցնել:

Սարսափում եմ, բայց պետք է ինչ-որ կերպ խիզախություն հավաքել: Վաղն այդպես էլ կանեմ:

Կկանգնեմ նրա դիմաց ու կնայեմ աչքերի մեջ:

Օգոստոսի 24

Տարօրինակ ու մի քիչ սարսափելի էր, երբ երեկ երեկոյան դուրս եկա. այնքա՜ն երկար էի տանը մնացել:

Առաջին պահին արտաքին աշխարհն ահռելի թվաց. շուրջս

ասես դատարկ տարածություն լիներ, իսկ գլխավերևումս՝ անծայրածիր երկինք: Թվաց՝ այնքան փոքր եմ, որ բռնեցի Գաբրիելի թևը:

Գնացինք մեր սիրելի «Օգուստոյի մոտ» ռեստորան, բայց նույնիսկ այնտեղ ապահով չէի զգում: Երբեմնի սիրած վայրն անհարմարավետ ու անծանոթ էր թվում: Ռեստորանը մի տեսակ փոխվել էր՝ հոտն ուրիշ էր, կարծես ինչ-որ բան էր վառվում: Գաբրիելին հարցրի՝ խոհանոցում կրակին ինչ-որ բաՆ կա, բայց նա ասաց, թե հորինում եմ, ոչ մի հոտ էլ չկա:

- Ամեն ինչ կարգին է,- ասաց: - Ուղղակի հանգստացիր:

- Հանգիստ եմ,- ասացի: - Ինչ է, չի՞ երևում:

Գաբրիելը չպատասխանեց: Միայն կզակը բռնեց. միշտ այդպես է անում, երբ նյարդայնանում է: Նստեցինք ու լուռ սպասեցինք Մաքսին:

Նա քարտուղարուհու հետ եկավ: Անունը Տանյա է: Երևում է՝ սկսել են հանդիպել: Մաքսն անթաքույց ի ցույց էր դնում իր կիրքը. մերթ գրկում էր նրան, մերթ մեղմորեն դիպչում, երբեմն էլ՝ համբուրում ու ամբողջ ընթացքում աչքն ինձնից չէր կտրում: Ինչ է, կարծում էր՝ կխանդեմ իրեն: Նա ահավոր է: Սիրտս խառնում է:

Տանյան նկատեց, որ ինչ-որ բան այն չէ. մի քանի անգամ տեսավ, որ Մաքսն ինձ է նայում: Պետք է զգուշացնել նրան, թե ում հետ է կյանքը կապում: Անպայման կխոսեմ նրա հետ, բայց ոչ հիմա: Այս պահին ավելի կարևոր գործեր կան:

Մաքսն ասաց, որ զուգարան է գնում: Մեկ-երկու րոպե սպասեցի, հետո որոշեցի առիթից օգտվել: Ասացի, որ ես էլ եմ զուգարան գնում: Վեր կացա սեղանից, գնացի նրա հետևից:

Անկյունում հանդիպեցի Մաքսին ու ամուր բռնեցի թևը:

- Հերիք է,- ասացի: - Վերջ տուր:

- Ի՞նչն է հերիք,- զարմացած ասաց Մաքսը:

- Հերիք է՝ լրտեսես ինձ, Մա՛քս: Հերիք է՝ հետևես: Գիտեմ՝ դու ես:

- Ի՞նչ: Չեմ հասկանում՝ ինչ ես խոսում, Ալիսիա՛:

- Մի՛ ստիր,- հազիվ էի վերահսկում ինձ, այնպե՛ս էի ուզում գոռալ,- ես քեզ տեսել եմ, հասկացա՞ր: Նկարել եմ: Ես քեզ նկարել եմ:

- Հերիք է, որ հիմարություններ դուրս տաս,- ծիծաղեց Մաքսը: - Հանգիստ թող ինձ, խելագա՛ր քած:

Ուժգին ապտակեցի նրան:

Հետո շրջվեցի ու տեսա Տանյային: Նա մեր թիկունքում էր ու այնպիսի տեսք ուներ, ասես իրեն էի ապտակել:

Տանյան նախ նայեց Մաքսին, հետո՝ ինձ, բայց ոչինչ չասաց: Ապա շրջվեց ու ռեստորանից դուրս եկավ:

Նրա հետևից վազելուց առաջ Մաքսը կատաղի նայեց ինձ ու ֆշշացրեց.

- Գաղափար չունեմ, թե ինչ ես դուրս տալիս: Ես քեզ չեմ հետևում: Իսկ հիմա՝ հեռու ճանապարհիցս:

Այնպիսի զայրույթով, այնպիսի արհամարհանքով ասաց, որ հասկացա, որ չի ստում: Հիմա հավատում էի նրան: Չէի ուզում, բայց հավատում էի:

Բայց եթե Մաքսը չէ... ապա ո՞վ է:

Օգոստոսի 25

Դրսից աղմուկ լսեցի: Նետվեցի դեպի պատուհանը: Ստվերների մեջ ինչ-որ մեկին տեսա, որը քայլում էր:

Նա էր: Դրսում էր:

Գաբրիելին զանգեցի, բայց չպատասխանեց: Գուցե ոստիկանությունն զանգեմ: Չգիտեի՝ ինչ անեմ: Ձեռքս այնպես էր դողում, որ հազիվ էի...

Ներքևից լսում եմ նրա ձայնը. փորձում է պատուհանները, դռները բացել: Ուզում է տուն մտնել:

Պետք է այստեղից դուրս գալ: Պետք է փախչել:

Աստվա՛ծ իմ... Նրա ոտնաձայներն եմ լսում...

Նա ներսում է:

Տանն է:

ՄԱՍ
չորրորդ

Հոգեթերապիայի հիմնական նպատակն անցյալը շտկելը չէ, այլ օգնելը, որ հիվանդն ընդունի իր հետ պատահածն ու արձագանքի դրան:

Ալիս Միլլեր

1

Փակեցի Ալիսիայի օրագիրը, սեղանիս դրեցի:
Անշարժ նստել էի, ականջս՝ անձրևին, որ խոշոր կաթիլներով պատուհանս էր թմբկահարում: Փորձում էի կարդացածս «մարսել»: Փաստորեն, այսքան ժամանակ Ալիսիա Բերենսոնին թերագնահատել եմ: Առաջ նա ինձ համար փակ գիրք էր, իսկ հիմա, երբ գիրքը բացվել էր, բովանդակությունն ինձ անակնկալի էր բերել:

Բազում հարցեր ունեի: Ալիսիան կասկածում էր, որ իրեն հետևում են: Հետաքրքիր է, իսկ տղամարդու ինքնությունը պարզվել էր: Ու եթե այո, որևէ մեկին այդ մասին պատմել էր: Պետք էր իմանալ: Որքան հասկանում էի, Ալիսիան ընդամենը երեք մարդու էր վստահել պատմությունը՝ Գաբրիելին, Բարբիին և առեղծվածային բժիշկ Ուեսթին: Միթե այդքանով սահմանափակվել էր, թե ուրիշին էլ էր պատմել: Մյուս հարցը. ինչու՞ է օրագիրն այսքան անսպասելի ավարտվում: Գուցե շարունակությունն կա, օրինակ՝ ուրիշ օրագիր, որ գրել է, բայց ինձ չի տվել: Հետաքրքիր է՝ ինչ նպատակով օրագիրն ինձ փոխանցեց: Ակնհայտ է, որ փորձում էր ինչ-որ բան հասկացնել, ընդ որում, խիստ անձնական ու ցնցող մի բան: Գուցե

բարի կամքի դրսևորում էր, լիակատար վստահության նշան: Թե՞ հակառակը՝ ավելի չարագուշակ մի բան:

Մի ուրիշ հարց էլ կար, որ ինձ հանգիստ չէր տալիս: Պետք էր գտնել այդ բժիշկ Ուեսթին՝ Ալիսիային բուժող բժշկին: Նա Ալիսիայի անձնային առանձնահատկությունների մասին կարևոր տեղեկություններ կհաղորդեր, կպատմեր սպանության պահին նրա հոգեվիճակի մասին: Որքան էլ տարօրինակ է, Ալիսիայի դատավարության ընթացքում բժիշկ Ուեսթը վկայություն չէր տվել: Բայց ինչո՞ւ: Նրա անունն առհասարակ չէր հիշատակվում դատական գործում: Եթե Ալիսիայի օրագիրը չլիներ, նրա գոյության մասին գաղափար անգամ չէի ունենա: Նրան ի՞նչ է հայտնի: Ինչո՞ւ դատավարությանը չի մասնակցել:

Բժիշկ Ուեսթը...

Չէ, չէ, անհնար է, որ նա լինի: Հաստատ զուգադիպություն է: Պետք է պարզել:

Օրագիրը դրեցի սեղանի դարակում, բանալիով փակեցի: Հետո, գրեթե անմիջապես, միտքս փոխեցի, նորից բացեցի դարակն ու հանեցի: Ավելի լավ է՝ ինձ մոտ մնա. թող միշտ աչքիս առաջ լինի, այդպես ավելի ապահով է: Տեղավորեցի վերարկուիս ծոցագրպանում, վերարկուս թևիս գցեցի:

Դուրս եկա աշխատասենյակից, աստիճանով իջա, քայլեցի մինչև միջանցքի եզրը:

Մի պահ կանգնեցի դռանը նայելով: Փոքրիկ ցուցանակի վրա գրված էր ԲԺԻՇԿ Ք. ՈՒԵՍԹ:

Առանց դուռը թակելու՝ բացեցի ու ներս մտա:

2

Սեղանի առաջ նստած Քրիստիանը փայտիկներով պատվիրած սուշի էր ուտում: Հայացքը բարձրացրեց ու խոժոռվեց:

- Դուռը թակել չե՞ն սովորեցրել:

- Պետք է խոսենք:

- Միայն թե ոչ հիմա, ճաշում եմ:

- Երկար չի տևի: Միայն մի հարց: Դու երբևէ Ալիսիա Բերենսոնին բուժել ես:

Քրիստիանը բրնձի բաժինը կուլ տվեց ու այնպես նայեց ինձ, կարծես ոչինչ չի հասկանում:

- Այսինքն: Ինքդ էլ գիտես, որ նրան բուժող բժիշկների թիմի ղեկավարն եմ:

- Դա նկատի չունեմ: Գրոուվ ընդունելուց առաջ Ալիսիա Բերենսոնին բուժել ես,- հարցրի՝ ուշադիր նայելով դեմքին:

Քրիստիանի դեմքի արտահայտությունը պատասխանեց իմ հարցին: Նա կարմրեց, սուշիի փայտիկներն իջեցրեց:

- Ինչ ես խոսում:

Գրպանիցս հանեցի Ալիսիայի օրագիրն ու թափ տվեցի:

- Ալիսիայի օրագիրն է: Սպանությունից ամիսներ առաջ է սկսել գրել ու շարունակել է ընդհուպ մինչև սպանության օրը:

- Ինձ հետ ինչ կապ ունի:

- Քո անունն էլ կա:

- Իմ:

- Պարզվում է՝ մինչև Ալիսիայի Գրոուվ տեղափոխվելը բուժել ես նրան, իսկ ես ոչինչ չգիտեի:

- Ես... ոչինչ չեմ հասկանում: Ինչ-որ բան սխալ է:

- Չեմ կարծում: Մի քանի տարի առաջ մասնավոր կարգով ընդունել ես նրան: Ու չնայած դրան՝ դատավարության ընթացքում չես ցանկացել վկայություն տալ, թեև շատ կարևոր տեղեկություններ ունես: Ավելին, Գրոուվում աշխատանքի անցնելուց առաջ չես հայտնել, որ ծանոթ ես Ալիսիային: Ենթադրում եմ, որ նա քեզ անմիջապես ճանաչել է: Բախտդ բերել է, որ Ալիսիան չի խոսում, այլապես սուտդ կբացահայտվեր:

Ես չոր ու զուսպ էի խոսում, բայց ահավոր զայրացած էի: Հիմա հասկանում եմ, թե Քրիստիանն ինչու էր ընդդիմանում իմ բոլոր այն քայլերին, որոնք Ալիսիային կօգնեին խոսել: Ալիսիայի լռությունը ձեռնտու էր նրան:

- Ա՛յ թե եսասեր տականք ես, Քրիստիան:

Քրիստիանը վախեցած ինձ էր նայում:

- Գրողը տանի,- ասաց համարյա կիսաձայն: - Գրո՛ղը տանի, Թեո: Լսի՛ր, ախր իրականում այդպես չի եղել:

- Լո՛ւրջ:

- Ուրիշ էլ ինչ է գրել օրագրում:

- Ինչ է, էլի՞ գաղտնիք ունես:

Քրիստիանը չպատասխանեց ու ձեռքն օրագրին մեկնեց:

- Կտա՞ս՝ թերթեմ:

- Կներես,- օրորեցի գլուխս: - Չեմ կարծում, թե դա ճիշտ է:

- Չպիտի համաձայնեի,- ասաց Քրիստիանը՝ փայտիկներով նյարդայնացած խաղալով: - Բայց ես մեղք չունեմ: Հավատա ինձ, խնդրում եմ:

- Վախենամ՝ դա անհնար է: Եթե մեղք չունես, ինչո՞ւ սպանությունից հետո չմիջամտեցիր:

- Որովհետև պաշտոնապես ես Ալիսիայի բժիշկը չէի: Ուղղակի Գաբրիելին լավություն էի արել: Մենք ընկերներ էինք: Համալսարանում միասին էինք սովորել: Ես նրանց հարսանիքին եմ եղել: Հետո մի քանի տարի չէինք շփվել, ու հանկարծ մի օր զանգեց ու ասաց, որ կնոջ համար հոգեբույժ է փնտրում: Ասաց, որ հոր մահից հետո նրա վիճակը կտրուկ վատացել է:

- Ուրեմն կամավոր ծառայությունն՞եր էիր մատուցում նրան:

- Ո՛չ: Ճիշտ հակառակը: Խորհուրդ տվեցի գործընկերոջս դիմել, բայց Գաբրիելը պնդեց, որ հենց ես բուժեմ: Ասաց, որ Ալիսիան հոգեբույժին այցելելու գաղափարին դեմ է, և միայն այն հանգամանքը, որ մենք ընկերներ ենք, կօգնի համոզել նրան: Մի խոսքով՝ դժկամությամբ, բայց, ի վերջո, համաձայնեցի:

- Ես էլ հավատացի՞:

- Հեգնելու կարիք չկա,- նեղսրտած ասաց Քրիստիանը:

- Որտե՞ղ էիր անցկացնում սեանսները:

- Ընկերուհուս տանը,- վարանելով ասաց: - Բայց ինչպես արդեն ասացի,- արագ ավելացրեց նա,- ընդամենը մի քանի սեանս է եղել մասնավոր կարգով... Ես լիարժեք բուժում չեմ իրականացրել: Նա հազվադեպ էր այցի գալիս: Հազարից մեկ, հասկանո՞ւմ ես...

- Եվ այդ սեանսների համար գումա՞ր էիր վերցնում:

Քրիստիանը հայացքը փախցրեց:

- Դե, հասկանում ես, Գաբրիելը պնդում էր, որ վերցնեմ: Տարբերակ չունեի...

- Եվ ենթադրում եմ, որ կանխիկ է վճարել:

- Թեո:

- Կանխիկ:

- Այո, բայց...

- Այդ եկամուտը հայտարարագրել ես:

Քրիստիանը կծեց շրթունքն ու չպատասխանեց: Ուրեմն իրավացի էի, և հենց դա է պատճառը, որ Ալիսիայի դատավարությանը չէր մասնակցել: Հետաքրքիր է՝ քանի՞ այդպիսի «ոչ պաշտոնական» հիվանդ է ունեցել և եկամուտը թաքցրել:

- Լսի՛ր,- ասաց,- եթե Դիոմիդիսն իմանա, ես... աշխատանքս կկորցնեմ: Հասկանում ես, չէ՞:

Խոսքի մեջ թախանձանք կար: Երևի ուզում էր իմ մեջ կարեկցանք արթնացնել: Բայց Քրիստիանի հանդեպ կարեկցանք չէի զգում: Միայն արհամարհանք:

- Լավ, պրոֆեսորը մի կողմ, իսկ Բժշկական խորհուրդն ի՞նչ կասի: Ախր հավաստագիրդ կկորցնես:

- Միայն, եթե դու խոսես: Անցյալը հիշելու կարիք չկա: Եղածը եղած է, ու հիմա դա բոլորովին կարևոր չէ, հասկանում ես: Ի սեր Աստծո, ախր իմ մասնագիտական կարիերան վտանգի տակ է:

- Այդ մասին ավելի շուտ պիտի մտածեիր:

- Թեո, խնդրում եմ...

Պատկերացնում եմ՝ Քրիստիանն ինչպես չէր ուզի իմ առաջ նվաստանալ, բայց նրա վիճակն ինձ չէր ուրախացնում, միայն զայրույթ էի զգում: Մտադիր չէի նրա մասին Դիոմի-

դիսին զեկուցել, համենայն դեպս, ոչ հիմա: Ավելի օգտակար կլինի, եթե Քրիստիանն իմանա, որ ցանկացած պահի կարող եմ իրեն կործանել:

– Լավ, լավ,– ասացի: – Ոչ ոք չի իմանա: Համենայն դեպս, հիմա:

– Շնորհակալ եմ: Ամբողջ կյանքում պարտական եմ քեզ:

– Համաձայն եմ: Դե հիմա գործի անցնենք:

– Այսի՞նքն:

– Ինձ Ալիսիայի մասին պատմի՛ր:

– Ի՞նչ ես ուզում իմանալ:

– Ամեն ինչ,– ասացի:

3

Քրիստիանը լուռ նայում էր ինձ ու խաղում փայտիկներով: Մի քանի վայրկյան մտորելուց հետո վերջապես խոսեց:

- Առանձնապես պատմելու բան չկա: Չգիտեմ, թե ինչ ես ուզում իմանալ: Որտեղից սկսեմ:

- Սկզբից,- ասացի: - Ուրեմն արդեն մի քանի տարի նրան հսկում ես, ճիշտ է:

- Ոչ, այսինքն՝ այո, բայց ինչպես արդեն ասացի, երբեմն-երբեմն: Հոր մահից հետո մեկ-երկու անգամ եմ ընդունել:

- Վերջին սեանսը ե՞րբ էր:

- Սպանությունից մոտ մեկ շաբաթ առաջ:

- Եվ Ալիսիայի հոգեվիճակն ինչպե՞ս կբնութագրես:

- Ա՜խ,- Քրիստիանը հանգիստ հենվեց աթոռի թիկնակին՝ զգալով, որ վտանգն անցել է: - Խելացնորություն, իրականության աղավաղված ընկալում: Ես կասեի, որ լուրջ հոգեկան խանգարման եզրին էր, բայց դա առաջին դեպքը չէր: Տարիներ շարունակ տրամադրության կտրուկ տատանումներ էր ունենում: Մերթ ուրախ էր, մերթ ճնշված. մի խոսքով՝ անձի սահմանային խանգարման ախտանշաններ:

- Ախտորոշումդ քեզ պահիր: Ինձ չոր փաստեր են պետք:

Քրիստիանը վիրավորված նայեց ինձ, բայց նախընտրեց առայժմ չառարկել:

- Ի՞նչ ես ուզում իմանալ:

- Ալիսիան խոստովանեց, որ իրեն հետևում են, ճի՞շտ է:

- Հետևո՞ւմ են,- հարցրեց Քրիստիանը՝ ասես միտքս չհասկանալով:

- Նրան հետևում էին: Ինչ է, քեզ այդ մասին չի՞ պատմել:

Քրիստիանը զարմանքով նայեց ինձ: Հետո անսպասելիորեն քրքջաց:

- Ի՞նչն է այդքան ծիծաղելի,- հարցրի:

- Հուսով եմ՝ նրա զառանցանքին չես հավատացել: Ուրեմն ինչ-որ մի այլասերված ծիկրակո՞ւմ էր պատուհանից:

- Կարծում ես՝ հորինե՞լ է:

- Սկզբից մինչև վերջ: Ախր դա պարզից էլ պարզ է:

- Գրառումները շատ համոզիչ են,- ասացի՝ գլխով օրագիրը ցույց տալով: - Ես հավատում եմ նրան:

- Դե, իհարկե, համոզիչ են: Ես էլ կհավատայի, եթե չիմանայի՝ ինչն ինչոց է: Այն ժամանակ Ալիսիան հոգեկան խանգարման հերթական նոպայի մեջ էր:

- Դա քո կարծիքն է: Օրագրից չի երևում, թե նա հոգեկան հիվանդ է: Ուղղակի վախեցած է:

- Դու չգիտես նախապատմությունը. նույն դեպքը պատահել էր նաև նրանց նախորդ տանը Հեմփսթեդ տեղափոխվելուց առաջ: Հենց դրա համար էլ ստիպված են եղել բնակության վայրը փոխել: Այն ժամանակ էլ Ալիսիան հարևանությամբ ապրող մի ծերունու էր մեղադրում իրեն լրտեսելու համար: Մեծ աղմուկ բարձրացրեց: Հետո պարզվեց, որ ծերունին կույր էր. նույնիսկ չէր կարող տեսնել նրան, ուր մնաց

թե լրտեսեր: Ալիսիան վաղուց ծայրահեղ զգացմունքային անկայունության խնդիր ուներ, իսկ հոր ինքնասպանությունը համբերության վերջին կաթիլն էր: Դրանից հետո նրա հոգեկան հավասարակշռությունն այլևս երբեք չվերականգնվեց:

- Նա քեզ հետ երբևէ հոր մասին խոսե՞լ է:

- Չէի ասի...,- ասաց ուսերը թոթվելով: - Միշտ պնդում էր, որ սիրել է հորը, որ իրենց միջև նորմալ հարաբերություններ են եղել, այնքան, որքան հնարավոր էր մոր ինքնասպանությունից հետո: Անկեղծ ասած, դժվարությամբ էի կարողանում Ալիսիայից խոսք պոկել: Նա գրեթե չէր խոսում: Նա... դե ինքդ էլ գիտես, թե ինչպիսին է:

- Դժվար թե քո չափ իմանամ,- ասացի ու շարունակեցի, քանի դեռ չէր ընդհատել,- հոր մահից հետո Ալիսիան փորձե՞լ է ինքնասպան լինել:

- Քո գործն է,- Քրիստիանը թոթվեց ուսերը,- բայց ես դա ինքնասպանություն չէի կոչի:

- Իսկ ինչպե՞ս:

- Սուիցիդալ վարքագիծ: Չեմ կարծում, թե նրա իրական նպատակը կյանքի հետ հաշիվները մաքրելն էր: Չափազանց շատ էր իրեն սիրում, որ իր վրա ձեռք բարձրացներ: Մի բուռ դեղահաբն էլ ավելի շատ շոուի համար էր կուլ տվել, քան ուրիշ նպատակով: Այդ քայլը Գաբրիելին էր ուղղված. Ալիսիան ուզում էր մշտապես նրա ուշադրության կենտրոնում լինել: Խե՞ղճ աղջիկ: Եթե տեղեկատվության գաղտնիության խնդիր չլիներ, Գաբրիելին կզգուշացնեի, որ կնոջից հեռու մնար:

- Փաստորեն նրա բախտը չի բերել, որ խստորեն պահպանել ես էթիկայի կանոնները:

Քրիստիանը ցնցվեց:

- Թեո, գիտեմ, դու կարեկից մարդ ես և դրա շնորհիվ էլ հրաշալի հոգեթերապևտ ես, բայց հասկացի՛ր, Ալիսիա Բերենսոնի հետ իզուր ժամանակ ես վատնում: Դեռ սպանությունից առաջ նա կորցրել էր ինքնավերլուծության, ռեֆլեքսիայի ունակությունը. անվանիր ինչպես ուզում ես: Ամբողջությամբ սուզվել է իր անձի ու իր արվեստի մեջ: Ուստի, միևնույն է, չի կարող պատասխանել այն կարեկցանքին, այն բարությանը, որ զգում ես իր հանդեպ: Նա անհույս է: Տականքի մեկն է:

Քրիստիանն այնպիսի՛ արհամարհանքով արտաբերեց վերջին խոսքերը, հոգեկան տրավմայի ենթարկված կնոջ հանդեպ առանց մի կաթիլ կարեկցանքի: Մի պահ ինձ թվաց՝ ոչ թե Ալիսիան է սահմանային խանգարման վիճակում, այլ Քրիստիանը: Դա գուցե շատ բան բացատրեր: Վեր կացա տեղից:

- Գնամ Ալիսիայի մոտ: Ինձ պատասխաններ են պետք:

- Ալիսիայի՞ց,- Քրիստիանը վախեցած էր երևում: - Եվ ինչպե՞ս ես ստանալու պատասխաններդ:

- Հարցնելով,- ասացի ու դուրս եկա:

4

Սպասեցի, մինչև Դիոմիդիսը փակվեց իր աշխատասենյակում, իսկ Ստեֆանին կառավարող ընկերության հետ հանդիպման գնաց: Հետո արագ գնացի ակվարիում: Յուրին այնտեղ էր:

- Ես պիտի տեսնեմ Ալիսիային,- ասացի:

- Ալիսիայի՞ն,- զարմացավ Յուրին: - Կարծում էի, թե սեանսները դադարեցվել են:

- Այդպես էլ կա: Ուզում եմ նրա հետ առանձնազրույց ունենալ, այդքան բան:

- Հասկացա, պարզ է,- ասաց Յուրին ու մտքերի մեջ ընկավ: - Դե, հոգեթերապիայի սենյակը զբաղված է. Ինդիրան հիվանդներին մինչև երեկո այնտեղ է ընդունելու,- նա մի պահ մտածեց ու ավելացրեց,- արտ-թերապիայի սենյակն ազատ է, դեմ չեք, եթե այնտեղ զրուցեք: Միայն թե արագ, ժամանակ չկա:

Յուրին չշարունակեց, բայց ես ամեն ինչ հասկանում էի. պետք է արագ խոսեինք, որ ոչ ոք չնկատեր և Ստեֆանիին չհայտներ: Ես երախտապարտ էի Յուրիին, հրաշալի մարդ էր: Մի տեսակ մեղքի զգացում ունեի, որ մեր առաջին հան-

դիպման ժամանակ նրա մասին սխալ կարծիք էի կազմել:

- Շնորհակալ եմ,- ասացի,- բարձր եմ գնահատում:

Յուրին քմծիծաղ տվեց:

- Տասը րոպեից կուղեկցեմ նրան:

***

Յուրին իր խոսքի տերն էր: Տասը րոպեից Ալիսիան և ես սենյակում էինք՝ դեմ-դիմաց նստած, ներկերի բծերով ծածկված աշխատանքային տարածքի մյուս կողմում:

Մի կերպ տեղավորվեցի խախուտ աթոռին. անորոշ զգացողություններ ունեի: Ալիսիան այնքան նրբագեղ էր նստած, ասես բնորդ լիներ կամ էլ նկարիչ, որը պատրաստվում էր դիմանկար անել:

- Շնորհակալ եմ վստահության համար,- ասացի՝ օրագիրը հանելով ու իմ առաջ դնելով: - Զգացված եմ, որ թույլ տվեցիք կարդալ: Ինձ համար մեծ պատիվ է, որ այսքան անձնական տեղեկատվություն եք վստահել ինձ:

Ժպտացի, բայց նա ոչ մի կերպ չարձագանքեց: Ալիսիայի դեմքի արտահայտությունը ցրված էր ու խիստ: Հետաքրքիր է՝ զղջո՞ւմ էր, որ օրագիրն ինձ է տվել: Գուցե հիմա ամաչո՞ւմ էր այսչափ անկեղծության համար:

Մի պահ լռեցի, հետո շարունակեցի.

- Գրառումները կտրուկ ավարտվում են ամենահետաքրքիր տեղում,- ասացի՝ թերթելով օրագրի մնացած դատարկ էջերը: - Ձեր օրագիրը մի քիչ նման է մեր համատեղ թերապիային՝ կիսատ է ու անավարտ:

Ալիսիան չէր խոսում, միայն անհայտ ուղղությամբ էր նայում: Չգիտեմ, թե ինչ էի ակնկալում, բայց հաստատ՝ ոչ սա: Ինձ թվում էր, որ օրագիրն ինձ տալն ինչ-որ փոփոխության նշան էր, յուրովի հրավեր բացվելու, անկեղծանալու պատրաստակամություն: Ավաղ, ես նույն տեղում էի, անմատչելի, անխորտակելի պատի առաջ:

- Գիտե՞ք, անկեղծ հույս էի փայփայում, որ օրագրի էջերի միջոցով փորձեցիք ինձ հետ երկխոսություն սկսել, իսկ հիմա մի քայլ առաջ կգնաք ու անձամբ կխոսեք:

Պատասխան չկար:

- Կարծում եմ՝ օրագիրը տվեցիք, որովհետև ուզում եք ինձ ինչ-որ բան ասել: Եվ ասացիք: Գրառումները կարդալով Ձեր մասին շատ բան իմացա, թե որքան միայնակ էիք, որքան մեկուսի, վախեցած: Հասկացա, որ հայտնվել էիք շատ ավելի բարդ վիճակում, քան մինչև այդ պատկերացնում էի: Նոր հանգամանքներ ի հայտ եկան, օրինակ՝ այն, որ սեանսների եք գնացել բժիշկ Ուեսթի հետ:

Քրիստիանի անունն արտաբերելիս՝ ուշադիր նրան նայեցի: Հույս ունեի, որ ինչ-որ կերպ կարճագանքի՝ կնեղացնի աչքերը, կսեղմի ծնոտը, ինչ-որ նշան կտա, բայց՝ ոչ: Նույնիսկ աչքը չթարթեց:

- Գաղափար չունեի, որ Գրոուվ ընդունվելուց առաջ Քրիստիան Ուեսթին ծանոթ եք եղել: Պարզվում է՝ մի քանի տարի մասնավոր կարգով բուժում եք ստացել նրա մոտ: Հետևաբար ճանաչեցիք նրան, երբ Ձեր գալուց մի քանի ամիս անց այստեղ աշխատանքի անցավ: Ընդ որում, ձևացրեց, թե Ձեզ չի ճանաչում: Երևի Ձեզ համար տհաճ է եղել, չէ՞:

Հարցը տվեցի՝ ինչ-որ արձագանքի սպասելով, բայց պա-

տասխան չեղավ: Ըստ ամենայնի, Քրիստիանը նրան բոլորովին չէր հետաքրքրում: Ալիսիան ձանձրացած, նույնիսկ հիասթափված անհայտ ուղղությամբ էր նայում. միթե ինչ-որ հնարավորություն եմ բաց թողել, միթե սխալ ճանապարհով եմ գնում: Նա երևի կոնկրետ բան էր ակնկալում ինձնից, իսկ ես դեռ գլխի չէի ընկել:

Դեռ չէի ավարտել:

- Մի բան էլ կա,- ասացի: - Օրագիրը մի շարք հարցեր է բարձրացնում, և այդ հարցերը պատասխաններ են պահանջում: Որոշ փաստեր թվում են անտրամաբանական և չեն համապատասխանում այն տեղեկատվությանը, որ այլ աղբյուրներից եմ ստացել: Քանի որ թույլ տվեցիք կարդալ օրագիրը, ուղղակի պարտավոր եմ պարզել բոլոր հարցերի պատասխանները: Հուսով եմ՝ հասկանում եք:

Օրագիրն Ալիսիային մեկնեցի: Նա վերցրեց, մատներն ասես օրագրի վրա քարացան: Մի քանի վայրկյան լուռ իրար էինք նայում:

- Ես Ձեր կողմից եմ, Ալիսիա՛,- վերջապես ասացի ես: - Գիտեք, չէ՞:

Ոչ մի բառ չասաց:

Լռությունն իբրև համաձայնության նշան ընդունեցի:

5

Քեթին այնքան անփույթ էր դարձել: Դե, իհարկե, այդպես էլ պետք է լիներ: Այնքան էի ներել նրա անհավատարմությունը, որ սկսել էր ծուլանալ:

Երբ վերադարձա, Քեթին տանն էր: Պատրաստվում էր ինչ-որ տեղ գնալ:

- Ջբոսանքի եմ գնում,- ասաց՝ սպորտային տաբատը հագնելով: - Երկար չի տևի:

- Ես էլ կուզեի մի քիչ մարզվել: Կարող եմ քեզ միանալ:

- Չէ, չէ: Պիտի տեքստս կրկնեմ ներկայացման համար:

- Դու անգիր կասես, ես կստուգեմ:

- Չէ,- Քեթին օրորեց գլուխը: - Ավելի լավ է՝ ինքնուրույն: Երկրորդ արարի բարդ տողերն եմ կրկնելու: Ինչ անում եմ, մտապահել չեմ կարողանում: Այգում քայլելով բարձրաձայն կրկնում եմ: Պետք է տեսնես, թե անցորդներն ինչպես են ինձ նայում:

Ստիպված համաձայնեցի: Քեթին այնպիսի անկեղծությամբ ասաց՝ միաժամանակ ուղիղ աչքերիս մեջ նայելով: Ինչ խոսք, փայլուն դերասանուհի էր:

Իմ դերասանական հմտություններն էլ հետ չէին մնում:

- Հաճելի զբոսանք,- ասացի ջերմ ու անկեղծ ժպիտով:
Երբ Քեթին բնակարանից դուրս եկավ, քայլեցի նրա հետևից: Աշխատում էի ապահով հեռավորություն պահպանել, այց նա ոչ մի անգամ չշրջվեց: Ասում եմ, չէ՞, շատ անփույթ է արձել:
Մոտ հինգ րոպեից Քեթին զբոսայգու մուտքի մոտ էր, և հանարծ, չգիտես որտեղից, մի տղամարդ հայտնվեց: Դեմքը չէի ետնում: Մուգ մազեր ուներ, սպորտային կազմվածք, ինձնից արձրահասակ էր: Քեթին մոտեցավ, ու տղամարդը նրան իր ողմ քաշեց: Նրանք սկսեցին համբուրվել: Քեթին, ամբողջովին ան հանձնված, կրքով նրա համբույրներին էր տրվել: Ամենաչը տարօրինակ էր կնոջս ուրիշ տղամարդու գրկում տեսնելը: ա դիպչում էր Քեթիի կրծքին, հագուստի վրայից շոյում:
Հասկանում էի, որ պետք է թաքնվել, իսկ ես բացահայտ անգնած էի, բոլորի աչքի առաջ, ու, եթե Քեթին շրջվեր, անասկած կնկատեր ինձ: Բայց տեղից շարժվել չէի կարողանում: Կարծես Մեդուզա Գորգոնայի աչքերի մեջ էի նայել ու եղնուտեղը քարացել:
Վերջապես դադարեցին համբուրվել ու թևանցուկ զբոսայի մտան: Գնացի նրանց հետևից: Շշմելու էր: Հեռվից նայեիս, թվում էր, տղամարդն ինձնից գրեթե չի տարբերվում: Մի անի վայրկյան այնքան շփոթված էի, ինձ թվում էր՝ գիտակությունս անջատվել է մարմնիցս, ու ինձ կողքից եմ տեսնում, արծես հենց ես եմ Քեթիի հետ զբոսայգում քայլում:
Քեթին անծանոթ տղամարդուն դեպի պուրակ քարշ տվեց, նրանք անհետացան խիտ ծառերի հետևում:
Սիրտս խառնեց, ստամոքսս գալարվեց, վախի զգացում ունեցա: Շնչառությունս ծանր էր, դանդաղ, օդն ասես թանձ-

րացել էր: Մարմնիս ամեն մի բջիջ ասում էր՝ հեռացի՛ր, գնա
վազի՛ր, փախի՛ր: Բայց չլսեցի ու նրանց հետևից պուրակ մտ

Թեև փորձում էի հնարավորինս լուռ շարժվել, ծառերի չ
րացած ոստերը ճրթճրթում էին ոտքերիս տակ, իսկ ճյուղեր
կախվում էին հագուստիցս: Ծառերն այնքան խիտ էին աճ
որ նրանց չէի տեսնում: Իմ դիմաց ընդամենը մի քանի քայլ
տեսնում:

Կանգնեցի ու ականջ դրեցի: Միայն տերևների շրշյունն
լսվում, բայց դա երևի քամուց էր: Հետո ձայն լսեցի, որն անմ
ջապես ճանաչեցի. Քեթիի ցածրաձայն կոկորդային տնքո
ներն էին:

Փորձեցի ավելի մոտենալ, բայց խճճվեցի ծառերի ճյուղ
րի մեջ, ինչպես ճանճը սարդոստայնում: Այդպես էլ ծառեր
ծուղակում կանգնած մնացի՝ շնչելով ծառի կեղևի ու խոնա
հողի դառնահոտը: Լսում էի Քեթիի տնքոցներն ու այդ կեն
դանու մռնչոցը, երբ Քեթին նրան էր տրվում:

Ատելությունից վառվում էի: Այդ տղամարդը չգիտես որտ
ղից հայտնվել ու թունավորել էր կյանքս: Նա գողացել, գա
թակղել ու ապականել էր աշխարհում միակը, որը թանկ է
ինձ համար: Հրեշավոր, գերբնական զգացողություն էր: Գո
ցե բոլորովին էլ մարդ չէ, այլ ինչ-որ չարագործ ոգու մարմ
նացում, որն ինձ որպես պատիժ էր ուղարկված: Աստվա՞ծ է
պատժում ինձ: Ինչո՞ւ: Ո՞ր մեղքիս համար: Բացի սիրելուց ի՞ն
եմ արել: Մի՞թե չափից շատ եմ սիրել, այնքան, որ ձանձրաց
րել եմ նրան: Գուցե չափազանց ուժգի՞ն:

Նա սիրո՞ւմ էր Քեթիին: Խիստ կասկածում եմ: Հաստատ ի
չափ չէր սիրում: Ուղղակի օգտագործում էր, Քեթիի մարմին
էր օգտագործում: Անհնար է, որ նա Քեթիի մասին հոգ տան

յնպես, ինչպես ես: Հանուն Քեթիի ես պատրաստ էի նույ-
ոսկ մեռնել:
Պատրաստ էի նույնիսկ սպանել:
Հորս մասին մտածեցի. կռահում եմ, թե ինչ կաներ այս
ոավիճակում: Կսպաներ սիրեկանին: «Վերջապես տղա-
ւրդ եղիր,- ականջիս մեջ զրնգում էր հորս ձայնը: - Հերի՛ք
նվնվաս»: Հիմա ի՞նչ անեմ: Սպանե՞մ տականքին: Ազատվե՞մ
ոանից: Ուրիշ ելք չկա: Կցրեմ խավարը, կազատեմ Քեթիին
. անեծքից կփրկեմ մեր ամուսնությունը: Սկզբում, իհարկե,
ոխրի սիրեկանի համար, բայց հետո ամեն ինչ կկարգա-
որվի: Նա կվերածվի հիշողության, հետո հիշողությունը
անհետանա, ու մենք առաջվա պես կշարունակենք ապրել:
ենց հիմա նրան կարող եմ սպանել հենց այստեղ, այգում:
ւարշ կտամ լճակի մոտ, գլուխը կխցկեմ ջրի տակ: Կպա-
ռեմ այնքան, մինչև մարմինը կջղաձգվի ու անշնչացած կախ
ընկնի: Կամ նրա հետևից մետրո կգնամ, կառամատույցում,
իկունքի հետևում, կկանգնեմ, ու երբ գնացքը մոտենա,
տրուկ կհրեմ ռելսերի վրա: Կամ էլ դատարկ փողոցում թա-
ուն կմոտենամ ու աղյուսով գանգը կփշրեմ: Ինչո՞ւ ոչ, լավ
ւարբերակ է:
Քեթիի տնքոցները հանկարծ սաստկացան, ու ես հիշեցի՝
ոյդպես տնքում էր միշտ, երբ հաճույքի գագաթնակետին էր
ասնում: Հետո լռություն տիրեց, որն ընդհատվեց ինձ այն-
ամ՞ն ծանոթ խուլ քրքիջով: Նորից լսեցի ոստերի ճրթճրթոցը,
նրանք թավուտից դուրս եկան:
Սպասեցի ևս մի քանի րոպե, հետո կտրուկ բռնեցի ճյու-
երից ու դժվարությամբ ազատվեցի ծառերի ծուղակից՝
ւկատելով, թե սուր ճյուղերն ինչպես են ձեռքերս քերծում:

Երբ դուրս եկա անտառակից, արցունքներից ոչինչ չ
տեսնում: Արնահոսող բռունցքներով սրբեցի աչքերս:

Երերացող քայլերով դուրս եկա ու անհայտ ուղղությա
գնացի: Խելագարի պես պտտվում էի, պտտվում զբոսայգ
շուրջ:

6

Ժան-Ֆելիքս:

Ընդունարանի սեղանիկի մոտ ոչ ոք չկար, իսկ կանչելուց ետո արձագանք չեղավ: Մի պահ սպասեցի, հետո ցուցասահի մտա:

Միջանցքով քայլեցի այն կողմ, որտեղ մի ժամանակ «Ալեստիսն» էր ցուցադրվում: Ուզում էի մի անգամ էլ տեսնել կարը: Նորից փորձեցի հասկանալ այն ու նորից՝ ապարդյուն: Նկարի մեջ ինչ-որ բան կար, որ մեկնաբանության չէր ենթարկվում կամ գուցե ինչ-որ նշանակություն ուներ, որին դեռ հաճակված չէր հասնել: Բայց ո՞րն էր այդ նշանակությունը:

Ու հանկարծ շունչս կտրվեց. առաջ ինչպե՞ս չէի նկատել: Եթե ուրիշ անկյունից անթարթ նայեք նկարին, կնկատեք, որ Վիսիայի թիկունքում, խավարի մեջ, ստվերները կուտակում են, և, ինչպես հոլոգրամի վրա, որտեղ երկչափ տարածությունը եռաչափի է վերածվում, նկարի մեջ ստվերներից մի ուրիշ պատկեր է հառնում... տղամարդու կերպարանք: Տղամարդը թաքնվել է խավարում: Հետևում, լրտեսում է Վիսիային:

– Ի՞նչ եք ուզում:

Ձայնից վեր թռա, շրջվեցի: Դեմքի արտահայտությունի երևում էր, որ Ժան-Ֆելիքսն առանձնապես ուրախ չէր ին տեսնել:

- Ինչ եք անում այստեղ,- ասաց:

Ուզում էի Ժան-Ֆելիքսին պատմել իմ բացահայտման մա սին, բայց ինչ-որ բան հուշեց, որ պետք չէ:

- Եվս մի քանի հարց ունեմ,- ժպիտով ասացի ես: - Ինձ մ քանի րոպե կտրամադրեք:

- Ճիշտն ասած, չեմ կարող: Ինչ գիտեի, արդեն պատմ եմ: Հավատացեք, ոչ մի բանով Ձեզ օգնել չեմ կարող:

- Իրականում նոր փաստեր են ի հայտ եղել:

- Ինչ փաստեր:

- Դե, համենայն դեպս, ես չգիտեի, որ Ալիսիան պատ րաստվում էր Ձեր պատկերասրահից հեռանալ:

Երկրորդ դադարը եղավ, ինչից հետո միայն Ժան-Ֆելիքս խոսեց.

- Չեմ հասկանում, ինչ եք խոսում,- ձայնը ռեզինե մազա կալի նման լարված էր, թվում էր՝ ուր որ է կկտրվի:

- Դա ճիշտ է:

- Ձեր գործը չէ:

- Ալիսիան իմ բուժառուն է: Եվ ես մտադիր եմ օգնել, ո նա նորից խոսի: Բայց հիմա տեսնում եմ, որ նրա լռությունն ձեռնտու է Ձեզ:

- Գրողը տանի, ինչ եք ակնարկում:

- Դե, քանի դեռ պատկերասրահից հեռանալու մասի պաշտոնական հայտարարություն չկա, կարող եք անորո ժամանակով տնօրինել նրա ստեղծագործությունները:

- Կոնկրետ ինչի համար եք ինձ մեղադրում:

- Բոլորովին չեմ մեղադրում: Ուղղակի փաստերն եմ արձագրում:
- Փաստերը, շատ լավ,- Ժան-Ֆելիքսը ծիծաղեց: - Հիմա կապվեմ իրավաբանիս հետ ու Ձեր հիվանդանոցի դեմ աշտոնական բողոք կներկայացնեմ:
- Նման բան չեք անի:
- Ինչու՞ չեմ անի:
- Չհասցրի ասել, թե ինչպես եմ իմացել Ալիսիայի՝ պատերասրահից հեռանալու մտադրության մասին:
- Ով որ նման բան է ասել, ստել է:
- Ալիսիան է ասել:
- Ինչ,- Ժան-Ֆելիքսը ցնցված էր: - Ուզում եք ասել՝ նա խոհում է:
- Ինչ-որ առումով՝ այո: Իր օրագիրն է ինձ տվել, որ կարամ:
- Օրագիրը,- մի քանի անգամ թարթեց աչքերը, կարծես ժվարությամբ էր մարսում մարդկային խոսքը: - Չգիտեի, ր Ալիսիան օրագիր ունի:
- Ունի: Եվ այնտեղ ամենայն մանրամասնությամբ նկաագրում է Ձեր վերջին մի քանի հանդիպումները:
Էլ ոչ մի բառ չասացի: Կարիք չկար: Լարված լռություն տիեց: Ժան-Ֆելիքսը լուռ էր:
- Առայժմ,- ժպտացի ու շտապ դուրս եկա:
Սոհո փողոց դուրս գալով՝ մի քիչ զղջացի, որ այդքան դաան վարվեցի Ժան-Ֆելիքսի հետ: Միտումնավոր արեցի. ւզում էի տեսնել, թե սադրանքին ինչպես կարձագանքի, նչ կասի:
Հիմա մնում էր միայն սպասել նրա հետագա քայլին:

***

Սոհոյով քայլելիս Ալիսիայի եղբորը՝ Փոլ Ռոուզին զան
գեցի. ուզում էի տեղյակ պահել, որ գալիս եմ: Չէի ուզու
առանց նախազգուշացնելու հայտնվել նրանց տանն ու նր
ից վտանգել առողջությունս: Գլխիս կապտուկը դեռ լրի
չէր լավացել:

Հեռախոսն ականջիս ու ուսիս արանքում պահած՝ սիգա
ռետ վառեցի: Հազիվ հասցրի ներս քաշել ծուխը. առաջի
իսկ զանգից պատասխանեցին: Հույս ունեի, որ Փոլն է, ոչ թ
Լիդիան: Բախտս բերեց:

– Լսում եմ:

– Փո՛լ, ողջույն: Թեո Ֆաբերն է:

– Ա՜, բարև, բարև, բարեկա՛մս: Կներեք, որ շշուկով եմ խո
սում,–ասաց: – Մաման քնել է, չեմ ուզում անհանգստացնե
Կապտուկը ո՞նց է, անցե՞լ է:

– Արդեն ավելի լավ է, շնորհակալ եմ:

– Դե լավ է: Ինչո՞վ կարող եմ օգնել:

– Ճիշտն ասած,– ասացի,– նոր տեղեկություններ ունե
Ալիսիայի մասին... Ուզում էի քննարկել:

– Ի՞նչ տեղեկություններ:

Պատմեցի, որ Ալիսիան օրագիրն ինձ է տվել, որ կարդամ

– Օրագի՞րը: Չգիտեի, որ օրագիր ունի: Եվ ի՞նչ եք կարդացե

– Հեռախոսով պատմելու չէ: Այսօր ազա՞տ եք, կարող ենք
հանդիպել:

Փոլը մի պահ լռեց:

– Լավ կլինի՝ մեր կողմերում չերևաք: Մաման... դե, Ձեր նա
խորդ այցից այնքան էլ գոհ չէր:

- Պատկերացնում եմ:
- Մեր փողոցի անկյունում պանդոկ կա, օղակաձև ճանապարհի մոտ: «Սպիտակ արջ» է կոչվում...
- Հիշում եմ,- ասացի: - Հարմար տեղ է: Ո՞ր ժամին գամ:
- 5-ին մոտ: Կարծում եմ՝ ինձ կհաջողվի տնից որոշ ժամանակով դուրս գալ:

Հեռախոսի մեջ լսվեցին Լիդիայի գոռոցները: Երևում է՝ դրթնացել էր:

- Պետք է գնամ: Կհանդիպենք,- շտապ շշնջաց Փոլն ու անջատեց:

***

Մի քանի ժամից Քեմբրիջ ուղևորվեցի: Գնացքում փոքրինչ մտածելուց հետո, այնուամենայնիվ, մի անգամ էլ Մաքս Վերենսոնին զանգեցի: Նա Դիոմիդիսին արդեն մի անգամ զողոքել էր ինձնից, ուստի դժվար թե ուրախանար՝ ձայնս լսելով: Բայց այս պահին ուրիշ տարբերակ չունեի:

Զանգին Տանյան պատասխանեց: Նա կարծես արդեն սառողջ էր, բայց ձայնը զգալիորեն լարվեց, երբ ինձ ճանաչեց:

- Չեմ կարծում, թե Ձեզ ժամանակ կտրամադրի: Մաքսը լբաղված է: Ամբողջ օրը հանդիպումներ ունի:
- Ավելի ուշ կզանգեմ:
- Չեմ կարծում, թե լավ միտք է:

Լսվեց Մաքսի ձայնը. նա ինչ-որ բան ասաց, իսկ Տանյան պատասխանեց.

- Չէ, Մաքս, ես նման բան չեմ ասի:

Մաքսը խլեց հեռախոսն ու հոխորտաց.

– Ես Տանյային ասում էի, որ ինձ հանգիստ թողնեք ու գրո
ղի ծոցը կորչեք:

– Ահա՛ թե ինչ:

– Այնքան անպատկառ եք, որ նորից եք զանգել: Ես արդեն
պրոֆեսոր Դիոմիդիսին բողոքել եմ:

– Այո, տեղյակ եմ: Ամեն դեպքում, նոր փաստեր են ի հայտ
եկել, որոնք անձամբ Ձեզ են վերաբերում, ուստի որոշեցի
նորից կապվել Ձեզ հետ ու տեղյակ պահել:

– Ի՞նչ փաստեր:

– Գաբրիելի մահվանը նախորդած շաբաթներին, մինչև
սպանության օրը, Ալիսիան օրագրում գրառումներ է արել:

Լսափողի մյուս կողմում լռություն տիրեց: Ես դադար տվե
ցի, ապա շարունակեցի.

– Ալիսիան ամենայն մանրամասնությամբ գրել է Ձեր մա
սին, Մա՛քս: Պարզվում է՝ ռոմանտիկ զգացմունքներ եք տա
ծել նրա հանդեպ: Կուզեի իմանալ...

Ծնգոց լսվեց, Մաքսն անջատեց հեռախոսը: Վատ չէ: Մաքսի
խայծը կուլ էր տվել, և հիմա պետք էր սպասել արձագանքին:

Անկեղծ ասած, Մաքս Բերենսոնից մի քիչ վախենում էի
Երևում է՝ Տանյան էլ էր նրանից վախենում: Հիշում եմ՝ նա
խորդ հանդիպման ժամանակ ինձ շշուկով խորհուրդ տվեց
Փոլի հետ խոսել: Փոլից ի՞նչ կարող եմ իմանալ: Պետք է
հարցնել Ալիսիայի մոր կյանքը խլած վթարին հաջորդած
գիշերվա մասին: Հիշում եմ, թե Մաքսի հայտնվելուն պես
ինչպես Տանյայի դեմքի արտահայտությունը վախից փոխ-
վեց, նա կտրուկ լռեց ու ժպիտով նրան նայեց: Չէ՛, Մաքս Բե-
ռենսոնին թերագնահատել չի կարելի:

Դա վտանգավոր սխալ կլինի:

7

Որքան շատ էր գնացքը Քեմբրիջին մոտենում, այնքան բնապատկերը հարթավայր էր հիշեցնում, իսկ ջերմաստիճանն աճում էր: Կայարանից դուրս գալիս վերարկուիս օձիքը բարձրացրի: Սառը քամին ածելու սուր շեղբի պես կտրում էր դեմքս: Քայլերս դեպի պանդոկ ուղղեցի՝ Փոլին հանդիպելու:

«Սպիտակ արջը» հին ու խարխուլ շենքում էր, և, դատելով շինության տեսքից, տարիների ընթացքում նախնական կառույցին լրացուցիչ մասեր էին ավելացրել: Շարֆերով փաթաթված երկու ուսանող, հերոսաբար քամուն դիմակայելով, գարեջրատան բացօթյա մասում նստած ծխում էին ու գավաթներով գարեջուր խմում: Ներսում բուխարիների շնորհիվ շատ ավելի տաք էր. դրանք ներս եկող մրսած մարդկանց դիմավորում էին ջերմությամբ:

Գարեջուր պատվիրեցի ու շուրջս նայեցի Փոլին փնտրելով: Փոքր սենյակների միջով դեպի բարի հիմնական սրահ շարժվեցի. լուսավորությունը թույլ էր, փորձում էի կիսախավարի մեջ ծանոթ ուրվագծեր փնտրել, բայց ապարդյուն: Թաքուն հանդիպումների համար հրաշալի վայր էր: Երևի հենց դրա համար էլ խնդրել էր այստեղ հանդիպել:

Փոլին փոքր սրահում գտա. մենակ էր: Նստած էր կրակ մոտ՝ մեջքով դեպի դուռը: Անմիջապես ճանաչեցի հաղթան դամ կազմվածքը: Լայն մեջքը գրեթե ամբողջությամբ փա կում էր բուխարին:

- Փոլ:

Նա տեղից վեր թռավ ու շրջվեց: Այս փոքր սրահում վիթ խարի հսկայի էր նման: Թվում էր՝ եթե չկռանա, գլուխ առաստաղին կխփի:

- Ամեն ինչ կարգի՞ն է,- ասաց: Ինձ տեսնելով, ինչպե բժշկից վատ նորության սպասող հիվանդը, ինքն իրեն ձեռ քերով գրկեց: Հետո ինձ համար կրակի մոտ տեղ բացեց Երանությամբ զգացի կրակի հաճելի ջերմությունը, որ վայր կենապես տարածվեց դեմքիս ու ձեռքերիս:

- Ա՛յ քեզ սառնամանիք: Լոնդոնում ավելի տաք է,- ասացի - Քամին էլ՝ մյուս կողմից...

- Ասում են՝ ուղիղ Սիբիրից է գալիս,- արձագանքեց Փոլը երևում էր, որ երկար-բարակ զրույցների տրամադրությունն չունի, ուստի անմիջապես անցավ բուն թեմային: - Ի՞նչ կա օրագրից: Չեմ իմացել, որ Ալիսիան օրագիր ունի:

- Դե, պարզվում է՝ ունի:

- Եվ փոխանցել է Ձեզ:

Գլխով արեցի:

- Ի՞նչ կա օրագրում:

- Սպանությանը նախորդող մի քանի շաբաթների մանրամասն նկարագրությունն է: Մի շարք անհամապատասխանություններ կան, որոնք կցանկանայի պարզաբանել:

- Ի՞նչ անհամապատասխանություններ:

- Ձեր և նրա պատմածների միջև:

- Այսինքն,- Փոլը գարեջրի գավաթը սեղանին դրեց ու զարացած ինձ նայեց: - Ինչ նկատի ունեք:

- Դե, նախ և առաջ Դուք ասացիք, որ սպանությունից առաջ ի քանի տարի չեք հանդիպել Ալիսիային:

- Հա՛, այդպե՞ս եմ ասել,- լարված հարցրեց Փոլը:

- Մինչդեռ օրագրում Ալիսիան գրում է, որ վերջին անգամ Իաբրիելի սպանությունից մի քանի շաբաթ առաջ եք հանդիվել: Գրում է, որ իր տուն՝ Հեմփսթեդ եք գնացել:

Անթարթ նրան էի նայում ու զգում, թե ներսն ինչպես է ակնուվրա լինում: Կարծես փոքրիկ տղա լիներ, որ հայտնել էր հասուն տղամարդու մարմնում: Ակնհայտ էր, որ Փոլը խեցած է: Որոշ ժամանակ լուռ էր, հետո, թաքուն հայացք ետելով ինձ, ասաց.

- Կարելի՞ է օրագիրը թերթել:

- Կարծում եմ՝ ճիշտ չի լինի,- ասացի նրան գլուխս օրորելով: - Բացի այդ՝ հիմա օրագիրն ինձ մոտ չէ:

- Իսկ եթե այն ընդհանրապես գոյություն չունի, ու Դուք տո՞ւմ եք:

- Ես հաստատ չեմ ստում, բայց չեմ հասկանում, թե Դուք ինու էիք ճշմարտությունը թաքցնում, Փո՛լ:

- Ձեր գործը չէ: Այդպես էի ուզում:

- Վախենամ՝ հենց իմ գործն է: Ալիսիայի առողջությանը վեաբերող ցանկացած հարց իմ ուշադրության կենտրոնում է:

- Նրա առողջությունը դրա հետ ոչ մի կապ չունի: Ես նրան եմ վնասել:

- Ես նման բան չասացի:

- Այդ դեպքում ինձնից ի՞նչ եք ուզում:

- Միգուցե պատմե՞ք, թե իրականում ինչ է պատահել:

- Երկար պատմություն է,- Փոլը թոթվեց ուսերը: Մի քան
վայրկյան լուռ էր, հետո խոսեց շտապ-շտապ, շնչակտուր
Զգում էի, թե ինչ թեթևությամբ է հոգին ծանրությունից ազա
տում՝ վերջապես ինչ-որ մեկին ճշմարտությունը պատմելու
- Անհույս վիճակում էի: Մոլախաղով էի տարվել ու ահագի՝
պարտքեր էի կուտակել: Գումար էի վերցրել ու չէի կարողա
նում վերադարձնել: Ինձ կանխիկ փող էր պետք... պարտա
տերերը պահանջում էին:

- Եվ դիմեցիք Ալիսիային: Նա փող տվեց:

- Ի՞նչ է գրել օրագրում:

- Ոչինչ չի գրել:

Փոլը տատանվեց, հետո գլուխն օրորեց:

- Ոչ, ոչ մի գրող: Ասաց, որ այդքան չունի:

Փոլը նորից ստում էր: Բայց ինչո՞ւ:

- Այդ դեպքում ինչպե՞ս հայթայթեցիք գումարը:

- Ես... խնայողական հաշվից հանեցի: Միայն թե, խնդրու
եմ, մեր մեջ մնա... Չեմ ուզում, որ մայրս այդ մասին իմանա:

- Ես մտադիր չեմ Լիդիային այս պատմության մեջ ներքաշե

- Իսկապե՞ս,- Փոլի դեմքին գույն եկավ: Երևում է՝ խոսքեր
նրան հույս ներշնչեցին: - Անչափ շնորհակալ եմ:

- Ալիսիան Ձեզ երբևէ ասե՞լ է, որ իրեն հետևում են:

Փոլն իջեցրեց ակնոցն ու զարմացած ինձ նայեց: Հասկացա
որ չի ասել:

- Հետևո՞ւմ են: Այդ ինչպե՞ս:

Նրան պատմեցի Ալիսիայի կասկածների մասին օրագրու
կարդացածս, թե իբր անծանոթը հետևում է նրան, վախեր
մասին, որ տղամարդն ուզում է տուն մտնել ու իր վրա հար
ձակվել:

- Խեղճը խելքը լրիվ թռցրել է,- ասաց Փոլն ու օրորեց գլուխը:
- Կարծում եք՝ հորինում էր:
- Դե իհարկե,- ասաց ուսերը թոթվելով: - Ինչ է, կարծում եք՝ ինչ-որ մեկն իսկապես հետևում էր նրան: Չնայած, մյուս կողմից, հնարավոր է...
- Այո, հնարավոր է: Որքան հասկանում եմ, Ալիսիան այդ մասին Ձեզ ոչինչ չի ասել:
- Ոչ մի բառ: Թեև Ալիսիան ու ես առանձնապես շատ չէինք խոսում: Ընդհանրապես մանկուց լռակյաց էր: Մեր ընտանիքում բոլորս ենք լուռ: Հիշում եմ՝ Ալիսիան ընկերուհիների տներից վերադառնալիս ասում էր, որ տարօրինակ զգացողություն է ունենում. նրանց ընտանիքներում բոլորն ուրախ էին, ծիծաղում էին, կատակ անում, տարբեր թեմաներից լրուցում, իսկ մեր տունն այնքա՜ն լուռ էր: Մենք երբեք չէինք խոսում: Միայն մայրիկն էր հրամաններ տալիս:
- Իսկ Ալիսիայի հայրը՝ Վերնոնը, ինչպիսի՞ մարդ էր:
- Իրականում, Վերնոնն էլ առանձնապես չէր խոսում, իսկ տղայի մահից հետո գլխի հետ խնդիրներ ունեցավ: Այդպես էլ կարողացավ ուշքի գալ... Ի դեպ, Ալիսիան՝ նույնպես:
- Ճիշտն ասած, մի բան էլ կա, որի մասին կուզեի մանրամասն հարցնել: Տանյան հիշեցրեց:
- Տանյա Բերենսո՞նը: Դուք նրա հետ խոսե՞լ եք:
- Մեկ-երկու բառ եմ փոխանակել: Տանյան առաջարկեց, որ Ձեզ հետ հանդիպեմ:
- Տանյա՞ն,- Փոլի այտերը կարմրեցին: - Ես... Ես նրան կարդին չեմ ճանաչում, բայց միշտ լավ է վերաբերվել ինձ: Շատ լավ կին է: Մի քանի անգամ այցելել է ինձ ու մայրիկին:
Փոլի շուրթերին ժպիտ հայտնվեց, ու նա հայացքը փախց-

րեց: Ա՛յ քեզ բան: Ուրեմն Տանյային է սիրահարված... Հե
տաքրքիր է՝ Մաքսն ինչպես է դրան վերաբերվում:

– Տանյան ինչ ասաց,– հարցրեց Փոլը:

– Խորհուրդ տվեց, որ Ձեզ հարցուփորձ անեմ ավտովթա
րին հաջորդած գիշերվա մասին: Բայց մանրամասների մե
չխորացավ:

– Պարզ է, գիտեմ, թե ինչ նկատի ունի: Դատավարությա
ընթացքում Տանյային մի բան պատմեցի ու խնդրեցի, որ ո
ոքի չասի:

– Նա ինձ ոչինչ չի ասել: Դուք որոշեք՝ վստահո՞ւմ եք ինձ, թ
ոչ:

Փոլը դատարկեց գավաթն ու թոթվեց ուսերը:

– Դե, առանձնապես պատմելու բան չկա, բայց... գուցե դ
օգնի ավելի լավ հասկանալ Ալիսիային: Նա...,– ու Փոլը լռեց:

– Դե շարունակեք,– ասացի:

– Ավտովթարից հետո Ալիսիային հիվանդանոց տարան
մինչև առավոտ պահեցին: Առաջին բանը, որ արեց հիվան
դանոցից տուն գալուն պես, բարձրացավ մեր տան տանիք
ես էլ գնացի նրա հետևից: Ամբողջ գիշեր վերևում մնացինք
ես ու Ալիսիան հաճախ էինք տանիք բարձրանում: Մե
գաղտնի ապաստարանն էր:

– Տանի՞քը:

Փոլը մի քանի վայրկյան լուռ, մտքերի մեջ ինձ էր նայում
հետո վերջապես որոշում կայացրեց:

– Դե,– ասաց ու վեր կացավ տեղից,– գնանք, ես Ձեզ ցույ
կտամ:

8

›րբ մոտեցանք, տունը խավարի մեջ էր թաղված:

Այս կողմ,- ասաց Փոլը: - Գնացինք:

Տան պատին երկաթե աստիճան էր հենած: Քայլեցինք այդ լողմ՝ դժվարությամբ առաջ շարժվելով ցեխի սառած գնդերի լրայով, որոնք կարծր ալիքների ու ակոսների էին վերածվել: Ֆոլն ինձ չսպասեց ու առաջինը բարձրացավ աստիճանով:

Ամեն րոպե եղանակն ավելի էր ցրտում: Սկսում էի կասլածել՝ արդյոք արժե՞ր տանիք բարձրանալ, բայց, այնուամեայնիվ, հետևեցի Փոլին՝ բռնվելով առաջին աստիճանից, որ ıառած էր ու սայթաքուն: Վրան ինչ-որ բույս էր փաթաթված, ıավանաբար բաղեղ:

Քայլ առ քայլ բարձրացա: Երբ վերջապես վերև հասա, ſատներս թմրել էին, իսկ քամին շամփրում էր դեմքս: Զգուıորեն տանիք մագլցեցի: Փոլը սպասում էր՝ ինձ նայելով հուզլած, տղայական ժպիտով: Մենք շրջապատված էինք թանձր սավարով, իսկ գլխավերևում միայն կախված էր լուսնի բաıալիկ մանգաղը:

Հանկարծ դեմքի տարօրինակ արտահայտությամբ Փոլն ıնձ ընդառաջ եկավ: Մարմնովս սարսուռ անցավ, երբ ձեռքն

ինձ մեկնեց, նույնիսկ թեքվեցի, որ հարվածից խույս տամ
բայց բռնեց ինձ: Մի պահ թվաց՝ ուզում է տանիքից ցած գցել
բայց ամուր բռնեց ձեռքս ու իր կողմ քաշեց:

– Եզրին շատ մոտ եք,– ասաց: – Կենտրոնում մնացեք, ավելի
ապահով է:

Շունչս տեղն եկավ, գլխով արեցի: Իզուր տանիք բարձ
րացանք: Փոլի կողքին ինձ ապահով չէի զգում: Ուզում էի
առաջարկել, որ իջնենք, երբ հանեց սիգարետի տուփն ու
առաջարկեց: Մի քիչ տատանվեցի, հետո վերցրի: Ցրտից
դողացող մատներով գրպանիցս հանեցի վառիչն ու վառեցի
սիգարետները:

Մի քանի վայրկյան լուռ կանգնած՝ ծխում էինք:

– Ահա, այստեղ էինք ես ու Ալիսիան նստում,– ասաց: – Ամեն
օր տանիք էինք բարձրանում:

– Քանի՞ տարեկան էիք:

– Երևի յոթ կամ ութ: Ալիսիան էլ հազիվ տասը տարեկան
լիներ:

– Աստիճանով տանիք բարձրանալու համար շատ փոքր
չէի՞ք:

– Գուցե փոքր էինք: Բայց մեզ համար սովորական էր: Ավելի
ուշ, դեռահասության տարիքում, այստեղ ծխում էինք, գարե-
ջուր խմում:

Փորձեցի պատկերացնել, թե երիտասարդ Ալիսիան ինչ-
պես է հորից ու բռնապետ հորաքրոջից թաքնվում տանիքում
Բայց հանկարծ նրա լուռ միայնությունը խախտում է եղբայրը
Փոլը: Նա աստիճանով բարձրանում է ու գլուխը տանում իր
զրույցներով՝ թույլ չտալով լռության մեջ մեն-մենակ նստել
մտքերի մեջ խորասուզվել:

– Լավ թաքստոց է,– ասացի:

Փոլը գլխով արեց:

– Քեռի Վերնոնը տանիք բարձրանալ չէր կարող: Մայրիկիս ման խոշորամարմին էր:

– Ճիշտն ասած, ես էլ հազիվ բարձրացա: Բաղեղները ձեռ-ներիս էին կպչում:

– Բաղեղ չէ,– ասաց Փոլը: – Հասմիկ է,– հետո կանաչ թփե-ին նայեց, որոնք աստիճանին էին փաթաթվել,– գարնանն ծաղկում ու հենց ծաղկում է, այնպիսի՛ հոտ է տարածվում՝ ծանելիքի պես է բուրում,– ասաց Փոլը, ու թվաց՝ հիշողութ-ունների գիրկն ընկավ: – Զվարճալի է:

– Ինչն է զվարճալի:

– Ոչինչ,– ասաց ուսերը թոթվելով: – Հիշողությունները... Հենց որ հիշեցի, ավտովթարի օրը, երբ Եվան զոհվեց, հասմիկը աղկել էր:

– Այդ օրն էլ էիք Ալիսիայի հետ այստեղ թաքնվել,– ասացի ուրջս նայելով:

Նա գլխով արեց:

– Մայրիկն ու քեռի Վերնոնը ներքևում մեզ էին փնտրում: սում էինք, թե ինչպես են մեզ կանչում, բայց լուռ նստած ինք: Թաքնվել էինք: Հենց այդ ժամանակ էլ պատահեց...

Նա կտրուկ հանգցրեց սիգարետն ու ինձ տարօրինակ ևպտաց:

– Դրա համար Ձեզ այստեղ բերեցի: Ուզում էի հանցանքի լայրը ցույց տալ:

– Հանցանքի՞:

Փոլը չպատասխանեց, միայն քմծիծաղ տվեց:

– Ինչ հանցանք, Փո՛լ:

– Քեռի Վերնոնի գործած հանցանքի,– ասաց: – Գիտեք
վատ մարդ էր: Շատ վատ:

– Ինչ նկատի ունեք:

– Հենց այդ ժամանակ էլ արեց դա:

– Ինչ արեց:

– Ալիսիային սպանեց:

Սառած նրան նայեցի. ականջներիս չէի հավատում:

– Ալիսիային սպանե՞ց: Ոչինչ չեմ հասկանում:

Փոլը ցույց տվեց գետինը:

– Քեռին ներքևում էր մորս հետ: Հարբած էր: Մայրս փոր
ձում էր նրան ներս տանել, բայց նա անդադար Ալիսիային է
կանչում: Շատ բարկացած էր: Կարծես խելագարված լիներ:

– Ալիսիայի թաքնվելու պատճառով: Բայց ախր երեխա էր
որի մայրը վերջերս էր մահացել:

– Քեռին ստոր տականք էր: Նա միայն Եվային էր սիրու
Երևի հենց դրա համար էլ այդպես ասաց:

– Ինչ ասաց,– համբերությունս կորցնում էի: – Ոչինչ չեմ հաս
կանում: Կոնկրետ ինչ է պատահել:

– Վերնոնն ասում էր, թե որքան է սիրում Եվային, որ չի կա
րող ապրել առանց նրա: Ասում էր՝ իմ աղջիկ, իմ խեղճ աղ
ջիկ, իմ Եվա: Ինչո՞ւ հեռացավ: Ինչո՞ւ հենց նա: Նրա փոխարե՞
թող Ալիսիան մեռներ:

Մի քանի վայրկյան ապշած նրան էի նայում: Ոչինչ չէի հաս
կանում:

– Թող Ալիսիան նրա փոխարե՞ն մեռներ:

– Այդպես էլ ասաց:

– Ալիսիան լսե՞ց:

– Իհարկե, լսեց ու ականջիս շշնջաց... Ալիսիայի բառեր

րբեք չեմ մոռանա: «Նա սպանեց ինձ,- ասաց: - Հայրս հենց
որ ինձ սպանեց»:
Լուռ Փոլին էի նայում. անկարող էի ինչ-որ բառ արտա-
անել: Գլխումս միանգամից ասես զանգեր ղողանջեցին.
նչյունները զրնգում էին, միախառնվում, արձագանքում:
Հա թե ամբողջ ընթացքում ինչ էի փնտրում: Ու հիմա վեր-
ապես գտել էի խճանկարի պակասող մասը: Գտել էի այս-
ղեղ՝ Քեմբրիջում, տանիքին:

***

ոնդոն վերադառնալու ամբողջ ճանապարհին անընդհատ
ռաճիս ենթատեքստի մասին էի մտածում: Հիմա հասկանում
մ, թե «Ալկեստիսն» ինչով էր գրավել Ալիսիային: Եթե Ադ-
ետուսն Ալկեստիսին դատապարտել էր ֆիզիկական, ապա
Վերնոն Ռոուզը դստերը դատապարտել էր հոգեբանական
ահվան: Ի տարբերություն Ադմետուսի, որը երևի քիչ թե
ատ սիրում էր Ալկեստիսին, Վերնոն Ռոուզն Ալիսիայի հան-
եպ միայն ատելություն էր զգում: Այն, ինչ նա արել էր, «հո-
եբանական մանկասպանություն» է կոչվում, և Ալիսիան դա
ասկանում էր: «Նա սպանեց ինձ,- ասել էր Ալիսիան: - Հայ-
իկը հենց նոր ինձ սպանեց»:
Հիմա վերջապես կա մի բան, որից կարող էի կառչել, որով
արող էի աշխատել: Հիմա գոնե ինչ-որ բան գիտեի. երե-
ռանների վրա հոգեբանական տրավմայի զգացմունքային
ետևանքների և ավելի ուշ, հասուն տարիքում, դրանց հե-
ռագա դրսևորումների մասին: Պատկերացրեք՝ ինչ է զգում

փոքրիկ աղջիկը, երբ հայրը՝ ամենամտերիմ մարդը, որի
նրա ֆիզիկական գոյությունն է կախված, անիծում է իրեն
իր մահը ցանկանում: Ի՞նչ սարսափելի է երեխայի համար
ինչպիսի՞ տրավմա: Սեփական արժանապատվության զգա
ցումը, ինքնագնահատականը դաժանորեն ոչնչացված է: Ո
հանկարծ ծագում է հզոր ու ամենակուլ ցավը, որն ուզում ե
կլանել, ճնշել, հոգուդ խորքում թաքցնել: Ժամանակի ընթաց
քում տրավմայի աղբյուրի հետ կապը կորչում է, անհետանու
են դրա առաջացման արմատները, և ամեն ինչ մոռացվու
է: Բայց մի օր այդ ամբողջ ցավն ու զայրույթը ժայթքում են
ինչպես կրակը վիշապի երախից, և դու ձեռքդ ես առնու
հրացանը: Ընդ որում, զայրույթն ուղղում ես ոչ թե հորդ, որ
մահացել է, մոռացվել ու նրանից անհնար է վրեժ լուծել, ա
ամուսնուդ՝ այն տղամարդուն, որը քո կյանքում զբաղեցրե
է հորդ դերը, սիրել է քեզ, քեզ հետ անկողին կիսել: Ու հին
անգամ կրակում ես նրա գլխին՝ չհասկանալով, թե ինչու:

Գնացքը գիշերվա խավարի միջով սլանում էր՝ ինձ վերա
դարձնելով Լոնդոն: Վերջապես, հիմա վերջապես գիտեմ, թ
Ալիսիային ինչպես մոտենամ:

Հիմա արդեն կարող եմ սկսել:

9

ալիսիայի հետ նստած էի լիակատար լռության մեջ:

Աստիճանաբար ընտելանում էի այս լռությանը, ավելի հեշտ ի դրան դիմանում, ընկղմվում էի դրա մեջ ու հաղթահարում այն: Նրա հետ լռելը, կարելի է ասել, հարմարավետ էր. երկուսով նստում էինք փոքրիկ աշխատասենյակում ու լռում:

Ալիսիան ձեռքերը դրել էր ծնկներին, ռիթմիկ շարժումներով բացում ու փակում էր բռունցքներն այնպես, ինչպես աբախող սիրտը: Դեմքով իմ կողմ էր շրջվել, բայց ինձ չէր այում, այլ ճաղերի միջով հայացքն ուղղել էր պատուհանից ուրս: Անձրևը դադարել էր, իսկ ամպերի արանքից երևում ր կապտավուն, գունատ երկինքը, հետո մի ուրիշ, թանձր ամպ հայտնվեց, ու երկինքը մոխրագույն դարձավ:

– Վերջերս մի հետաքրքիր պատմություն իմացա,– վերջապես խոսեցի ես: – Ձեր հորաքրոջ տղան՝ Փոլը, պատմեց,– ասացի հնարավորինս զգույշ: Արձագանք չեղավ, ուստի շարունակեցի,– Փոլն ասաց, որ փոքր ժամանակ պատահաբար ներ հոր՝ Ձեզ ուղղված դաժան բառերն եք լսել: Դա եղել է ավելի տարիներ հետո, որը Ձեր մոր կյանքն է խլել... Նա ասել է, որ ուզեր, որ Դուք Ձեր մայրիկի փոխարեն մեռնեիք:

Կարծում էի, թե խոսքիս կիետևի ծնկների նյարդայի՝ ռեակցիան՝ ի նշան հաստատման: Սպասեցի, բայց ոչին չեղավ:

– Հետաքրքիր է՝ ինչպես եք վերաբերվում, որ Փոլն ինձ ամե՝ ինչ պատմել է: Փաստորեն առանց թույլտվության Ձեր գաղտ նիքն է հայտնել: Բայց ես հավատացած եմ, որ Փոլը դա նպաստ Ձեզ է արել: Ի վերջո, Դուք իմ հոգածության տակ եք

Ոչ մի արձագանք: Մեկ-երկու վայրկյան սպասելուց հետ շարունակեցի.

– Այն, ինչ հիմա կասեմ, գուցե օգնի Ձեզ: Չեմ ուզում կեղծա վոր թվալ, բայց ավելի շատ ինձ կօգնի: Իրականում ես Ձե ավելի լավ եմ հասկանում, քան կարծում եք: Չեմ ուզում չա փից շատ մանրամասնել, բայց Դուք և ես նման պայմաննե րում ենք մեծացել. մեր հայրերը բնավորությամբ շատ նմա՝ են իրար: Երկուսս էլ առաջին իսկ հնարավորության դեպքու տնից հեռացել ենք: Բայց շուտով հասկացել ենք, որ ոչ մ տարածություն ի զորու չէ մեղմել հոգու ցավը: Կան բաներ որոնք հեշտ չէ թողնել անցյալում: Գիտեմ, թե ինչ ծանր ման կություն եք ունեցել: Կարևոր է, որ հասկանաք, թե ինչ լուր հարված եք ստացել: Ձեր հոր բառերը հավասարարժեք ե՝ հոգեբանական սպանության: Նա սպանել է Ձեզ:

Ալիսիան այս անգամ արձագանքեց:

Նա կտրուկ ինձ նայեց. աչքերն ատելությունից այրվում էին Եթե հայացքը սպանել կարողանար, ես հիմա մեռած կլինեի Բայց աչքերս նրա ոչնչացնող հայացքից չփախցրի:

– Ալիսիա,– ասացի,– սա մեր վերջին հնարավորությունն է Ես առանց պրոֆեսոր Դիոմիդիսի իմացության կամ թույլ տվության եմ այստեղ եկել: Եթե շարունակեմ հանուն Ձե

ıախտել օրենքները, ինձ աշխատանքից կհեռացնեն: Ուստի
ա մեր վերջին հանդիպումն է: Հասկանում եք:
Ասացի առանց որևէ ակնկալիքի կամ զգացմունքի, առանց
ույսի: Գլխով պատին խփելուց հոգնել էի: Որևէ պատաս-
ıան չէի ակնկալում: Ու հանկարծ...
Սկզբում թվաց՝ աչքիս է երևում, ականջիս ձայներ են հաս-
ում: Շունչս պահած, անթարթ Ալիսիային էի նայում: Սիրտս
ıժգին տրոփում էր: Բերանս չորացել էր, բայց խոսեցի.
- Դուք... ինչ-որ բան ասացիք:
Ու նորից լռություն: Չէ, ավաղ, սխալվել էի: Երևի թվացել է:
այց հետո... նորից եղավ:
Ալիսիայի շուրթերը դանդաղ ու ցավոտ շարժվեցին. ձայնը
կզբում ճռնչում էր, ինչպես ժանգոտ դարպասը, որը ոչ ոք
աղուց չի յուղել:
- Ինչ...,- շշնջաց նա: Հետո լռեց ու նորից արտաբերեց,-
նչ... ինչ...
Մի քանի վայրկյան ուղղակի իրար էինք նայում: Աչքերս
անդաղ արցունքներով էին լցվում, անհավատալի ուրա-
ıության, հուզմունքի ու երախտագիտության արցունքներով:
- Ես ինչ եմ ուզում,- ասացի: - Ուզում եմ, որ խոսեք... խոսեք,
ıոսեք ինձ հետ, Ալիսիա՛...
Ալիսիան ապշած ինձ էր նայում: Երևում էր, որ ինչ-որ բանի
ասին է մտածում: Հետո որոշում կայացրեց, դանդաղ գլխով
ıրեց ու պատասխանեց.
- Լավ:

10

- Ի՞նչ ասաց,- պրոֆեսոր Դիոմիդիսն ապշած ինձ նայեց:
Մենք դրսում էինք, ծխում էինք: Երևում է, որ հուզված էր
անակնկալի եկած՝ ձեռքից գցել էր սիգարետն ու նույնիսկ չէ
նկատել:

- Նա խոսեց: Ալիսիան իսկապես խոսեց:

- Խոսեց:

- Անհավանական է: Ուրեմն իրավացի էիք: Այդ ես սխալվեցի

- Բոլորովին: Ես սխալվեցի, պրոֆեսո՛ր, երբ առանց Ձե
թույլտվության Ալիսիայի հետ հանդիպեցի: Ներեցեք ինձ
ուղղակի բնազդով էի շարժվում...

Դիոմիդիսը ձեռքի շարժումով կանխեց իմ ներողությունն r
իմ փոխարեն ավարտեց նախադասությունը:

- Դուք հետևել եք ներքին ձայնին: Ես էլ այդպես կվարվեի
Կեցցե՛ք, Թեո:

Հասկանում էի, որ պետք չէ ժամանակից շուտ ուրախանա

- Ճտերը հաշվելու համար դեռ վաղ է: Անշուշտ, սա լուր
առաջընթաց է: Բայց երաշխիք չկա. ցանկացած պահի Ալի
սիան կարող է նորից իր մեջ փակվել ու լռել:

- Ճիշտ եք,- Դիոմիդիսը գլխով արեց: - Պետք է շտապ կար

ով հանձնաժողով հրավիրել ու նորից զննել Ալիսիային: լինենք ես, Դուք և կառավարող ընկերության ինչ-որ ներկա-սցուցիչ: Ամենայն հավանականությամբ, Ջուլիանը: Նրանից տանգ չկա...

– Շատ եք շտապում, պրոֆեսո՛ր: Դուք ինձ չեք լսում: Դեռ ատ վաղ է: Ախր Ալիսիային կվախեցնենք: Մենք պետք է անդաղ շարժվենք առաջ:

– Հասկացեք, կառավարող ընկերությանը տեղյակ պահելը արևոր է...

– Դեռ վաղ է: Իսկ եթե Ալիսիան էլ երբեք չխոսի: Եկեք սպա-ենք: Հապճեպ հայտարարություններ անելու կարիք չկա: Մի՛ տապեք:

Դիոմիդիսը գլխով արեց. նա ամեն ինչ հասկացավ: Ձեռքը ,րեց ուսիս ու թփթփացրեց:

– Կեցցե՛ք, Թեո,– նորից ասաց նա՝ ուսս ամուր սեղմելով: – ։պարտանում եմ Ձեզնով:

Հոգիս հպարտությամբ լցվեց. ես կարծես որդի լինեի, որին ։այրը հենց նոր գովեց: Այո, իսկապես ուզում էի Դիոմիդիսին ,ոհացնել, արդարացնել նրա վստահությունը, ամեն ինչ անել, ։ր ինձնով հպարտանա: Նրա խոսքերն ինձ այնպե՛ս հուզե-ցին, որ հուզմունքս թաքցնելու համար սիգարետ վառեցի:

– Հիմա ի՞նչ անենք:

– Շարունակե՛ք,– ասաց Դիոմիդիսը: – Շարունակե՛ք Ալի-։իայի հետ աշխատել:

– Իսկ եթե Ստեֆանին իմանա՞:

– Մոռացե՛ք Ստեֆանիին: Նրան ինձ թողեք և Ալիսիայի վրա ,ենտրոնացեք:

Այդպես էլ արեցի:

***

Մեր հաջորդ հանդիպմանն Ալիսիան ու ես անդադար խո
սում էինք: Ալիսիային լսելն ինձ համար անսովոր էր ու նույ
նիսկ շփոթեցնող հատկապես երկարատև լռությունից հետո
Սկզբում անվստահ էր, ասես փորձում էր խոսել, ինչպես մար
դը, որ երկար դադարից հետո նորից քայլել էր սովորում: Շու
տով խոսքն ավելի շտապ, ավելի սահուն դարձավ, նա սկսե
նախադասություններ կազմել այնպես, ասես երբեք էլ չէ
լռել: Ինչ-որ առումով այդպես էլ կար:

Երբ հանդիպումն ավարտվեց, իմ աշխատասենյակ գնացի
Նստեցի սեղանիս առաջ ու սկսեցի նրա ասածները գրառել
քանի դեռ հիշողությունս թարմ էր: Աշխատում էի ոչինչ բաց
չթողնել, բառ առ բառ հնարավորինս ճշգրիտ ու կոնկրետ
արձանագրել ամեն ինչ:

Շուտով ինքներդ էլ կտեսնեք, թե ինչ անհավանական
պատմություն է: Մի գրամ կասկած իսկ չունեմ:

Թեև ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ, Ձեր գործն է:

11

Հոգեթերապիայի սենյակում Ալիսիան նստած էր աթոռին, իմ դիմաց:

- Սկսելուց առաջ,- ասացի,- նախ կուզեի մի քանի հարց տալ: Պետք է որոշ բաներ ճշտել:

Պատասխան չկար: Ալիսիան դեմքի անվերծանելի արտահայտությամբ ինձ էր նայում:

- Ինձ Ձեր լռությունն է հետաքրքրում,- շարունակեցի: - Ուզում եմ իմանալ, թե ինչու էիք խոսելուց հրաժարվել:

Հարցը կարծես շփոթեցրեց Ալիսիային: Նա դեպի պատուհանը շրջվեց:

Եվս մի քանի րոպե լուռ նստած էինք: Ամեն կերպ ջանում էի անհանգստությունս զսպել: Մի՞թե առաջընթացը ժամանակավոր էր: Ինչ է, նորից վերադարձ դեպի լռությո՞ւն: Ես դա թույլ չեմ տա:

- Ալիսիա՛, գիտեմ, դժվար է: Բայց հավատացեք, երբ սկսեք ինձ հետ խոսել, ամեն ինչ կհեշտանա, խոստանում եմ:

Ոչ մի պատասխան:

- Փորձեք: Խնդրում եմ, մի՛ հանձնվեք, ամենաբարդ քայլն արդեն արել եք: Շարունակե՛ք: Պատմեք՝ ինչո՞ւ չէիք խոսում:

Ալիսիան շրջվեց ու սառած ինձ նայեց:

- Չունեմ... Ասելիք չունեմ,- հազիվ լսվող ձայնով արտաբե
րեց նա:

- Չեմ հավատում: Հակառակը, վստահ եմ, որ ասելիք շաս
կա:

Նորից դադար:

- Հնարավոր է: Գուցե իրավացի եք,- ասաց ուսերը թոթվելով

- Դե, շարունակեք:

- Սկզբում,- անվստահ ասաց,- երբ Գաբրիելը... դե, երբ նա
մահացավ, չէի կարողանում, փորձում էի... բայց չէի կարո-
ղանում... խոսել: Բացում էի բերանս... բայց ձայն դուրս չէր
գալիս: Ինչպես քնի մեջ... երբ փորձում ես ճչալ... բայց չես կա-
րողանում:

- Դուք շոկային վիճակում էիք: Բայց հետագա մի քանի օրե-
րին ձայնը երևի դանդաղ վերականգնվեց, ճիշտ է...

- Այն ժամանակ արդեն անիմաստ էր: Չափազանց ուշ էր:

- Չափազանց ուշ էր ի պաշտպանություն Ձեզ խոսելու հա-
մար:

Ալիսիան հայացքն ինձնից չէր կտրում, իսկ շուրթերին
առեղծվածային ժպիտ էր հայտնվել: Նա չէր խոսում:

- Ասացեք, ինչո՞ւ որոշեցիք նորից խոսել:

- Դուք գիտեք պատասխանը:

- Գիտեմ:

- Ձեր պատճառով:

- Հմ,- զարմացած հարցրի ես:

- Այո, Ձեր՝ այստեղ հայտնվելու պատճառով:

- Դա ինչ փոխեց:

- Ամեն ինչ .. Հենց դա ամեն ինչ փոխեց,- Ալիսիան լռեց ու

այացքն ինձ հառեց: - Ուզում եմ, որ հասկանաք, թե ինչ կա-
ıարվեց ինձ հետ, թե ինչպիսի զգացողություններ ունեցա:
արևոր է... Դուք ինձ կհասկանաք:
- Ես ուզում եմ հասկանալ: Երևի դա է պատճառը, որ օրա-
.իրն ինձ տվեցիք, ճիշտ է: Որ հասկանամ: Ինձ թվում է՝ մար-
.իկ, որոնց ամենաշատն էիք վստահում, կասկածում էին
ںնծանոթ տղամարդու մասին Ձեր պատմության ճշմարտա-
իությանը: Երևի Ձեզ հետաքրքրում է՝ հավատո՞ւմ եմ, թե՞ ոչ:
- Դուք ինձ հավատում եք,- ասաց:
Նա հարց չէր տալիս. փաստն էր արձանագրում: Գլխով
ıրեցի:
- Այո, հավատում եմ: Եկեք հենց այդտեղից էլ սկսենք:
)րագրի վերջին գլխում նկարագրում եք, թե անծանոթ տղա-
ìարդն ինչպես Ձեր տուն ներխուժեց: Իսկ հետո ի՞նչ պատա-
ıեց:
- Ոչինչ:
- Ոչի՞նչ:
- Պարզվեց՝ նա չէր,- ասաց գլուխն օրորելով:
- Նա՞ չէր: Այդ դեպքում ո՞վ էր:
- Ժան-Ֆելիքսն էր: Նա ուզում էր... մի խոսքով՝ եկել էր, որ
գալիք ցուցահանդեսը քննարկենք:
- Դատելով Ձեր օրագրից՝ այն հոգեվիճակում չէիք, որ այ-
յելուններ ընդունեիք:
Ալիսիան կծկվեց ու գլխով արեց:
- Ձեզ մոտ երկա՞ր մնաց:
- Ոչ: Խնդրեցի, որ հեռանա: Չէր ուզում գնալ, տրամադ-
ıությունն ընկավ, նույնիսկ գոռգոռաց ինձ վրա, բայց հետո
ıեռացավ:

– Եվ ինչ եղավ հետո,– հարցրի: – Ինչ պատահեց Ժան-Ֆե
լիքսի հեռանալուց հետո:

– Չեմ ուզում այդ մասին խոսել,– ասաց Ալիսիան գլուխն
օրորելով:

– Չե՞ք ուզում:

– Դեռ պատրաստ չեմ:

Ալիսիան մի պահ նայեց ուղիղ աչքերիս, հետո հայացքլ
ճաղապատ պատուհանից երևացող մթնող երկնքին ուղղեց
Գլուխը թեքելու մեջ ինչ-որ սեթևեթանք կար, իսկ շուրթերի
անկյուններում գաղտնի ժպիտ էր թաքնված: Ինձ թվաց՝ վա
յելում է այն, որ ամբողջությամբ իր իշխանության տակ եմ:

– Ինչի՞ մասին խոսենք,– հարցրի:

– Չգիտեմ, ոչնչի: Ուղղակի ուզում եմ խոսել:

Ու մենք խոսեցինք: Խոսեցինք Լիդիայի ու Փոլի, Ալիսիայի
մայրիկի, այն ամառվա մասին, երբ նա զոհվեց: Քննարկե-
ցինք Ալիսիայի մանկությունը, իմ մանկությունը: Ես նրան
պատմեցի հորս մասին, պատմեցի, թե ինչպես եմ մեծացե
ծնողներիս տանը: Ալիսիան ուշադիր լսում էր, ասես ուզում
էր հնարավորինս շատ բան իմանալ իմ անցյալի մասին, այն
կյանքի, որը կերտել է իմ էությունը:

Հիշում եմ՝ հանկարծ մտածեցի, որ կամուրջներն այրված
են: Մենք անվերադարձ խախտել ենք հոգեթերապևտին հի-
վանդից բաժանող նուրբ սահմանագիծը և շուտով անհնար
կլիներ ասել, թե ով ում է բուժում:

12

Հաջորդ օրը նորից հանդիպեցինք: Ալիսիան կարծես փոխվել էր, ավելի զուսպ էր, ավելի շրջահայաց: Կարծում եմ՝ պատճառն այն է, որ պատրաստվում էր Գաբրիելի մահվան մասին խոսել:

Նստեց իմ դիմաց ու, ի զարմանս ինձ, ամբողջ սեանսի ընթացքում աչքն ինձնից չէր կտրում: Սկսեց խոսել իր նասաձեռնությամբ՝ առանց իմ հուշման, դանդաղ, մտածված, լգուշությամբ ամեն մի բառն ընտրելով, կարծես կտավի վրա լրձնահարվածներ էր անում:

– Այդ օրը մենակ էի տանը,– սկսեց Ալիսիան: – Հասկանում էի, որ պետք էր աշխատել, բայց այնքան շոգ էր, որ հազիվ էի դարժվում: Բայց, այնուամենայնիվ, որոշեցի փորձել: Վերցրեցի շարժական օդափոխիչն ու քայլեցի դեպի արվեստանոց: Ու հանկարծ...

– Հանկարծ ինչ:

– Հեռախոսս զնգաց: Գաբրիելն էր: Ասաց, որ նկարահանումը երկար կտևի, ինքն էլ ուշ կգա տուն:

– Իսկ սովորաբար զանգում, տեղեկացնում էր Ձեզ, որ ուշանալու է:

Ալիսիան տարօրինակ նայեց ինձ. երևի հարցս խիստ զար մացրել էր նրան:

– Ոչ,– օրորեց գլուխը: – Ինչո՞ւ:

– Գուցե նա ա՛յլ պատճառով էր զանգում: Օրինակ, որ իմա նա, թե ինչպես եք: Դատելով օրագրի գրառումներից՝ Ձե հոգեվիճակը խիստ մտահոգում էր նրան:

– Ահա՛ թե ինչ,– Ալիսիան մտքերի մեջ ընկավ, հետո դան դաղ գլխով արեց,– հասկացա: Գուցե և իրավացի եք:

– Կներեք, ընդհատեցի: Շարունակեք: Ի՞նչ եղավ նրա զան գից հետո:

– Ես տեսա նրան,– մի պահ վարանելուց հետո ասաց Ալի սիան:

– Նրա՞ն:

– Տղամարդուն: Ավելի ճիշտ, նրա արտացոլանքը պատու հանի մեջ: Նա ներսում էր, կանգնած էր արվեստանոցում Ուղիղ իմ թիկունքում:

Ալիսիան փակեց աչքերն ու տեղում լարվեց: Երկար դադար եղավ:

– Կարո՞ղ եք նկարագրել նրան,– հնարավորինս զգուշորեն հարցրի ես: – Ինչ արտաքին ուներ:

Նա բացեց աչքերն ու ինձ նայեց:

– Բարձրահասակ էր... Ամրակազմ: Դեմքը չէի տեսնում, սև դիմակ էր դրել: Բայց աչքերը տեսա՝ երկու խավար անցք Լույսի նշույլ անգամ չկար:

– Ի՞նչ արեցիք, երբ տեսաք նրան:

– Ոչինչ: Վախից քարացած նրան էի նայում... Ձեռքին դանակ կար: Հարցրի, թե ինչ է ուզում: Չխոսեց: Ասացի, որ խոհանոցում, պայուսակիս մեջ, փող կա, բայց նա գլուխը թափահարեց

ու պատասխանեց, որ փողի համար չի եկել: Հետո ծիծաղեց: Հարկու ծիծաղ ուներ, ասես փշրվող ապակու ձայն լիներ: Հետո դանակը պարանոցիս մոտեցրեց: Սուր շեղբը սեղմում էր լոկորդս, մաշկս... Հրամայեց իր հետ տուն մտնել:

Հիշելիս Ալիսիան աչքերը փակեց:

- Մենք դուրս եկանք արվեստանոցից ու այգու միջով դեպի տուն քայլեցինք: Փողոց տանող դարպասն այնքան մոտ էր, ընդամենը մի քանի մետրի վրա... Ու հանկարծ ինձ հետ ինչ-որ բան կատարվեց: Հասկացա... դա փրկվելու իմ միակ հնարավորությունն էր: Ոտքով ուժեղ հարվածեցի ու նրանից ազատվեցի: Վազեցի, վազեցի դեպի դարպասը,- աչքերը բացեց, այս հիշողությունից ժպտաց: - Մի քանի վայրկյան ազատության մեջ էի,- Ալիսիայի ժպիտը խամրեց: - Հետո մեջքիս զգացի, ու գետնին ընկանք... Ափով փակեց բերանս, ու կոկորդիս նորից դանակի սառը շեղբը զգացի: Ասաց, որ կսպանի ինձ, եթե շարժվեմ: Մի քանի վայրկյան պառկած մնացինք: Զգում էի նրա շնչառությունը: Բերանից գարշահոտ էր փչում: Հետո բարձրացրեց ինձ ու տուն քարշ տվեց:

- Եվ ինչ եղավ հետո՞:

- Կողպեց դուռը,- ասաց: - Ու ես ծուղակում հայտնվեցի:

Ալիսիան այնքան ծանր էր շնչում, այտերն ուռել էին: Պատմելիս կարծես վերապրում էր սարսափելի դեպքերը, ու դա ինձ շատ էր անհանգստացնում:

- Գուցե մի քիչ հանգստանանք,- ասացի:

Նա օրորեց գլուխը:

- Շարունակենք: Այս օրվան շատ երկար եմ սպասել: Ուզում եմ այս բեռից ազատվել:

- Վստա՞հ եք: Լավ կլինի՝ մի քիչ հանգստանաք:

Մի պահ տատանվեց:

- Ծխել կարելի՞ է,- հարցրեց:

- Ծխե՞լ: Չգիտեի, որ ծխում եք:

- Չեմ ծխում: Առաջ... առաջ ծխում էի: Սիգարետ կտա՞ք:

- Որտեղի՞ց գիտեք, որ ծխում եմ:

- Հոտից եմ զգում:

- Պա՛րզ է,- մի քիչ շփոթված ժպտացի: - Լավ, եկեք բաև դուրս գանք,- ասացի ու տեղից վեր կացա:

13

Բակը բազմամարդ էր: Հիվանդները հավաքված էին սովորական խմբերով. բամբասում էին, բուռն վիճում, ծխում: Ոմանք փորձում էին տաքանալ՝ մարմինը շփելով և ոտքերը գետնին թփթփացնելով:

Ալիսիան սիգարետը մոտեցրեց շուրթերին՝ սեղմելով երկար, բարակ մատների արանքում: Մոտեցրի վառիչը: Սիգարետի ծայրին կրակ վառվեց, սիգարետը ճրթճրթաց, կարմրեց: Նա խոր ներս քաշեց ծուխը՝ աչքերն ինձնից չկտրելով: Գոհ էր երևում:

- Չե՞ք ծխում: Թե՞ հիվանդի հետ ծխելն արգելված է:

Ծաղրո՞ւմ է ինձ: Չնայած իրավացի է՝ կանոնադրության մեջ չկար որևէ կետ, որն անձնակազմի անդամին արգելում էր հիվանդի հետ ծխել: Բայց, չգիտես ինչու, Գրոուվում աշխատողները սովորաբար թաքուն էին ծխում, վթարային ելքի մոտ, շենքի հետևում: Եվ անշուշտ, ոչ ոք հիվանդների ներկայությամբ չէր ծխում: Ես հասկանում էի, որ, այգում Ալիսիայի հետ ծխելով, լրջորեն խախտում էի կանոնները: Գուցե չափազանցնում էի, բայց մի տեսակ անհանգիստ էի: Ինձ անընդհատ թվում էր, թե մեզ հետևում են: Զգում էի՝ Քրիստիանը

պատուհանից լրտեսում էր մեզ: Գլխիս մեջ զրնգում էին նրա խոսքերը. «Սահմանային խանգարումով հիվանդները հաճախ գայթակղում են»: Ալիսիայի աչքերի մեջ նայեցի: Նրա հայացքը գայթակղիչ չէր, նույնիսկ սիրալիր չէր: Աչքերում երևում էին կամքի ուժն ու սուր միտքը, որ դեռ նոր էին արթնանում: Այո, Ալիսիա Բերենսոնն ուժեղ էր, և այդ ուժի հետ պետք էր հաշվի նստել: Հիմա հասկանում էի:

Գուցե դա է պատճառը, որ Քրիստիանը որոշել էր նրան հանգստացնող դեղեր տալ: Մի՞թե վախենում էր, որ Ալիսիան կարող է ինչ-որ բան ասել կամ անել: Անկեղծ ասած, ես էլ էի նրանից մի քիչ վախենում, ավելի ճիշտ, ոչ թե վախենում էի այլ զգոն էի ու աչալուրջ: Հասկանում էի, որ թուլանալ չի կարելի:

- Ինչո՞ւ: Ես էլ կծխեմ,- ասացի, հանեցի սիգարետն ու վառեցի:

Որոշ ժամանակ իրար նայելով՝ լուռ ծխում էինք, իրարից ընդամենը մի քանի սանտիմետր հեռու: Հետո հանկարծ պատանու պես շփոթվեցի ու թեքեցի հայացքս:

- Գուցե քայլենք ու զրուցենք,- ասացի՝ փորձելով թաքցնել շփոթմունքս ու ձեռքով ցույց տալով բակը:

- Լավ,- Ալիսիան գլխով արեց:

Սկսեցինք քայլել պատի երկայնքով, այգու շուրջը: Մյուս հիվանդները հայացքով մեզ էին հետևում: Հետաքրքիր է՝ ի՞նչ էին մտածում: Ալիսիայի համար միևնույն էր, կարծես նրանց չէր նկատում: Լուռ քայլում էինք:

- Կուզե՞ք՝ շարունակեմ,- վերջապես խոսեց:

- Իհարկե... Պատրաստ եք:

- Պատրաստ եմ,- Ալիսիան նորից գլխով արեց:

- Ի՞նչ պատահեց, երբ տուն մտաք:

- Տղամարդն ասաց... ասաց, որ խմել է ուզում: Մի շիշ այն գարեջրից տվեցի, որ Գաբրիելն իր համար էր գնում: Ես գարեջուր չեմ խմում: Այդ պահին տանն ուրիշ խմիչք չկար:

- Հետո՞:

- Նա խոսեց:

- Ինչի՞ մասին:

- Չեմ հիշում:

- Չե՞ք հիշում:

- Ոչ:

Ալիսիան սուզվեց լռության մեջ: Սպասեցի այնքան, որքան համբերությունս հերիքեց:

- Շարունակե՞նք,- հուշեցի: - Դուք խոհանոցում էիք: Ի՞նչ էիք զգում:

- Չեմ հիշում... չեմ հիշում, թե առհասարակ զգո՞ւմ էի ինչ-որ բան:

- Դե, նման իրավիճակներում սովորական երևույթ է,- գլխով արեցի: - Դա «խփիր կամ փախիր» զգայական արձագանքը չէր: Ձեր դեպքում երրորդ, նույնպես տարածված տեսակն էր, որը պատահում է, երբ հարձակման ենք ենթարկվում՝ «քարացի՛ր»:

- Ես չէի քարացել:

- Ո՞չ:

- Ոչ,- կատաղի հայացք նետեց վրաս: - Ուժերս էի հավաքում: Պատրաստվում էի... պատրաստվում էի կռվի... նրան սպանելու:

- Հասկանում եմ: Եվ ինչպե՞ս էիք մտադիր դա անել:

- Գաբրիելի հրացանով: Հասկանում էի, որ նախ պետք է հասնեմ դրան:

– Հրացանն արդեն խոհանոցում էր: Օրագրում գրել էիք, որ հրացանը տարել էիք խոհանոց:

– Այո,– Ալիսիան գլխով արեց,– պահարանում էր՝ պատուհանի մոտ,– նա խոր ներս քաշեց ծուխն ու ծխի երկար քուլա արձակեց: – Ասացի, որ ուզում եմ ջուր խմել ու գնացի բաժակ վերցնելու: Խոհանոցում արած այդ մի քանի քայլն ինձ մի ամբողջ հավերժություն թվաց: Քայլ առ քայլ մոտեցա սպասքապահարանին, դողացող ձեռքով բացեցի...

– Եվ:

– Պահարանը դատարկ էր: Հրացանը չկար: Ու հանկարծ լսեցի նրա ձայնը. «Բաժակներն աջ կողմի պահարանում են»: Շրջվեցի ու տեսա, որ հրացանը նրա ձեռքին էր: Ինձ վրա էր պահել ու ծիծաղում էր:

– Հետո՞:

– Հետո՞:

– Ի՞նչ էիք մտածում:

– Մտածում էի, որ բաց թողեցի փրկվելու վերջին հնարավորությունս, ու հիմա հաստատ կսպանի ինձ:

– Կարծում էիք, որ անծանոթը կսպանի՞ Ձեզ:

– Վստահ էի:

– Այդ դեպքում ինչո՞ւ միանգամից չկրակեց,– հարցրի: – Ինչո՞ւ տուն ներխուժելուն պես չսպանեց Ձեզ:

Ալիսիան չպատասխանեց: Նայեցի նրան ու, ի զարմանս ինձ, շուրթերին ժպիտ նկատեցի:

– Երբ երիտասարդ էի,– ասաց,– հորաքույր Լիդիան կատվի ձագ ուներ: Զոլավոր կատու էր: Այնքան էլ չէի սիրում: Վայրի էր, հաճախ էր ինձ ճանկռում: Չար ու դաժան արարած էր:

- Բայց չէ՞ որ կենդանիների պահվածքը բնազդով է պայմանավորված: Նրանք կարո՞ղ են դաժան լինել:

Ալիսիան անթարթ ինձ էր նայում:

- Կարող են դաժան լինել, հավատացեք: Այդ կատուն դաժան էր: Դաշտից հաճախ որս էր քարշ տալիս տուն՝ մկներ, փոքր թռչուններ: Դրանք միշտ կիսամեռ էին: Վիրավոր, բայց կենդանի: Այդպես էլ խաղում էր դրանց հետ:

- Պարզ է: Ուզում եք ասել, որ Դուք այդ մարդու զոհն էիք, ու նա նախ ուզում էր կոտտանքների ենթարկել Ձեզ: Ճի՞շտ է:

Ալիսիան սիգարետի պոչը գցեց գետնին ու ոտքով տրորեց:

- Մեկն էլ տվեք:

Տուփը նրան մեկնեցի: Մի սիգարետ վերցրեց, ինքնուրույն վառեց: Ծուխը ներս քաշելուց հետո շարունակեց.

- Գաբրիելը ժամը 8-ին տուն էր գալու: Երկու ժամ էր մնում: Անթարթ նայում էի ժամացույցին: «Ի՞նչ եղավ,- ասաց,- ինձ հետ ձանձրանո՞ւմ ես»: Ու հրացանի կոթով շոյեց մաշկս՝ վեր ու վար սահեցնելով թևիս վրայով,- Ալիսիան պատմելիս դողում էր: - Ասացի, որ Գաբրիելն ուր որ է տուն կգա: «Հետո՞ ինչ,- հարցրեց: - Կարծում ես՝ կփրկի՞ քեզ»:

- Իսկ Դուք ի՞նչ ասացիք:

- Ոչինչ չասացի: Միայն ժամացույցին էի նայում... հետո հեռախոսս զանգեց: Գաբրիելն էր: Հրացանը պահեց գլխիս ու հրամայեց, որ պատասխանեմ:

- Եվ ի՞նչ: Գաբրիելն ի՞նչ ասաց:

- Նա ասաց... ասաց, որ նկարահանման տաղավարում իսկական մղձավանջ է, խնդրեց, որ իրեն չսպասեմ ու մենակ ճաշեմ: 10-ից շուտ տուն չի վերադառնա: Անջատեցի հեռախոսը: «Ամուսինս ճանապարհին է, տուն է գալիս,- ասացի:

- Շուտով կհասնի: Լավ կլինի՝ հենց հիմա գնաք, քանի դեռ չի վերադարձել»: Նա միայն ծիծաղեց: «Բայց ես լսեցի՝ ամուսինդ 10-ից շուտ չի վերադառնա,- ասաց: - Դեռ երկու ժամ ունենք: Պարան բեր,- ասաց,- կամ կպչուն ժապավեն: Պիտի կապեմ քեզ»: Կատարեցի նրա հրամանը: Վերջին հույսս մարեց: Հրաշալի հասկանում էի, թե այս ամենն ինչով կավարտվի:

Ալիսիան լռեց ու ինձ նայեց: Աչքերի մեջ զգացմունքների փոթորիկ էր, ու մտածեցի՝ գուցե պետք չէ ստիպել, որ ամենն ինչ պատմի:

- Առաջարկում եմ դադար առնել:

- Ոչ, պետք է մինչև վերջ պատմեմ: Դա ինձ է պետք:

Նա շարունակեց. այս անգամ ավելի արագ էր խոսում:

- Պարան չունեի, ուստի նկարները կախելու համար նախատեսված լարը բերեցի: Ստիպեց, որ հյուրասենյակ գնամ, ճաշասեղանի աթոռներից մեկը մի կողմ քաշեց, հրամայեց, որ նստեմ: Հետո սկսեց կոճերս պարանով աթոռին կապել: Զգում էի, թե լարն ինչպես է մաշկիս մեջ մտնում: «Խընդրում եմ,- ասում էի,- խնդրում եմ, պետք չէ...»: Բայց չէր լսում: Թևերս հետ տարավ ու արմունկներս ամուր կապեց մեջքիս: Կասկած չկար, պատրաստվում էր ինձ սպանել: Երանի... Երանի այդպես էլ լիներ:

Ալիսիան վերջին բառերը կարծես թքեց, ու այդ ուժը վախեցրեց ինձ:

- Ինչո՞ւ էիք ուզում մեռնել:

- Որովհետև այն, ինչ արեց, մահից էլ վատ էր:

Հանկարծ ինձ թվաց, թե Ալիսիան ուր որ է լաց կլինի: Մի կերպ հաղթահարեցի անդիմադրելի գայթակղությունս նրան

դրկելու, թևերիս մեջ առնելու, համբուրելու, համոզելու, խոսռանալու, որ այսուհետև ապահով ձեռքերում է: Զսպեցի ինձ: Յիգարետս հանգցրի կարմիր աղյուսից պատին:

– Ես զգում եմ, որ հոգատարության ու խնամքի կարիք ուռեք,– ասացի: – Կցանկանայի հոգ տանել Ձեր մասին, Ալիսիա՛:

– Ոչ,– վճռական օրորեց գլուխը: – Ես Ձեզնից հոգատարությունն չեմ ուզում:

– Այդ դեպքում ինչ:

Ալիսիան չպատասխանեց: Շրջվեց ու ներս մտավ:

14

Միացրի հոգեթերապիայի սենյակի լույսն ու փակեցի դուռը: Երբ շրջվեցի, Ալիսիան չգիտես ինչու նստել էր ոչ թե իր, այլ իմ աթոռին:

Սա խոսուն ժեստ էր, ու սովորական պայմաններում ան-պայման կհարցնեի, թե ինչու այդպես որոշեց: Բայց հիմա ոչինչ չասացի: Եթե իմ աթոռին նստելով Ալիսիան ընդգծում էր իր իշխանությունը, ապա նա իրավացի էր: Ես անհամբեր էի, ուզում էի լսել պատմության ավարտը, հատկապես հիմա, երբ հանգուցալուծմանն այնքան մոտ էինք: Ուստի հանգիստ նստեցի ու սպասեցի: Ալիսիայի աչքերը կիսափակ էին, նա քարի պես անշարժ էր:

- Աթոռին կապված-նստած էի,- վերջապես խոսեց,- ու ամեն անգամ, երբ թեթև շարժում էի անում, լարն ավելի էր խորանում ոտքերիս մեջ, ու մաշկս արնահոսում էր: Որքան էլ տարօրինակ է, ցավն ինձ թեթևություն էր պատճառում. չէ՞ որ այն շեղում էր ինձ սարսափելի մտքերից... Մտածում էի, որ գուցե երբեք չտեսնեմ Գաբրիելին: Ինձ թվում էր՝ շուտով կմեռնեմ:

- Ինչ պատահեց հետո:

- Թվում էր՝ մի ամբողջ հավերժություն նստած էինք հյուանասենյակում: Ծիծաղելի է. առաջ ինձ թվում էր, թե վախը սառը զգացողություն է, բայց չէ՛, կրակի պես այրում է: Սենյակում շատ շոգ էր. պատուհանները փակ էին, վարագույրները՝ իջեցրած: Օդը հեղձուցիչ էր, ծանր: Քրտինքն ուլունքի պես ճակատիցս գլորվում-լցվում էր աչքերիս մեջ, ծակծկում: Նրանից ալկոհոլի ու քրտինքի գարշահոտ էր փչում: Անծանոթն անընդհատ խմում ու խոսում էր, խոսում, անընդհատ խոսում: Ասածների մեծ մասը չէի լսում: Մի խոշոր ճանճ մնացել էր վարագույրի ու պատուհանի արանքում, ծուղակն էր ընկել ու խփվում էր ապակուն՝ թըմփ, թըմփ, թըմփ: Անծանոթն իմ մասին, Գաբրիելի մասին հարցեր էր տալիս, թե ինչպես ենք հանդիպել, որքան ժամանակ է, որ միասին ենք, երջանիկ ենք, թե ոչ: Որոշեցի, որ եթե նրան զրույցներով շեղեմ, ողջ մնալու հավանականությունը կմեծանա. պատասխանում էի նրա հարցերին՝ իմ, Գաբրիելի, աշխատանքիս մասին: Խոսում էի այն ամենի մասին, ինչ ուզում էր: Ժամանակ էի սպանում՝ միաժամանակ աչքս ժամացույցից չկտրելով: Լսում էի թկթկոցը: Վերջապես սլաքները ցույց տվեցին ժամը 22:00... Հետո... 22:30: Գաբրիելը չկար ու չկար:

- Ուշանում է,- ասաց,- երևի չի գա:

- Կգա,- ասացի:

- Դե լավ: Ես այստեղ եմ, մենակ չես լինի:

Ժամը 23:00-ին տան մոտ մեքենայի ձայն լսվեց: Տղամարդը մոտեցավ պատուհանին ու դուրս նայեց:

- Ճիշտ ժամանակին,- ասաց:

***

- Հետո ամեն ինչ շատ արագ կատարվեց,- ասաց Ալիսիան: Տղամարդը պտտեց Ալիսիայի աթոռն այնպես, որ նա մեջքով դեպի դուռը շրջված լինի: Ասաց, որ կկրակի Գաբրիելի գլխին, եթե Ալիսիան ձայն հանի: Հետո անհետացավ: Մի րոպեից լույսը մարեց, ու ամեն ինչ խավարում թաղվեց: Մուտքի դուռը բացվեց ու փակվեց:

- Ալիսիա՛,- կանչեց Գաբրիելը:

Պատասխան չկար, նա նորից կանչեց: Հետո մտավ հյուրասենյակ ու տեսավ բուխարու մոտ նստած, մեջքով իր կողմ շրջված Ալիսիային:

- Ինչո՞ւ ես մթության մեջ նստել,- հարցրեց Գաբրիելը: Պատասխան չլսվեց,- Ալիսիա՛:

Ալիսիան քիչ էր մնում՝ բղավեր, բայց աչքերն այնպես էին խավարին ընտելացել, որ սենյակի անկյունում տեսնում էր տղամարդուն և ստվերների մեջ շողացող հրացանը, որը Գաբրիելին էր ուղղել: Հանուն նրա Ալիսիան շարունակում էր լռել:

- Ալիսիա՛,- Գաբրիելը գնաց նրա կողմ,- ի՞նչ է պատահել:

Գաբրիելը մեկնեց ձեռքը, բայց չհասցրեց. տղամարդը խավար թաքստոցից դուրս ցատկեց: Ալիսիան ճչաց, բայց արդեն ուշ էր: Գաբրիելն ընկած էր հատակին, տղամարդը՝ նրա գլխավերևում: Հրացանը մուրճի պես բարձրացնում ու ուժգին թրմփոցով խփում էր Գաբրիելի գլխին՝ մեկ, երկու, երեք անգամ, իսկ նա ընկած էր անգիտակից, արնաշաղախ: Անծանոթ տղամարդը բարձրացրեց Գաբրիելի անշնչացած մարմինը, նստեցրեց աթոռին, պարանով կապեց:

- Գրողը տանի, սա՞ ինչ էր...,- ասաց Գաբրիելն ուշքի գալով:

Տղամարդը բարձրացրեց հրացանն ու նրա վրա նշան առնեց: Կրակոց հնչեց: Հետո՝ էլի: Ու նորից: Ալիսիան սկսեց ճչալ: Տղամարդը դեռ կրակում էր: Վեց անգամ կրակեց Գաբիելի գլխին, հետո հրացանը նետեց հատակին:

Ու լուռ հեռացավ:

15

Ահա և ամբողջ պատմությունը: Ալիսիա Բերենսոնն ամուս
նուն չի սպանել: Անհայտ մեկը ներխուժել է նրանց տուն
ու, ամենայն հավանականությամբ, առանց որևէ ակնհայտ
պատճառի, սպանել է Գաբրիելին, իսկ հետո անհետացել գի
շերվա խավարում: Ալիսիան միանգամայն անմեղ է:

Իհարկե, եթե նրա խոսքերին հավատում եք:

Ես ոչ մի բառին չհավատացի:

Եթե մի կողմ թողնենք ակնհայտ անհամապատասխանութ
յուններն ու անճշտությունները, օրինակ՝ այն, որ Գաբրիելին
կրակել են ոչ թե վեց, այլ հինգ անգամ, իսկ փամփուշտներից
մեկը դիպել է առաստաղին, որ Ալիսիային հայտնաբերե
են ոչ թե աթոռին կապված, այլ հյուրասենյակի մեջտեղում
կանգնած՝ կտրված դաստակներով: Ալիսիան ինձ չասաց
որ անծանոթը քանդել է պարանները, և ոչ էլ բացատրեց
թե ինչու ոստիկանությանը նախապես այս տարբերակը չ
պատմել: Ավաղ, Ալիսիան ստում էր, ու ինձ վիրավորում էլ
այն, որ ստում էր առանց ամաչելու: Մի պահ մտածեցի՝ գուցե
փորձում է ինձ, ստուգում է՝ կհավատամ պատմությանը, թե
ոչ: Եթե այդպես է, ապա չարաչար սխալվում է:

Ոչ մի բառ չասացի: Ու անսպասելիորեն առաջինն Ալիսիան սոսեց:

- Հոգնեցի,- ասաց: - Չեմ ուզում շարունակել:

Չառարկեցի:

- Եկեք վաղը շարունակենք,- ասաց:

- Էլի՞ ասելիք կա:

- Այո, մի բան էլ ու վերջ:

- Շատ լավ,- ասացի: - Ուրեմն վաղը կհանդիպենք:

Յուրին միջանցքում էր սպասում: Ալիսիային իր սենյակ ուղեկցեցի, իսկ ես բարձրացա իմ աշխատասենյակ:

Ինչպես արդեն ասել եմ, աշխատանքային գործունեության ընթացքում սովորել եմ թղթին հանձնել այն ամենը, ինչ հնչել է սեանսի ընթացքում, ընդ որում, ավարտից անմիջապես հետո: Այդ 50 րոպեների ընթացքում ասվածը ճշգրիտ արձանագրելը հոգեթերապևտի համար առանցքային նշանակություն ունի, հակառակ դեպքում մանրամասների մեծ մասը կմոռացվի, իսկ զգացմունքների անմիջականությունը կկորչի:

Նստեցի գրասեղանիս առաջ ու հնարավորինս արագ գրի առա իմ ու Ալիսիայի այսօրվա զրույցը: Ավարտելուն պես վերցրի զեկույցս ու միջանցքով դեպի Դիոմիդիսի աշխատասենյակ քայլեցի:

Դուռը թակեցի: Պատասխան չեղավ, նորից թակեցի: Դարձյալ արձագանք չկար: Բռնակն իջեցրի ու մի քիչ բացեցի: Դիոմիդիսը ներսում էր, քնած էր նեղ թախտի վրա:

- Պրոֆեսո՛ր,- ասացի, իսկ հետո ավելի բարձր կրկնեցի,- պրոֆեսոր Դիոմիդիս:

Նա արթնացավ ու կտրուկ ուղղվեց, թարթեց աչքերը:

- Ի՞նչ է եղել: Բա՞ն է պատահել:

– Պետք է խոսեմ Ձեզ հետ: Եթե հարմար չէ, ավելի ուշ կգամ

Դիոմիդիսը խոժոռվեց ու օրորեց գլուխը:

– Կարծատև սիեստա էր: Ճաշից հետո միշտ մի քիչ ննջում եմ, թե չէ մինչև երեկո չեմ դիմանա: Տարիքի հետ դրա անհրաժեշտությունն ավելանում է,– նա հորանջեց ու վեր կացավ: – Եկեք, Թեո: Նստեք: Ձեր դեմքից երևում է, որ կարևոր գործ ունեք:

– Այդպես էլ կա:

– Ալիսիայի հետ է կապված:

Գլխով արեցի ու նստեցի աշխատասեղանի առաջ: Դիոմիդիսը նստեց իմ դիմաց: Մազերը գզգզված էին, քնատ տեսք ուներ:

– Գուցե իսկապես ավելի ուշ գամ:

Դիոմիդիսն օրորեց գլուխը: Ջրամանից մի բաժակ ջուր լցրեց:

– Արդեն արթնացա: Ասեք: Ինչ է պատահել:

– Ալիսիայի հետ սեանսի ընթացքում բավական երկար խոսեցի: Ձեր խորհրդի կարիքն ունեմ:

Դիոմիդիսը գլխով արեց: Անմիջապես աշխուժացավ, ոհիմա աչքերի մեջ հետաքրքրության նշույլներ երևացին:

– Դե, պատմեք:

Սկսեցի կարդալ գրառումներս, բառ առ բառ վերականգնեցի ամբողջ սեանսը: Աշխատում էի հնարավորինս ճշգրիտ վերաշարադրել ամբողջ պատմությունը, թե ինչպես տղամարդը, որը լրտեսում էր Ալիսիային, ներխուժեց տուն, գերի վերցրեց նրան, հետո սպանեց Գաբրիելին:

Երբ ավարտեցի, պրոֆեսորը երկար ժամանակ լուռ էր դեմքը ոչինչ չէր արտահայտում: Հետո սեղանի դարակից հա

ւեց մի տուփ սիգար ու փոքր արծաթագույն դակիչը, սիգարի
ծայրը տեղադրեց դակիչի մեջ ու կտրեց:

- Սկսենք հակափոխանցումից,- ասաց: - Պատմեք Ձեր
լգացողությունների մասին, սեանսի առաջին իսկ րոպենե-
ից: Ի՞նչ էիք զգում, երբ իր պատմությունն էր պատմում:

- Երևի հուզված էի,- մի պահ մտածելուց հետո ասացի,-
մտահոգ: Նույնիսկ վախեցած:

- Վախեցա՞ծ: Ձե՞ր վախն էր, թե՞ նրա վախի արտացոլումը:

- Կարծում եմ՝ երկուսն էլ:

- Եվ ինչի՞ց էիք վախենում:

- Չեմ կարող ասել: Գուցե ձախողումից: Դուք լավ գիտեք,
թե հանուն այս գործի ինչ վտանգի եմ դիմում:

- Պարզ է,- Դիոմիդիսը գլխով արեց: - Ուրիշ ի՞նչ զգացո-
ղություններ ունեիք:

- Հիասթափություն: Ալիսիայի հետ սեանսների ժամանակ
այդ զգացողությունը հաճախ եմ ունենում:

- Իսկ բարկությո՞ւն:

- Դա էլ:

- Դուք ասես նյարդայնացած հայր լինեք, որը փորձում է
ալարդ երեխայի հետ լեզու գտնել:

- Այո: Ուզում եմ օգնել նրան, բայց վստահ չեմ՝ օգնության
կարիք ունի՞, թե ոչ:

- Եկեք կանգ առնենք բարկության վրա,- ասաց պրոֆեսո-
ը: - Մանրամասնեք՝ ինչպե՞ս է այն դրսևորվում:

- Դե, հաճախ սեանսներից հետո անտանելի գլխացավ եմ
ունենում:

- Ճիշտ եք,- գլխով արեց Դիոմիդիսը: - Օրգանիզմն այդ-
պես լարվածությունն է դուրս թողնում: «Եթե սկսնակ հոգեթե-

բապատը չհուզվի, հետո անտանելի վատ կզգա»: Գիտեք, թե
ում խոսքերն են:

– Չգիտեմ,– թոթվեցի ուսերս: – Բայց ես միաժամանակ ն
հուզվում եմ, և՛ վատ եմ զգում:

– Բայց Դուք նաև սկսնակ չեք,– ժպտաց Դիոմիդիսը,– թեև
նույնիսկ փորձառու հոգեթերապևտներն այդ զգացողությու-
նից ամբողջությամբ չեն ազատվում,– նա վերցրեց սիգարը
– Դուրս գանք, ծխենք:

***

Մենք բակում էինք, վթարային ելքի մոտ: Դիոմիդիսը փնչաց-
նելով սիգար էր ծխում, մտորում պատմածիս մասին: Ի վերջո
եզրակացության հանգեց:

– Բայց ախր ստում է,– վերջապես ասաց նա:

– Գաբրիելին սպանող անծանոթ տղամարդու մասին: Ես է
եմ այդպես կարծում:

– Եվ ոչ միայն:

– Այսինքն:

– Ալիսիայի պատմությունը սկզբից մինչև վերջ սուտ է: Նրա
ոչ մի խոսքին չեմ հավատում:

Զարմացած նայեցի պրոֆեսորին: Ենթադրում էի, որ կաս-
կածի տակ կդնի Ալիսիայի պատմության որոշ դրվագներ
բայց չէի սպասում, որ ամբողջությամբ կժխտի:

– Այսինքն՝ չեք հավատում, որ հարձակվողը տղամարդն է եղել

– Ոչ, չեմ հավատում: Ինձ թվում է՝ նա առհասարակ գոյութ-
յուն չունի: Սկզբից մինչև վերջ հորինված է:

– Ինչո՞ւ եք այդքան վստահ:

Դիոմիդիսն ինձ նայեց ու տարօրինակ ժպտաց:

– Համարեք, որ խիստ զարգացած բնազդ ունեմ: Ֆանտազ-
ıրների հետ երկարամյա մասնագիտական փորձի արդ-
ıունքն է:

Փորձեցի առարկել, բայց ձեռքի շարժումով խոսքս կան-
ıեց:

– Իհարկե, չեմ ակնկալում, որ կընդունեք ասածս, Թեո: Դուք
ıլիսիայի հետ Ձեր աշխատանքում այնպես եք խորացել, որ
ıեր զգացմունքները միաձուլվել են, մեկ ամբողջություն դար-
ել: Իմ խնդիրն է օգնել, որ քանդեք այդ թնջուկը, Ձեր ու նրա
ıգացմունքները զատեք իրարից: Ու հենց որ վերականգնեք
ıնհրաժեշտ հեռավորությունն ու հասկանաք՝ ինչն ինչոց է,
ıմեն ինչ պարզ կլինի, և Ալիսիա Բերենսոնի հետ սեանսնե-
ից միանգամայն այլ զգացողություններ կունենաք:

– Չեմ հասկանում, թե ինչ նկատի ունեք:

– Լավ, ուղիղ կասեմ. նա ներկայացում է սարքել, որ Ձեզ
ıանիպուլյացիայի ենթարկի: Հուզիչ պատմություն է հորի-
ıել, իմ համոզմամբ՝ բացառապես նրա համար, որ Ձեր մեջ
ıսեմ ու ռոմանտիկ զգացմունքներ արթնանան: Ինձ համար
ıկզբից էլ պարզ էր, որ ձգտում եք փրկել նրան: Վստահ եմ,
ıր Ալիսիան էլ քաջ գիտակցում է դա և հետևաբար որոշել է
ıգտվել իր գրավչությունից:

– Քրիստիանն էլ է այդպես ասում: Ալիսիան չի գայթակղել
ıնձ: Ես ի վիճակի եմ դիմադրել ու հիվանդի լարած ծուղակը
ընկնել: Մի՛ թերագնահատեք ինձ, պրոֆեսո՛ր:

– Դուք էլ նրան մի՛ թերագնահատեք: Ալիսիան փայլուն
ıերասանուհի է,– Դիոմիդիսն օրորեց գլուխն ու մտածկոտ

նայեց մոխրագույն ամպերին: - Խոցելի կինը հարձակման ենթարկվում. նա միայնակ է, պաշտպանության կարիք ունի Ալիսիան զոհի դերում է ներկայանում, իսկ գլխավոր չարագործի դերն առեղծվածային տղամարդուն է վերապահեր Մինչդեռ իրականում Ալիսիան ու չարագործը նույն մարդն են: Գաբրիելին Ալիսիան է սպանել: Նա է մեղավոր ամուսնու մահվան մեջ, բայց մինչև հիմա հրաժարվում է իր մեղքը ընդունել: Ու նրա գիտակցությունը ճաք է տալիս, տարրալուծվում, երևակայական պատմություններ հորինում: Այդպես Ալիսիան դառնում է անմեղ զոհ, իսկ Դուք՝ նրա փրկիչը: Այդ ֆանտազիայի հետ համաձայնելով՝ Դուք օգնում եք, որ Ալիսիան ազատվի կատարածի պատասխանատվությունից:

- Համաձայն չեմ: Չեմ կարծում, թե գիտակցաբար, միտումնավոր ստում է: Համենայն դեպս, Ալիսիան անկեղծորեն հավատում է, որ իր պատմությունը ճշմարտություն է:

- Իհարկե, հավատում է: Ալիսիան իսկապես հարձակման է ենթարկվել, բայց իր ներսից, հոգեկան վիճակից, այլ ոչ թե արտաքին աշխարհից:

Վստահ էի, որ պրոֆեսորը սխալվում է, բայց իմաստ չուներ շարունակել վեճը:

- Ինչ եք կարծում, ինչ մարտավարություն ընտրեմ,- հարցրեց սիգարետը հանգցնելով:

- Ստիպեք, որ առերեսվի ճշմարտության հետ: Միայն այդ դեպքում ապաքինվելու հույս կլինի: Անպայման ցույց տվեք, որ չեք հավատում նրա պատմածին: Ձեռնոց նետեք: Պահանջեք, որ ճշմարտությունը պատմի:

- Կարծում եք՝ կխոստովանի:

Դիոմիդիսը թոթվեց ուսերը:

- Ավաղ,- ասաց՝ դանդաղ բաց թողնելով սիգարի ծուխը,- ոչ
ք դա չի կարող ասել:
- Շատ լավ, վաղը սեանսի ժամանակ կխոսեմ նրա հետ:
հակադրվեմ նրան:
Դիոմիդիսը մտահոգ նայեց ինձ, հետո կարծես ինչ-որ բան
ր ուզում ասել, բայց միտքը փոխեց:
- Ուրեմն վաղը,- գլխով արեց նա ու վճռական հանգցրեց
իգարը:

16

Աշխատանքից հետո Քեթիի հետևից դարձյալ զբոսայգ
գնացի: Վստահ էի, որ սիրեկանը նույն տեղում է սպասուլ
Ինչպես նախորդ անգամ, նրանք դեռահասների պես սկսե
ցին համբուրվել ու գրկախառնվել:

Քեթին նայեց իմ կողմ, ու մի պահ թվաց, թե տեսավ ինձ
Բայց ոչ, իր տղամարդուց բացի ոչ մեկին չէր տեսնում: Փոր
ձեցի այս անգամ ավելի ուշադիր զննել տղամարդուն, բայց
ցավոք, դեմքով իմ կողմ չէր շրջվում, բայց մարմնի կազմված
քի մեջ ինչ-որ ծանոթ բան կար: Այնպիսի զգացողություն ու
նեի, որ ինչ-որ տեղ նրան տեսել եմ:

Նրանք քայլեցին Քեմդենի կողմ ու մի խարխուլ պանդոլ
մտան՝ «Վարդ ու թագ»: Ես նստեցի դիմացի սրճարանում
Մոտ մի ժամից դուրս եկան: Քեթին կախվել էր տղամարդո
վզից, և նրանք փողոցում կրքոտ համբուրվում էին: Անթարթ
նրան ու սիրեկանին էի նայում, ու ստամոքսս գալարվում էր
այրվում ատելությունից:

Վերջապես Քեթին պոկվեց անծանոթից, ու իրար հրաժեշտ
տվեցին: Տղամարդը շրջվեց ու քայլեց հակառակ ուղղությամբ
Որոշեցի հանգիստ թողնել Քեթիին ու հետևել անծանոթին:

Հասավ կանգառ: Կանգնել էի նրա թիկունքում, ուսումնա-
իրում էի լայն ուսերը, մեջքը: Մտածում էի՝ գուցե հրեմ ու
ավտոբուսի տակ գցեմ, բայց չարեցի: Մի խոսքով, նստեց ավ-
ոբուս: Ես էլ:

Իզուր էի կարծում, թե տուն կգնա: Մի քանի անգամ փոխեց
ութուղին: Հեռվից հետևում էի նրան: Արդյունքում երկուսով
ասանք Իսթ Էնդ[1]: Կես ժամով անհետացավ ինչ-որ պահես-
ում: Հետո շարունակեցինք ուղևորությունը, ուրիշ ավտոբուս
ստեցինք: Ընթացքում մի քանի տեղ զանգեց. ցածր էր խո-
ում, ժամանակ առ ժամանակ քրքջում էր: Կռահում էի, որ
ելթիի հետ է խոսում: Սարսափելի հիասթափված ու ճնշված
ն, բայց նաև համառորեն չէի հանձնվում:

Վերջապես իջավ ավտոբուսից ու խաղաղ նրբանցքով,
ամենայն հավանականությամբ, դեպի տուն քայլեց՝ ընթաց-
ում շարունակելով հեռախոսով խոսել: Ես հետևում էի նրան՝
որոշակի հեռավորություն պահելով: Փողոցում ոչ ոք չկար:
թե շրջվեր, կտեսներ ինձ, բայց չէր շրջվում:

Անցնում էի քարքարոտ բակով ու փարթամ բուսակա-
ությամբ շրջապատված մի տան մոտով: Մարմինս կարծես
նքնուրույն էր շարժվում, ինձնից անկախ: Թևս անցկացրի
ածրիկ պատի վրայով ու այգուց մի ծանր քար վերցրի: Ձեռ-
երս գիտեին, թե ինչ անեին. սպանել նրան, տականքի գան-
ը երկու կես անել: Քարը ձեռքիս, ենթագիտակցաբար, լուռ
այլեցի նրա հետևից՝ ավելի ու ավելի մոտենալով: Շուտով

[1] Լոնդոնի արևելյան շրջան, որտեղ, ի տարբերություն շքեղ Ուեսթ Էնդի, ավան-
ապար բնակություն էին հաստատում աղքատները և ներգաղթյալները: Նախկինում
սթ Էնդի հետնախորշերն առանձնանում էին հանցավորության բարձր ցուցա-
հիշով: Այժմ այնտեղ բնակվում են երիտասարդ նկարիչներ, դիզայներներ և
ոաժիշտներ:

բավական մոտեցա, բարձրացրի քարը՝ պատրաստ ամբող
ուժով խփել, գլուխը ջարդել: Ընդամենը մի քայլ ու նրան գետ
նին կգցեմ, ուղեղը ցրիվ կտամ: Նա դեռ խոսում էր հեռախո
սով, այլապես կնկատեր ինձ:

Եվ ահա բարձրացրի քարն ու...

Հանկարծ իմ թիկունքում՝ ձախից, ինչ-որ դուռ բացվեց, ո
խոսակցության ձայներ լսվեցին՝ բարձրաձայն «շնորհակա
լություններ» ու «ցտեսություններ»: Երևում էր, որ հյուրեր
հրաժեշտ են տալիս ու հեռանում: Քարացա: Քեթիի սիրեկա
նը կանգ առավ ուղիղ իմ դիմաց. աղմուկը գրավեց ուշադ
րությունը, ու նա տան կողմը նայեց: Մի կողմ քաշվեցի, թաքն
վեցի ծառի հետևում: Ինձ չէր տեսնում:

Տղամարդը շարունակեց քայլել, բայց ես տեղից չշարժվե
ցի: Դադարն ասես արթնացրեց ինձ նիրհից: Քարը սահե
ցեռքիցս ու թրմփոցով գետնին ընկավ: Ծառի հետևից նրա
էի հետևում: Նա տներից մեկին մոտեցավ, բանալիով բացե
դուռն ու ներս մտավ:

Մի քանի վայրկյանից խոհանոցի պատուհանից լույ
երևաց: Երևում էր նրա կիսադեմը՝ պատուհանի մոտ էր: Փո
ղոցից միայն սենյակի կեսն էի տեսնում: Նա ինչ-որ մեկի հետ
էր խոսում, որին չէի տեսնում, ու խոսելուն զուգահեռ գինո
շիշ էր բացում: Նրանք նստեցին ճաշելու: Հետո հանկար
տեսա, թե ում հետ էր ճաշում. կին էր: Բայց ո՞վ էր: Մի՞թե նու
կինն էր: Դեմքը չէր երևում: Գրկեց ու համբուրեց կնոջը:

Փաստորեն, միակ դավաճանվածը չեմ: Կնոջս համբուրե
լուց հետո սիրեկանը վերադարձել էր տուն ու առանց խղճ
խայթի ճաշում էր այս կնոջ հետ, որն իր համար ուտելիք է
պատրաստել, ու այնպես էր նստել, ասես ոչինչ չի պատահե

Ես սա այսպես չեմ թողնի. պետք է քայլեր ձեռնարկել: Բայց ինչ անեմ: Չնայած տականքին սպանելու փայլուն ծրագրերին՝ ես, այնուամենայնիվ, մարդասպան չէի: Չէի կարող դրան սպանել:

Պետք էր ավելի խելացի բան մտածել:

17

Մտադրվել էի առաջիկա սեանսի ժամանակ ստիպել, որ Ալիսիան խոստովանի, որ Գաբրիելին սպանած տղամարդու մասին պատմությունն ամբողջությամբ սուտ է: Ես նրան կստիպեմ առերեսվել ճշմարտությանը:

Ցավոք, չստացվեց:

Ընդունարանում ինձ Յուրին էր սպասում:

- Թեռ, խոսելու բան կա:

- Ինչ է պատահել:

Ուշադիր նրան նայեցի: Դեմքն ասես մի գիշերում ծերացել էր. մաշկը քայքայված էր, գունատ, անկենդան: Հաստատ ինչ-որ վատ բան էր եղել:

- Դեպք է պատահել,- ասաց: - Ալիսիան... դեղահաբերից թունավորվել է:

- Ինչ ես ասում: Ինչպե՞ս է:

Յուրին գլուխն օրորեց:

- Դեռ ողջ է, բայց...

- Փառք Աստծո...

- Բայց կոմայի մեջ է: Վիճակը ծանր է:

- Որտե՞ղ է:

Բազմաթիվ միջանցքներով, որոնք մետաղական դռնե-
ով էին միացած, Յուրին ինձ ինտենսիվ թերապիայի բաժին
ասցրեց: Ալիսիան առանձին հիվանդասենյակում էր: Նա
միացած էր էլեկտրասրտագրության և թոքերի արհեստա-
կան օդափոխության սարքին: Աչքերը փակ էին:

Քրիստիանը հիվանդասենյակում էր վերակենդանացման
բաժնի բժշկուհու հետ: Ի տարբերություն վերջինիս, որի խոր
սրևայրուքից երևում էր, որ արձակուրդից նոր է վերադար-
ձել, Քրիստիանը դիակի պես գունատ էր: Բայց բժշկուհու
տեսքը թարմ չէր. նա ուժասպառ էր:

– Ալիսիան ինչպե՞ս է,– հարցրի:

– Վատ է,– բժշկուհին օրորեց գլուխը: – Ստիպված եղանք
արհեստական կոմայի մեջ մտցնել: Թոքերը չդիմացան:

– Ի՞նչ է խմել:

– Ինչ-որ ափիոնատիպ նյութ: Երևի հիդրոկոդոն:

– Նրա սենյակում, գրասեղանին, դեղահաբերի դատարկ
արվակ կար,– հաստատեց Յուրին:

– Ո՞վ է գտել նրան:

– Ես,– ասաց Յուրին: – Ընկած էր հատակին՝ մահճակալի
մոտ: Շնչառությունը գրեթե չէր լսվում: Սկզբում մտածեցի, թե
մեռած է:

– Որևէ ենթադրություն կա՞, թե ինչպես է ձեռք բերել դեղա-
հաբերը:

Յուրին նայեց Քրիստիանին, նա էլ թոթվեց ուսերը:

– Բոլորս էլ գիտենք, որ բաժանմունքի հիվանդների շրջա-
նում դեղահաբերի գաղտնի վաճառք կա:

– Էլիֆն է բոլորին դեղահաբեր տրամադրում,– ասացի:

– Այո, համաձայն եմ,– Քրիստիանը գլխով արեց:

Ներս մտավ Ինդիրան: Քիչ էր մնում՝ լաց լիներ: Կանգնել էլ մահճակալի մոտ և ուշադիր Ալիսիային էր նայում:

– Այս պատմությունը վատ կանդրադառնա մյուս հիվանդների վրա,– ասաց: – Այսպիսի դեպքերից հետո միշտ խիստ հետքն թաց է լինում, ու մի քանի ամսվա աշխատանքը ջուրն է ընկնում:

Նա նստեց աթոռին, բռնեց Ալիսիայի ձեռքն ու շոյեց: Լուռ հետևում էի, թե արհեստական օդափոխության սարքի կոմպրեսորն ինչպես է բարձրանում ու իջնում: Սենյակում լռություն տիրեց:

– Ես եմ մեղավոր,– ասացի:

– Դու ոչ մի մեղք չունես, Թեո,– ասաց Ինդիրան գլուխն օրորելով:

– Չկարողացա ինչպես պետք է հոգ տանել նրա մասին:

– Դու ջանք չես խնայել: Օգնել ես նրան, առավել, քան մեզնից որևէ մեկը:

– Դիոմիդիսին ասե՞լ են:

Քրիստիանն օրորեց գլուխը:

– Չենք կարողանում կապվել նրա հետ:

– Բջջային հեռախոսին զանգե՞լ եք:

– Այո, տան հեռախոսին էլ եմ զանգել մի քանի անգամ: Չի պատասխանում:

– Բայց...,– Յուրին խոժոռվեց,– ես այսօր տեսել եմ պրոֆեսոր Դիոմիդիսին: Նա այստեղ էր:

– Այստե՞ղ էր:

– Այո, վաղ առավոտյան: Միջանցքում տեսա, ինչ-որ տեղ էր շտապում: Համենայն դեպս, ինձ թվաց, որ նա է:

– Տարօրինակ է: Դե, երևի շտապ տուն է գնացել: Նորից փորձեք, լավ:

Յուրին գլխով արեց՝ մի տեսակ շփոթված, այլայլված, չգիտես թե ուր նայելով: Երևում է՝ պատահածը սրտին շատ մոտ էր ընդունել: Ցավում էի նրա համար:

Քրիստիանի փեյջերը միացավ. նա անսպասելիությունից վեր թռավ, արագ դուրս եկավ սենյակից Յուրիի ու մյուս բժշկի ուղեկցությամբ:

- Թեո, երևի ուզում եք Ալիսիայի հետ մենակ մնալ,- ցածր ասաց Ինդիրան:

Ես գլխով արեցի. անկարող էի խոսել: Ինդիրան աթոռից վեր կացավ, ուսս սեղմեց: Հետո հիվանդասենյակից դուրս եկավ:

Ես ու Ալիսիան մենակ մնացինք:

Ես նստեցի աթոռին, մահճակալի մոտ, հետևի մասից զգուշորեն բռնեցի Ալիսիայի թևը, որին երակային կատետր էր միացրած: Մեղմորեն բռնեցի ձեռքը, շոյեցի ափն ու դաստակի ներսի մասը: Մատով դաստակը շոյելիս՝ մաշկի տակ երակների գծերն ու ինքնասպանության հերթական փորձից մնացած սպիների հետքերը զգացի:

Ուրեմն այսպես: Ամեն ինչ հենց այսպես էլ կվերջանա: Ալիսիան դարձյալ լուռ էր. այսուհետև հավերժ:

Հետաքրքիր է, իսկ ինչ կասի Դիոմիդիսը: Քրիստիանն ինչպե՞ս կներկայացնի իրավիճակը: Երևի ինձ մեղավոր կհանի, կասի, որ սեանսների ընթացքում հիվանդիս սրտում զգացմունքներ եմ արթնացրել, որոնք Ալիսիայի համար չափազանց ծանր բեռ էին: Եվ ահա նա հիդրոկոդոն է գտել, փորձել է հանգստանալ ու ինքն իրեն բուժել: Ամենայն հավանականությամբ, Դիոմիդիսը կասի, որ դեղաչափի գերազանցումը պատահաբար է եղել: Բայց Ալիսիայի վարքագիծը վկայում էր

այն մասին, որ նա հակված է ինքնասպանության փորձերի: Եվ պրոֆեսորն այդքանով կեզրափակի խոսքը:

Բայց չի կարելի եզրափակել:

Ինչ-որ բան մեր ուշադրությունից դուրս է մնացել, մի շատ կարևոր մանրուք, որ ոչ ոք չի նկատել, նույնիսկ Ցուրին, երբ Ալիսիային անգիտակից գտել է մահճակալի մոտ: Նրա սեղանին դեղահաբերի դատարկ սրվակ կար, այո, և մի քանի դեղահաբ հատակին, ուստի, իհարկե, նա եզրակացրել էր, որ Ալիսիան գերազանցել է դեղաչափը:

Բայց ես Ալիսիայի դաստակի ներսում մատներով թմբիկ շոշափեցի ու մի փոքրիկ նշան, որը բոլորովին այլ բանի մասին էր վկայում:

Երակային ներարկման հետք էր՝ ենթամաշկային ասեղից մնացած փոքր անցք, որը բացահայտում էր ճշմարտությունը: Փաստորեն, Ալիսիան իրականում դեղահաբերի սրվակը ինքնասպանության նպատակով չէր դատարկել: Նրան մեծ դեղաչափով մորֆինի ներարկում էին արել: Դեղաչափի գերազանցումը ոչ մի կապ չուներ:

Սա սպանության փորձ էր:

18

Դիոմիդիսը կես ժամ հետո հայտնվեց: Ասաց, որ կառավարող ընկերության հետ հանդիպման էր գնացել, հետո մնացել էր մետրոյում, որտեղ կապի խնդիր էր եղել: Յուրիին խնդրել էր գտնել ինձ: Յուրին ինձ գտավ իմ սենյակում:

- Պրոֆեսոր Դիոմիդիսն իր աշխատասենյակում է,- ասաց Յուրին: - Ստեֆանին նույնպես այնտեղ է: Ձեզ են սպասում:

- Շնորհակալություն: Հիմա կգնամ:

Քայլերս ուղղեցի Դիոմիդիսի աշխատասենյակ պատրաստվելով ամենավատին: Քավության նոխազ էր պետք, որն իր վրա կվերցներ մեղքը: Այդպիսի դեպքեր արդեն տեսել էի Բրոդմուրում, երբ հիվանդներն ինքնասպանություն էին գործում, և անձնակազմի այն անդամը, որն ամենից հաճախ էր շփվել մահացածի հետ, մեղավոր էր ճանաչվում՝ լիներ հոգեթերապևտ, բժիշկ թե բուժքույր: Կասկած չունեի, Ստեֆանին ծարավ էր իմ արյանը:

Թակեցի Դիոմիդիսի աշխատասենյակի դուռն ու ներս մտա: Ստեֆանին ու պրոֆեսորը կանգնած էին դեմ-դիմաց՝ աշխատասեղանի երկու կողմում: Դատելով լարված լռությունից՝ վեճի պահին էի ներս մտել:

Դիոմիդիսն առաջինը խոսեց: Ակնհայտորեն նյարդայնացած էր ու ձեռքերը թափահարում էր օդում:

- Գործերը վատ են: Ահավոր վատ: Ավելի «հարմար» պահ չէր էլ կարող լինել: Այս դեպքը կառավարող ընկերության համար Գրոուվը փակելու փայլուն առիթ է:

- Չեմ կարծում, թե հիմա մեր գլխավոր խնդիրը կառավարող ընկերությունն է,- ասաց Ստեֆանին: - Մեր առաջնահերթությունը հիվանդների անվտանգությունն է: Պետք է պարզել, թե կոնկրետ ինչ է պատահել,- նա իմ կողմ շրջվեց: - Ինդիրան նշեց, որ դեղամիջոցների տարածման մեջ Էլիֆին եք կասկածում: Ուրեմն Ալիսիան նրա միջոցով է հիդրոկոդոն ձեռք բերել:

- Դե, ապացույց չունեմ,- մի պահ լռելուց հետո ասացի: - Մի քանի անգամ լսել եմ, որ բուժքույրերն են այդ մասին խոսում: Բայց ուզում եմ Ձեզ մի կարևոր տեղեկություն հայտնել...

Ստեֆանին գլխի շարժումով ընդհատեց ինձ:

- Մենք գիտենք, թե ինչ է պատահել: Էլիֆը կապ չունի,- ասաց:

- Իսկապե՞ս:

- Բուժքույրերի սենյակի կողքով անցնելիս՝ Քրիստիանը նկատել է, որ դեղերի պահարանի դուռը բաց է, իսկ սենյակում անձնակազմից ոչ ոք չկա: Յուրին բաց է թողել պահարանը, և ցանկացած ոք կարող էր ներս մտնել ու օգտվել իրավիճակից: Բացի այդ՝ Քրիստիանը տեսել է մոտակայքում թաքնված Ալիսիային: Զարմացել է, թե ինչ է անում Ալիսիան այնտեղ այդ ուշ ժամին: Հիմա, իհարկե, ամեն ինչ պարզ է:

- Մեր բախտը բերել է, որ Քրիստիանը ճիշտ պահին այնտեղ է եղել ու ամեն ինչ տեսել է:

Զայնիս մեջ հեգնանք կար, բայց Ստեֆանին ուշադրություն չդարձրեց:

- Քրիստիանը միակը չէ, որ նկատել է Յուրիի անփութությունը,- շարունակեց նա: - Ես հաճախ եմ տեսել, որ նա անվտանգության հարցերում անթույլատրելի անփութություն է դրսևորում: Բացի այդ՝ չափազանց մտերիմ է հիվանդների հետ: Ամենից շատ նրան մտահոգում է իր հանդեպ շրջապատի լավ վերաբերմունքը: Տարօրինակ է, որ նման դեպք ավելի վաղ չի պատահել:

- Պարզ է,- ասացի:

Իսկապես պարզ էր, թե ինչ կար Ստեֆանիի մտքին: Նա այդքան սիրալիր էր իմ հանդեպ, որովհետև զոհը ես չէի: Քավության նոխազ Յուրին էր դառնալու:

- Ինձ միշտ թվացել է, թե Յուրին շատ ուշադիր է,- ասացի ու նայեցի Դիոմիդիսին՝ հուսալով, որ կմիջամտի: - Չեմ կարծում, թե...

Դիոմիդիսը թոթվեց ուսերը:

- Իմ անձնական կարծիքով՝ Ալիսիան սկզբից էլ հակված էր ինքնասպանության: Իսկ մենք գիտենք. երբ ինչ-որ մեկը ցանկանում է վերջ տալ կյանքին, ոչ ոք ի զորու չէ նրան խանգարել: Որքան էլ փորձենք, ինքնասպանությունը կանխելն անհնար է:

- Մի՞թե մեր գործը հենց կանխելը չէ,- ընդհատեց Ստեֆանին:

- Ոչ,- Դիոմիդիսն օրորեց գլուխը: - Մեր գործն օգնելն է, որ հիվանդը բուժվի: Բայց մենք Աստված չենք: Կյանքի ու մահվան վրա իշխանություն չունենք: Ալիսիա Բերենսոնը քանիցս փորձել է ինքնասպան լինել: Վաղ թե ուշ հասնելու էր իր ուզածին: Այս անգամ մասամբ հաջողվեց:

Որոշեցի միջամտել: Հիմա կամ երբեք:

- Ես վստահ չեմ,- ասացի: - Չեմ կարծում, թե ինքնասպանության փորձ էր:

- Կարծում եք՝ դժբախտ պատահա՞ր էր:

- Ոչ: Դժբախտ պատահար էլ չէր:

- Ի՞նչ եք ուզում ասել, Թեո,- Դիոմիդիսը զարմացած նայեց ինձ: - Ուրիշ ի՞նչ տարբերակ կա:

- Դե, նախ և առաջ չեմ հավատում, որ Յուրին Ալիսիային դեղահաբեր է տվել:

- Ուզում եք ասել՝ Քրիստիանը սխալվո՞ւմ է:

- Ոչ,- ասացի,- Քրիստիանը ստում է:

Դիոմիդիսն ու Ստեֆանին քարացած ինձ էին նայում, իսկ ես շարունակեցի, քանի դեռ խոսելու ունակությունը չէին վերագտել: Արագ նրանց պատմեցի Ալիսիայի օրագրի բովանդակությունը, հիշատակեցի, որ Գաբրիելի սպանությունից առաջ Քրիստիանը մասնավոր կարգով բուժել էր Ալիսիային, ասացի, որ Ալիսիայից բացի Քրիստիանն էլի մի քանի մասնավոր հիվանդ ուներ: Նաև ավելացրի, որ նա դատավարության ընթացքում վկայություն չի տվել, դեռ ավելին, ձևացրել է, թե չի ճանաչում Ալիսիային, երբ վերջինիս Գրոուվ են ընդունել:

- Զարմանալի չէ, որ Քրիստիանն ընդդիմանում է ցանկացած փորձի, որն Ալիսիային կստիպի նորից խոսել,- ասացի: - Եթե նա խոսի, Քրիստիանին կմատնի: Ալիսիայի լռությունը նրա ապահովության երաշխիքն է:

Ստեֆանին անթարթ ինձ էր նայում:

- Բայց... ախր ... Մի՞թե Դուք լրջորեն կարծում եք, որ...

- Այո, կարծում եմ,- ընդհատեցի: - Դեղաչափի գերազանցում չկա: Սպանության փորձ է:

- Որտեղ է Ալիսիայի օրագիրը,- հարցրեց Դիոմիդիսը: - Ձեզ մոտ է:

Գլուխս օրորեցի:

- Ոչ: Ալիսիային եմ վերադարձրել: Պետք է, որ նրա սենյակում լինի:

- Ուրեմն պետք է գտնել այն,- Դիոմիդիսը Ստեֆանիի կողմ շրջվեց: - Բայց նախ և առաջ պետք է զանգել ոստիկանություն: Ինչ կասեք:

19

Դրանից հետո իրադարձությունները զարգացան գլխապտույտ արագությամբ:

Ոստիկանները հեղեղեցին Գրոուվը. հարցաքննում էին, լուսանկարում, Ալիսիայի արվեստանոցի ու հիվանդասենյակի մուտքը կնքում: Նախաքննությունը վարում էր գլխավոր տեսուչ Սթիվեն Ալենը՝ ծանրամարմին, ճաղատ մի մարդ՝ խոշոր ակնոցով, որն աղավաղում էր աչքերը, խոշորացնում այնքան, որ թվում էր՝ հետաքրքրությունից դուրս են պրծել կոպերից:

Ալենն ուշադիր ու հետաքրքրությամբ լսեց պատմությունս. կրկնեցի այն ամենը, ինչ ասել էի Դիոմիդիսին, ինչպես նաև ցույց տվեցի Ալիսիայի սեանսների գրառումները:

- Շատ շնորհակալ եմ արժեքավոր տեղեկատվության համար, պարո՛ն Ֆաբեր,- ասաց:

- Ուղղակի Թեո:

- Եթե դեմ չեք, լավ կլինի՝ պաշտոնական ցուցմունք տաք: Մոտ ժամանակներս Ձեզ հետ նորից կապ կհաստատեմ:

- Այո, իհարկե:

Ալենին հրաժեշտ տվեցի ու դուրս եկա Դիոմիդիսի սենյա-

կից, որը վերջինս ժամանակավորապես տեսուչին էր տրամադրել: Կրտսեր սպային պաշտոնական ցուցմունք տալուց հետո մի քիչ շրջեցի միջանցքում: Սպասում էի: Շուտով ոստիկանության սպան Քրիստիանին Ալենի մոտ առաջնորդեց: Նա անհանգիստ էր երևում, ճնշված... կարծես մեղքի զգացում ուներ: Բավականություն զգացի այն մտքից, որ նրան շուտով կպատժեն:

Հիմա մնում էր միայն սպասել: Գրոուվից դուրս գալուց առաջ ակվարիումի կողքով անցա: Ներս նայեցի ու այն, ինչ տեսա, ստիպեց տեղում քարանալ:

Յուրին թաքուն ինչ-որ դեղեր էր տալիս Էլիֆին, իսկ նա կանխիկ փող էր խցկում Յուրիի գրպանը:

Էլիֆը դուրս եկավ ու ինձ նկատեց: Հայացքի մեջ արհամարհանք ու ատելություն կային:

- Էլի՛ֆ,- ասացի:

- Ռադդ քաշի՛ր:

Նա հաղթական դուրս եկավ ու անհետացավ միջանցքի անկյունում: Հետո ակվարիումից դուրս եկավ նաև Յուրին: Հենց որ ինձ տեսավ, ծնոտը կախվեց:

- Ես... չէի նկատել Ձեզ,- անակնկալի եկած կակազեց:

- Երևում է:

- Էլիֆը... մոռացել էր դեղերը: Հերթական դեղաչափն էի փոխանցում:

- Պարզ է,- ասացի:

Ուրեմն Յուրին ու Էլիֆն իսկապես դեղերի վաճառքով էին զբաղվում: Հետաքրքիր է՝ ուրիշ էլ ի՞նչ գործերով են զբաղված. գուցե շատ շտապեցի՝ այդքան վստահ նրան Ստեֆանիից պաշտպանելով: Այսուհետև աչքս նրա վրա կպահեմ:

– Ուզում էի ճշտել,– ասաց, երբ ակվարիումից դուրս էինք գալիս,– պարոն Մարթինին ինչ ասեմ:

– Ինչ Մարթին,– զարմացած ասացի: – Նկատի ունեք Ժան-Ֆելիքս Մարթինին: Նրան ինչ է եղել:

– Դե, առավոտից այստեղ է: Ալիսիային այցելության է եկել: Մի քանի ժամ սպասում է:

– Ինչպես թե: Ինչու՞ ավելի շուտ չէիք ասում: Այսինքն՝ ամբողջ ընթացքում այստեղ է եղել:

– Կներեք, այսօրվա դեպքերի պատճառով մտքիցս թռել էր: Հյուրասրահում է:

– Պարզ է: Դե, ուրեմն գնամ, խոսեմ նրա հետ:

Արագ ընդունարան իջա՝ ճանապարհին լսածիս մասին մտածելով: Ժան-Ֆելիքսն ինչու՞ է եկել: Հետաքրքիր է՝ ինչ է ուզում, ինչ է նշանակում այս ամենը:

Մտա հյուրասրահ ու շուրջս նայեցի:

Բայց ոչ ոք չկար:

20

Գրոուվից դուրս եկա, սիգարետ վառեցի: Թիկունքից տղամարդու ձայն լսեցի. ինձ էր կանչում: Շրջվեցի՝ սպասելով, որ Ժան-Ֆելիքսին կտեսնեմ, բայց նա չէր:

Մաքս Բերենսոնն էր: Մեքենայից իջել ու իմ կողմ էր գալիս:

- Գրողը տանի,- գոռաց,- ինչ է կատարվում,- Մաքսի դեմքը զայրույթից կարմիր էր կտրել: - Ինձ զանգեցին ու պատմեցին Ալիսիայի մասին: Նրան ինչ է եղել:

Ես մի քայլ առաջ գնացի:

- Նախ լավ կլինի՝ հանգստանաք, պարո՛ն Բերենսոն:

- Հանգստանա՞մ: Ձեր անտարբերության պատճառով հարսս կոմայի մեջ է...

Մաքսը թափահարում էր բռունցքը: Պատրաստ էի, որ ուր որ է կհարվածի ինձ: Բայց Տանյան ճիշտ ժամանակին միջամտեց՝ շտապ մոտենալով Մաքսին: Նա էլ էր նույնքան բարկացած, բայց ոչ թե ինձ վրա, այլ Մաքսի:

- Վերջ տո՛ւր, Մա՛քս,- ասաց: - Ի սեր Աստծո: Առանց այդ էլ վիճակը սոսկալի է: Թեռն մեղք չունի:

Մաքսն արհամարհեց նրան ու նորից իմ կողմ շրջվեց: Աչքերի մեջ ատելություն էր:

- Չէ՞ որ Ալիսիան Ձեր հոգածության տակ էր,- գոռաց: - Ինչպե՞ս նման բան թույլ տվեցիք:

Ձայրույթից Մաքսի աչքերն արցունքներով լցվեցին: Նույնիսկ չէր փորձում թաքցնել զգացմունքները, անզուսպ հեկեկում էր: Նայեցի Տանյային. ակնհայտ էր՝ նա գիտեր Ալիսիայի հանդեպ Մաքսի զգացմունքների մասին: Տագնապած, ուժասպառ, լուռ շրջվեց ու մեքենայի մոտ վերադարձավ:

Ցանկանալով հնարավորինս արագ ազատվել Մաքսից՝ շարունակեցի ճանապարհս:

Թիկունքից վիրավորանքներ էին հնչում: Մի պահ մտածեցի, թե կգա իմ հետևից, բայց չէ՞. քարացել-մնացել էր տեղում, ասես կոտրված լիներ: Նրա ճչոցները խղճահարություն էին առաջացնում:

- Պատասխա՞ն եք տալու: Իմ խե՞ղճ Ալիսիա, խե՞ղճ աղջիկ... Իմ խե՞ղճ Ալիսիա: Պատասխան եք տալու: Լսո՞ւմ եք:

Մաքսը գոռում էր, իսկ ես չէի լսում: Շուտով ձայնը մարեց լռության մեջ: Մենակ մնացի:

Շարունակեցի քայլել, քայլել:

21

Ոտքով վերադարձա այն տուն, որտեղ ապրում էր Քեթիի սիրեկանը: Ստիպված եղա մի ժամ կանգնել, սպասել: Վերջապես դուռը բացվեց, ու շեմին նա հայտնվեց: Հետևեցի: Ո՞ւր էր գնում: Քեթիի հետ հանդիպմա՞ն: Մի պահ սպասեցի, բայց հետո միտքս փոխեցի: Որոշեցի նրա հետևից չգնալ, այլ տան մոտ մնալ:

Պատուհանից տեսնում էի կնոջը: Ու որքան շատ էի նայում, այնքան շատ էի համոզվում, որ նրան օգնել է պետք: Հիմա նա ես էի, իսկ ես՝ նա. երկու անմեղ զոհ, ստի ու դավաճանության զոհ: Խեղճը վստահ էր, որ տղամարդը սիրում է իրեն, բայց իրականում խաբում էր:

Գուցե սխալվո՞ւմ եմ՝ մտածելով, թե սիրավեպի մասին ոչինչ չգիտի: Իսկ եթե գիտի՞: Գուցե այս ընտանիքում ազատ հարաբերություններ են, ու կինն էլ ամուսնու պես ազատ է իր ընտրության մեջ: Ինչ-որ բան ինձ հուշում էր, որ սխալվում եմ: Մաքուր ու անմեղ էր, ինչպես մի ժամանակ ես էի: Իմ պարտքն էր տեղյակ պահել նրան, բացահայտել ճշմարտությունը, պատմել, թե ում հետ է ապրում, ում հետ է անկողին կիսում: Այլընտրանք չկար: Պետք էր օգնել նրան:

Հաջորդ մի քանի օրերին անընդհատ գալիս էի, կանգնում տան մոտ: Մի օր կինը դուրս եկավ տնից ու զբոսանքի գնաց: Քայլեցի նրա հետևից որոշակի հեռավորության վրա: Մի պահ թվաց, թե տեսավ ինձ, բայց նույնիսկ եթե տեսներ, նրա համար ես անծանոթ էի: Դեռ անծանոթ էի:

Որոշ ժամանակով լքեցի դիրքս, մի քանի գնում կատարեցի, հետո վերադարձա: Կանգնեցի տան դիմացի մայթին: Ու նորից տեսա նրան պատուհանի մոտ կանգնած:

Հստակ ծրագիր չունեի, միայն աղոտ ու չձևակերպված գաղափար, որ պետք է կյանքի կոչեի: Անփորձ նկարչի պես գիտեի, թե ինչ եմ ուզում, բայց գաղափար չունեի, թե ինչպես ցանկալի արդյունքի հասնեմ: Մի քիչ սպասեցի, հետո դեպի տուն քայլեցի: Մոտեցա դարպասին. կողպած չէր: Դարպասը բացվեց: Այգի մտա: Ադրենալինի ինչպիսի՜ գրոհ: Մարմնովս դող անցավ. առանց թույլտվության ուրիշի տարածք էի ներխուժել:

Հետո հետնադուռը դանդաղ բացվեց: Որտե՞ղ թաքնվեմ: Այգու խորքում ամառային տնակ նկատեցի: Հնարավորինս անձայն վազեցի խոտերի վրայով ու տուն մտա: Չէի հասցրել շունչ քաշել, երբ ոտնաձայներ լսեցի: Սիրտս անհանգիստ էր: Մի՞թե տեսել էր ինձ: Ինչ-որ մեկի մոտեցող ոտնաձայներն էի լսում: Արդեն ուշ էր, նահանջելու տեղ չկար: Ձեռքս տարա հետևի գրպանս, հանեցի գնածս սև դիմակը, գլխիս քաշեցի: Դրեցի ձեռնոցները:

Կինը ներս մտավ: Հեռախոսով էր խոսում:

- Լավ, սիրելի՛ս,- ասաց: - Կհանդիպենք ժամը 8-ին: Եղավ... Ես էլ քեզ եմ սիրում:

Անջատեց հեռախոսը, միացրեց էլեկտրական օդափոխիչը: Մի քանի վայրկյան կանգնած մնաց օդափոխիչի առաջ.

մազերը զեփյուռից մեղմ ծածանվում էին: Հետո վերցրեց վրձինն ու մոտեցավ նկարակալին ամրացված կտավին: Կինը դեպի ինձ մեջքով էր շրջված և հանկարծ պատուհանի մեջ տեսավ արտացոլանքս: Երևի նախ դանակս տեսավ: Քարացավ ու դանդաղ շրջվեց: Աչքերը վախից լայնացել էին: Մենք լուռ իրար էինք նայում:

Առաջին անգամ դեմ առ դեմ կանգնած էի Ալիսիա Բերենսոնի առաջ:

Մ՝նացյալը, ինչպես ասում են, հայտնի պատմություն է:

ՄԱՍ
հինգերորդ

Եթե արդար լինեմ, բերանս ինձ ամբարիշտ կդարձնի, անարատ լինեմ՝ կամակոր կդառնամ:

Հոբ 9:20

1

Ալիսիա Բերենսոնի օրագրից

Փետրվարի 23

Թեոն հենց նոր գնաց: Հիմա մենակ եմ ու պատահածի մասին շատ արագ կգրեմ: Ժամանակս քիչ է: Պետք է հասցնեմ, քանի դեռ ուժ ունեմ:

Սկզբում ինձ թվաց, թե խելագարվում եմ: Ավելի հեշտ է հավատալ իմ խելագարությանը, քան նրան, որ դա իսկապես պատահել է: Բայց ես խելագար չեմ: Չէ՛, խելագար չեմ:

Այդ մարդուն առաջին անգամ հոգեթերապիայի սենյակում տեսնելով՝ նրա մեջ ինչ-որ ծանոթ ու միաժամանակ անծանոթ բան նկատեցի: Ճանաչեցի աչքերը, դրանց ձևը, գույնը: Սիգարետի ու սափրվելուց հետո օգտագործվող լոսյոնի հոտը ճանաչեցի: Խոսելու ձևն ու ռիթմն էլ նույնն էր, բայց տոնայնությունը մի տեսակ ուրիշ էր: Կասկածների մեջ ընկա, բայց հաջորդ սեանսին մատնեց իրեն՝ ասելով բառեր, որոնք հավերժ դաջվեցին հիշողությանս մեջ. «Ես այստեղ եմ, որ օգնեմ Ձեզ: Ուզում եմ բացել Ձեր աչքերը»:

Այս արտահայտությունը լսեցի թե չէ, գլխումս խճանկարի բոլոր մասերն իրենց տեղն ընկան: Նա է:

Ներսումս ինչ-որ բան կատարվեց, ուղեղս անջատվեց՝ ազատություն տալով կենդանական բնազդին: Այնպես էի

ուզում սպանել այս մարդուն: Կամ կսպանեմ, կամ ինձ կսպանեն: Ցատկեցի նրա վրա ու փորձեցի խեղդել, աչքերը հանել, գանգը փշուր-փշուր անել: Չհասցրի. ինձ քարշ տվեցին մի կողմ, դեղեր ներարկեցին ու փակի տակ պահեցին: Այդ դեպքից հետո կոտրվեցի: Կասկածները նորից սկսեցին ինձ տանջել, իսկ եթե նա չէ՞, իսկ եթե ամեն ինչ հորինել եմ:

Միթե Թեոն էր: Այդ դեպքում ինչ իմաստ ունեն այստեղ գալն ու ինձ այսպես ծաղրելը: Հետո հասկացա: Ինձ օգնելու մասին ելույթն այս պատմության ամենազզվելի մասն է: Թեոն հաճույք է ստանում իմ տառապանքից, դրա համար էլ եկել է: Վերադարձել է, որ չարախնդա:

«Ես այստեղ եմ, որ օգնեմ Ձեզ: Ուզում եմ բացել Ձեր աչքերը»:

Հիմա աչքերս իսկապես բացվեցին: Թող իմանա, որ ամեն ինչ գիտեմ: Սեանսի ժամանակ Գաբրիելի մահվան մասին հիմարություններ պատմեցի: Խոսում էի ու հասկանում. զգում է, որ ստում եմ: Մենք իրար նայեցինք, ու Թեոն հասկացավ, որ ճանաչեցի իրեն: Աչքերի մեջ ինչ-որ բան հայտնվեց, որ մինչև այդ չէի նկատել. վախ: Նա վախենում է ինձնից: Վախենում է, որ կարող եմ պատմել: Ձայնս սարսափեցնում է նրան:

Ահա թե ինչու մի քանի րոպե առաջ նորից եկավ: Այս անգամ ոչինչ չասաց: Ոչ մի բառ: Բռնեց դաստակս ու ասեղը երակիս մեջ մտցրեց: Ես չդիմադրեցի, չպայքարեցի: Թող անի: Արժանի եմ այս պատժին: Մեղավոր եմ, բայց նա էլ անմեղ չէ: Դրա համար էլ գրում եմ, որ անպատիժ չմնա: Պիտի պատասխան տա իր արածի համար:

Պետք է շտապել: Զգում եմ՝ նրա ներարկած դեղը սկսում է ազդել: Քնկոտ եմ: Ուզում եմ պառկել: Քնել... Բայց չէ, դեռ չէ:

Պետք է արթուն մնամ: Պետք է պատմությունն ավարտեմ: Ու այս անգամ ճշմարտությունը կպատմեմ:

Այդ գիշեր Թեոն ներխուժեց տուն ու կապեց ինձ, ու երբ Գաբրիելը տուն եկավ, Թեոն ուժգին հարվածեց նրան: Սկզբում ինձ թվաց, թե սպանեց, բայց հետո տեսա, որ Գաբրիելը շնչում է: Թեոն քարշ տվեց նրան, նստեցրեց աթոռին ու կապեց: Աթոռն այնպես շրջեց, որ Գաբրիելն ու ես մեջք մեջքի լինենք, ու ես չտեսնեմ նրա դեմքը:

- Խնդրում եմ,- ասացի,- խնդրում եմ, մի՛ խփեք նրան: Աղաչում եմ: Ինչ ուզում եք, կանեմ: Ինչ ուզում եք:

Թեոն ծիծաղեց: Ատում էի նրա ծիծաղը՝ այն սառն էր, դատարկ ու անհոգի:

- Չխփե՞մ,- օրորեց գլուխը: - Հիմա սպանելու եմ:

Նա չէր կատակում: Այնքան վախեցած էի, որ սկսեցի լաց լինել. ոչ մի կերպ չէի հանդարտվում: Արտասվում էի ու աղաչում:

- Կանեմ, ինչ կուզեք: Ցանկացած բան: Միայն թե, խնդրում եմ, ազատեք նրան: Թող ապրի: Նա արժանի չէ մահվան: Աշխարհի ամենաբարի, ամենալավ մարդն է: Ես սիրում եմ նրան, շատ եմ սիրում...

- Պատմեք, Ալիսիա՛: Պատմեք Ձեր սիրո մասին: Ի՞նչ եք կարծում, նա սիրո՞ւմ է Ձեզ:

- Սիրում է,- ասացի:

Թիկունքիս ժամացույցի թկթկոց էի լսում: Ինձ թվաց՝ մի ամբողջ հավերժություն տևեց, մինչև նա պատասխանեց:

- Այ, հիմա կտեսնենք,- ասաց: Սև աչքերն անթարթ սևեռել էր վրաս: Խավարը կարծես կուլ էր տվել ինձ: Նա նույնիսկ մարդ արարածի նման չէր: Իսկական չարիք էր:

Պտտվեց աթոռի շուրջն ու նայեց Գաբրիելին: Ինչքան հնա-

րավոր էր, շրջեցի գլուխս, բայց նրանց տեսնել չկարողացա: Խուլ հարվածի ահավոր ձայն լսվեց. լսում էի, թե ինչպես է խփում Գաբրիելի դեմքին, ու ամեն հարվածից ցնցվում էի: Այնքան խփեց, մինչև Գաբրիելն ինչ-որ անհասկանալի բան մրթմրթաց ու ուշքի եկավ:

- Ողջույն, Գաբրիել,- ուրախ ողջունեց Թեոն:

- Ո՞վ ես, գրողը տանի:

- Ես ամուսնացած տղամարդ եմ,- ասաց Թեոն,- հետևաբար գիտեմ՝ սերն ինչ է: Գիտեմ նաև, թե ինչ ես զգում, երբ քեզ դավաճանում են:

- Ի՞նչ ես զառանցում, գրողը տանի:

- Միայն վախկոտն է դավաճանում նրան, ով սիրում է իրեն: Դու վախկո՞տ ես, Գաբրիել:

- Գրողի ծոցը գնա:

- Ես ուզում էի սպանել քեզ, բայց Ալիսիան աղաչեց, որ կյանքդ խնայեմ: Դրա համար որոշեցի քեզ ընտրության հնարավորություն տալ: Կա՛մ դու կմեռնես, կա՛մ Ալիսիան: Որոշի՛ր:

Թեոյի ձայնը հստակ էր, հանդարտ, առանց ավելորդ զգացմունքայնության: Սկզբում Գաբրիելը չպատասխանեց, հետո շնչակտուր խոսեց, ասես նրան բռունցքով հարվածեցին:

- Ո՛չ:

- Այո: Կա՛մ դու կմեռնես, կա՛մ Ալիսիան: Ընտրությունը քոնն է, Գաբրիել: Հիմա կտեսնենք՝ ինչքան ես սիրում նրան: Կմեռնե՞ս հանուն նրա: Տասը վայրկյան ունես որոշելու համար... Տասը... ինը...

- Չհավատաս: Երկուսիս էլ կսպանի: Ես սիրում եմ քեզ...

- Ութ... յոթ...

- Գիտեմ, որ սիրում ես ինձ, Գաբրիել...

- Վեց... հինգ...
- Սիրում ես ինձ...
- Չորս, երեք...
- Գաբրիե՛լ, ասա, որ սիրում ես...
- Երկու:

Ու Գաբրիելը խոսեց: Սկզբում չճանաչեցի ձայնը: Բարակ, հազիվ լսվող, տղայական ձայն էր: Փոքր երեխա, որ հիմա պիտի ընտրություն կատարեր կյանքի ու մահվան միջև:

- Ես չեմ ուզում մեռնել,- շշնջաց Գաբրիելը:

Հետո լռություն տիրեց: Ամեն ինչ կանգ առավ: Մարմնիս մեջ ամեն ինչ քարացավ. բոլոր բջիջները սկսեցին մեռնել, ինչպես թառամած ծաղկաթերթիկներն են թափվում-կորչում: Հասմիկի ծաղիկները սահում էին գետնի վրայով: Հանկարծ հասմիկի հոտ զգացի: Բայց որտեղի՞ց: Երևի պատուհանից է գալիս, այգուց:

Թեոն հեռացավ Գաբրիելից ու սկսեց ինձ հետ խոսել: Դըժվար էր կենտրոնանալ նրա բառերի վրա:

- Գիտե՞ք, Ալիսիա՛, այդպես էլ գիտեի, որ Գաբրիելը վախկոտ է: Թաքուն քնում էր կնոջս հետ: Նա կործանեց իմ միակ երջանկությունը...,- Թեոն կռացավ ինձ վրա ու ասաց՝ ուղիղ դեմքիս նայելով,- ցավում եմ, որ ստիպված եմ այսպես վարվել, բայց հիմա դու գիտես ճշմարտությունը... Այսքանից հետո մեռնելն ավելի լավ է:

Նա բարձրացրեց ատրճանակը, նշան բռնեց գլխիս: Փակեցի աչքերս, ու հանկարծ լսվեցին Գաբրիելի բղավոցները.

- **ՄԻ ԿՐԱԿԻՐ: ՄԻ ԿՐԱԿԻՐ: ՄԻ ԿՐԱԿԻՐ...**

Կրակոց լսվեց, այնքան ուժգին, որ խլացրեց մյուս բոլոր ձայները: Մի քանի վայրկյան լռություն տիրեց: Ինձ թվաց, թե մեռա:

Երանի՜ թե մեռնեի:

Բացեցի աչքերս: Թեոն դեռ այստեղ էր, նշան էր բռնել առաստաղին: Նա ժպտում էր: Մատը դրել էր շուրթերին, ասես կարգադրում էր, որ լռեմ:

- Ալիսիա՛,- գոռում էր Գաբրիելը: - Ալիսիա՛:

Լսում էի, թե Գաբրիելն ինչպես է աթոռի վրա շուռումուռ գալիս՝ փորձելով տեսնել՝ ողջ եմ, թե մեռած:

- Ի՞նչ ես արել նրան, սրիկա՛: Տակա՛նք: Սրիկա՛: Աստվա՛ծ իմ...

Թեոն հանեց թևերիս լարը, հրացանը գցեց հատակին: Հետո մեղմորեն համբուրեց այտս: Մի քանի վայրկյանից մուտքի դուռը շրխկոցով փակվեց: Թեոն հեռացավ՝ ինձ Գաբրիելի հետ թողնելով: Գաբրիելը լաց էր լինում, հեկեկում, ոչ մի բառ չէր կարողանում արտաբերել: Միայն իմ անունն էր տալիս՝ Ալիսիա՛, Ալիսիա՛...

Ես լուռ էի:

- Ալիսիա՛: Գրողը տանի: Գրողը տանի: Անիծվա՛ծ:

Չէի խոսում:

- Ալիսիա՛: Գրողը տանի: Ալիսիա՛: Աստվա՛ծ իմ:

Լուռ էի: Ինչպե՞ս կարող էի խոսել: Գաբրիելն ինձ մահվան էր դատապարտել:

Մեռածները չեն խոսում:

Կոձերս ազատեցի լարերից: Աթոռից վեր կացա: Իջա հատակին, վերցրի հրացանը, որը կրակոցից հետո դեռ տաք էր ու ծանր, պտտվեցի աթոռի շուրջ ու Գաբրիելին նայեցի: Ամուսնուս այտերից արցունքներ էին հոսում:

- Ալիսիա՛: Դու ողջ ես: Փա՛ռք Աստծո...

Ինչպե՞ս կուզեի ասել, որ մի կրակոցով վրեժ լուծեցի բոլոր նվաստացածների համար, պաշտպանեցի բոլոր նրանց, ում

դավաճանել էին, ստորաբար ստել, և որ Գաբրիելի աչքերը բռնակալի աչքեր էին, ինչպես հորս աչքերը: Բայց ո՛չ: Չեմ ստի, ճշմարտությունը կասեմ: Ուշադիր նայեցի ու տեսա՝ Գաբրիելի աչքերն իմ աչքերն էին, իմ աչքերը՝ նրանը: Ինչ-որ պահի մենք փոխել էինք մեր տեղերը:

Հիմա կարող եմ ասել: Ես երբեք ապահով չեմ եղել: Երբեք սիրված չեմ եղել: Բոլոր հույսերն ու երազանքները հօդս էին ցնդել, ու ոչինչ չէր մնացել, միայն դատարկություն: Ճիշտ էր ասում հայրս, ես ապրելու արժանի չեմ: Դատարկ մարդ եմ, ոչնչություն: Ու մեղավորը Գաբրիելն է:

Ահա պարզ ճշմարտությունը: Ես չեմ սպանել Գաբրիելին: Նա է ինձ սպանել:

Ես միայն ձգանն եմ քաշել:

2

- Չկա ավելի թշվառ բան, քան գիտակցումը, որ այն, ինչ մի ժամանակ մարդու կյանքի անբաժան մասն էր, հիմա ընդամենը մի փոքրիկ արկղի մեջ է տեղավորվում,- տխուր ասաց Ինդիրան:

Գլխով արեցի ու տխուր նայեցի հիվանդասենյակին:

- Զարմանալի է,- շարունակեց Ինդիրան: - Ալիսիայի իրերն այնքան քիչ են... Մյուս հիվանդները միշտ անպետք իրեր են կուտակում... Ալիսիան ընդամենը մի քանի գիրք, մի քանի նկար, մեկ-երկու շոր ունի:

Ստեֆանիի կարգադրությամբ ես ու Ինդիրան Ալիսիայի հիվանդասենյակն էինք ազատում:

- Դժվար թե երբևէ կոմայից դուրս գա,- ասել էր Ստեֆանին: - Եվ, անկեղծ ասած, մեզ շտապ մահճակալ է պետք:

Ես ու Ինդիրան հիմնականում լուռ էինք աշխատում, երբեմն-երբեմն խորհրդակցում էինք, թե ուր դնենք այս կամ այն առարկան՝ պահե՞նստ տեղափոխենք, թե՞ թափենք: Ուշադիր զննում էի անձնական իրերը, փորձում գտնել այն հնարավոր հանցանշանները, որոնք կարող էին ինձ վտանգի տակ դնել:

Հետաքրքիր է՝ Ալիսիային ինչպե՞ս էր հաջողվել այսքան ժամանակ թաքցնել օրագիրը: Գրոուվ ընդունվելիս բոլոր

հիվանդներին թույլ էին տալիս իրենց հետ փոքրաթիվ անձնական իրեր բերել: Ալիսիան բերել էր ուրվանկարների մի մեծ թղթապանակ. ենթադրում եմ, որ օրագիրը նկարների արանքում էր թաքցրել: Բացեցի թղթապանակն ու թերթեցի նկարները. հիմնականում անավարտ մատիտանկարներ ու էսքիզներ էին: Մի քանի հմուտ վրձնահարված, և ահա էջի վրա կյանք է առնում կենդանի ու իրական պատկերը...

- Դուք եք,- ասացի՝ էսքիզներից մեկն Ինդիրային ցույց տալով:

- Ի՞նչ: Չէ, ես չեմ:

- Հաստատ Դուք եք:

- Իսկապե՞ս,- Ինդիրան անկեղծ հիացմունքով ուսումնասիրեց դիմանկարը: - Ալիսիան երբեք չի նկարել ինձ: Ե՞րբ է հասցրել: Լավ է ստացվել, չէ՞:

- Հրաշալի: Վերցրեք, թող Ձեզ մոտ լինի:

- Ձեմ կարող,- ասաց ու լուրջ դեմքով վերադարձրեց նկարը:

- Ինչո՞ւ: Ալիսիան դեմ չէր լինի,- ժպտացի ես: - Ոչ ոք չի իմանա:

- Գուցե և չիմանա,- Ինդիրան ուսումնասիրում էր Էլիֆի փչացրած նկարը, որում Ալիսիային հիվանդանոցի հրդեհված շենքից գրկած դուրս էի տանում: - Իսկ սա՞ ինչ եք անելու: Վերցնելո՞ւ եք:

- Կզանգեմ Ժան-Ֆելիքսին,- ասացի նրան գլուխս օրորելով: - Նրան կփոխանցեմ:

Նայեցի նկարին: Այն ինձ դուր չէր գալիս: Ալիսիայի գործերից միակն էր, որ չէի հավանում: Տարօրինակ է, եթե հաշվի առնենք այն, որ նկարում հենց ես եմ:

Ուզում եմ հստակեցնել. չեմ մտածել, որ Ալիսիան կկրակի Գաբրիելին: Դա կարևոր հանգամանք է: Չէի ուզում նրան սպանության դրդել: Միայն ուզում էի բացել Ալիսիայի աչքերը,

որ իր ամուսնությանը վերաբերող ամբողջ ճշմարտությունը հասկանա: Ուզում էի ցույց տալ, որ Գաբրիելը նրան չի սիրում, որ նրա կյանքը խաբեություն է եղել, իսկ ամուսնությունը՝ կեղծիք: Եվ միայն այդ դեպքում Ալիսիան կկարողանար նորից կառուցել իր կյանքը ոչ թե ստի, այլ ճշմարտության վրա:

Այն ժամանակ գաղափար անգամ չունեի Ալիսիայի հոգեկան անկայուն վիճակի մասին: Եթե իմանայի, այսքան հեռուն չէի գնա: Մտքովս չէր անցնում, որ այդպես կարձագանքի: Ու երբ սկսվեց դատական գործընթացը, իսկ Գաբրիելի սպանության մասին լուրերը տարածվեցին բոլոր թերթերում, կատարվածի համար անձնական պատասխանատվություն զգացի, որոշեցի քավել մեղքս ու միաժամանակ ապացուցել, որ մեղավոր չեմ կատարվածի համար: Ու երբ Գրոուվում աշխատատեղ բացվեց, անմիջապես դիմեցի: Ուզում էի օգնել, որ գործած հանցանքից հետո առաջացած հոգեբանական տրավման վերապրի, ուզում էի օգնել, որ գիտակցի կատարվածը, հաղթահարի ու ազատվի դրանից: Իհարկե, անամոթ մարդիկ կկարծեն, թե ուզում էի հանցանքի վայր վերադառնալ, այսպես ասած, հետքերը մաքրել: Բոլորովին: Լիովին հասկանում էի, թե ինչ վտանգավոր գործ եմ ձեռնարկել: Ցանկացած պահի ինձ կարող էին բռնել, և ամեն ինչ աղետալի ավարտ կունենար, բայց նահանջելու տեղ չկար: Մի մոռացեք, թե ով եմ:

Ես հոգեթերապևտ եմ: Ալիսիան օգնության կարիք ուներ, և միայն ես գիտեի ինչպես օգնել նրան:

Անհանգստանում էի, որ կճանաչի ինձ, թեև դեմքս դիմակի տակ էի թաքցնում ու փորձում էի ձայնս փոխել: Ալիսիան կարծես ոչինչ չկասկածեց, ու ես դարձա նրա կյանքի մի մասը: Իսկ

հետո, այն գիշեր, Քեմբրիջում վերջապես հասկացա, որ ակամա կանգնել եմ վաղուց մոռացված ականի վրա: Գաբրիելը երկրորդ տղամարդն էր, որն Ալիսիային մահվան էր դատապարտել: Հին վերքն էի փորփրել, ու Ալիսիան այլևս չէր դիմացել: Դրա համար էլ վերցրել էր հրացանն ու ազատվել վաղուց հասունացած վրեժից, միայն թե վրեժը լուծել էր ոչ թե հորից, այլ ամուսնուց: Ինչպես և ենթադրում էի, սպանության պատճառները շատ ավելի խոր արմատներ ունեին, քան իմ վերջին գործողությունները:

Բայց երբ Ալիսիան ստեց Գաբրիելի սպանության մասին պատմելիս, հասկացա, որ ճանաչել է ինձ ու հիմա ստուգում է: Ստիպված եղա քայլեր ձեռնարկել, Ալիսիային հավերժ լռեցնել: Քրիստիանը պետք է իր վրա վերցներ մեղքը: Առանց խղճի խայթի նրան ոստիկաններին մատնեցի: Քրիստիանը դատարան չէր ներկայացել, երբ Ալիսիան ամենից շատ էր զգում նրա կարիքը, ուրեմն արժանի էր պատժի:

Ալիսիային լռեցնելն այդքան էլ հեշտ չէր: Մորֆին ներարկելն ամենաբարդ բանն էր, որ երբևէ արել էի: Ալիսիան ողջ է, ուղղակի՝ քնած: Ես կարող եմ ամեն օր նրան այցի գնալ, անձայն նստել նրա կողքին, բռնել ձեռքը: Ես նրան չեմ կորցրել:

- Կարծես թե ավարտեցինք, հա՞,- հարցրեց Ինդիրան մտորումներս ընդհատելով:

- Կարծում եմ՝ այո՛:

- Դե լավ է: Ես գնամ, ժամը 12-ին հիվանդ ունեմ:

- Իհարկե, գնացեք,- ասացի:

- Ճաշին կհանդիպենք:

- Առայժմ:

Ինդիրան բարեկամաբար թփթփացրեց ուսիս ու սենյակից դուրս եկավ:

Նայեցի ժամացույցիս: Այսօր որոշել էի շուտ գնալ տուն: Ուժասպառ էի: Ուզում էի լույսն անջատել ու դուրս գալ սենյակից, երբ հանկարծ գլխումս մի միտք ծնվեց, ու մարմինս կարծես քարացավ:

Օրագիրը: Որտե՞ղ է:

Հայացքս սահեց սենյակում կոկիկ դասավորված ու արկղերի մեջ հավաքված իրերի վրայով: Հատ-հատ դասավորել էի Ալիսիայի անձնական բոլոր իրերը, բայց օրագիրը չէի գտել:

Չկար:

Ինչպե՞ս կարող էի այսքան անփույթ լինել: Ինդիրան է մեղավոր ու նրա անվերջ շատախոսությունը: Իր զրույցներով շեղեց ուշադրությունս, թույլ չտվեց կենտրոնանալ:

Որտե՞ղ է օրագիրը: Պետք է որ այստեղ լինի: Առանց Ալիսիայի գրառումների կզրկվեմ Քրիստիանի դեմ ծանրակշիռ ապացույցներից: Պետք է գտնել այն, ինչ գնով էլ որ լինի:

Մի անգամ էլ տակնուվրա արեցի սենյակը. տագնապս ավելանում էր: Շրջեցի արկղերը, ամբողջ պարունակությունը հատակին թափեցի: Քրքրեցի թափված իրերը, բայց չգտա: Պատռեցի հագուստները, բայց իզուր. օրագիրը չկար ու չկար: Թափ տվեցի թղթապանակը, ուրվանկարները թափեցի հատակին, բայց այնտեղ էլ չէր: Հետո բացեցի պահարանը, հանեցի բոլոր դարակները և, տեսնելով, որ դատարկ են, զայրացած մի կողմ շպրտեցի:

Օրագիրը չկար:

3

Ընդունարանում ինձ սպասում էր Ջուլիան Մակմեհոնը կառավարող ընկերությունից: Գիրուկ էր, մանր, ալիքվող շիկակարմիր մազերով, սիրում էր կրկնել՝ «մեր մեջ ասած», «վերջին հաշվով», «ըստ էության». այս արտահայտությունները ժամանակ առ ժամանակ հայտնվում էին մեր զրույցի՝ հաճախ մեկ նախադասության մեջ: Բարեհամբույր մարդ էր, կառավարող ընկերության ամենաբարի դեմքն էր: Ուզում էր ինձ հետ երկու բառ փոխանակել, քանի դեռ տուն չէի գնացել:

- Պրոֆեսոր Դիոմիդիսի մոտից եմ գալիս,- ասաց: - Երևի գիտեք, որ աշխատանքից դուրս է եկել:

- Ինչպե՞ս թե:

- Որոշել է ժամանակից շուտ թոշակի գնալ: Մեր մեջ ասած, այլընտրանք չուներ. թոշակի գնալու դիմաց նախաքննության ընթացքում փրկել հիվանդանոցի դեմքը...,- նա բարձրացրեց ուսերը: - Ոչնչով չեմ կարող օգնել, բայց ցավում եմ նրա համար. մասնագիտական երկարատև կարիերայի ինչպիսի՜ անփառունակ ավարտ: Բայց այսպես գոնե կխուսափի լրատվամիջոցների հարձակումներից ու աղմուկից: Ի դեպ, նա Ձեր անունը հիշատակեց:

- Իմ:

- Այո՛: Առաջարկեց Ձեզ նշանակել իր փոխարեն,- Ջուլիանն աչքով արեց: - Ասաց, որ ավելի լավ թեկնածու չենք գտնի:

- Հաճելի է,- ժպտացի:

- Ցավոք, ըստ էության, հաճելի բան չկա. նկատի ունենալով Ալիսիայի հետ պատահածն ու Քրիստիանի ձերբակալությունը՝ կառավարող ընկերությունը չի կարող թույլ տալ շարունակել Գրոուվի գործունեությունը: Մենք վերջնականապես փակում ենք այն:

- Չեմ ասի, թե զարմացած եմ: Փաստորեն, ես այդ դեպքում անգործ կմնամ:

- Դե, ըստ էության, մենք մի քանի ամսից պատրաստվում ենք այստեղ նոր հոգեբուժարան բացել, որն ավելի մատչելի հոգեբուժական ծառայություններ կմատուցի: Հիվանդանոցի ղեկավարի պաշտոնում դիտարկում ենք Ձեր թեկնածությունը, Թեո:

Չկարողացա թաքցնել հուզմունքս: Հաճույքով համաձայնեցի:

- Մեր մեջ ասած,- ասացի՝ նրա սիրած արտահայտություններից մեկը փոխառելով,- այդպիսի հնարավորության մասին միայն երազել կարելի է:

Հիմա իսկապես կկարողանամ օգնել մարդկանց, ոչ թե միայն դեղեր տալ, այլ օգնել այնպես, ինչպես ես եմ ճիշտ համարում: Այնպես, ինչպես Ռութն օգնեց ինձ, և ինչպես ես փորձեցի օգնել Ալիսիային:

Կարծես թե ամեն ինչ իր տեղն է ընկնում: Միայն անշնորհակալը չի գնահատի:

Թվում է՝ ես հասա այն ամենին, ինչ ուզում էի: Գրեթե ամենին...

***

Անցյալ տարի Քեթին ու ես Լոնդոնի կենտրոնից տեղափոխվեցինք Սյուրեյ, այնտեղ, որտեղ մեծացել էի: Հայրս մահացել էր ու տունն ինձ թողել: Թեև մայրս կարող էր մինչև կյանքի վերջը մեզ հետ ապրել, նախընտրեց տունն ինձ ու Քեթիին փոխանցել, իսկ ինքը տեղափոխվեց ծերերի տուն-ինտերնատ:

Քեթին ու ես որոշեցինք, որ մեծ տունն ու այգին լրացնում են միակ թերությունը. դե այն, որ տունը Լոնդոնից բավականաչափ հեռու է: Կարծում էի՝ տեղափոխությունը լավ կազդի մեր հարաբերությունների վրա: Որոշեցինք հիմնովին ձևափոխել տունը, նոր կահույք գնել, հնոտուց ազատվել: Արդեն մեկ տարի տեղափոխվել ենք, բայց ամեն ինչ նույնն է. վերանորոգումը կիսատ է, տան ներքին հարդարանքը դեռ չենք ավարտել, իսկ նկարներն ու կլորավուն հայելին, որ գնել ենք Պորտոբելլայի շուկայից, այդպես էլ հենած են պատերին: Տանը մանկությանս տարիներից գրեթե ոչինչ չի փոխվել, բայց դա ինձ չի անհանգստացնում: Որքան էլ տարօրինակ է, այստեղ շատ հարմարավետ եմ զգում:

Հասա տուն, ներս մտա: Արագ հանեցի վերարկուս. տոթ էր, ինչպես ջերմոցում: Միջանցքում իջեցրի թերմոստատի բռնակը: Քեթին սիրում է, երբ տաք է լինում, իսկ ես նախընտրում եմ ցուրտը, ուստի ջերմաստիճանի առիթով հաճախ ենք վիճում: Միջանցքից հեռուստացույցի բարձր ձայնն էր լսվում: Քեթին վերջերս շատ է հեռուստացույց նայում. անվերջանալի թվացող տխմար հեռուստաձայնը մեր կյանքի անբաժան ուղեկիցն էր դարձել:

Քեթին հյուրասենյակում էր, բազմոցին պառկած, ծնկին ծո-

վախեցգետնի չիպսերի հսկայական տուփ էր, որից յուղոտ, կարմիր մատներով հանում էր չիպսերն ու բերանը խցկում: Չեմ հասկանում՝ ինչպես կարելի է ուտել այդ աղբը. զարմանալի չէ, որ գիրացել է: Վերջին մեկ-երկու տարիներին Քեթին դեր գրեթե չի ստացել, համարյա թե գործազուրկ է ու մշտական դեպրեսիայի մեջ: Բժիշկն առաջարկում էր հակադեպրեսանտներ նշանակել, բայց ես կտրականապես դեմ էի: Քեթիին համոզեցի դեղահաբերի փոխարեն հոգեթերապևտի այցելել և ազատվել հոգու բեռից: Նույնիսկ պատրաստ էի նրա համար ինքս բժիշկ ընտրել: Բայց Քեթին խոսելու տրամադրություն չունի:

Երբեմն ինձ վրա նրա տարօրինակ հայացքն եմ որսում. հետաքրքիր է՝ ինչ է մտածում: Գուցե փորձում է խիզախություն հավաքել ու պատմել Գաբրիելի հետ ունեցած սիրավեպի մասին: Բայց միևնույն է, ոչ մի բառ չի ասում: Նստում ու լռում է, ինչպես մի ժամանակ Ալիսիան էր լռում: Երանի կարողանայի օգնել Քեթիին, բայց ձայնս չի հասնում նրան: Ճակատագրի հեգնանք է... Այս ամենն արեցի, որ Քեթին կողքիս լինի, բայց միևնույն է, կորցրի նրան:

Նստեցի բազմոցի արմնկակալին, մի պահ նրան նայեցի:

- Հիվանդներիցս մեկը դեղաչափը գերազանցել է,- ասացի: - Կոմայի մեջ է:

Ոչ մի արձագանք:

- Տպավորություն ունեմ, որ անձնակազմի անդամներից մեկը ստիպել է, որ չափազանց մեծ դեղաչափ ընդունի: Գործընկերներիցս մեկը, պատկերացնո՞ւմ ես:

Լռություն:

- Քեթի՛, լսո՞ւմ ես:

- Չգիտեմ, թե ինչ ասեմ,- Քեթին բարձրացրեց ուսերը:

- Կարեկցանք չի՞ առաջանում:

- Ո՞ւմ հանդեպ: Քո՞:

- Նրա: Որոշ ժամանակ աշխատել եմ նրա հետ, բուժել եմ անհատական մեթոդով: Անունն Ալիսիա Բերենսոն է:

Ասացի և ուշադիր նրան նայեցի: Քեթին չարձագանքեց: Ոչ մի զգացմունք:

- Հայտնի կին էր,- շարունակեցի,- բայց հիմա բոլորը մոռացել են: Մի քանի տարի առաջ բոլորը նրա մասին էին խոսում: Ամուսնուն էր սպանել... հիշո՞ւմ ես:

- Չեմ հիշում,- նորից բարձրացրեց ուսերն ու հեռուստացույցի ալիքը փոխեց:

Այդպես էլ ապրում ենք մեր կյանքը, ձևացնում, խաղում:

Ընդհանրապես վերջերս շատ ենք ձևացնում. ընդ որում, ոչ միայն ուրիշների առաջ, այլև հենց մեր հարաբերություններում: Երևի հենց դրա համար եմ գրում այս տողերը: Փորձում եմ շրջանցել իմ հրեշային էգոն ու իմ մասին ամբողջ ճշմարտությունը ներկայացնել: Եթե դա, իհարկե, հնարավոր է:

Խմել էի ուզում: Գնացի խոհանոց, սառցարանից օղու շիշ հանեցի, մի բաժակ լցրի ու անմիջապես դատարկեցի: Կոկորդս այրվեց սառը հեղուկից: Մի բաժակ էլ խմեցի:

Հետաքրքիր է՝ Ռութն ինչ կասեր, եթե նորից, ինչպես 6 տարի առաջ այն օրը, գնայի նրա մոտ ու ամեն ինչ խոստովանեի: Ցավոք, դա անհնար էր: Հիմա բոլորովին այն մարդը չէի, որին նա ճանաչում էր: Ավելի մեղսավոր էի ու ոչ այնքան ազնիվ: Ինչպե՞ս գնայի նրա մոտ, նայեի փխրուն, ծեր կնոջ խոնավ, կապույտ աչքերին ու խոստովանեի, որ վերածվել եմ դաժան, վրեժխնդիր ու այլասերված արարածի: Ռութն

իմ մասին այնքան էր հոգ տարել. քաղաքավարությունից, բարությունից, ճշմարտությունից բացի՝ նրա վերաբերմունքի մեջ ուրիշ ոչինչ չեմ տեսել: Ես արժանի չեմ Ռութին ու այն ամենին, ինչ արել է ինձ համար: Ինչպե՞ս ասեմ նրան, որ երեք կյանք եմ խորտակել: Ինչպե՞ս խոստովանեմ, որ բարոյական կոդեքս չունեմ. առանց խղճի խայթի ընդունակ եմ ամենաստոր արարքներին, միայն թե կաշիս փրկեմ:

Խոստովանությունս լսելով Ռութը հավանաբար կցնցվի ու գուցե նույնիսկ վախենա: Հետո նրա աչքերում տխրության, հիասթափության ու ինքնախարազանման նշույլներ կհայտնվեն: Կհասկանա, որ իմ հարցում ձախողել է, ավելին, վտանգի տակ է դրել զրույցի միջոցով բուժելու հոգեբուժական մեթոդը: Բայց ախր Ռութն իմ ճանաչած ամենաբացառիկ ու շնորհալի մասնագետներից է: Տարիներ շարունակ աշխատել է ինձ հետ՝ ուժեղ տրավմայի ենթարկված երիտասարդի, որը երազում էր փոխվել, բուժվել, ավելի լավը դառնալ: Ու չնայած հոգեթերապիայի հարյուրավոր սեանսներին, որոնց ընթացքում ես խոսում էի, իսկ նա՝ լսում ու վերլուծում, այդպես էլ չկարողացավ հոգիս փրկել: Գուցե ես էի սխալվում: Գուցե մեզնից ոմանք ի ծնե չար են լինում, ու ինչքան էլ ջանք գործադրեն, երբեք չեն փոխվում:

Դռան զանգը կտրեց մտքիս թելը: Սյուրեյ տեղափոխվելուց հետո երեկոյան հազվադեպ էինք հյուրեր ունենում. նույնիսկ չեմ հիշում, թե վերջին անգամ մեր ընկերները երբ են մեզ այցի եկել:

- Սպասո՛ւմ ես ինչ-որ մեկին,- ձայն տվեցի, բայց Քեթին չպատասխանեց: Երևի հեռուստացույցը ձայնս խլացրեց:

Բացեցի դուռն ու, ի զարմանս ինձ, շեմին գլխավոր տեսուչ

Ալենին տեսա: Վզին հաստ շարֆ էր փաթաթել, վերարկուով էր, իսկ այտերը ցրտից կարմրել էին:

- Բարի երեկո, պարո՛ն Ֆաբեր,- ասաց:

- Պարո՛ն Ալեն: Ինչո՞վ կարող եմ օգնել:

- Գործով Ձեր թաղամասով էի անցնում, որոշեցի մտնել: Մի շարք նոր մանրամասներ են ի հայտ եկել, որոնց մասին ուզում եմ պատմել Ձեզ: Հարմա՞ր է:

- Անկեղծ ասած...,- վարանելով ասացի,- պատրաստվում էի ճաշ եփել:

- Երկար չի տևի,- ժպտաց Ալենը: Ակնհայտ էր, որ հեռանալու մտադրություն չունի, ուստի մի կողմ քաշվեցի, որ ներս մտնի: Տան ջերմությունն ուրախացրեց նրան: Անմիջապես հանեց ձեռնոցներն ու վերարկուն:

- Գրողը տանի, սառնամանիք է,- ասաց: - Գրազ կգամ, որ ձյուն է գալու:

Հանեց գոլորշապատ ակնոցը, թաշկինակով մաքրեց:

- Մեր տանն էլ երևի չափից շատ տաք է,- ասացի:

- Ինձ համար ինչքան՝ տաք, այնքան՝ լավ:

- Ճիշտ և ճիշտ կնոջս պես:

Անունը տվեցի թե չէ, միջանցքում Քեթին հայտնվեց:

- Ի՞նչ է պատահել:

- Քեթի՛, գլխավոր տեսուչ Ալենն է: Նա է վարում իմ հիվանդի հետ կապված դեպքի նախաքննությունը: Հիշում ես, չէ՞, պատմել եմ:

- Բարի երեկո, տիկի՛ն Ֆաբեր:

- Տեսուչ Ալենն ուզում է ինձ հետ խոսել: Երկար չի տևի: Բարձրացի՛ր, լոգանք ընդունի՛ր: Կկանչեմ, երբ ճաշը պատրաստ լինի: - Ձեզնից հետո,- ասացի տեսուչին՝ ձեռքով

խոհանոցի կողմը ցույց տալով: Ալենն ուշադիր նայեց Քեթիին, ապա թեքվեց ու մտավ խոհանոց, ես՝ նրա հետևից: Քեթին որոշ ժամանակ նայում էր մեր հետևից, իսկ հետո շտապեց երկրորդ հարկ:

- Կարող եմ Ձեզ խմիչք առաջարկել,- ասացի:

- Շնորհակալություն: Մի բաժակ թեյից չէի հրաժարվի:

Նկատեցի, որ Ալենն օղու շշին է նայում, որը սեղանին էր մնացել: Ժպտացի:

- Գուցե ավելի թունդ խմիչք եք նախընտրում:

- Չէ, շնորհակալ եմ: Մի բաժակ թեյն ինձ հերիք է:

- Թեյը մռւգ եք սիրում:

- Այո, մուգ: Ու եթե կարելի է, մի քիչ կաթ ավելացրեք գույնի համար: Շաքար պետք չէ: Փորձում եմ սահմանափակել շաքարի օգտագործումը:

Լսում էի նրան, իսկ գլխումս մի հարց էր պտտվում. Ալենն ինչ է փնտրում իմ տանը, և արդյոք նրա ներկայությունն ինձ համար վտանգավոր է: Նա այնքան պարզ ու կենսուրախ էր, որ մի տեսակ ապահով էի զգում: Բացի այդ, որքան գիտեմ, բոլոր հետքերս մաքրել էի:

Թեյնիկը միացրի ու նրա կողմ շրջվեցի:

- Եվ այսպես, պարո՛ն տեսուչ, ինչի՞ մասին էիք ուզում ինձ հետ խոսել:

- Հիմնականում պարոն Մարթինի:

- Ժան-Ֆելիքսի՞,- զարմացա ես: - Նրան ինչ է պատահել:

- Այո: Եկել էր Գրոուվ Ալիսիայի գեղանկարչական նյութերը վերցնելու: Զրուցեցինք դեսից-դենից: Հետաքրքիր մարդ է այդ պարոն Մարթինը: Մտադիր է իր պատկերասրահում Ալիսիայի նկարների անհատական ցուցահանդես կազմակերպել: Ասում

է՝ եկել է Ալիսիային որպես նկարիչ ներկայացնելու և գնահատելու ժամանակը: Հաշվի առնելով մամուլում և հեռուստատեսությամբ ահագնացող աղմուկը՝ համարձակվում եմ ասել, որ իրավացի է,- Ալենը հարգանքով նայեց ինձ: - Իսկ Դուք գուցե ցանկություն ունեք Ալիսիայի մասին գիրք գրել, պարո՛ն: Վստահ եմ, այն հանրության ուշադրությունը կգրավի:

- Երբեք չեմ մտածել այդ մասին,- ասացի: - Պարո՛ն տեսուչ, ասացեք, Ժան-Ֆելիքսի պատկերասրահում կազմակերպվելիք ցուցահանդեսն ի՞նչ կապ ունի ինձ հետ:

- Դե, պարոն Մարթինը շատ ուրախացավ, երբ Ալիսիայի նոր նկարը տեսավ: Նրան նույնիսկ չանհանգստացրեց, որ Էլիֆը փորձել էր փչացնել այն: Ասաց, որ դա աշխատանքին յուրօրինակ որակ է հաղորդում. չեմ հիշում, թե կոնկրետ ինչպես արտահայտվեց: Ճիշտն ասած, ես արվեստից շատ բան չեմ հասկանում, իսկ Դո՛ւք:

- Ես էլ,- ասացի ու նորից մտածեցի, թե դեռ որքան ժամանակ է պետք, որ բուն թեմային հասնի. չգիտես ինչու, տագնապս ավելանում էր:

- Ինչևէ,- շարունակեց նա,- պարոն Մարթինը հիացած էր նկարով: Ասաց, որ ուզում է տանել նկարը, ավելի մանրամասն ուսումնասիրել: Եվ այդտեղ պատահեց անսպասելին:

- Ի՞նչ:

- Ահա թե ինչ,- տեսուչը բաճկոնի գրպանից ինչ-որ բան հանեց:

Անմիջապես ճանաչեցի:

Օրագիրն էր:

Թեյը եռաց. խոհանոցով մեկ խլացնող սուլոց տարածվեց: Անջատեցի ու սկսեցի թեյ պատրաստել:

- Լավ է, որ գտել են,- ասացի: - Հետաքրքիր է՝ որտեղ էր:

- Նկարի հետևում,- ասաց,- թաքցրած էր շրջանակի վերևի ձախ անկյունում: Այնքան ամուր էր սեղմած, որ հազիվ հանեցինք:

Ահա թե որտեղ էր Ալիսիան թաքցրել օրագիրը: Ինձ համար ատելի նկարի հետևում: Միակ տեղը, որտեղ չէի ստուգել:

Տեսուչը շոյեց օրագրի ծալծլված, խունացած սև կազմն ու ժպտաց: Հետո բացեց ու թերթեց:

- Անհավանական է: Սլաքներն իսկական խառնաշփոթ են ստեղծում:

- Հոգեկան հիվանդության արտացոլումն է,- գլխով արեցի ես:

Տեսուչը ևս մի քանի էջ թերթեց, հասավ օրագրի վերջին ու սկսեց բարձրաձայն կարդալ.

- ...նա վախենում էր իմ ձայնի ամեն մի ինչյունից... բռնեց դաստակս... ու ասեղը երակիս մեջ մտցրեց:

Զգացի, թե տագնապն ինչպես է ներսումս ահագնանում: Այս գրառումն ինձ անծանոթ էր: Դրա գոյության մասին չգիտեի: Սա լուրջ ապացույց է, որն այդքան փնտրել էի, ու հիմա այն ուրիշի ձեռքում էր հայտնվել... Այնպէս էի ուզում տեսուչի ձեռքից խլել չարաբաստիկ օրագիրն ու կտոր-կտոր անել: Բայց տեղիցս չշարժվեցի: Թակարդն էի ընկել:

- Կկարծումմ եմմմ, լ...լավ կլլինիի..., եթե...,- վախից սկսեցի կակազել:

Երևի չափազանց նյարդայնացած էի խոսում, և նա ձայնիս մեջ վախ նկատեց:

- Ինչ-որ բան էիք ուզում ասել:

- Ոչինչ:

Այլևս չփորձեցի ընդհատել նրան: Ցանկացած գործողութ-

յուն ավելի կբարդացնի վիճակս: Ելք չկար, ու ամենատարօրինակն այն է, որ մի տեսակ թեթևացած էի զգում:

- Գիտեք, չեմ կարծում, թե մեր թաղամասում իսկապես գործ եք ունեցել, պարո՛ն տեսուչ,- ասացի՝ թեյի բաժակը նրան տալով:

- Չեք սխալվում: Մտածեցի՝ ճիշտ չի լինի, եթե հենց դռան շեմին հայտնեմ այցիս իրական պատճառը: Անկեղծ ասած, հիմա այս պատմությունը կարելի է մեկնաբանել միանգամայն այլ լույսի ներքո:

- Հաճույքով կլսեմ,- ասացի: - Բարձրաձայն կարդացեք, խնդրում եմ:

- Իհարկե:

Միանգամայն հանգիստ նստեցի պատուհանի մոտ, աթոռին: Տեսուչը կոկորդը մաքրեց ու սկսեց կարդալ:

- ...Թեոն հենց նոր գնաց: Հիմա մենակ եմ ու շատ արագ կգրեմ պատահածի մասին: Ժամանակս քիչ է...

Լսում էի՝ պատուհանից հետևելով լողացող, սպիտակ ամպերին: Վերջապես ամպերը պատռվեցին, սկսեց ձյուն տեղալ: Սպիտակ փաթիլները դանդաղ թափվում էին: Բացեցի պատուհանն ու ձեռքս հանելով ձյան փաթիլ բռնեցի: Այն արագ անհետացավ ափիս մեջ: Ժպտացի:

Հետո մի ուրիշ փաթիլ բռնեցի:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Խորին շնորհակալությունս եմ հայտնում գործակալիս՝ Սեմ Քոուփլենդին՝ գիրքն իրականություն դարձնելու համար: Ու հատկապես երախտապարտ եմ խմբագիրներիս՝ Բեն Ուիլիսին Միացյալ Թագավորությունում և Ռայան Դոհերթիին Միացյալ Նահանգներում գրքի որակի բարելավման համար: Նաև ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հալ Ջենսենին և Իվան Ֆերնանդես Սոտոյին արժեքավոր մեկնաբանությունների համար, Բրեթ Քարին և Քեյթ Ուայթին, որոնք տարիներ շարունակ ապացուցել են թերապիայի արդյունավետությունը, Նորթգեյթի երիտասարդներին ու անձնակազմին այն ամենի համար, ինչ սովորեցրել են ինձ: Դայան Մեդակին, որ ստեղծագործելու համար իր տունն ինձ տրամադրեց, Ումա Թուրմանին ու Ջեյմս Հասլամին, որոնց շնորհիվ այժմ ավելի լավ գրող եմ դարձել: Բոլոր օգտակար առաջարկների ու խրախուսման համար ուզում եմ շնորհակալություն հայտնել Էմիլի Հոլթին, Վիկտորիա Հոլթին, Վանեսա Հոլթին, Նեդի Անտոնիադեսին և Ջոու Ադամսին:

newmag 036

Ալեքս Մայքլիդիս
Լռակյաց հիվանդը

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

Թարգմանության խմբագիր՝
Մարգարիտա Սարգսյան

Վերիֆիկանտներ՝
Մանու Իրիցյան
Ավետիս Հարությունյան

Շապիկի դիզայնի հեղինակ՝
Էն Թվոմի

Շապիկի ադապտացիա՝
Սոֆի Մարգարյան

Լուսանկարով կտավի հեղինակներ՝
Հերման Էստևեզ, Էն Թվոմի

Հեղինակի լուսանկարը՝
© **Վուլֆ Մառլո**

թվագրել է 1915-ից հետո կայֆը

Տառատեսակները՝
GHEA Narek, GHEA Aragats հեղինակ՝ **Էդիկ Ղաբուզյան**
Շապիկի վերնագրի տառատեսակի հեղինակ՝ **Էդիկ Պողոսյան**

Տպագրված է «Անտենոր» տպագրատանը
1-ին փողոց, Նոր Գյուղ համայնք, Կոտայքի մարզ 2239, ՀՀ

newmag
ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

Գործադիր տնօրեն՝
Արտակ Ալեքսանյան

Փոխտնօրեն՝
Ավետիս Հարությունյան

Գլխավոր խմբագիր՝
Գնել Նալբանդյան

Գլխավոր դիզայներ՝
Էդիկ Պողոսյան

Աշխատակազմի ղեկավար՝
Դավիթ Դավթյան

Մարկետինգի և վաճառքի ղեկավար՝
Գոհար Ալեքսանյան

Ստրատեգիական և հատուկ նախագծերի ղեկավար՝
Գոհար Մանուկյան

Հաղորդակցությունների բաժնի ղեկավար՝
Լիանա Ներսիսյան

Մուլտիմեդիա բովանդակության ղեկավար՝
Մանու Իրիցյան

«Նյու Մեգ» ՍՊԸ
Գրանցել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Կենտրոնի տարածքային բաժինը 28.02.2011
Գրանցման վկայականը՝ 03Ա.090961
Գրանցման համարը՝ 286.110.07868

+374 91 511 994
info@newmag.am
newmag.am

Արշակունյաց 4, 1-ին հարկ, Երևան 0023, ՀՀ